Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն
International Center for
Human Development

Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորումը. հասարակ մարդկանց ձայնը

Հայերի և ադրբեջանցիների զուգահեռ համաքաղաքային քննարկումների ընթացքում հնչած կարծիքների արդյունքները

Համաքաղաքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծություն

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորումը. հասարակ մարդկանց ձայնը

Հայերի և ադրբեջանցիների զուգահեռ համաքաղաքային քննարկումների ընթացքում հնչած կարծիքների արդյունքները

Համաքաղաքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծություն

Երևան - 2010

Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորումը. հասարակ մարդկանց ձայնը

Հայերի և ադրբեջանցիների զուգահեռ համաքաղաքային քննարկումների ընթացքում հնչած կարծիքների արդյունքները

Համաքաղաքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծություն

Քննարկումներն իրականացվել են Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (Հայաստան) և Երիտասարդությունը հանուն զարգացման (Ադրբեջան) կողմից՝ Հակամարտությունների կանխման գլոբալ հիմնադրամ (ՄԹ) տրամադրած օժանդակությամբ:

Սույն գրքում ներկայացված տեսակետներն ու կարծիքները պարտադիր չէ, որ արտահայտեն Երևանում Բրիտանական դեսպանատան կամ Բրիտանական կառավարության, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, Երիտասարդությունը հանուն զարգացման տեսակետներին ու կարծիքներին:

Երևանում Բրիտանական դեսպանատան օժանդակությամբ

British Embassy
Yerevan

ISBN 978-99941-2-393-3
ՀՏԴ 327:341:32.001
ԳՄԴ 66.4+67.91+66

L405

L405/ՄՀՄԿ - Երևան, 2010

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Բովանդակություն

Ներածություն 5

Մեթոդաբանություն 7

Համաքաղաքային քննարկումների ձևաչափը 7

Համաքաղաքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը 9

Հիմնական եզրակացություններ և դիտարկումներ 12

Հաղորդագրություններ 21

Ներկա իրավիճակ 21

Պատերազմ 32

Անվտանգություն 47

Ապառազմականացում 89

Միջազգային խաղաղապահ ուժեր 91

Ցամաքային հաղորդակցություն 98

Տարածքներ 105

Փախստականներ և ներքին տեղաշարժված անձինք 130

Ապագային նայելով, կարգավորման հետաձգումը 145

Վստահություն 184

Հավելվածներ 236

Հավելված 1 - Սցենարներ 236

Ադրբեջանի բնակչության հետ քննարկված սցենարներ 241

Հավելված 2 – Քվեարկության արդյունքներ 246

Հավելված 3 – Տիպական համաքաղաքային քննարկման տարածական նկարագիրը 247

Հավելված 4. ԼՂ հակամարտության կարգավորման հեռանկարների վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով 248

Համայնքային քննարկումների լուսանկարները 249

Ներածություն

Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման վերաբերյալ Հայաստանից, Ադրբեջանից և Լեռնային Ղարաբաղից հասարակ բնակչության ձայնը լսելի դարձնելու և հասարակությանը հուզող խնդրի քննարկումներին ակտիվորեն ներգրավելու նպատակով, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» (ՄԶՄԿ, Հայաստան) և Երիտասարդությունը հանուն զարգացման (ԵՀԶ, Ադրբեջան) հասարակական կազմակերպությունները, Հակամարտությունների կանխման գլոբալ հիմնադրամ (ՄԹ) տրամադրած օժանդակությամբ, կազմակերպեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ հանգուցալուծման տարբեր սցենարների շուրջ համաքաղաքային քննարկումներ Հայաստանում, Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում 2008-2009 թվականներին:

Համաքաղաքային քննարկումների ձևաչափով ՄԶՄԿ-ն նախկինում քննարկման է դրել հասարակությանը հուզող բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ Հայ-Թուրքական հարաբերությունների կարգավորման և ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ հարցերը: Այս ձևաչափը հասարակության տարբեր խմբերը ներկայացնող բնակչությանը հնարավորություն է ընձեռում անմիջականորեն և արդյունավետ կերպով մասնակցել քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքն ու մոտեցումները և բարձրաձայնել իրենց մտահոգող խնդիրները:

Քննարկումները, որոնց մասնակցել են 2000-ից ավել հայեր և ադրբեջանցիներ, կազմակերպվել են Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի 20 քաղաքաներում:

Համաքաղաքային այս քննարկումների հիմնական արժեքը կլայանում է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակիչների և Ադրբեջանի բնակիչների ներգրավումը վիրտուալ զուգահեռ անցկացվող քննարկումներին: Համաքաղաքային քննարկման այս միջնորդավորված զուգահեռ «երկխոսության» իրականացման ձևաչափը հնարավորություն է ընձեռում երկփեղկել հասարակությունների միջև առկա ֆիզիկական և քաղաքական անդունդը, որը հնարավորություն չի ընձեռնում հանդիպելու և համատեղ քննարկելու ԼՂ հակամարտության հիմնախնդիրը:

Քննարկումներն իրականացվել են մամուլում հրապարակված մտքերի, կարծիքների, վերլուծականների և քաղաքական գործիչների հայտարարությունների հիման վրա մշակված Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման հնարավոր տարբերակների շուրջ (ներառյալ ստատուս քվոն), որոնք ներկայացված են Հավելված 1-ում:

Յուրաքանչյուր հանրային քննարկմանը հաջորդել է քվեարկություն. մասնակիցներն ընտրել են առավել նախընտրելի և առավել հավանական տարբերակները: Քվեարկության ամփոփ արդյունքները ներկայացված են Հավելված 2-ում:

Համաքաղաքային քննարկումների այս ձևաչափը հնարավորություն է ընձեռում արձանագրել քննարկման ընթացքում հնչած յուրաքանչյուր ամփոփ միտք և առաջարկություն, ամփոփել ու վերլուծել դրանք և դնել հանրության ու որոշում կայացնողների առջև:

Մեթոդաբանություն

Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման շուրջ հանրային քննարկումների իրականացման և դրա արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը բաղկացած է երկու մասից: Մեթոդաբանական առաջին մասը ներկայացնում է համահամայնքային քննարկումների ձևաչափը, իսկ երկրորդը՝ քննարկումների արդյունքների վերլուծական գործիքները:

Համաքաղաքային քննարկումների ձևաչափը

Համաքաղաքային քննարկման (Town Hall Meeting) ձևաչափը մշակվել և ներդրվել է ՄԶՄԿ կողմից 2005 թվականին, հանրային որոշումների կայացմանը քաղաքացիների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով:

Որոշում կայացնողները հաճախ դժվարանում են գնահատել հանրային շահերի կենտրոնում գտնվող այս կամ այն խնդրի վերաբերյալ հասարակ քաղաքացիների մեծամասնության կարծիքներն ու ընկալումները: Ավելին, նման իրավիճակում քաղաքացիները ևս օտարվում են հանրային կառավարման գործընթացից և հակված չեն մասնակցել հանրային կյանքին: Արդյունքում, արատավոր շղթան փակվում է մարտահրավեր նետելով ժողովրդավարությանը երկրում:

Համաքաղաքային քննարկումների գործընթացը հնչեցնում է քաղաքացիների ձայնը, լսելի դարձնում նրանց կարծիքներն ու մոտեցումները հանրային որոշումների կայացման գործում՝ հանրային կարևորագույն խնդիրների վերաբերյալ հասարակության անդամների կամքն ու դիրքորոշումը կառավարման ղեկը ստանձնած գործիչներին անմիջականորեն հայտնելու հնարավորություն ընձեռելու միջոցով:

Յուրաքանչյուր քննարկում ապահովում է բազմակարծությունն ու քաղաքական դաշտում հավասարակշռությունը՝ գործընթացում հարյուրավոր հասարակ քաղաքացիների միաժամանակյա ընդգրկման, քաղաքացիների արտահայտած կարծիքների անհապաղ և արդյունավետ ամփոփման, ինչպես նաև արդյունքների լայնածավալ տարածման ու տեղեկատվության սփռման շնորհիվ:

Ձևաչափի համեմատական առավելություններն են, մասնավորապես. հիմնախնդրի վերաբերյալ կարծիքների վերուղղումը, արդյունավետ մասնակցությունը՝ հնչած որևէ միտք չի անտեսվում, քննարկումների շարունակականությունը, գերակայությունների հստակ առանձնացումը: Ձևաչափի հաջող

կիրառման հիմնական գրավականներն են, մասնավորապես. Բազմակարծության ապահովումը յուրաքանչյուր սեղանի շուրջ, որոշում կայացնողների ներգրավումը գործընթացի յուրաքանչյուր փուլում, բարձրորակ բովանդակության, կառուցվածքի և ընթացքի ապահովումը, գործընթացի ազդեցությամբ կատարվող իրական փոփոխությունները:

Համաքաղաքային քննարկումների ձևաչափը խարսխված է քաղաքացիների միջև երկխոսության և կարծիքների փոխանակման վրա, ի հակադրություն՝ երկարաշունչ ելույթների, հարցուպատասխանի կամ զեկուցումների: Քննարկումներին կլոր սեղանի շուրջ ձայնի հավասար իրավունքով մասնակցում են հասարակության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներ՝ 10-15 հոգի յուրաքանչյուր սեղանի շուրջ, ովքեր իրենց կարծիքն են արտահայտում քաղաքականության, միջոցների տրամադրման, պլանավորման կամ այլ կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Եթե առանձին քննարկումը մասնակիցների թիրախ խմբին չի ներկայացնում սեռային կամ տարիքային հատուկ պահանջներ, ապա յուրաքանչյուր սեղանի շուրջ, ինչպես նաև դահլիճում, ապահովվում է կանանց, տղամարդկանց, երիտասարդների հնարավորինս հավասար կազմ: Յուրաքանչյուր սեղանի շուրջ քննարկումը վարում է բարձր որակավորում ունեցող սեղանավարը (facilitator), ինչն ապահովում է մասնակիցների հետևողականությունը քննարկվող խնդրի շրջանակներում, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքների պահպանումը քննարկման ընթացքում: Քննարկվող խնդրի վերաբերյալ մասնակիցների իրազեկման պատշաճ մակարդակն ապահովելու նպատակով, նրանց տրամադրվում են հնարավորինս մանրամասն և հավասարակշռված տեղեկություններ խնդրի վերաբերյալ:

Ձևաչափի շրջանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում առանձին սեղանների շուրջ ընթացող քննարկումները վերածել ընդհանուր խմբային քննարկման ողջ դահլիճում: Յուրաքանչյուր սեղանի շուրջ արտահայտված մտքերն ու կածիքները գրանցվում և կենտրոնացվում են անլար համակարգչային ցանցի միջոցով: Յուրաքանչյուր սեղանին ներկա է գրառող, ում պարտականությունն է գրանցել քննարկման մասնակիցների հնչեցրած յուրաքանչյուր միտք և ուղարկել այն գլխավոր օպերատորին, ով ապահովում է ժամանած ուղերձների ցուցադրումը քննարկման բոլոր մասնակիցների համար տեսանելի դիրքերում տեղակայված էկրաններին: Քննարկման ավարտին համակարգչային ծրգրի միջոցով յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է ընձեռվում քվեարկել ի օգուտ հստակ ձևակերպված հարցերի շուրջ սեփական դիրքորոշման: Հատկանշական է, որ ողջ խումբը հնարավորություն ունի անդրադառնալ ցանկացած առանձին սեղանի շուրջ հնչեցված մտքերին, ինչպես նաև քվեարկության միջոցով որոշում կայացնողների հասցնել իրենց դիրքորոշումը խնդրի վերաբերյալ: Քննարկման ավարտին ամփոփվում և հնչեցվում է քվեարկության միջոցով ներկաների արտահայտած ընդհանրական դիրքորոշումը: Որոշում կայացնողները ակտիվորեն ներգրավվում են քննարկմանը՝ մասնակցելով քննարկմանը, դիտելով գոր-

ծընթացը, ինչպես նաև քննարկման ավարտին արձագանքելով քաղաքացիների հարցադրումներին ու կամարտահայտությանը:

Միով բանիվ, համաքաղաքային քննարկման կազմակերպումը պահանջում է. (ա) քննարկման խնդրի հստակեցում և ձևակերպում, (բ) քննարկման համար անհրաժեշտ փորձագիտական տեղեկությունների ապահովում, այլընտրանքային տարբերակների տեսքով, (գ) անհրաժեշտ ծրագրային ապահովում, (դ) անհրաժեշտ համակարգչային սարքավորում, (ե) քննարկումների վայրի, պայմանների ու կահավորման ապահովում, (զ) համակարգչային ցանցի կազմակերպում, (է) պատշաճ որակավորում ունեցող սեղանավարների և գրառողների առկայություն, անհրաժեշտության դեքում՝ նրանց վերապատրաստման միջոցով, (ը) քննարկման մասին քաղաքացիների իրազեկում և մասնակիցների կազմի ապահովում, (թ) քննարկման ընթացքում սպասարկող և տեխնիկական անձնակազմի առկայություն, (ժ) քննարկման արդյունքների ամփոփում, (ի) արդյունքների վերաբերյալ իրազեկում բոլոր շահագրգիռ անձանց: Հավելված 3-ում ներկայացված է համաքաղաքային քննարկման տիպական տարածական նկարագիրը:

Համաքաղաքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը

Համաքաղաքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծության մեթոդաբանությունն անուղղակի սոցիալական երկխոսություն է ապահովում քննարկվող խնդրի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հեռանկարների վերաբերյալ բոլոր երկրների հասարակ քաղաքացիների վերաբերմունքն ու դիրքորոշումն արտահայտող փաստարկների համադրման և այդպիսով՝ միջնորդավորված զուգահեռ «երկխոսություն» ծավալելու միջոցով (Հավելված 4):

Համեմատական վերլուծության մեթոդաբանությունը հենվում է երկու բաղադրիչների. (ա) համաքաղաքային քննարկումների արդյունքների (ուղերձների) վերլուծություն՝ արծարծված հիմնախնդիրների և երեք հիմնական՝ գիտելիք, վերաբերմունք և ընկալում հարթությունների (dimensions) առումով, և (բ) քննարկման դրված սցենարների վերաբերյալ կամ հիմնախնդիրների շուրջ արտահայտված կողմ և դեմ կարծիքների՝ ուղերձների ամփոփում:

Նման մոտեցումն ապահովում է հասարակ քաղաքացիների միջև միջնորդավորված բանավեճն ու երկխոսությունը՝ նրանց հնչեցրած կարծիքների՝ ուղերձների, ամփոփման միջոցով: Որոշ դեպքերում բանավեճը կամ բողոքը միակ հնարավոր ձևաչափն են: Այն դեպքերում, երբ մարդիկ ներգրավվում են բանավեճի կամ ընդդիմախոսության մեջ, կողմերը փորձում են անհրաժեշտ ճնշում գործադրել կամ քաղաքական աջակցություն ձեռք բերել իրենց պահանջներն

ու պատկերացումները տեղ հասցնելու նպատակով: Քանզի բանավեճի ու երկխոսության նպատակները տարբեր են, ուստի երկուսն էլ հաղորդակցության դաշտի կարևորագույն տարրեր են: Ցավո՛ք, հաճախ երկխոսության և բանավեճի միջև հավասարակշռությունը զգալիորեն շեղված է երկրորդի կողմը:

Հանրային քննարկումներում բանավեճային ձևաչափը գերակշռում է բազում պատճառներով, այդ թվում. (ա) ոմանք համոզված են, որ բանավեճն ու ընդդիմախոսությունը լսելի դառնալու միակ ուղին են, (բ) երկխոսության մոդելը շատերի ընկալմամբ նպաստում են վիճակի պահպանմանը կամ դանդաղ փոփոխություններին, (գ) համայնքային կամ հասարակական մակարդակներում իրական և արդյունավետ երկխոսության դրական օրինակների եզակի են, (դ) բանավեճից բացի այլ մեթոդների համար հաստատված կանոնների բացակայությունը, (ե) անձանց տարբեր խմբերի միջև առկա թշնամական մթնոլորտը ենթադրում է, որ հաղորդակցությունը ևս պիտի լինի թշնամական, (զ) բանավիճելն ավելի հրապուրիչ ու հետաքրքիր է, քան երկխոսելը, և բանավիճողին նկատելի է դարձնում, (է) բանավեճն ու ընդդիմախոսությունը «խոսել-դատարկվելու» գործառույթ ունի, (ը) բանավեճի պարագայում մարդիկ կարող են լսելու չտալ ու չսովորել բաներ, որոնք չեն սիրում, (թ) բանավիճելն ավելի հեշտ է. ռիսկերը քիչ են, բանավիճողը նվազ խոցելի է, (ժ) մարդիկ սիրում են հանդես գալ խմբերի, այլ ոչ սեփական անձի անունից, (ի) երկխոսությունը ընկալվում է որպես «հալելու ու հալվելու» միջոց, (լ) վախը, որ երկխոսությունը զիջումներ է պահանջում, (խ) վախը, որ երկխոսելու պարագայում խնդրելու են «ձուլվել-միակարծիք դառնալ», (ծ) վախը, որ շփոթմունքը, խոցելիության զգացումը կամ հակառակ կողմից կարծիքն ըմբռնելը երկխոսողին դարձնում է նվազ համոզիչ, (կ) վախը, որ երկխոսության մեջ մտնելու պարագայում, եթե դիմացինը մնում է բանավեճի շրջանակներում, ապա երկխոսություն սկսողը կարող է տանուլ տալ երկխոսությունը, (հ) շատերը տեղյակ չեն երկխոսության առանձնահատկություններին և չգիտեն, թե ինչու է այն շահեկան: Այսպե՛ս, շատերը տեղյակ չեն, օրինակ, որ իրենց համոզչությունը միայն շահում է, երբ հակառակ կողմին հասկանալ են տալիս, որ լսել են նրան:

Իհարկե՛, երկխոսության ծավալումն ինքնին ամենաբուժիչ չէ, սակայն բանավեճ-երկխոսություն խառնուրդի հավասարակշռումը օգտակար է այն հաղորդակցության և խնդիրների լուծման բազմաթիվ խոչընդոտների հաղթահարելու գործում, որոնք ստեղծվում են բացառապես բանավեճի ձևաչափի պարագայում: Երկխոսության առավել բարձր մակարդակը կարող է խթանել քննարկումներում առավել մեծ թվով անձանց ներգրավումը: Երկխոսությունը հնարավորություն է ընձեռում հարստացնել քննարկումը սեփական փորձի օրինակներով, փոխանակել տարակուսանքը, մտավախություններն ու շփոթմունքը: Այս պարագայում ավելի շատ տեղեկություններ են փոխանակվում և ըմբռնումը խորանում է: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը հաճախ հիմնվում է մյուսների կողմից խնդրի ընկալման, ցանկությունների

և գերակայությունների թյուր ընկալման վրա: Արդյունքում՝ խնդրի լուծման նախաձեռնությունը կարող է դուրս գալ ուղեգծերից1:

Վերլուծությունը ենթադրում է նաև դասակարգված և խմբավորված ուղերձների համեմատական վերլուծությունը հակադրություն- համադրություն (Contrast-Coherence) սանդղակով: Վերլուծության փուլերն են.

Փուլ 1-ին. Նախնական մշակման փուլում հեռացվել են հաճախ կրկնվող կամ տեխնիկական ուղերձները, քերականորեն սրբագրվում է ողջ տեքստը:

Փուլ 2-րդ. Տեսակավորման փուլում հեռացվել են անձնական կամ ազգային վիրավորանք2 կրող ուղերձները, որոնք կարող են տրամադրվել կամ վերլուծվել առանձին հետազոտության շրջանակներում, մասնավորապես, ի հայտ բերելու համար առանձնապես բացասական վերաբերմունքն ու ընկալումը, որոնք, օրինակ, խոչընդոտում են հարաբերությունների կարգավորմանը:

Փուլ 3-րդ. Ըստ հիմնախնդիրների դասակարգման փուլում հնչած ուղերձները դասակարգվել են ըստ ԼՂ հակամարտության կարգավորման հիմնախնդիրների և ապա ամփոփվել Սոցիալական երկխոսության վերլուծական աղյուսակում: Այս փուլում յուրաքանչյուր ուղերձ տեղադրվել է համակարծիք ուղերձների վանդակում, ներառելով թե՛ ռացիոնալ, թե՛ իռացիոնալ թե՛ հուզական փաստարկները:

Փուլ 4-րդ. Ըստ ուղերձների հարթությունների դասակարգման փուլում հնչած ուղերձները դասակարգվել են ըստ կարծիքների հիմնական դիտարկումների և դատողությունների ու դիրքերի: Ենթախմբերի դասակարգման հիմքը տարբերվում է յուրաքանչյուր բաժնում ընդգրկված ԼՂ հակամարտության կարգավորման հիմնախնդիրներից և ներկայացված է հոջորդ փուլում:

Փուլ 5-րդ. Սինթեզ: Ենթախմբերի դասակարգումն ինքնին ներկայացնում է վերլուծության ամենահիմնական արդյունքը, որը այսպիսով հնարավորություն է տալիս ընթերցողին միջնորդավորված երկխոսությունը և բանավեճը դարձնել առավել դյուրին և ընկալելի:

---

1 Doug Stone, Robert Ricigliano and Eric Collins. Conflict Management Group. 1993:

2 Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանքը սահմանվում է որպես արտահայտություն կամ գործողություն, որը որևէ մեկին կարող է պատճառել հուզական ցավ կամ որևէ այլ կերպով կարող է բորբոքել անհատին: Վիրավորանքը հարաբերական հասկացություն է, քանզի վիրավորանքի զգացումը հաճախ պայմանավորված է առանձին անհատի անձնական արժեքներով: Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանք չեն համարվել այն արտահայտությունները, որոնք ազատորեն շրջանառվել են հայաստանյան կամ միջազգային լրատվամիջոցներում:

Հիմնական եզրակացություններ և դիտարկումներ

Ընդհանուր դիտարկումներ

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակիչների և Ադրբեջանի բնակիչների արտահայտած կարծիքների մեջ առկա են ընդգծված անհամաչափություններ: Նման տարակարծությունը կարող է բացատրվել մտահոգությունների անհամաչափություններով՝ սովորաբար մեկ կողմի համար մտահոգության առիթ հանդիսացող մեկ հարցը հակամարտության այդ կողմին մղում է բազմաթիվ կարծիքներ արտահայտելուն՝ գրեթե չգրավելով մյուս կողմի ուշադրությունը: Ամփոփելով՝կարելի է արձանագրել, որ մասնակիցների միջև հակամարտության հիմնախնդրի վերաբերյալ ոչ միջնորդավորված երկխոսություն ծավալվեց, ոչ էլ անգամ խորը միջնորդավորված բանավեճ, քանի որ մի կողմին առանձնապես չէին հետաքրքրում մյուս կողմի մտահոգությունները: Տարակարծության մակարդակն երբեմն այնքան բարձր էր, որ կարելի է առանձնացնել հիմնահարցեր և թեմաներ, որոնք հակամարտության մի կողմի մոտ առաջացնում են կարծիքներ և մտավախություններ, մինչդեռ զրոյական հետաքրքրություն են առաջացնում մյուս կողմի մոտ: Սա բավականին հակասական բացահայտում է մի համատեքստում, որտեղ և հայերը, և ադրբեջանցիները քննարկում էին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման միևնույն սցենարները:

Ստորև հնարավորինս անկողմնակալ կերպով և առանց քաղաքական եզրակացություններ կատարելու ամփոփված են հիմնական եզրակացությունները և դիտարկումները: Մենք չենք ստանձնել մարդկանց արտահայտած կարծիքները «ճշմարտություններ» և «ստեր» որակելու դերը: Անհրաժեշտ է կարդալ արտահայտված մտքերը՝ ըմբռնելու համար կողմերի կարծիքների ամբողջ խորությունը և հուզական կողմը:

Ներկա իրավիճակը

Հակամարտության բոլոր կողմերը արտահայտել են ներկա իրավիճակի, այն է՝ ստատուս քվոյի նկատմամբ վերաբերմունքի և կարծիքների բազմազանություն: Հետաքրքրական է, որ այն դեպքերում, երբ բոլոր երկրների մասնակիցները արտահայտել են համընկող կարծիքներ և դիրքորոշումներ, բերված մեկնաբանությունները ուսումնասիրելիս՝ երևում է, որ դրանց հետևում գտնվող շահերը տարբեր են: Ներկա իրավիճակը պահպանելու կարծիքները հիմնականում պայմանավորված են երկու գործոններով՝ պատերազմի և/կամ ավելի լավ այլընտրանքների բացակայությամբ: Բացի այդ, ստատուս քվոյի երկարաձգու-

մը դիտարկվում է, որպես հնարավորություն երկու կողմերի համար, սակայն տարբեր կերպ: Այսպիսով, հայերն այն դիտարկում են որպես անվտանգության երաշխիք մինչ «նավթն Ադրբեջանում կսպառվի», իսկ ադրբեջանցիները այն համարում են ճնշում Հայաստանի վրա՝ նկատի ունենալով մեկուսացումը և շրջափակումը մինչ «Հայաստանը կպարտվի տնտեսական զարգացման մրցավազքում»: Ներկա իրավիճակի պահպանմանը դեմ ուղղված կարծիքները արդյունքն են անորոշության և ինչ-որ առումով ստատուս քվոյի դյուրաբեկության: Ստատուս քվոյի դեմ ադրբեջանցիների կողմից բերված հիմնական փաստարկը այն է, որ Լեռնային Ղարաբաղում փաստացիորեն իշխում է Հայաստանը: Ստատուս քվոյի վերաբերյալ կան նաև այլ կարծիքներ, որոնք արտացոլում են մարդկանց՝ ստատուս քվոյի որպես բնական և/կամ փոխհամաձայնության վրա հիմված կամ իշխանության համաշխարհային կենտրոնների և տարածաշրջանում Ռուսաստանի և ԱՄՆ-ի նման աշխարհաքաղաքական դերակատարների կողմից պարտադրված ընկալումը:

Պատերազմ

Հայ և ադրբեջանցի մասնակիցների կարծիքները հիմնականում համընկում են պատերազմի մասին խոսելիս: Պատերազմը ընկալվում է որպես վերջին տարբերակ՝ բացասական զարգացում, սակայն որոշ դեպքերում անխուսափելի զարգացում: Կան նաև մարդիկ, որոնք հավատացած են, որ պատերազմն անհնարին է: Արժանահիշատակ է այն, որ կարծիքներն այս առումով ինչ-որ չափով համընկում են և հաճախ գրեթե նույնական են: Մարդկանց մեկ այլ խումբ հավատացած է, որ պատերազմն անխուսափելի է՝ չնայած այն բանին, որ բոլոր երկրների համաքաղաքային քննարկման մասնակիցները կողմ չեն պատերազմին: Որոշ մարդիկ գտնում են, որ պատերազմը վերջին տարբերակն է և հավատացած են, որ փոխզիջումներն ու բանակցությունների միջոցով խաղաղ կարգավորումը կենսունակ այլընտրանք են պատերազմին: Մինչդեռ, մյուսները վստահություն չեն տածում բանակցությունների և խաղաղ կարգավորման նկատմամբ՝ մտածելով, որ պատերազմից բացի ստատուս քվոյի համար այլ այլընտրանք գոյություն չունի: Հնարավոր ապագա պատերազմի հետևանքները տարբեր կերպ են ընկալվում կողմերի կողմից, քանի որ ադրբեջանցիները որոշ առումով կիսում են այն տեսանկյունը, որ հնարավոր պատերազմը նշանակում է պատերազմ Ռուսաստանի դեմ:

Անվտանգություն

Անվտանգությունն ընկալվում է որպես մարդկային հիմնական կարիք և այն մարդկանց ամենաառաջնային մտահոգությունն է: Սա ամբողջովին տարածվում է նաև ԼՂ հակամարտությանը վերաբերվող բոլոր առանցքային հիմնահարցերին, լինի դա փախստականների և ներքին տեղաշարժված անձանց (ՆՏԱ) վերադարձը, տնտեսական զարգացումը և հաղորդակցությունը, թե պատերազմը, ինքնությունը, մշակույթը և անգամ համակեցության հնարավորությունն ու այլ հիմնահարցեր: Անվտանգության ընկալումը էականորեն տարբեր-

վում է հայ և ադրբեջանցի մասնակիցների մոտ: Թվում է, թե այս հարցն ամենահակասականն է կողմերի համար: Անվտանգության վերաբերյալ մարդկանց կողմից արտահայտած հիմնական մտահոգությունները կարելի է խմբավորել հետևյալ տրամաբանությամբ՝

- Ինքնություն և համակեցություն

Հայերը հավատացած են, որ Ադրբեջանի իշխանությունը առանցքային վտանգ է հայերի ինքնության համար և համարում են այս վտանգը հակամարտության ծագման պատճառ: Նրանք նաև պատմական հիշողությանն են հղում կատարում՝ հիմնավորելու իրենց դիրքորոշումը: Ադրբեջանցիների կարծիքներն այս հարցում տարբերվում են միմյանցից՝ որոշները համարում են հայերի և ադրբեջանցիների համակեցությունն անհնարին, մինչդեռ մյուսները մտածում են, որ հայերը պետք է իրավունք ունենան ապրելու Ադրբեջանում, սակայն չպետք է որպես փոքրամասնություն առանձնահատուկ իրավունքներից օգտվեն՝ կրթության և լեզվի իրավունքից բացի:

- Ռազմական անվտանգություն

Մասնակիցների մեծ մասը համարում են ներկայիս ստատուս քվոն ռազմական ուժերի առկա հավասարակշռության արդյունք: Հայերը և ադրբեջանցիները համակարծիք են, որ ռազմական անվտանգությունը շատ կարևոր է և պետք է ապահովվի սեփական ռազմական ուժերի կողմից: Ռազմական անվտանգության առումով հայերը ցանկանում են, որ ստատուս քվոն պահպանվի, մինչդեռ ադրբեջանցիները ցանկանում են, որ ադրբեջանական ռազմական ուժերը տեղակայվեն ԼՂ-ում: Նշանակալի է այն, որ երկու կողմերն էլ միաձայն մերժում են խաղաղապահների տարբերակը (տես Միջազգային խաղաղապահներ բաժինը):

- Ժողովրդագրություն

Հայերը ժողովրդագրական փոփոխությունները համարում են Լեռնային Ղարաբաղում իրենց ինքնությանը սպառնացող վտանգներից մեկը: "Ժողովրդագրական սպառնալիքը" փախստականների և ՆՏԱ-ների վերադարձի նկատմամբ առկա վերաբերմունքը պայմանավորող հիմնական գործոններից մեկն է: Թվում է, որ ադրբեջանցիները ժողովրդագրությունը առհասարակ որպես հիմնախնդիր չեն դիտարկում:

- Սպառնալիքներ և վախեր

Անվտանգության հետ կապված այլ հիմնահարցերը կարել է ամփոփել որպես տարբեր

գործոններից բխող վախեր և սպառնալիքներ, որոնք թվարկված են ստորև՝

հայեր	ադրբեջանցիներ
ժամանակ, իրավական հարցեր, պատմական հիշողություն, բնական վախ, վախը Թուրքիայի հանդեպ, հնարավոր պատերազմ	հոգեբանություն, բնապահպանություն, իրավական հարցեր, էթնիկ խմբերի անջատողականության նախադեպ, սև շուկա

- Քաղաքականություն և դիվանագիտություն

Մասնակիցների մեծ մասը համարում են, որ Հարավային Կովկասը գտնվում է համաշխարհային իշխանության կենտրոնների շահերի խաչաձև կրակի ներքո: Մասնակիցներից շատերը հավատացած են, որ իրենց քաղաքական առաջնորդները և կառավարությունները չունեն համապատասխան կարողություններ դեմ առ դեմ կանգնելու այդ շահերից բխող մարտահրավերներին և համապատասխանորեն արձագանքել դրանց՝ առաջնորդվելով իրենց ազգերի շահերով: Հայերի մեծամասնությունը վախենում են ադրբեջանական դիվանագիտության կողմից և "տեղեկատվական պատերազմում" խորամանկությամբ գերազանցված լինելուց: Ադրբեջանցիները դիտարկում են ԼՂ հակամարտությունը որպես գործիք տարածաշրջանում հզոր դերակատարների ձեռքում և վախենում են այդ դերակատարների կողմից մանիպուլացվելուց:

- Տնտեսական և սոցիալական զարգացում

Համաքաղաքային քննարկման մասնակիցները նաև մտահոգ են իրենց հասարակությունների տնտեսական և սոցիալական զարգացման հիմնահարցերով և համարում են, որ հակամարտությունը առանցքային ազդեցություն ունի դրանց վրա: Շատերի կարծիքները համընկում են առ այն, որ ԼՂ հակամարտության կարգավորումը որոշիչ ազդեցություն չի ունենա տնտեսական զարգացման և բարեկեցության վրա: Հակամարտության բոլոր կողմերը տնտեսական և սոցիալական զարգացմանը վերագրում են ինչ-որ առումով առանցքային դեր ապագայում ԼՂ հակամարտության կարգավորման գործում: Այսպիսով, մինչ հայերը ուժեղ տնտեսական զարգացումը դիտարկում են որպես հակամարտության լուծմանը նպաստող առանցքային գործոն՝ ադրբեջանցիներից շատերը հավատացած են, որ Հայաստանի շրջափակումը պետք է շարունակել՝ ապագայում իրենց համար նպաստավոր լուծում գտնելու նպատակով:

Ապառազմականացում

Կարգավորման հնարավոր սցենարների առանցքային հիմնահարցերից է տարածաշրջանի ապառազմականացումը: Սա համահունչ է հարակից տարածքների վերադարձման և Լեռնային Ղարաբաղում միջազգային խաղաղապահ առաքելություն տեղակայելու հայեցակարգերի հետ: Չնայած հարակից տարածքների և խաղաղապահների վերաբերյալ առկա տարբեր կարծիքներին (տես համապատասխան բաժինները)՝ ապառազմականացման վերաբերյալ գրեթե բոլոր

կարծիքները բացասական են: Հայերը որպես անվտանգության միակ երաշխիք տեսնում են իրենց զինված ուժերի դերը, մինչդեռ ադրբեջանցի մասնակիցները ապառազմականացումն ընդունում են որպես միակողմանի՝ միայն հայկական գործընթաց: Այսպիսով, և՛ հայ, և՛ ադրբեջանցի մասնակիցները մերժում են ապառազմականացված գոտու հայեցակարգը:

Միջազգային խաղաղապահներ

Կողմերը կիսում են միջազգային խաղաղապահների և ապագայում տարածաշրջանում նրանց հնարավոր դերի նկատմամբ վերաբերմունքը: Մասնակիցների մեծամասնությունը մերժում են խաղաղապահ առաքելության գաղափարը՝ բերելով տարբեր փաստարկներ: Նրանք, ովքեր համաձայն եմ տարածաշրջանում խաղաղապահ առաքելություն տեղակայելու գաղափարի հետ՝ առաջ են քաշում որոշ պայմաններ: Այդ պայմանները սովորաբար բացառում են միմյանց: Սակայն, պետք է նշել, որ խաղաղապահների նկատմամբ վերաբերմունքը մեծապես պայմանավորված է այլ դերակատարների նկատմամբ քաղաքական վերաբերմունքով, երբ քննարկման մասնակիցները դիտարկում են ոչ թե «խաղաղապահ զինվորին», այլ ավելի հաճախ նրա ներկայացրած երկիրը/ազգությունը: Թվում է, որ խաղաղապահ հասկացությունը տարածաշրջանում բավականին բացասական երանգ ունի:

Հողային հաղորդակցություն

Քննարկման մասնակիցների կողմից քննարկված հարցերից մեկը Քի Ուեսթյան ծրագրի, որը ժամանակին դրված էր բանակցությունների սեղանին և մերժվել է երկու կողմերից , հետադարձ քննումն էր: Այդ ծրագրի բաղադրիչներից մեկը արագ կարգավորումն էր և Լեռնային Ղարաբաղի անկախությունը՝ Հայաստանի հարավում Ադրբեջանին ինքնիշխան միջանցք տրամադրելու դիմաց: Մասնակիցների մեծ մասը մերժում են նախկինում քննարկված այդ հնարավորությունը: Հայերը մերժում են այն՝ վերհիշելով Մեղրին կորցնելու իրենց վախը: Մինչդեռ ադրբեջանցիները, նույնպես մերժելով այս տարբերակը, փաստարկում են, որ նման «փոխանակությունը» ամենևին էլ փոխզիջում չէ: Նրանք նման «փոխանակությունը» համարում են կամ անարդարացի կամ համարում են, որ Իրանի միջոցով դեպի Նախիջևանի անկլավ ճամփորդելու ներկայիս այլընտրանքի առկայությունը արժեզրկում է այդ տարբերակը: Պետք է նշել, որ այս հարցի շուրջ քննարկումը հայերի մոտ բարձրացրեց Նախիջևանի հետ կապված հույզեր:

Տարածքներ

Լեռնային Ղարաբաղի հակամարտության աշխարհագրությունը բավականին բարդ է, հետևաբար հայերը և ադրբեջանցիները, ինչպես նաև միջազգային հանրությունը և դիվանագետները մշակել են այն նկարագրելու իրենց բառապաշարը: Բառապաշարը բավականին բազմազան է և ներառում է բազմակի

սահմանումներ ու եզրույթներ՝ Լեռնային Ղարաբաղ, ազատագրված տարածքներ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք, բռնագրավված տարածքներ, հարակից տարածքներ, շրջապատող տարածքներ, բուֆերային գոտի, անվտանգության գոտի, յոթ շրջաններ, հինգ շրջաններ և այլն: Այս հրատարակության նպատակը ոչ թե հակամարտության աշխարհագրության բացահայտումն է, այլ աշխարհագրության վերաբերյալ հայերի և ադրբեջանցիների տեսակետների վեր հանումը՝ դասակարգելով, խմբավորելով և ցուցադրելով մարդկանց կարծիքների ողջ շրջանակը: Հակամարտության ողջ աշխարհագրությունը որպես մեկ ամբողջություն մեկնաբանող տարբեր կարծիքներ և տեսանկյուններ գոյություն ունեն, որոնք համարում են այդ աշխարհագրությունը հակամարտության անբաժանելի մասը: Նման տեսանկյունները կարող են դասակարգվել որպես "Ամեն ինչ կամ ոչինչ" ենթախումբ, որը դիտարկում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծումն իր ողջ աշխարհագրությամբ: Այս մոտեցումը շատ նման է արդեն քննարկված «Ստատուս քվո կամ պատերազմ» մոտեցմանը: Հայերի մոտ այս մոտեցումը ներկայացվում է որպես «դրանք միայն մեր հողերն են», մինչդեռ ադրբեջանցիների կողմից միևնույն վերաբերմունքը հիմնավորվում է «երբ մենք խոսում են տարածքների վերադարձի մասին, մենք նկատի ունենք Լեռնային Ղարաբաղը և շրջապատող բոլոր տարածքները» մոտեցմամբ:

Բոլոր մասնակիցների մոտ կան նաև կարծիքներ, որոնք խոսում են հարակից տարածքների (ինչ-որ առումով համընկնում են նախկին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի վարչական տարածքների հարևան շրջաններին) մասին՝ որպես բանակցությունների սեղանին դրված աշխարհագրության մաս: Սակայն, անգամ նրանք, ովքեր խոսում են հարակից տարածքների մասին հիմնականում դրանք համարում են ԼՂ մաս: Այս առումով շատ կարծիքներ, ըստ էության, նման են «Ամեն ինչ կամ ոչինչ» դիրքորոշման հիմնավորումներին:

Հայերի կարծիքները կարելի է նաև դասակարգել ըստ հուզական և ռացիոնալ տիպերի: Հուզական մոտեցումը հարակից տարածքներին հղում է կատարում դրանց համար տրված զոհերին և թափված արյանը: Ռացիոնալ վերաբերմունքը հղում է կատարում անվտանգության երաշխիքներին, բուֆերային գոտուն կամ սակարկելու ռեսուրսին:

Բերդձորը և Քարվաճարը (Լաչինը և Քելբաջարը) նախկին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը և Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը միմյանց կապող տարածքներն են, որոնք հաճախ օգտագործվում են «միջանցք» անվանմամբ: Ասվում է, որ դրանց կարգավիճակը դրված է բանակցությունների սեղանին՝ որպես Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև կապի երաշխիք, մինչ ԼՂ կարգավիճակի շուրջ համաձայնություն ձեռք կբերվի: Հայ և ադրբեջանցի մասնակիցների կարծիքը 180 աստիճանով տարբերվում են. մենք ականատես եղանք այդ հարցի շուրջ ամբողջովին հակադիր կարծիքների՝ մի քանի բացառություններով: Այսպիսով, շատ մարդկանց վերաբերմունքը «միջանցքի» կարգավիճակի նկատմամբ միանգամայն համահունչ է հակա-

մարտության կարգավորման իրենց տեսանկյան հետ: Այլ կերպ ասած «միջանցքը» ինչ-որ առումով դիտարկվում է որպես «մրցանակ» այն կողմի համար, ում օգտին կլուծվի ընդհանուր հակամարտությունը:

Մի շարք այլ կարծիքներ են հնչել հարակից տարածքների այլ տարբերակների վերաբերյալ, որոնք հաշվի են առնում հակամարտության ավելի ընդգրկուն աշխարհագրությունը և անպայմանորեն հղում չեն կատարել պաշտոնական հայտարարություններին կամ դիվանագիտական դիրքորոշումներին: Հակամարտության աշխարհագրության ընկալումները կտրուկ տարբերվում են Շահումյանից մինչև Գետաշեն և Զանգեզուր:

Փախստականներ և ներքին տեղաշարժված անձիք

Հայերի և ադրբեջանցիների ընկալումները փախստականների և ՆՏԱ-ների վերաբերյալ կտրուկ տարբերվում է: Երբեմն դժվար է խմբավորել կարծիքները մեկ խմբի մեջ, քանի որ տարբեր երկրներում անցկացված քննարկման ժամանակ հնչած կարծիքները գրեթե չեն համընկում: Ընդհանուր առմամբ, և՛ հայ, և՛ ադրբեջանցի մասնակիցների մոտ կան փախստականների և ՆՏԱ-ների վերադարձի հետ համաձայն կարծիքներ: Այնուամենայնիվ, փախստականների՝ տուն վերադառնալու պահանջների հետ համաձայնող շատ մտքեր արտահայտվում են հատուկ պահանջներով: Փախստականների վերադարձին դեմ կարծիքները հիմնականում համարում են, որ վերադարձը վերաբերվում է միայն ադրբեջանցի փախստականներին կամ ՆՏԱ-ներին: Նման մոտեցումը անմիջական արտացոլումն է սցենարում հնչած կարծիքի, որն իր հերթին ձևավորվել է ԶԼՄ-ներում արտացոլված պաշտոնական դատողություններում: Հայերի մեծ մասը դեմ են ադրբեջանցի փախստականների և ՆՏԱ-ների վերադարձին: Հայ մասնակիցները նաև մտահոգություն են հայտնում փախստականների վերադարձի վերաբերյալ քննարկումների անհամաչափության և կողմնակալության հետ կապված: Մասնակիցների վերաբերմունքը կտրուկ տարբերվում է «մեր» և «նրանց» փախստականների և ՆՏԱ-ների նկատմամբ:

Կան կարծիքներ, որոնք ուղղակիորեն ցույց չեն տալիս մասնակիցների դիրքորոշումը փախստականների և ՆՏԱ-ների վերադարձի վերաբերյալ: "Մենք չենք վերադառնա/նրանք չեն վերադառնա" բնույթի մտքերն արտահայտում են այն տեսանկյունը, որ երկու կողմերի փախստականները և ՆՏԱ-ները հնարավոր է չցանկական վերադառնալ:

Փախստականների և ՆՏԱ-ների և նրանց վերադարձի նկատմամբ մասնակիցների վերաբերմունքն ինչ-որ առումով կարելի է համարել որպես նրանց դիրքորոշումների փաստարկներ և մեկնաբանություններ: Յուրաքանչյուրի վերաբերմունքն ինչ-որ առումով եզակի է և ներկայացնում է մտահոգություններ ժողովրդագրական վախերի, արդարության, մարդու իրավունքների, անվտանգության և հակամարտության նոր աղբյուրների հետ կապված:

Փախստականների վերադարձը՝ որպես քաղաքական ենթատեքստ և արտաքին ուժերի կողմից հրահրվող գործընթաց ներկայացնող մտքերն արտահայտում են միայն հայերը: Ընդհանուր առմամբ այս կարծիքները դիտարկում են փախստականների և ՆՏԱ-ներ վերադարձի հարցը հնարավոր քաղաքական շահի և "մանիպուլյացիայի"-ի տեսանկյունից և համարում այդ գործընթացը արտաքին ուժերի կողմից հրահրած կամ արհեստական:

Ապագային նայելով, կարգավորման հետաձգումը

Ժամանակի գաղափարը ԼՂ հակամարտության մեջ դոմինանտ է դարձել. «ժամանակն անցնում է, անց են կացվում բանակցություններ, հրադադարի պայմանագիր կա, իսկ ապագան անորոշ է»: Քաղաքական գործընթացներն, անկասկած, ազդում են սովորական մարդկանց դատողությունների վրա: Հակամարտության ապագայի վերաբերյալ մասնակիցների տեսանկյունը կարելի է համախմբել ըստ ստորև նշված խմբերի՝

- Ապագան անորոշ է, հակամարտությունը չլուծված

Այս տեսանկյունը համընկնում է ստատուս քվոյի պահպանման տեսանկյանը: Փաստարկումները շատ տարբեր են, սակայն դրանք ցույց են տալիս քաղաքական գործընթացների արդյունավետության նկատմամբ մասնակիցների ունեցած վստահության մակարդակը: Թվում է, թե մասնակիցները հակամարտության կարգավորումը տեսնում են միայն մեկ՝ իրենց պրիզմայով: Հետևաբար, մասնակիցների կարծիքներն ինչ-որ առումով հակամարտության մեր օգտին/ի շահ մեզ կարգավորման իրականության փորձարկումն են: Այլընտրանքային տարբերակներն անխուսափելիորեն նյարդայնացնում են կամ հանգեցնում են «չարյաց փոքրագույն»-ի արդարացումների՝ «եթե չի կարգավորվելու, այնպես, ինչպես մենք ակնկալում ենք, ապա թող այն մնա չկարգավորված»:

- Լեռնային Ղարաբաղը անկախ պետություն է կամ Հայաստանի մասն է:

Շատ հայեր պարզորոշ տեսնում են Լեռնային Ղարաբաղի ապագան որպես անկախ պետություն կամ Հայաստանի մի մաս, մինչդեռ ադրբեջանցիները մերժում են այդ տեսակետը:

- Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մասն է

«Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմում ավելի լայն ինքնավարության կարգավիճակով» տարբերակի մանրամասները չեն քննարկվել, սակայն մասնակիցները փորձեցին պատկերացնել նման ապագա: Հատկանշական է, որ մասնակից հայերի և ադրբեջանցիների մեծ մասը կիսում են համակեցության անհնարինության վերաբերյալ տեսանկյունը, թեպետ հակադիր կարծիքներ ունեն Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի վերաբերյալ:

- Փախստականների և հարակից տարածքների հարցի լուծում՝ թողնելով կարգավիճակի որոշումը ապագային՝ հանրաքվեի միջոցով

Հակամարտության աշխարհագրությամբ մտահոգ մարդիկ հարց են բարձրացնում, թե որ ԼՂ-ի մասին ենք մենք խոսում դրա ապագա կարգավիճակը քննարկելիս: Հետաքրքրական է, որ մասնակից հայերի և ադրբեջանցիների մեծ մասը դիտարկում են հանրաքվեն ռիսկերի, այլ ոչ թե հնարավորությունների տեսանկյունից: Արդյունքների հետ կապված վախերը գերակշռում են: Մինչ հայերն ասում են «սկզբից կարգավիճակի և տարածքների հարցը՝ հետո փախստականները», ադրբեջանցիներն ասում են «Լեռնային Ղարաբաղի բնակիչները միայն կարող են որոշել իրենց ապագան համաձայն Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի և Սահմանադրության»: Միակ կարծիքը, որն այս երկու բևեռների մեջտեղում է գտնվում արտահայտվեց մեկ ադրբեջանցու կողմից. «մենք պետք է ապացուցենք նրանց, որ նրանց համար լավ կլինի Ադրբեջանի կազմում մնալ»:

Վստահություն

Արժանահիշատակ է այն, որ մասնակիցները խոսեցին վստահության հարցի մասին՝ որպես յուրաքանչյուր սցենարի համար կարևոր հարց՝ չնայած այն փաստին, որ վստահության հարցն անմիջականորեն արտացոլված չէր սցենարներում: Կողմերի կողմից հնչեցված բոլոր կարծիքները, մտահոգությունները և կարծիքները բորբոքում են հույզեր, արթնացնում պատմական հիշողություններ և հիմնվում անձնական փորձի վրա: Այդ կարծիքներն արտահայտում են առկա կարծրատիպերը և այն մարտահրավերները, որոնք առկա են հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում: Հետևաբար, կարծրատիպերի փոփոխման համար առանցքային նշանակություն ունի անդրադառնալ հակամարտության մյուս կողմի, իրենց, այլ դերակատարների և գործընթացների վերաբերյալ բարձրաձայնած մեկնաբանությունների և վերաբերմունքի բացատրություններին:

Ընդհանուր առմամբ, և հայ, և ադրբեջանցի մասնակիցները մարդիկ հավատում են, որ որոշ պայմանների և/կամ փոխզիջման պարագայում հնարավոր է վերականգնել վստահությունը. «<u>վստահություն կարող է լինել, եթե ...</u>»: Սակայն, մեծամասամբ նման պայմանները իրատեսական չեն կամ ենթադրում են մյուս կողմից զգալի զիջումներ: Կարծիքների մեծամասնությունը արտացոլում է հայերի և ադրբեջանցիների տածած անվստահությունը միմյանց հանդեպ, և միայն մի քանի կարծիքներ են արտահայտում փոխադարձ վստահություն: Եվ հայերը, և ադրբեջանցիները վստահություն և անվստահություն են տածում հակամարտության այլ առանցքային դերակատարների նկատմամբ, ինչպիսիք են Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Թուրքիան, Իրանը, ԵԱՀԿ Մինսկի խումբը, Եվրոպան և այլն: Հայ և ադրբեջանցի քննարկումների մասնակիցները անվստահություն են տածում նաև մյուս դերակատարների հանդեպ:

Հաղորդագրություններ

Ներկա իրավիճակ

Ներկա իրավիճակի պահպանմանը կողմ կարծիքներ

Հայեր

- Եթե Ղարաբաղն անկախ չի լինելու, ապա միակ մեզ ձեռնտու տարբերակը ստատուս քվոն է. իհարկե, սա էլ իր հերթին իր «մինուսներն» ունի, բայց դրանք մյուս հնարավոր սցենարների համեմատ ավելի քիչ են:
- Ստատուս քվոյի մինուսներն ավելի քիչ ենք, քան պլյուսները
- Ստատուս քվոյի առավելություններն ավելի էին, քան երրորդ սցենարում է
- Եթե չենք ցանկանում ԼՂ-ի հետագա զարգացումը, ապա Ստատուս քվոն մեզ ձեռք է տալիս:
- Ստատուս քվոյի միակ հնարավոր շարունակությունը տնտեսական ներդրումների կատարումն է:
- Պաղեստինի օրինակով՝ արդեն քանի տասնամյակ չկա ճանաչում, սակայն կա ստատուս քվոն: Ու սա ունի շարունակություն՝ Կոսովոյի օրինակով:
- Ստատուս քվոն պետք է պահպանվի, քանի որ այն մեզ ձեռնտու է:
- Ստատուս քվոն խնդրի լուծում չի, բայց այս պահի դրությամբ այն մեզ ձեռնտու միակ տարբերակն է
- Սատուս քվոն համեմատության մեջ է լավ:
- Ստատուս քվոյին կողմ ենք այսօրվա դրությամբ:
- Ստատուս քվոն չպահպանենք ի՞նչ անեք՝ ի՞նչ հանձնենք:
- Ստատուս քվոն թող շարունակվի, բայց պետք է գտնել տարբերակ պատերազմը բացառելու համար:
- Ստատուս քվոն պետք է պահել այնքան ժամանակ, քանի դեռ երաշխիքներ չունենք:
- Ստատուս քվոն մեզ առավելություն է տալիս բանակցային գործընթացում՝ մենք հաղթողն ենք, ով պետք է «ծիծաղի». դեհ, վստահ մնանք, մենք հաղթողն ենք:
- Եթե հարցը չի լուծվում այնպես, ինչպես մենք ենք ուզում, ապա ստատուս քվոն պետք է պահել:
- Ներկա պահին ստատուս քվոն ավելի լավ է, քան պատերազմական վիճակ լիներ:
- Ադրբեջանի զորքերը հիմա ավելի ուժեղ են, մենք չենք կարող նրանց հետ համեմատվել, ավելի լավ է ստատուս քվո լինի:
- Ստատուս քվոյից պետք է օգտվել. անենք ամեն ինչ Ղարաբաղը վերաբնակեցնելու, զարգացնելու համար

- Ստատուս քվոն այն վիճակն է, ինչի մենք այսօր հասել ենք:
- Ստատուս քվոյի միակ դրական կողմն այն է, որ առճակատում չկա:
- Ստատուս քվոն առավել շատ հարմար է ղարաբաղցիներին և Ղարաբաղին, ինչը մեծ մասամբ Հայաստանի «հաշվին» է պահպանվում:
- եթե Ադրբեջանը գնում է փոխզիջումների, պետք է Հայաստանը դեռ պահպանի ստատուս քվոն, որպեսզի շահեկան փոխզիջում լինի բանակցությունների սեղանին
- Ավելի լավ ա մնա ստատուս քվո, քան թե երրորդ տարբերակով լինի:
- Պրովոկացիաներ երկու կողմից էլ կլինեն, նման բաներ տեղի են ունենում անգամ այլ՝ չպատերազմող երկրներում: Սա այդքան էլ ծանր հարց չէ, որ սասանի ստատուս քվոն:
- Մադրիդյան սկզբունքները՝ տարածքային ամբողջականություն, ինքնորոշման իրավունք և ուժի բացառում, դա հենց ստատուս քվոյի ապահով շարունակությունն է:
- Ստատուս քվոյի մինուսները շատ են, բայց եղած պլյուսներն էլ այնքան ծանրակշիռ են, որ ծածկում են ցանկացած մինուս:
- Ստատուս քվոն մեզ ավելի ձեռնտու է, քան Ադրբեջանին, քանի որ այս հողի վրա նոր սերունդ է գալիս, մեծանում ու ամրանում:
- Ստատոս քվո... միանշանակ... սրա միակ ռիսկը պատերազմի վերսկսումն է, բայց դե սա էլ հա կա էլի...
- Ստատուս քվոյի լավ կողմն այն է, որ փաստացի մենք Հայաստանի հետ միավորված ենք, գնալ-գալ ունենք, ամեն տեսակի կապեր հաստատված են:
- Ստուտս քվոն տաս չէ, քսան տարի էլ կարող է տևել... այնքան ժամանակ, քանի դեռ Ադրբեջանն իրոք չի գիտակցում, որ ուժեղ է...
- Այսօրվա ստատուս քվոն համեմատաբար լավ է մեզ համար, սակայն վատ է, որ Ղարաբաղը չի ճանաչվում մյուսների կողմից: Կարգավիճակը պետք է ճանաչվի:
- Մեզ չեն ճանաչելու, մենք էլ իրենց պարտադրած լուծումը չենք ընդունելու: Միջին լուծում չկա. ստատուս քվո մինչև պատերազմի վերսկսում, ինչն անխուսափելի է:
- Ոչինչ, ոնց կար մինչեւ հիմա, թող շարունակվի, ստատուս քվոն կպահենք:
- Այս տարբերակով հիսուն-հիսուն է հավանականությունը, թե կվերսկսվի պատերազմ: Ու թե լինի էլ՝ կլինի իրենց նախաձեռնությամբ, մեզ այս իրավիճակը մասամբ ձեռնատու է, մենք կարող ենք այսպես շարունակել ապրել:
- Ստատուս քվոն որ մնա, լավ կլինի, որովհետև հետագայում այս հողերը մեզ մնալու հավանականությունը ավելի մեծ կլինի, իսկ եթե հողերը հիմա տանք, հետո էլ հետ չենք վերցնի. ժամանակի ընթացքում հարցն ինքն իրեն կլուծվի:
- Այսօր ստատուս քվոն ձեռնտու է մեզ. նախ զինված գործողություններ չկան, մյուս կողմից էլ շատ թե քիչ զարգանում ենք: Բայց այս ընդմիջումը պիտի օգտագործենք ավելի մեծ զարգացում ապրելու համար:

- Ստատուս քվոն մեզ ձեռնտու է, քանի որ այս տարբերակում մեր հողերը հետ տալու հարց չի ծագում:
- Ավելի լավ է մենք մնանք ստատուս քվոյում...
- Ես ստատուս քվոից լավ տարբերակ չեմ տեսնում, առնվազն մոտ ապագայում:
- Ստատուս քվոն պետք է պահենք, մինչե խաղաղությունը կհաստատվի:
- Պետք է սպասենք ու ստատուս քվոն մի քիչ էլ պահենք, մինչև որ Ադրբեջանի նավթը կպրծնի ու միջազգային հանրությունը կանցնի մեր կողմը:
- Ղարաբաղին արդեն դե ֆակտո ճանաչում են ու որոշակի միջոցներ հատկացնում են, պիտի աշխատենք ստատուս քվոն պահպանել այնքան, մինչև Ղարաբաղը դառնա բանակցող կողմ:
- Ստատուս քվոն անառողջ իրավիճակ է, սակայն եթե մենք պատրաստ ենք ևս մի քանի տարի ապրենք այդ անառողջ պայմաններում, ուրեմն հասկացեք, թե որքան կարևոր է մեզ համար մեր անկախությունը:
- Մենք մեր կամքի ցուցաբերման միջոցով ենք հասել ստատուս քվոին, ու ոչ ոք մեզ չի խանգարում, որ այսպես շարունակվի...
- Ներկա պահին ստատուս քվոն ցանկալի տարբերակ է, որովհետեւ մենք պահպանում ենք մեր ունեցածը:
- Ստատուս քվոն այնքանով լավ է, որ հիմա մեզ չեն կարողանա խաբել:
- Ստատուս քվոն ինքնանպատակ չի, սա միջոց է մեր հիմնական խնդիրը լուծելու համար:
- Մենք ենք որոշելու՝ պահենք, թե չպահենք ստատուս քվոն: Մեզ հիմա ցանկալի է այս վիճակի շարունակությունը՝ մինչեւ մեր հարցը կլուծենք:
- Ներկայումս ԼՂՀ-ում շատ ռեստորաններ կան, որոնք Հայաստանից շատ լավն են. այսօր որևէ զիջման տարբերակ քննարկել պարզապես չի կարելի:
- Ամերիկյան կառավարությունը ներկայումս հատկացումներ անում է Ղարաբաղին, այսինքն Ղարաբաղը արդեն ստանում է միջազգային օգնություն, մենք մեկուսացված չենք:
- Ղարաբաղը հիմա էլի զարգանում է, և Հայաստանից էլ առաջ է:
- Մենք պետք է հասնենք նրան, որ ամբողջ աշխարհը ճանաչի Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը, թող ղարաբաղցիները որոշեն:
- Մեր արտաքին քաղաքականությունն ավելի ճկուն է դառնում, իրենք կորցնում են իրենց դերակատարումը: Օրինակ՝ հայ-թուրքական սահմանի բացումը ցանկալի է նախ թուրքերին, իրենք հասկանում են, որ մենք դուրս ենք գալիս շրջափակումից՝ Իրանի հետ նոր գործընթաց ենք սկսում:
- Յուրաքանչյուր պետություն պարտավոր է իր ժողովրդի անվտանգությունն ապահովել... դե մենք էլ հենց էս ենք արել էլի, ինչի՞ են մեզանից նեղանում...
- Սահմանը այսօր բաց է, ո՞վ է փակել: Այսօր թուրքն ու հայը լավ էլ առևտուր են անում, գնում են Սադախլու իրար հետ առևտուր անում: Ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի:
- Այս իրավիճակը մեզ այնքան էլ ձեռնտու չի, բայց լավն այն է, որ մենք այս սցենարով ոչինչ չենք զիջում:

- Այս սցենարներից բոլորն էլ թերություններով են, բայց գնալով պայմանները, կարծես թե, մեզ համար լավանում են:
- Մենք առանց Թուրքիայի ու Ադրբեջանի ապրել ենք, հենց սահմանի փակ լինելը ստիպում է մեզ ավելի խելոք լինել ու ավելի ճկուն լինել...
- Մեր դիվանագիտությունը պետք է աշխատի ստատուս քվոյի միջոցով, ամենամինիմալ զիջումով հասնել վերամիավորմանը:
- Ադրբեջանի զարգացումն ենք հա քննարկում, բայց խի չենք մտածում, որ մենք էլ ենք զարգանում, ինչի չենք ասում, որ հենց մեր կազմում է, որ Ղարաբաղը կզարգանա:
- Հինգերորդ տարբերակը կարելի է հիմք ընդունել՝ այդ թվում ստատուս քվոյի քննարկումների ժամանակ, այս սցենարը դնել բանակցությունների սեղանին
- Քաղաքակիրթ ճանապարհով այս հարցը կլուծվի: Մեր մեջքին կա հզոր պետություն և մենք էլ թույլ չենք:
- Մեր կողմը բանակցությունների ժամանակ ավելի պահանջող պետք է լինեն:
- Ադրբեջանը նավթ ունի, մենք միջազգային աջակցության մեծ հույսեր էլ չունենք, բայց հասկանում ենք, որ սա գին է, որ մենք վճարում ենք:
- Ինչքան էլ քննարկենք, ընդհանուր եզրահանգման գալ չի հաջողվում: Սակայն այս հարցի լուծումը ժողովուրդը վաղուց տվել է՝ մեր միասնական բռունցքն է: Մեր հզոր պետությունն է մեր երաշխիքը:
- Պետք է դիվանագետները գտնեն հարմար ժամանակ Ղարաբաղի հարցը լուծելու, երբ ավելի քիչ լինի պատերազմական վտանգը:
- Մենք այս պատերազմի պատճառով բլոկադայի մեջ ենք, իսկ այդ որ երկիրն է մեզանից ավելի լավ վիճակում:
- «Փոխզիջում» գաղափարը պետք է միայն օգտագործել ժամանակ շահելու համար, քանի որ ժամանակն այս դեպքում աշխատում է մեր օգտին:
- Մեր դիվանագիտությանը պետք է ժամանակ շահել, ինչ գնով էլ լինի...
- Հրադադարից հետո ստեղծվել են պայմաններ, որ ղարաբաղցին ստեղծի իր սահմանադրությունը, պետության համար անհրաժեշտ տարբեր կառույցները ու ինչ-որ չափով կարողանում ենք զարգանալ ու ստատուս քվոն մեզ չի պարտադրում հող հետ տալ:
- Հիմա արհեստականորեն երկու հայկական պետություն ունենք, բայց իրականում նույն երկիրն է, վաղ թե ուշ պետք է միավորվել, միջազգային հանրությունը չի ուզում, թող մեզ չճանաչի, սենց էլ ապրում ենք:

Ադրբեջանցիներ

- Այս հակամարտության կարգավորումը միայն խաղաղ տարբերակն է:
- Հայաստանի ներկայիս թույլ և դժվարին տնտեսական դիրքը կարող է ազդել հակամարտության կարգավորման վրա:
- Հայաստանի ներկայից տնտեսական իրավիճակը շատ վատ է:
- Դրանում ևս մեկ կետ պետք է ավելացվի, այն է՝ ահաբեկչական կազմակերպությունները պետք է հեռացվեն ԼՂ-ից:

- Փաստն այն է, որ նրանք մեկուսացված են ամեն ինչից:
- ԼՂ-ն օժանդակություն է ստանում միայն Հայաստանից :
- Մյուս հարևանները չեն աջակցում:
- Այս պահին ամենաանհանգստացնող հիմնախնդիրը ԼՂ-ում թմրանյութերի արտադրությունն է, ինչպես նաև ահաբեկչական կազմակերպությունների կողմից աշխատացվող :
- Հայաստանն արդեն զգում է,որ Ադրբեջանը պատրաստ է հետ գրավելու իր տարածքները:
- Հայաստանը հետ է իր տնտեսական զարգացմամբ:
- Մենք պետք է նրանց տնտեսական շրջափակման մեջ պահենք:
- Հայաստանը հեռու է տարածաշրջանային նախագծերից և Լեռնային Ղարաբաղն էլ չի կարող շահել դրանից, մինչդեռ Ադրբեջանն իր զարգացման փուլում է:
- Բռնազավթման դրական գործոններից մեկը մարդկանց մոտ հայրենասիրական ոգու արթնացումն է:
- Մենք պետք է ուժեղացնենք Հայաստանի շրջափակումը:
- Մենք հզոր տնտեսական աճ ենք գրանցել:
- Հայաստանի տնտեսությունը հետ է մնացել:
- Եվս մեկ այլընտրանք. տնտեսապես զարգանալու համար, անհրաժեշտ է ուժեղացնել ժողովրդավարությունը և դառնալ ուժեղ պետություն:
- Քանի դեռ հակամարտությունն այս փուլում է, Հայաստանը՝ որպես բռնազավթիչ, պետք է դուրս մնա տարածաշրջանային բոլոր նախագծերից:

Ներկա իրավիճակի պահպանմանը դեմ կարծիքներ

Հայեր

- Առաջին սցենարը հետքայլ է Ղարաբաղի այսօրվա կարգավիճակից. ստատուս քվոն մեզ համար ապագա չի կարող լինել
- Եթե ստատուս քվոն շարունակվի, կողմերից ոչ մեկը չի շահի:
- Ստատուս քվոն նման է դանդաղ ռումբի:
- Չենք կարող երկար պահել ստատուս քվոն, քանի որ դա մենք մեր ընտանիքների ու մեր երեխաների հաշվին ենք անում:
- Ստատուս քվոն մեզ ձեռք չի տալիս, քանի որ մենք չեն կարողանում այնտեղ տնտեսական գործունեություն ծավալել:
- Եթե ոչ ոք չի ճանաչելու Ղարաբաղի անկախությունը, ապա ինչի՞ ենք քննարկում ստատուս քվոն:
- Մենք քննարկում ենք խնդրի լուծման ուղիները, իսկ ստատուս քվոն խնդրի լուծման տարբերակ չէ, այն ժամանակավոր վիճակ է
- Ստատուս քվոյի մինուսը հրադադարի անընդհատ խախտումն է,
- Ստատուս քվոյի մյուս բացասական կողմն այն է, որ գերտերությունների շահերը կարող են փոխվել:

- Այս պահին մեզ ստատուս քվոն ձեռնտու է, սակայն երաշխիքներ չկան կայունության համար:
- Ստատուս քվոն խոցելի է դարձնում անվտանգությունը ոչ միայն ԼՂ-ի համար, այլեւ մեր սահմանակից բնակավայրերի: Սակայն ստատուս քվոն օրվա պահանջ է:
- Եթե մենք համաձայնենք ստատուս քվոյին, որևէ բանակցությունների չենք գնա:
- Այս հարցը պետք է ինչ-որ ձևով լուծվի՝ ստատուս քվոն անընդունելի տարբերակ է:
- Ստատուս քվոն շատ երկար շարունակվելու դեպքում Ադրբեջանը կհզորանա ու արդեն ավելի հեշտությամբ իր ուզածին կհասնի. այս տարբերակը մեր օգտին չի գործի: Կարծում եմ ճիշտ է հնարավորին չափ շուտ որևէ մի լուծման գալ և համաձայնագիր կնքել:
- Ստատուս-քվոն չի կարող միշտ պահպանվի, անհրաժեշտ է ինչ-որ լուծում, որ կերաշխավորի պատերազմի բացառումն ու խաղաղության հաստատումը:
- Ստատուս քվոի սցենարը վտանգավոր է նրանով, որ պարզ չէ, թե ԼՂ-ի հետագա ճակատագիրը ինչ կլինի:
- Ստատուս քվոն ձեռնտու չէ նաև Ադրբեջանի իշխանություններին, քանի որ նրանք այս պարագայում պարտվողի դերում են
- Քանի դեռ շարունակվում է ստատուս քվոն, պատերազմը վերսկսելու վտանգը շարունակվում է պահպանվել, դրա համար էլ Հայաստան համար կարևոր է հարցի հնարավորին շուտափույթ լուծումը
- Ստատուս քվոի մեղքերից մեկն այն է, որ Ղարաբաղը չի մասնակցում բանակցությունների
- Ստատու քվոի վիճակը մեզ չի բավարարում, քանի որ ժամանակավոր բնույթ ունի:
- Որոշակի հստակություն է պետք՝ ստատուս քվոն անընդունելի է:
- Ստատուս քվոն ընդունելի չէ. պետք է պայքարել, ամոթ է, որ Արցախը մինչ օրս ճանաչված չէ:
- Ստատուս քվոն անորոշ վիճակ է, ասենք եթե մոտ տասը-քսան տարի էլ այսպես մնա, դա մեզ ոչինչ չի տա ու ղարաբաղցին միևնույն է հանգիստ չի քնի:
- «Ստատուս քվոն» մեզ համար լավ չէ, որովհետեւ խնդիրը մնում է չլուծված:
- Մեզ ձեռ չի տալիս ստատուս քվոն, քանի որ դա սահմանափակում է մեր հնարավորությունները. միջազգային ծրագրերին ուսանողները չեն կարողանում մասնակցել, ներդրումները լիարժեք չեն կատարվում...
- Ստատուս քվոյի ձգձգվելը ինչ-որ ձևով երկու կողմերին էլ ձեռնտու է, բայց այսպես չի կարող անվերջ տևել. ուզում եմ իմ երկիրը ճանաչված անկախ տեսնեմ, լինեմ լիիրավ քաղաքացի: Կուզենամ դա շուտ լինի:
- Ստատուս քվոյի թերությունն այն է, որ Ղարաբաղը օդում կախված իրավիճակում է գտնվում:

- Ստատուս քվոն Ադրբեջանին ձեռնտու է, քանի որ իրենք արագ են զարգանում, ու գալու է մի պահ, որ պետք է ինչ-որ զիջումների գնանք, հիմնական քաղաքաները պահենք, բայց որոշ փոքր տարածքներ կարող ենք զիջել:
- Ստատուս քվոից մեր օգուտներ քաղելու ժամանակը արդեն իսկ սպառվում է: Լուծում պետք է գտնվի:
- Ստատուս քվոի երկար մնալն էլ լավ չի, քանի որ սահմանափակում է մեր հնարավորությունները ու ազատությունները:
- Ստատուս քվոն չի բավարարում, որովհետեւ վտանգ կա, որ պատերազմ կսկսվի:
- Ինչքան երկար ձգվի «Ստատուս քվոն», պատերազմի վերսկսման վտանգը մեծանում է:
- Արդեն ժամանակի մեջ «Ստատուս Քվո» վիճակը սպառել է ինքն իրեն. եկել է պահը, երբ պետք է այլ ուղիներ փնտրել:
- Ստատուս քվոն չի կարող երկար տևել, միևնույն է հողերի մի մասը պետք է հետ տրվի
- «Ստատուս Քվո» վիճակը պետք է փոխարինել այլ տարբերակով, քանի որ եկել է անկախանալու ժամանակը.
- Թշնամին այս ընթացքում զարգանում է տնտեսապես, իսկ Ստատուս քվո-ի վիճակում մեր տնտեսությունը չի զարգանա:
- Ստատուս քվոն ինչքան երկար տևի, այնքան պատերազմի վտանգը կմեծանա, պետք է այս հարցին ինչ-որ լուծում տալ, բայց առանց հողերը ետ տալու:
- Ստատուս քվոն խոսակցության թեմա է, սակայն լուծման տարբերակ չէ:
- «Ստատուս քվոն» ուղղակի «յոլլա գնալ ա», բայց պետք է առաջ գնալ:
- Ստատուս քվոն իրա դրական կետերն էլ ունի, բայց մեր երկիրը այս տարբերակում ճանաչված չի, մեր վիճակը հիմա կայուն չի ու բարդ ա, պատերազմի վերսկսման վտանգն էլ իր հերթին:
- Ամեն մի սկիզբ վերջ ունի, սա չի կարող այսպես երկար շարունակվել:
- Երկար չի կարող տևել ստատուս քվոն, սա վտանգավոր է... քնած հրաբուխի է նման:
- Ինչքան շուտ փոխզիջում լինի ու հարցը լուծվի, էնքան ավելի լավ, տնտեսությունն էլ էնքան արագ կզարգանա:
- Վաղ-թե ուշ ռազմական եղանակով լուծման կհանգենք. պետք է հաշվի առնել նաև Թուրքիայի գործոնը: Այսինք, մեր շահը թելադրում է շուտ հանգուցալուծում ստանալ:
- Շրջափակումը բացասաբար է ազդում Հայաստանի վրա:
- Մենք էլ պետք է փոխզիջման գնանք, ադրբեջանցիներն էլ, մեր կողմից կարծում եմ, որ պետք է իբրև փոխզիջում ընկալվի չբնակեցված տարածքների վերադարձնելը ադրբեջանցիներին:
- Մենք հիմա տնտեսապես շրջափակված ենք, ու երկար չենք կարողանա այսպես դիմանալ:
- Միջազգային մի շարք ծրագրեր հիմա շրջանցում են Հայաստանը, ու սրա պատճառը չլուծված խնդիրն է:

- Մենք պետք է բանակցենք ադրբեջանցիների հետ ու համոզենք, որ մենք ենք ճիշտ ու հարցը լուծենք: Այսպես շարունակել չի կարելի:
- Այսօր ոչ մի պետություն չի կարողանում ներդրում անել Ղարաբաղում: Հարցի լուծման դեպքում մենք զարգացման հնարավորություն կունենանք:
- Այս վիճակով չի զարգանում նաև տնտեսությունը, իսկ առանց տնտեսական զարգացման բանակը չի կարող զարգանալ:

Ադրբեջանցիներ

- Մեր ժողովուրդը տառապում է սոցիոլոգիական, ինչպես նաև ֆիզիկական կորուստներից
- Նրանք հողերը նաև փչացնում են էկոլոգիական տեսանկյունից
- Մեր տնտեսությունը վնասված է
- Նման սցենարը չի կարող կայուն խաղաղություն ապահովել. Ադրբեջանական հասարակությունը մշտական ազդեցության տակ կլինի:
- ԼՂ-ի հայերը ճիշտ մոտեցում չեն ցուցաբերում՝ Հայաստանի անձնագրեր կրելով և հայկական դրաման օգտագործելով:
- Զինվորները բավականին հաճախ անցնում են մեր տարածք:
- Ռուսաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի միջև հարաբերությունները շատ լարված են:
- Ահաբեկչական կազմակերպությունների և թմրանյութերի անօրինական տեղափոխման համար պայմաններ են ստեղծված:
- Հայաստանի ներկայիս դիրքորոշումը հնարավորություն չի տալիս ԼՂ-ում ներդրումների կատարման և դրա զարգացման համար:
- Հայերենը և դրամական քաղաքականությունը չեն կարող մնալ ԼՂ-ում:
- ԼՂ-ի հայերը չեն կարող արտասահման մեկնելու համար անձնագրեր ստանալ:
- ԼՂ-ն պետք է մնա Ադրբեջանի մասը. տնտեսական, քաղաքականան, ռազմական և սոցիալական ինստիտուտները պետք է վերականգնվեն Ադրբեջանի շրջանակում:
- ԼՂ-ն չի կարող մնալ բռնազավթված:
- Իրականում ԼՂ-ն Հայաստանից օգնություն է ստանում:
- Ճիշտ չէ, որ նրանք անձնագրեր են ստանում Հայաստանից:
- ԼՂ-ն պետք է ունենա նույն ինքնավարությունը, ինչ Նախիջևանը:
- Ընդունելի չէ, որ հայկական զորքերն են ապահովում ԼՂ-ի անվտանգությունը:
- Լեռնային Ղարաբաղը և բոլոր հարակից տարածքները բռնագրավված են, ինչը դժվարեցնում է Կովկասում արդյունավետորեն իրականացնել սոցիալական, տնտեսական և քաղաքական ծրագրեր:
- Մեր համար ամենից կարևորը տարածքային ամբողջականությունն է, և այն պետք է ապահովվի:
- Լեռնային Ղարաբաղի տարածքը պետք է մնա Ադրբեջանի կազմում, սակայն հայերը չեն կարող ապրել ադրբեջանցիների հետ:

- Հնարավոր չէ հանդուրժել հայոց լեզուն և թատրոնը Լեռնային Ղարաբաղում, նախապատվությունը պետք է տրվի ադրբեջաներենին:
- ԼՂ-ն ոչ մի կերպ չի կարող մնալ Հայաստանի բռնազավթման ներքո:
- Հայկական դրամը և հայոց լեզուն չեն կարող մնալ որպես պաշտոնական դրամ և լեզու:
- Դժվար է լուծում գտնել տնտեսական դիրքի հիման վրա:
- Ղարաբաղի քաղաքացիները կարող են արտասահման մեկնել միայն Ադրբեջանի անձնագրերով:
- Թող Ղարաբաղն այլ պետություններից օգնություն չստանա:
- Հայկական ազգային տարադրամը՝ դրամը, չի կարող որպես ազգային տարադրամ օգտագործվել ԼՂ-ում:
- Լեռնային Ղարաբաղի հայերը ճամփորդում են արտասահման՝ Հայաստանից անձնագրեր ստանալով. մենք դեմք ենք դրան:
- Հայերը Ադրբեջանի մյուս բոլոր քաղաքացիների հետ կկարողանան մասնակցել կառավարմանը համաձայն Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության:
- ԼՂ-ի բնակչությունը պետք է ստանան իրենց անձնագրերը Ադրբեջանից: Հատուկ վարչակարգի կազմակերպությունները պետք է հիշեն հայկական ծագում ունեցող Ադրբեջանի բնակչությանը:
- Ադրբեջանը կարող է օժանդակել Հայաստանին՝ միանալու մեծ միջազգային նախագծերի, հենց որ Հայաստանը դադարեցնի իր նվաճողական քաղաքականությունը:
- ԼՂ-ն չի կարող որևէ օգնություն ստանալ դրսից:
- Լեռնային Ղարաբաղը չի կարող արտաքին օժանդակություն ստանալ:
- ԼՂ-ն պետություն չէ, այս իսկ պատճառով բոլոր միջազգային շփումները պետք է իրականացվեն Ադրբեջանի կառավարության և պետության միջոցով:
- ԼՂ-ի բնակիչները պետք է ճանապարհորդելու համար ձեռք բերեն ադրբեջանական անձնագրեր և գործեն ըստ ադրբեջանական պետության օրենքների:
- Սակայն այլ միջոցներով առկա իրավիճակը Ադրբեջանին թույլ չի տալիս օգտագործել իր ողջ ներուժը:
- ԼՂ-ն մեր տարածքն է և պետք է պարունակի մեր խորհրդանիշերը, դա պետք է բացատրել ԼՂ-ի հայերին
- Արտասահմանյան ընկերությունների գործունեությունն այնտեղ պետք է դադարեցվի:
- ԼՂ-ն երբեք չի կարող լինել Հայաստանի մաս:
- Այս հարցի հետաձգումը նշանակում է այն ամբողջությամբ մոռացության մատնել:
- ԼՂ-ի բռնազավթված լինելը շահեկան չէ Ադրբեջանի համար:

Չեզոք կամ անորոշ կարծիքներ ներկա իրավիճակի վերաբերյալ

Հայեր

- Ես վստահ եմ, որ ստատուս քվոն երբեք էլ չի վերջանա, քանի որ կողմերը երբեք էլ փոխզիջումների չեն գնա:
- Եթե այլ ավելի լավ սցենար չկա, ապա ստատուս քվոն լավ է, բայց մյուս կողմից էլ չգիտենք , թե մեր երկրներն ինչ ուղղությամբ կզարգանան... արդյո՞ք ի վիճակի կլինենք պահել այս վիճակը:
- Արտաքին ուժերին իհարկե ձեռնտու է ստատուս քվո վիճակը
- Միջազգային ակտ կա՝ ազգային ինքնորոշման և տարածքային ամբողջականության հարցերն են առաջնային: Առանց Մինսկ-ի ԵԱՀԿ-ի միջամտության այս հարցերը երբևիցե չեն լուծվի: Ստատուս քվոն երկար չի տևի:
- Ինքը՝ Ադրբեջանը դեռ չի հասունացել այն մտքին, որ ստատուս քվոն պետք է փոխել:
- Ստատուս քվոն հենց գերիզոր պետություններին է պետք:
- Ստատուս քվոն առայժմ ձեռնտու է, բայց դա ժամանակավոր բնույթ է կրում:
- Երկար ժամանակ հնարավոր չէ ստատուս քվոն պահել:
- Ստատուս քվոն ունի և բացասական և դրական կողմեր, եթե ընդունենք , որ այն պահպանվելու է, պետք է դրական կողմերը պահենք ու աշխատենք բացասական կողմերի վերացման ու մեղմելու վրա:
- Ստատուս քվոն Ադրբեջանի համար ձեռնտու է ու այդ պատճառով էլ այսպես ամեն ինչ ձգձգում են, միջազգային հանրությունն էլ նրանց աջակցում է ու չի ուզում իրենց անհանգստացնել, քանի որ նրանք նավթ ունեն:
- Ստատուս քվոն ունի թե դրական, թե բացասական կողմեր, հիմնականը ճանաչում չունենալն է ու պատերազմի վերսկսման վտանգը, որոնք փոխկապակցված են, եթե մեզ անկախ ճանաչի միջազգային հանրությունը, Ադրբեջանը չի համարձակվի մեզ վրա հարձակվի:
- Ստատուս քվոն առայժմ մեզ բավարարում է, սակայն, համոզված եմ, սա երկար շարունակվել չի կարող:
- Ստատուս քվոն մեզ համար լավ է, բայց նրա պահպանումը կախված է ոչ թե մեզնից, այլ միջազգային ուժերից ու մեծ տերությունների հարաբերություններից, օրինակ այս հարցում մեծ դեր ունի Ռուսաստանը:
- Ստատուս քվոն միջին տարբերակն է, որը զարգացում պետք է ունենա:
- Նրանք էլ են ազգ, Ղարաբաղն այսօր ուզելով, պարզապես ուզում են իրենց արժանապատվությունը վերականգնեն, ասեն «ա՛յ մարդ, մենք էլ ենք չէ բայց մարդ...»
- Եթե խաղաղ լուծման տարբերակ լիներ, վաղուց արդեն եկած կլինենք ընդհանուր հայտարարի, եթե դեռ լուծում չունենք, նշանակում է, որ այդ լուծումը պարզապես չկա:

- Դրական կողմերից միայն համարում եմ զինադադարը:
- Գուցե շուտ է հանգուցալուծման մասին խոսելը, սակայն դա պետք է լինի եթե ոչ այսօր, ուրեմն վաղը:
- Էլի միջազգային իրավունքի տեսանկյունից սահմանները թե Թուրքիայի, թե Ադրբեջանի հետ բացվելու են:
- Մեր երեխաներն ու թոռներն էլի նույն իրավիճակի առաջ են կանգնելու, ինչ մենք:
- Մենք ստեղծագործող ժողովուրդ ենք, ավելի զարգացած, մեզ լուծում է պետք:
- Մենք պիտի մի գաղափարի շուրջ հավաքվենք... այլապես կորած ենք:
- Էս իրավիճակը նոր չի, տաս-քսան տարվա պատմություն չի, դեռ քսանական թվերից եկող հարց ա ու շատ են խորացել խնդիրները::
- Այսօվա խնդրի լուծման տարբերակներից ոչ մեկը լավը չի:

Ադրբեջանցիներ

- Ռուսաստանն է ստեղծում նման իրավիճակ:
- Ռուսաստանը հետաքրքրված է, որ այս հակամարտությունը չկարգավորվի:
- Ադրբեջանը և միջազգային հանրությունը չեն կարողանա ընդունել ԼՂ-ի անկախության և Հայաստանի կազմում մնալու փաստը:
- Եթե Ղարաբաղի ինքնիշխանությունը ճանաչվի, ապա այն կոտնահարի միջազգային օրենքներն ու կանոնակարգերը:
- Ղարաբաղի՝ Հայաստանի կազմում մնալ վնասում է ոչ միայն Ադրբեջանին, այլև աշխարհի շատ պետություններին. այնտեղ ծաղկում է ապրում սև շուկան:
- Այլընտրանքային ուղին կամ պատերազմն է կամ խաղաղությունը:
- Ադրբեջանը երբեք Հայաստանին որևէ բան չի պարտվել:
- Սակայն, կարծում եմ, որ անհնարին կլինի այս հարցը մեր օգտին լուծել:
- Քարոզչությունը, որն արտացոլում է երկրի՝ պատերազմական վիճակը, հնարավոր չէ զգալ, միայն սոցիալական հեռուստատեսությունն է, որ մասնակիորեն արտացոլում է հայրենասիրությունը:
- Մենք չպետք է նայենք անցյալին, մենք պետք է հիմնվենք իրականության վրա:
- Նրանք Հայաստանում արդեն իրենց պետությունն են ստեղծել:

Պատերազմ

Պատերազմն անխուսափելի է

Հայեր

- Պատերազմն անխուսափելի է ցանկացած տարբերակով
- Ստատուս քվոյի ներկայիս պայմանները ընդունելի են, սակայն Ադրբեջանը երկար չի հանդուրժի այս վիճակը և պատերազմը շուտով անխուսափելի կլինի:
- Ոչ ոք ուղղակի կերպով մի փոքր հող էլ մեկ ուրիշին չի տա: Դա հնարավոր է միայն պատերազմի միջոցով:
- Ղարաբաղի հարցը պետք է լուծի Հայաստանը, թեկուզ և զենքի ուժով:
- Թող պատերազմ չլինի.... հոգնել ենք
- Պատերազմը կարող է սկսվել այս սցենարներից յուրաքանչյուրի դեպքում, ու պատերազմից չպետք է վախենանք:
- Մենք սպասում ենք, որ Ադրբեջանը վերսկսի պատերազմը, մենք կիսատ գործեր ունենք:
- Եթե պատերազմն անխուսափելի է, լավ է պատերազմը հիմա լինի, որովհետև տաս տարի հետո կարողա ընդհանրապես ոչ մեկը ոչ մի քայլ չանի այդ ուղղությամբ: Հիմա սերունդն ավելի հայրենասեր է:
- Պատերազմը ամեն օր էլ սպասելի է, խաղաղությունը միևնույն է չի ապահովվում:
- Հայտնի ճշմարտություն կա. եթե ուզում ես խաղաղ ապրել, նախապատրաստվի պատերազմի... Էնպես, որ պատերազմի վախի տակ հող զիջելն առնվազն երեխայություն է, եթե ոչ դավաճանություն:
- Քանի որ այս խնդրի լուծման հետևում կանգնած են մեծ տերությունները, այս հարցի ցանկացած զարգացման դեպքում պատերազմը կլինի անխուսափելի:
- Եթե պատերազմ լինի, ավելի լավ է այդ պատերազմը այսօր սկսվի, քան ուշ, քանի որ ստատուս քվոն հավերժ չէ
- Ներկա վիճակը նման է մի իրավիճակի, երբ չոր ցախը հավաքել դրել ես դրսում և սպասում ես կայծակի...իսկ կայծակ մի օր կլինի:
- Մենք հիմա շատ ապակենտրոնացված ենք ապրում, միայն պատերազմն է մեզ համախմբում:
- Ղարաբաղի վերադարձնելը միևնույն է բերելու է պատերազմի վաղ, թե ուշ:
- Ադրբեջանն ատամներով կառչում է, որ անպատճառ հետ վերցնի հողերը, մենք լարվածության մեջ ենք ապրում:
- Այսպես թե այնպես կռվի գնալու ենք, դա հեչ:
- Մենք միշտ պետք է պատրաստ լինենք պատերազմի:
- Առաջին տարբերակի վատն այն է, որ պատերազմը կարող է ցանկացած պահի նորից բռնկվել ու այս իրավիճակը անկայուն է

- Իսկ ես չէի բացառի պատերազմի վերսկսման հնարավորությունը, Ադրբեջանն ամեն օր է այդ մասին խոսում: Նրանք պատրաստվում են պատերազմի, բայց մենք էլ պատրաստվում ենք պաշտպանության:
- Մենք ինչքան շատ խոսենք փոխզիջման մասին, էնքան պատերազմի վտանգը կմեծանա:
- Միակ լուծումն էնա, որ մենք հզորանանք, որ չվախենանք պատերազմից:
- Սահմանները անհանգիստ վիճակում է, կարծում եմ դա երկար կշարունակվի, քանի որ զինադադար չի նշանակում պատերազմի ավարտ:
- Զինադադարը կնքված է, սակայն ցանկացած պահին այն կարող է խախտվել, եւ պատերազմ կարող է սկսվել, դա է բացասական կողմը:
- Անկախ ամեն ինչից պատերազմ է լինելու՝ փոխզիջմամբ թե առանց դրա... էլ ինչի՞ հող հետ տանք:Անկախ ամեն ինչից պատերազմ պիտի սկսի, էնպես որ, թող հենց այս սահմանների մոտ էլ սկսի:
- Առաջին սցենարով պատերազմի վտանգը միշտ կա. այս հարցը պետք է լուծել:
- Եթե Ադրբեջանը պիտի կռիվ սկսի, կսկսի անկախ նրանից, թե զիջում անենք, թե չէ, էլ ինչի՞ ենք զիջում:
- Եթե անվտանգությունը կորցնենք, կկորցնենք ամեն ինչ: Պատերազմի վտանգը մեծ է:
- Պատերազմի վտանգ միշտ էլ լինելու է, նույնիսկ խնդրի լավ կարգավորման դեպքում...
- Ոչ մեկն էլ չգիտի, թե վաղն ինչ է լինելու: Սակայն պատերազմ տեսած մարդիկ գիտեն, որ ամեն րոպե կարող է պատերազմ լինել: Պարզապես՝ մոտ չթողնենք:
- Պատերազմի վտանգը միշտ էլ լինելուա, ինչ պարագայում էլ լինի... Որտև մեր հարևանը Ադրբեջաննա:

Ադրբեջանցիներ

- Պատերազմի վտանգը ռեալ է
- Պատերազմի վտանգը օրեցօր աճում է
- Մենք պետք է հզորացնենք տնտեսությունը և կռվենք:
- Բոլոր դեպքերում տնտեսության հզորացման արդյունքում պատերազմ սկսելը պետք է կատարվի Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականության շրջանակում:
- Քանի դեռ հակամարտությունը իսկապես չի կարգավորվել, պատերազմի վտանգն անխուսափելի է:
- Մեր բանակը պետք է պատրաստվի կռվելու:
- Պատերազմի վտանգն առկա է և աճում է օրեցօր:
- Զինադադարը չի նշանակում խաղաղություն, միշտ էլ առկա է պատերազմի վտանգը:
- Պատերազմի վտանգ գոյություն ունի:
- Եթե դա տեղի չունենա, պատերազմի վտանգը կմեծանա:
- Արյուն արյունով կմաքրվի:

- Պատերազմ սկսելու վտանգը շարունակում է մնալ:
- Մշտապես պատերազմի վտանգ կա:
- Հնարավոր կլինի այս հակամարտությունը խաղաղ կարգավորել:
- Բնակչությունը պետք է պատրաստ լինի պատերազմի:
- Քանի որ մենք ասում ենք, որ հայերը մեր թշնամիներն են, պատերազմը երբևէ չի վերջանա:
- Մենք չենք հավատում, որ անգամ քսան տարի հետո հայերը վստահություն կունենան ադրբեջանցիների հանդեպ:
- Հենց մենք ծնվել ենք, հայերի նկատմամբ թշնամության գաղափար ենք ունեցել:
- Մոսկվան խափանում է հակամարտության կարգավորումը՝ պատերազմ սանձազերծելով:
- Հիմա իրազեկվածության մակարդակը բարձրացել է, մարդիկ կարող են տեղեկատվություն ստանալ ցանկացած ահաբեկչական գործողություն մասին, միմյանց նկատմամբ տածած ատելությունը խորանում է:
- Որքան տնտեսությունն աճում է, այնքան ամեն ինչ տանում է դեպի պատերազմ:
- Որքան շարունակվի բռնազավթումը, պատերազմի վտանգ կա:
- Ղարաբաղն Ադրբեջանի անքակտելի մասն է, և տարածքային ամբողջականությունը պետք է վերականգնվի:
- Պատերազմի հնարավորությունն օրեցօր աճում է:
- Եթե խաղաղ մոտեցումն արդյունք չունենա, տարածքները չվերադարձվեն Ադրբեջանին, իսկ հայկական զինված ուժերը չհեռանան մեր տարածքներից, պատերազմն անխուսափելի է:
- Չորրորդ սցենար. իրատեսական չի թվում խաղաղության մեջ ապրելը:

Պատերազմը լուծման վերջին տարբերակն է

Հայեր

- Պատերազմի վերսկսման տարբերակը քիչ հավանական է:
- Նույնիսկ պատերազմի գնալ համաձայն ենք, բայց զիջումների համաձայն չենք:
- Ամեն պահի հնարավոր է , որ պատերազմը վերսկսվի. դա մեզ ձեռնտու չէ:
- 4th scenario – it doesn’t seem real to live in peace
- Մեր հողերը վերցնենք, մնացածը ինչ կանեն՝ կանեն: Էսօր կարևորը խաղաղությունն ա:
- Մի խոսքով, մեզ պետքա խաղաղություն՝ ամեն գնով:
- Պետք է հաշվի առնել, որ երիտասարդներն են մեր երկրի ապագան, և մենք առանց պատերազմների պետք է կարգավորենք այդ հարցը:
- Պատերազմը բացառում ենք, մի քանի նախապայմաններ կան, որոնցից մեկը խաղաղ ճանապարհով լուծումներն են:
- Լուծում պարտադիր պետք է լինի և այն խաղաղ պետք է լինի:
- Մենք խաղաղ ճանապարհով հարցի լուծման կողմնակից ենք:

- Մեր դիվանագետները նորմալ աշխատանք չեն կատարում, այնինչ պայքարը տեղափոխվել է դիվագիտական ասպարեզ:
- Չի կարելի «արյուն թափել» արտահայտությունը դրոշակ սարքել: Մեզ փոխզիջումներ են պետք: Արդեն զոռբայության դարն անցել է:

Ադրբեջանցիներ

- Եթե խաղաղ ճանապարհով լուծելու եղանակներ չկան, պետք է պատերազմի գնանք
- Խաղաղության հարցը ձգձգվում է և թվում է լուծում չունի. հետևաբար բանակը պետք է ուժեղացվի :
- Հնագույն ժամանակներից Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի անքակտելի մասն է և երբեք չի կարող լինել հայերինը. մենք պետք է փորձենք խաղաղ ճանապարհով կարգավորել հակամարտությունը, եթե դա չաշխատի, ապա զինված կարգավորումը չի բացառվի :
- Երիտասարդությունը խաղաղ կարգավորումն է նախընտրում, սակայն պատերազմի վերսկսումը բացառված չէ:
- Եթե մեր նկատմամբ մարդասիրություն չի ցուցաբերվում՝ մենք նույն վերաբերմունքը կցուցաբերենք մյուսների նկատմամբ:
- Եթե հայերը չհամաձայնեն, մենք պետք է պատերազմ սկսենք:
- Պատերազմելու անհրաժեշտություն չկա, եթե, համաձայն վերջին դրույթի, Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը վերականգնվի խաղաղ ճանապարհով:
- Մենք որևէ բան չպետք է պայմանավորվենք Հայերի հետ առանց արյուն թափելու:
- Փոխզիջման գալուց հետո միայն պատերազմ սկսելու գաղափարը կարող է մի կողմի դրվել:
- Առկա իրավիճակում պատերազմը մեզ համար ընդունելի տարբերակ չէ, հիմա մեր տնտեսությունը զարգանում է, ինչը նշանակում է, որ մենք կարող ենք ավելի ուժեղ երկիր դառնալ 10-15 տարի հետո:
- Հակամարտության ամենաճիշտ կարգավորումը պատերազմն է, հետևաբար այն ընդունելի չէ մեզ համար:
- Լավ կլինի, եթե ԼՂ հակամարտությունը կարգավորվի առանց պատերազմի՝ գիտակցելով երկու կողմերի շահերը: Քանի որ պատերազմը, ամեն դեպքում շատ վատ բան է և պետք է լինի որպես վերջին հնարավորություն:

Ստատուս քվոյի միակ այլընտրանքը պատերազմն է

Հայեր

- Երկաթը տաք-տաք են ծեծում: Եթե պատերազմ պիտի լինի, թող լինի հենց հիմա: Սպասել չարժե:
- Հայաստանը պատրաստ պետք է լինի պատերազմին, քանի որ ադրբեջանցիներին խոսքով բան հասկացնել չի լինում, միայն զենքով է հնարավոր հասկացնել
- Ստատուս քվոն կարող է հանգեցնել նրան, որ Ադրբեջանի կողմից անընդհատ հզորացվող բանակը կարող է նոր պատերազմի ալիք բարձրացնել:
- Ամեն դեպքում, սա մեզ ձեռնտու չէ, քանկի որ պատերազմի վտանգը միշտ էլ կա..
- Ղարաբաղի ռազմական բյուջեն ավելանում է: Մեր դեմ կկանգնեցնեն վիթխարի ուժեր: Մենք էլ պետք է զինվենք, ուրիշ հնարավորություն չկա:
- Հայաստանի և ԼՂ-ի հարցում ՀՀ-ը միշտ էլ սխալ է գործել: Այժմ Թուրքիան և Ռուսաստանը չանդրադառնան, առանց պատերազմի այս հարցը չի լուծվի: 1994- ին մենք չպետք է դադարեինք պայքարը
- Եթե ուժը ներս է մտնում դռնից, արդարությունը դուրս է մղվում պատուհանից: Այստեղ ուժն է որոշիչը:
- Էդ որտեղ ա գրած, որ թղթով հող են հանձնում: Հող տվողը զինվորն ա, հող վերցնողը զինվորն ա:
- Ադրբեջանն էլ, Հայաստանն էլ գիտակցում են, որ ԼՂ հարցը չի կարող բանակցությունների միջոցով լուծվել:
- Ոչ մի ազգի հերոս բանակցություններով հող չի ազատագրել, կռվել ու ազատագրել է...
- Պատերազմն ավարտված չէ, ու ցավոք այսպես շատ երկար շարունակվել չի կարող, հասունացել է պահը, որ վերջնական լուծում լինի:
- Փաստորեն՝ եթե զիջումների պատրաստ չենք, պատերազմի արդյո՞ք պատրաստ ենք:
- Եթե այսօր երկու երկրներն էլ պատրաստ են պատերազմի, պատերազմենք, որ հարցը լուծվի Ղարաբաղի օգտին:
- Ես կին զինվորական եմ ու ասում եմ. Ավելի լավ է պատերազմ, քան երրորդ սցենարը.... :
- Ցանկացած փոփոխություն, հատկապես տարածքների վերադարձը, բերելու է նոր պատերազմի:
- Բոլոր տարբերակներում էլ պատերազմի վտանգ կա, միայն առաջին սցենարը չի, որ դա ունի:

Ադրբեջանցիներ

- Նրանք այն արյունով են տարել և պետք է նույն կերպ էլ հետ վերադարձնեն:

- Ադրբեջանը պետք է վերակառուցի իր տարածքային ամբողջականությունը և պաշտպանի այն:
- Մենք պետք է նվաճենք թշնամու սահմանը:
- Պատերազմական դիրքն ազդում է նաև մեր մշակութային ժառանգությունը պաշտպանելու՝ մեր կարողության վրա:
- Նման իրավիճակը շահեկան չէ մեզ համար և մենք ցանկանում են կարգավորել այս հարցը՝ պատերազմ սկսելով:
- Պատմական տարածքային ամբողջականությունը պետք է վերականգնվի: Անշուշտ պետք է վերականգնվեն 20-րդ դարի սկզբին գոյություն ունեցող սահմանները:
- Մենք նույն կերպ պետք է հետ ստանանք, ինչպես տվել ենք:
- Ես ցանկանում եմ պատերազմ սկսել:
- Եթե այս տարբերակը չաշխատի, անշուշտ, մենք պետք է պնդենք մեր տեսակետը և սկսենք պատերազմ դեպքերի զարգացմանը զուգընթաց:
- Հակամարտության խաղաղ կարգավորումը փոքր ինչ դժվար է, դրա ամենաերաշխավորված տարբերակը պատերազմի սանձազերծումն է:
- Մենք պետք է կռվենք:
- Մենք պետք է ազատագրենք միայն պատերազմի միջոցով, այլ ուղով հնարավոր չէ:
- Ամեն դեպքում մենք պետք է պատրաստվենք պատերազմի. Ամեն դեպքում եթե նույնիսկ խաղաղությամբ է թե պատերազմի միջոցով, ԼՂ-ն պատմականորեն մեր հայրենիքն է:
- Պատերազմե՛լ և ազատագրե՛լ ԼՂ-ն ու ամբողջ Ադրբեջանը:

Եթե պատերազմ սկսվի, ապա ...

Հայեր

- Պատերազմը վերսկսվելու դեպքում ամեն դեպքում տանուլ կտա Ադրբեջանը
- Ես կարծում եմ, որ պատերազմը ավարտված է հօգուտ մեզ, այս պահին պատերազմի վտանգ չկա, ընթանում է տեղեկատվական պատերազմ , ցավոք մենք պարտվում ենք տեղեկատվական պատերազմում, սակայն հաղթել ենք ռազմական դաշտում
- Պայթյունը տեղի կունենա երբ գերտերությունների շահերը չհամընկնեն Հայաստանի և Ղարաբաղի շահերի հետ:
- ես, իբրև երկրապահ, ուզում եմ նշեմ, որ կողմ եմ բանակցությունների միջոցով ղարաբաղան հարցը լուծելուն, սակայն պատերազմից չպետք է վախենալ
- Էդ ծեծողն ո՞վ ա: Ով այդպես է խոսում, ոչ ծեծում է, ոչ կռվում: Ծեծում են նոր խոսում:
- Մենք պատերազմ չենք սկսում, թող սկսեն ու կպարտվեն:
- Այսօր մենք կռվից վախեցողը չենք:
- Երկրորդ պատերազմը կայծակնային է լինելու և ավելի ուժգին

- Պատերազմը շատ ավելի վտանգավոր է Հայաստանի համար, քան Ադրբեջանի:
- Պատերազմը հավանաբար չի լինի, սակայն լինելու դեպքում զոհերն ու ավերածություններն շատ են լինելու: Բախում կլինի, կլինի ուժերի ցուցադրություն:
- Եթե պատերազմ լինի կգնանք, ինչ ա եղել: Կռվել ենք, էլի կկռվենք:
- Գնացողը պետք է ասի, որ գնում է հաղթանակի, այլ ոչ թե պարտության և փոխզիջման:
- Մենք բոլորս էլ մտածում ենք, որ մեր երեխաները, մեր թոռները պատերազմի արհավիրք չտեսնեն: Բայց ախր որ պահն եկավ... ուրիշ ինչ ենք անելու, եթե չկանգնենք մեր հայրենիքի համար:
- Ձեզ ինչո՞ւ է թվում, թե երբ կրկին փող հնչեցվի հայրենիք պաշտպանելու՝ մեր զավակները չեն կանգնելու: Հավատացած եմ՝ թոռներս էլ, ծոռներս էլ կկանգնեն հայրենիքի համար:
- Վաղը եթե պատերազմ լինի, ես իմ երեխային չեմ թողնի գնա: Բայց ինքս կգնամ՝ ամուսնուս պես կգնամ:
- Ոչ մի ծնող էլ չի թողնի, որ իր զավակը գնա պատերազմ: Վերջ:
- Եթե պետք լինի նորից կռվենք, կկռվենք, ինչ ա եղել, չեմ կարծում, որ ժամանակը իրենց օգտին է աշխատում:
- Այն, որ իրենք յոթ միլիոն են, մենք՝ երեք, քիչ բան է որոշում: Մենք այսօր էլ ենք պատրաստ մեր հողը պահել: Ու մեր թիվը եռապատկվում է:
- Օլիգարխներին կթալանենք, զենք կգնենք և կգնանք կռվի:
- Նույնիսկ եթե պատերազմ լինի, մեր ու ադրբեջանցիների ուժերի միջև էական տարբերություն չի լինի:
- Ես ինքս մասնակցել եմ պատերազմին, պետք լինի էլի կգնամ, որսորդականով ենք ջարդել, հիմա հո գոնե գրադ ունենք:
- Այս սերունդը պատերազմելու չի գնա, անգամ եթե մենք՝ մայրերս ուզենք, իրանք չեն գնա, փոխվել է գաղափարախոսությունը:
- Տիգրան Մեծի ժամանակ Ծովից ծով հայաստան, էլ վերադարձ չկա, գնում ենք մինչև Բաքու:
- Ես պատրաստ եմ իմ ընտանիքով ու Ազգով մինչև արյան վերջին կաթիլը պայքարել մեր հողի համար:
- Նախկինում ոչինչ չունեինք, չէինք կռվում, հիմա ամեն ինչ ունենք, կռվել կարող ենք, պետք է կռվենք ու ոչ միայն Ղարաբաղը պահենք, այլ նաև մեր մյուս հողերը՝ Ջավախքը, Նախիջևանը հետ բերենք:
- Հարցը հետևյալն է. մենք պատրա՞ստ ենք նորից պատերազմելու, զոհեր տալու:
- Նախկին պատերազմի վիճակագրությամբ ադրբեջանցիները առնվազն հինգ անգամ ավելի զոհ են տվել: Դրա պատճառը նաև մեր կադրային սպաների խելացի գործելաձևն էր:
- Պատերազմի վերսկսվելու դեպքում պարզ չի, թե ով կհաղթի: Դիվանագիտությունը շատ բան կարող է փոխել:
- Մերոնք հազիվ են ոտքի կանգնել. Ասկերանում մի կանգուն շենք չկար: Պատերազմի վերսկսումը էլի մեզ հետ է գցելու:

- Պատերազմի դեպքում Ադրբեջանը էլի տանուլ է տալու: Ղարաբաղի դիրքը շատ հարմար է պաշտպանվելու ու հաղթելու համար:
- Պետք չէ վախենալ Ադրբեջանի ռազմական հզորությունից, պատերազմի ժամանակ էլ էին իրենք ավելի լավ զինված, բայց հաղթեցինք մենք:
- Եթե Ադրբեջանը տարածք է ուզում, թող կռվով գա... մենք էլ «շատ սրտաբաց կընդունենք...»
- Հնարավոր է, որ Ադրբեջանն էլի հարձակվի /ինչպես Վրաստանը տարբեր ուժերի ազդեցության տակ հարձակվեց/, բայց համապատասխան հակահարված կստանա:
- Հիմիկվա «պուլտ» տեսած երեխեն չի գնալու պատերազմ:
- Պատերազմի դեպքում բնակչության հիսուն տոկոսը լքելու է Ղարաբաղը: Մեծամեծերը առաջինն են լքելու երկիրը:
- Եթե մի սերունդ էլ կորցնենք պատերազմում, մեր վիճակը շատ վատ կլինի:
- Մի բան պետք է հստակ լինի, եթե հայկական իշխանություններն ընդունեն մի լուծում, որը մենք չենք ուզում, շատ ավելի վատ է լինելու. ոչ միայն պատերամ կլինի Ադրբեջանի հետ, այլ նաև քաղաքացիական պատերազմ կսկսվի:
- Կարծում եմ, որ մենք ևս մեկ անգամ պատերազմի չենք կարող մասնակցել, կկորչենք:
- Պատերազմից չենք վախենում, հաստատ կպահենք մեր հողը:
- Մենք անցած պատերազմի ժամանակ խառնեցինք գերտերությունների պլանները: Նույնն էլ հիմա կարող ենք անել:
- Պատերազմ չլինելով մեզ մի համոզեք, մենք պատերազմի գնով մեր անկախությունն ենք ստացել: Պետք է՝ կպատերազմենք, ու մեր մյուս հողերն էլ այսպես հետ կբերենք:
- Ես վախենում եմ հայ-հրեական, հայ-քրդական, էլ չգիտեմ ինչ պատերազմից, բայց հայ-ադրբեջանական պատերազմի մասին չեմ մտածում:
- Ներկայում մեզ պետք չէ պատերազմ, քանի որ մեր պրոբլեմը ոչ միայն Ադրբեջանի հետ է, այլև Թուրքիայի, և պատերազմը կարող է միավորել այդ պետություններին Հայաստանի դեմ
- Կրիտիկական պահերին մեր ազգը կարողանում ա մի բռունցք դառնա, ես վստահ եմ, որ մենք միշտ էլ հաղթող ենք լինելու:

Ադրբեջանցիներ

- Ավելի լավ է միանգամից մեռնել, քան ամեն օր:
- Նավթային արդյունաբերությունից ստացված դրամը վատնում են, բայց սակայն ասում են, թե այն ծախսվել է բանակն ուժեղացնելու համար:
- Եթե Ադրբեջանը պատերազմի, ապա դա կազդի երկրի տնտեսական դիրքի վրա:
- Եթե պատերազմ սկսի, ապա տնտեսությունը անկում կապրի:
- Եթե պատերազմը վերսկսվի, նրանք նորից կպարտվեն:
- Եթե մենք որոշենք պատերազմ սկսել, մենք կարող ենք պարտվել:

- Մենք սոցիոլոգիապես պատրաստված չենք պատերազմին:
- Եթե պատերազմը վերսկսի, ոչ ոք չի թողնի իրենց երեխաներին գնալ, քանի որ մեր իրավունքները հավասար չեն:
- Եթե հակամարտությունն արագ կարգավորվի, ապա մյուսների դիրքերը կթուլանան:
- Եթե մենք սկսենք պատերազմ, ապա Ռուսաստանը կաջակցի Հայաստանին, մինչդեռ Թուրքիան կաջակցի Ադրբեջանին:
- Մենք կցանկանայինք առաջինը կրակել, քանի որ այդուհետև մենք կճանաչվենք որպես զավթիչ:
- Եթե մենք պատերազմ սկսենք, ապա ռուսներից պետք է չվախենանք. եթե պատերազմ սկսի, այն կարող է վերաճել համաշխարհային պատերազմի:
- Հիմնախնդրի լուծումն ամբողջապես կախված է Ռուսաստանից, պատերազմի դեպքում Ռուսաստանի միջամտությունը և Հայաստանի պաշտպանությունը համընկնում են:
- Այժմ Հայաստանում գտնվող ռուսական ուժերը կարող են ցանկացած ժամանակ օգտագործվել պատերազմի ժամանակ:
- Մեր հայրենասեր տղաները կամավոր են պատերազմ գնում:
- Մենք ուժեղ բանակ չունենք:
- Եթե պատերազմ լինի միայն Թուրքիան կօգնի Ադրբեջանին:
- Ես կցնականայի պատերազմ սկսել և կգնայի կռվելու:
- Համաձայն Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքված անվտանգության պայմանագրի՝ Ռուսաստանը կարող է ապագայում Հայաստանին օգնել:
- Եթե մենք ընտրենք պատերազմը, մենք այն տանուլ կտանք:
- Մի քանի մասնակիցների կարծիքով, եթե անգամ մենք սկսենք կռվել և հետ ներենք մեր հողերը, ընդհանուր առմամբ մենք մեր պարտված կզգանք:
- Եթե մենք սկսենք կռվել, մենք կկռվենք Ռուսաստանի, այլ ոչ թե Հայաստանի դեմ:
- Եթե պատերազմը սկսի, ապա տնտեսական ծրագրերը կփակվեն, և դա ոչ ոքի համար շահեկան չի լինի:
- Եթե պատերազմ լինի՝ մենք ռուսների դեմ ենք կռվելու:
- Պատերազմը մեր համար շահեկան չէ:
- Քանի որ իրականում մենք պատերազմ կսկսենք ոչ թե Հայաստանի, այլ Ռուսաստանի դեմ:
- Եթե մենք պատերազմ սկսենք, կարող է սղաճ տեղի ունենալ:
- Եթե նրանք Ղարաբաղում երեք հրթիռից ավել ունենան, նրանք դրանք կարող են մեր դեմ օգտագործել:
- Եթե պատերազմը լինի Ադրբեջանի և Հայաստանի միջև, մենք կհաղթենք:
- Սակայն կցանկանայի նշել, որ Ադրբեջանը կարող է հետգրավել մեր տարածքները պատերազմի միջոցով:

Պատերազմ չի լինելու

Հայեր

- Ադրբեջանին ձեռք չի տալու պատերազմը, քանի որ ինքը նեգրավված է տնտեսական միջազգային ծրագրերում ու ինքը չի ուզի շեղվի այդ ծրագրերից:
- Եթե ուզում են կռվով վերցնել, թող վերցնեն, եթե կարող էին, կվերցնեին, սա մեր՝ կռվողների կողմից, ավելի լավ է այսպես մնա:
- Եթե աշխարհը ճանաչի Ղրաբաղի ինքնուրույնությունը, Ադրբեջանին կստիպեն չվերսկսել պատերազմը:
- Մենք ունենք ազատամարտիկներ, որոնք պայքարել են Ղարաբաղի համար, սակայն որպեսզի պատերազմը չսկսվի, պետք է երկար մտածել: Մենք չենք կարող ամբողջ մի ազգի ճակատագիր դնել հարցականի տակ: Պետք է ամեն ինչ անել, որ խաղաղություն ապահովվի:Երկու պատերազմը մի սերնդի համար կործանարար կլինի:
- Մենք դեմ ենք պատերազմին և մենք դեմ ենք զիջումներին, մենք միշտ զիջողի դերում ենք եղել, բայց դա շատ մեծ սխալ է:
- Պատերազմ չի լինելու... սա մարդկանց վախի մեջ պահելու ռազմավորություն է:
- Մենք մեր պահանջները չոր ենք դնելու: Էս դեպքում Ադրբեջանն էլ կհամաձայնվի, նրանք հո պատերազմ չեն ուզում:
- Եթե հարցը կարգավորվի, Ադրբեջանը պատերազմ չի սկսի, քանի որ նրա վրա միջազգային ճնշումը շատ մեծ կլինի:
- Մեր շահերից բխում է, որ հարևանների հետ անմիջական ռազմական գործողությունների մեջ չմտնենք, անհրաժեշտ է խուսափել պատերազմից:
- Չեմ կարծում, որ պատերազմի վերսկսումը իրական վտանգ է. եթե սկսեին վաղուց սկսած կլինեին:
- Այսօր պատերազմը ոչ մեզ է ձեռնտու, ոչ էլ Ադրբեջանին:
- Ամեն դեպքում, չնայած ադրբեջանցիների ռազմատենչ հայտարարությունների, ինձ թվում է ոչ մեկին այսօր ձեռնտու չէ, որ այս տարածաշրջանում լինի պատերազմ, այնպես որ, եկեք չչարաշահենք պատերազմի վերսկսկման գաղափարը:
- Մենք մինչև վերջերս անգամ Ղարաբաղի տեղը չգիտեինք, ինչ պատերազմի վերսկսման մասին է խոսքը:
- Ներկայիս Ադրբեջանի նախագահը երբեք չի ցանկանա վերսկսել պատերազմը, քանի որ տանուլ կտա իր իշխանությունը: Ինչպես բոլորս գիտենք՝ իր պաշտոնը ցմահ է իրեն շնորհված:
- Ոչ ոք պատերազմի չի ձգտում: Պատերազմի անուն տալիս են նրանք, ովքեր պաշտոնի են ձգտում: Խաղաղ բնակչությանը պատերազմ պետք չի:
- Նույնիսկ ադրբեջանցին, որը ասում է, որ ձգտում է պատերազմի, իրականում դրան չի ձգտում: Նույնիսկ պատերազմի բացառման դեպքում էլ այդպիսի հռետորական հայտարարությունները շարունակվելու են:

- Ես չեմ կարծում, թե այս վիճակը կհանգեցնի պատերազմի: Մենք այլեւս դրան չենք վերադառնա:
- Ավելի լավ է լինի փխրուն խաղաղություն, քան թե երկարատև արյունալի պատերազմ:
- Պատերազմ չի լինի, որովհետև հենց Ադրբեջանի ժողովուրդը դա թույլ չի տա:
- Պատերազմը ձեռնտու չէ ո՛չ Ռուսաստանին և ո՛չ էլ ԱՄՆ-ին, իսկ մենք այս հանգամանքից չենք օգտվում:
- Բացառվում է պատերազմի վերսկսումը
- Ալիևը իր տողային ասել է. «Պատերազմ չսկսես հայերի դեմ. որ նրանք սկսել են ականջ կտրել, նրանցից պետք է զգուշանալ»:
- Ադրբեջանը իրականում չի պատրաստվում պատերազմ սկսել, քանի որ իրենք էլ գիտեն, որ հաղթանակի չեն հասնի:
- Շատ ցանկալի է, որ առանց պատերազմի լուծվի մեր հարցը:
- Կանայք որպես կանոն պատերազմ չեն ուզում:
- Տղամարդիկ էլ պատերազմ չեն ուզում, սակայն ստիպված են լինում պատերազմել:
- Նրանք էլ են ասում, որ ամեն րոպե պատրաստ են պատերազմի, բայց դա սուտ է՝ թուրքը պատերազմող չէ:
- Թող կռիվ չլինի՝ ամենակարևորը դա է: Թող մեր գիտնականները նստեն որոշեն՝ ոնց ասեն, տենց թող լինի, միայն թե խաղաղություն լինի:
- Մենք գիտենք, որ Ադրբեջանը պատերազմ չի սկսելու, բայց չենք կարող մեր զգոնությունը թուլացնել, պետք է մեր զինվորները իրենց տեղերում ամուր կանգնած մնան:
- Եթե Ադրբեջանը վստահ լինի, որ կարող է իր ուժերով գրավել՝ կհարձակվի, ուրեմն վստահություն չունի:
- Չեմ կարծում, որ հավանական է, որ Ադրբեջանը սկսի պատերազմ, հատկապես Օսեթիայի ու Աբխազիայի դեպքերից հետո:
- Կապրենք ու կապրեցնենք. ոչ մի պատերազմի վտանգ էլ, մեզ այս ուղուց հետ չի կանգնեցնի:
- Պատերազմի վտանգ միշտ կա, բայց այն այնքան էլ մեծ չի, ինչքան կարծում ենք:
- Պատերազմի սկսել-չսկսելը կախված է գերտերություններից: Երկու երկրներին հարցը թողնելու դեպքում պատերազմ չի լինի:
- Ադրբեջանը մեզ երբեք պատերազմ չի հայտարարի, թույլը ինքը երբեք կռիվը չի սկսում:
- Ես համոզված եմ, Ալիևների դինաստիայի ժամանակաշրջանում պատերազմը չի վերսկսվի:
- Այլ շահագրգիռ կողմերը թույլ չեն տա, որ մեր տարածաշրջանում մեծ կռիվ սկսի:
- Գլխավորն այն է, որ հիմա պատերազմից խուսափենք, իսկ կարգավիճակի հարցը հետո էլ կլուծենք:
- Միջազգային հանրության դերն էլ ո՞րն է լինելու, եթե ոչ խաղաղության պահպանումը: Պատերազմի վերսկսման վտանգը քիչ է:

- Ադրբեջանական նավթը բացառում է պատերազմի սկսվելը:
- Իրենք մեր սահմանը Նախիջեւանի հատվածից չեն խախտում, որովհետեւ դա այլ հնչեղություն է ստանում. միջազգային ուժերը թույլ չեն տա Ադրբեջանին հարձակվել Հայաստանի վրա:
- Գերտերությունները մեծ ներդրումներ են կատարել նավթատարի վրա ու թույլ չեն տա պատերազմի վերսկսվումը:

Ադրբեջանցիներ

- Մենք պատերազմ չենք ուզում
- Հայաստանի խաղաղ բնակչությունը ևս հետաքրքրված չէ վերսկսելու պատերազմը:
- Ադրբեջանի քաղաքականությունը չի աջակցում պատերազմի գաղափարին:
- Երիտասարդությունը ցանկանում պատերազմ սկսել և մենք պետք է վերականգնենք մեր տարածքները ցանկացած մեթոդով:
- Կառավարությունը չի ցանկանում պատերազմ սկսել:
- Հայաստանը միայնակ չի պատերազմի, եթե անգամ Ադրբեջանն ուժեղ չէ:
- Սակայն այսօր իրատեսական չէ պատերազմ սկսել:
- Ոչ Ադրբեջանի և ոչ էլ Հայաստանի համար շահեկան չի լինի պատերազմի վերսկսումը:
- Երկու պետությունների միջև պատերազմ չի լինի:
- Ոչ ոք չի ուզում, որ արյուն թափվի:
- ԼՂ-ի համար ավելի լավ կլիներ անկախ լինել, քան պատերազմ սկսել
- Դուք չեք կարող զգալ, որ Ադրբեջանը պատերազմական իրավիճակում է:
- Օտար պետությունները ներդրում են կատարում տարածաշրջանում և հետաքրքրված չեն, որ հակամարտությունը պատերազմի վերաճի, այլ հետաքրքրված են հակամարտության կարգավորմամբ:
- Ադրբեջանը ներուժ ունի պատերազմ սկսելու, սակայն օտար պետությունները մեզ թույլ չեն տա:
- Անգամ փորձագետներն են մերժում պատերազմի միջոցով հակամարտության կարգավորումը:
- Պատերազմի տարբերակը հարմար չէ:
- Ըստ իս հիմնականում պետք է խաղաղություն լինի:
- Պետք է փոխզիջում լինի:
- Այս հարցը պետք է խաղաղ ճանապարհով կարգավորվի, քանի որ մենք կարող ենք ավելի շատ կորցնել, քան արդեն կորցրել ենք:
- Ադրբեջանը համաձայն չէ, որ հայ բնակչությունը որոշի տարածքային հարցեր:
- Հակամարտությունը պետք է կարգավորվի խաղաղ ճանապարհով՝ օգտագործելով մեր դիրքն ու հզորությունը:
- Եթե մենք ուզում ենք կարգավորել հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով, ապա մենք պետք է ինչ-որ կերպ փոխզիջման գնանք:

Այլ կարծիքներ պատերազմի մասին

Հայեր

- Բանակցությունների ժամանակ , փոխզիջում չի կարող լինել մեր կողմից, միակ փոխզիջումը կարող է լինել այն, որ մենք հրաժարվենք Գանձակից ու այլ տարածքներից, որոնք կարող էինք գրավել, բայց, ափսոս, չգրավեցինք
- Կռվի ժամանակ երեկոյան որոշում ստացանք, որ Նախիջևանն էլ ենք վերցնելու, բայց վերևները որոշումը չեղյալ համարեցին... մենք որ էդ վերևներին չլսեինք, հիմա Թուրքիայից էլ մեր հողերը հետ վերցրած կլինեինք:
- Ադրբեջանը հետ չի քաշվում, նրան պետք է ստիպել հետ քաշվել...
- Նախկին Շամշադինը թուրքերի հետ պատերազմ է մղել, այսօր մենք ենք հող տվել թուրքերին, Պառվաքարի, Արծվաշենի Ազատամուտը, Չինարեցին այգին այսօր մշակվում է կրակոցների տակ: Մենք այսօր պատրաստ ենք այս վիճակում մնալ, քան զիջենք ինչ-որ բան:
- Հինգերրորդ սցենարն այնքանով է ընդունելի, որ այն կարող է որոշ ժամանակով հանգստացնել թշմանում, մինչև մենք Ջավախքը վերցնենք ու միասին հարձակվենք Բաքվի վրա...
- Մեր սխալը հենց այն էր, որ քիչ տարածք գրավեցինք, նման շանս հազար տարին մեկ է լինում:
- Մենք պահանջատեր ենք էսօր, ու պատերազմից կամ Ադրբեջանի ուժեղանալուց վախելու հարց չկա:
- Եթե չեն կարողանում սահմանը պահել, թող կանչեն ինձ ու իմ կնոջը, մենք կպայքարենք:
- Ականատեսից եմ լսել. հենց նույն ամերիկացիները կռվի ժամանակ մեր հրամանատարներին ասել են, իբր ձեզ ով էր խանգառում, որ 7-ի փոխարեն 17-ը վերցնեինք... հիմա եկել ասում ենք լավ ենք արել թե՞ չէ ...
- Մենք կարող էինք մտնել Բաքու ու ամրապնդել մեր հաղթանակը: Բայց գերտերությունները թույլ չտվեցին ու հրադադար պարտադրեցին:
- Ես էլ էի կարծում՝ ինչներին պետք եղել մեր պապերին, որ կռվել են հայրենիքի համար, բայց երբ պահը եկավ, մենք՝ ամուսինս, ես, հիմա էլ երեխաներս, վստահ եմ, կանգնելու ենք մեր հայրենիքի համար: Այլ բան չենք պատկերացնում:
- Հարցը կլուծվի ի օգուտ Հայաստանին միայն այն դեպքում, երբ Ադրբեջանը զգա, որ իր հակառակորդն ավելի ուժեղ է
- Պատերազմ սկսելու առումով մենք խամաճիկի վիճակում ենք. գերպետություններն են որոշելու պատերազմը վերսկսվի, թե չէ
- Ադրբեջանն արդեն ռեալ քայլերի է դիմում, հարկավոր է հակազդող քայլեր ձեռնարկել, ժամանակը ձգձգելն էլ է վտանգավոր:
- ՀՀ ճկուն քաղաքականության շնորհիվ է, որ մինչ այսօր պատերազմը չի վերսկսվել
- Պետք է մենք Ադրբեջանին պատերազմ հայտարարենք, ավելի շատ տարածքներ գրավենք, որ վախենան

- Պատերազմի հավանականության հարցը ստատուս քվոի շարունակվելու մեջ չէ, այլ թե ինչպես կարձագանքեն գերտերությունները:
- Ես չէի ասի, թե հիմա «ոչ պատերազմ-ոչ խաղաղություն» է... ընդհակառակը, համ պատերազմ է համ էլ խաղաղություն. պիտի պատրաստ լինենք երկուսին էլ:
- Պատերազմը սկսելու է այն կողմը, ում շահերին փոխզիջումները ավելի շատ հարեն:
- Ով կռվել է, հիմա Ռուսաստան է գնացել:
- Ամերիկան անգամ վախենում է Իրանից կամ Կորեայից, եկել եք ասում եք, թե մենք զառանցում ենք, կարծում ենք, թե ինչ-որ մի բան կերաշխավորի պատերազմի բացառումը:
- Պատերազմները ինչ-որ մեկի ցանկությամբ չեն ծագում: Աշխարհաքաղաքական շահերն ու շատ գործոններ են խառնվում: Պարզ է միայն, որ աշխարհը ձգտում է ձեռնպահ մնալ պատերազմական գործողությունից:
- Հարաբերական է՝ կունենանք այնքան հզորություն, որ բացառենք պատերազմը: Սրանից ելնելով պետք է լուծում որոնենք:
- Երկրորդ սցենարի դեպքում պատերազմը հաստատ վերկսկսվելու է:
- Նախկին պատերազմը ցույց տվեց, որ զուտ ռազմական գերակշռությունը բավարար պայման չէ հաղթանակի համար:
- Թող բացասական լինի պատերազմի հնարավորությունը, բայց կարեւորը մեր անկախությունն է, որ արդեն ունենք:
- Քաղաքականության որևէ փոփոխությունից է կախված, թե որքան երկար ժամանակ խաղաղությունը կձգվի:
- Եթե այսօր որոշել են մեր կարծիքը հարցնեն, ուրեմն պատերազմի վտանգը մեծացել ու դիվանագետների մոտ դժվարություններ են առաջացել:

Ադրբեջանցիներ

- Ամեն դեպքում պատերազմի իրականացումը նույնպես չի լուծում խնդիրը
- Նրանք ցանկանում էին պատերազմ սկսել, մենք դրան չգնացինք և հետաձգեցինք այն:
- Եթե զոհերը և փախստականները մեծ թիվ են կազմում, ապա դա չի կարող հակամարտություն անվանվել: Սա համաշխարհային մասշտաբի պատերազմ է, և եթե երկու կողմերին մատակարարվի ժամանակակից զենք ՝ միմյանց դեմ դուրս գալու, ապա այն նաև պատերազմի կվերածվի:
- Մենք զիջում ենք մեր դիրքերը «տեղեկատվական պատերազմում»:
- Հետո պարզվեց, որ բամբակի մշակման մեջ օգտագործվող վերելակները, կարելի է օգտագործել ջրածնային զենք ստանալու համար:
- Մենք պարտվել են տեղեկատվական պատերազմում:
- Անհնարին կլինի պատերազմ սկսելը փոխադարձ համաձայնությամբ:
- Մենք նաև պետք է պարզենք, արդյոք պատրաստ ենք պատերազմի թե ոչ:

- Հայերը պատերազմում հաղթել են իրենց ուղեղի, այլ ոչ թե ուժեղ բանակի շնորհիվ:
- Մի քանի մարդիկ միաժամանակ և խաղաղություն են ուզում, և պատերազմ:
- Ոչ ոք պատերազմ չի ցանկանում, սակայն խաղաղությանն ուղղված որևէ հարիր քայլ չի կատարվում:
- Մեր թուլությունն արտահայտվում է մեր տեղեկացվածությամբ, սակայն նաև արդարացման բացակայությամբ:
- Եթե 15 տարվա ընթացքում Ադրբեջանի ուժը մեծանա, ապա պատերազմի ճանապարհն էլ ընդունելի կդառնա:
- Հայաստանի տեղաշարժը դեպի Թուրքիա նշանակում է, որ Հայաստանը խեղդվում է:
- Մենք չենք կարող մշտապես ապրել պատերազմի վախի պայմաններում:

Անվտանգություն

Ինքնություն և համակեցություն

Հայեր

- Ո՞ւր գնացին Նախիջևանի 54% հայությունը:
- Ես, որպես ղարաբաղցի ասեմ, որ ոչ մի դրական կողմ այդ յոթանասուն տարիների ընթացքում, սովետական տարիների ընթացքում, ոչ մի դրական բան չի եղել. ես անգամ հայոց պատմությունը ինքնուրույն եմ սովորել, ոչ մի տնտեսական դրական տեղաշարժ չի եղել:
- Ադրբեջանցին իր տանը չի կարողանում ժողովրդավորություն ապահովի, մարդու իրավունք պաշտպանի, Ղարաբաղում ո՞նց պիտի անի:
- Ադրբեջանի միակ քաղաքականությունը Ղարաբաղի հարցում միշտ էլ եղել ու լինելու է հայաթափությունը:
- Այսօր Իրաքում քրդերը ունեն իրավական անկախություն, խնդրեմ, տեսեք, թե ինչ օրի են:
- Նրանք կգան, բայց հայը կգնո՞ա
- Կարելի է ենթադրել, որ եթե Ղարաբաղը տանք Ադրբեջանին մի քանի տարի հետո այնտեղ կսկսվի նույն քաղաքականությունը, ինչ եղել է մինչև պատերազմի սկիզբը:
- Մենք հիմա էլ գիտենք, որ Ադրբեջանը չի կատարի իր ստանձնած երաշխիքները: Ադրբեջանին երբեք չի կարելի վստահել:
- Այս էջը պետք է սևով գրել: Անհնարին է հավատալ ադրբեջանին, քանի որ պատմությունը ցույց է տվել, թե կարող է լինի:
- Ժամանակին ղարաբաղցուն ադրբեջանցու հետ էինք համեմատում... դա ադրբեջանական քաղաքականության արդյունքն է:
- Նրանք յոթանասուն տարի կարող էին հայերին հարգել, հարգեցի՞ն:
- Ո՞վ է երաշխիքներ տալու. Ադրբեջանը՞.... նա մի անգամ արդեն այդ հնարավորությունն ունեցել, բոլորս էլ լավ տեսանք, թե ինչ ստացվեց....
- Ղարաբաղը պահելը հայապահպանության նպատակ ունի:
- Հիմա հնարավոր չէ ադրբեջանցիների ու հայերի համատեղ կյանքը նույն հողի վրա, գուցե հարյուր տարի հետո:
- Հայ և ադրբեջանցի մարդիկ այլևս չեն կարող խաղաղ ապրել իրար հարևանությամբ, շատ ջրեր են արդեն հոսել
- Տարիների ընթացքում սերունդներ են փոխվել, և ներկայիս սերունդը Ադրբեջանում այնքան հակահայկական դաստիարակություն է ստացել, որ իրենց ատելությունը թույլ չի տա խաղաղ ապրել հայերի հետ:
- Թուրքերն ուզում են Հայաստանը վերացնել: Թուրքի ու հայի մեջ խաղաղություն չի լինելու:
- Լարվածությունը երկու ազգերի միջև եղել է ու կշարունակվի: Դարերից եկած պապական թշնամություն է:
- Թուրքերը էնքան վնաս են հասցրել հայերին, որ մոռանալ հնարավոր չէ:

- Ղարաբաղի հարցը շարունակությունն էր ցեղասպանությունից սկիզբ առած թշնամանքի:
- Ամերիկայում էլ է ապահովվում անվտանգությունը, տնտեսական բարեկեցությունը, է՞, բոլորով թողնենք գնանք Ամերիկա՞:
- Ամբողջ աշխարհում հիմա կոսմո գաղափար կա, պետք է թողնել մարդկանց ապրել ցանկացած վայրում, միայն թե լավ ապրեն: Պետք չէ զարգացմանը խանգարել:
- Ռուսաստանն է երաշխավորը, որ թուրքերը չեն մտել Հայաստան:
- Դպրոցում էն ժամանակ Ղարաբաղում հայոց պատմություն անցնում էինք միայն երկու ամիս...
- Ինչպե՞ս պատահեց, որ ապրիլ 24 եղավ... եթե մենք ինքնորոշման իրավունքից չկառչենք, ապա 24-եր նորից կլինեն..
- Երկրորդ սցենարը բացառվում է, պետք է բացառել նաև դրա քննարկումը, քանի որ այդ դեպքում Ղարաբաղը կարժանանանա Նախիջևանի ճակատագրին
- Սովետի ժամանակ մենք տեսել ենք բաներ, որ կկրկնվի Նախիջևանի տարբերակը, դրա համար այս տարբերակը մեզ համար ընդունելի չի:
- Անընդունելի տարբերակ է: Երբեք այս պատմությունից հետո հայերն ու թուրքերը միասին չեն ապրի: Թշնամանքը դեռ գալիս է Արևմտյան Հայաստանից:
- Ինչ երաշխիքներ կա՞ն, որ մի նոր Եղեռն չեն կազմակերպի: Նույնիսկ մի հայ զինվորական չկարողացավ մեկ գիշեր մի թուրքի հետ ապրել:
- Ղարաբաղի բնակչության միատարրությունը խախտելը կբերի նոր կոնֆլիկտի:
- Դուք այնքան միամիտ եք, որ բացառում եք 94 տարի հետո ցեղասպանությունը մեր հարեւանների կողմից:
- Նրանք արյունարբու ազգ են, որոնցից ամեն վայրկյան վտանգ է սպասվում:
- Առնվազն մեկ դար է պետք, որպեսզի հայերն ու թուրքերը կարողանան միասին նորից ապրել:
- Մենք պետք է մեր բոլոր հարևանների հետ ունենանք նորմալ հարաբերություններ, սահմանները պետք է բաց լինեն:
- Նախիջևանն էլ է մերը, բայց այնտեղ հայ չի մնացել, դրա համար էլ հարցը բարդանում է, սակայն ԼՂՀ-ն պիտի պահենք. այնտեղ հիմա մի սերունդ է ապրում, որը թուրքի իշխանություն չի տեսել...
- Եթե նույնիսկ խաղաղություն լիներ, երկար տարիներ են պետք, որ ժողովուրդները միասին ապրեն: Առևտուր թուրքերի հետ գոյություն ունի, սակայն ապրելն ուրիշ հարց է:
- Պատերազմը վաղուց վերջացել է, բայց մշակույթը շարունակվում է ոչնչացվել:
- Բաքվում Ստեփան Շահումյանի արձանը ջարդել, հանել են՝ իրենց համար չէ՞ր կռվում:
- Ինչպես որ Նախիջևանը հայաթափվեց, նույն կերպ երկրորդ սցենարում Ղարաբաղը կհայաթափվի:

- Եթե երկրորդ սցենարը գործի մեր տարածքներում հայաթափությունից խուսափել հնարավոր չի լինի:
- ԵՎ անձի և ժողորդի անվտանգության համար երաշխիքներ չկան Ադրբեջանում:
- Սուտ են ասում ադրբեջանցիները, որ Սումգայիթ այլևս չի կրկնվի: ԴԱ նրանց հերթական սուտն է:
- Ազգային կազմը փոխվում է: Ինչպես կարող ես ադրբեջանական գյուղում ադրբեջանական դպրոց չբացել:
- Ի՞նչ պիտի անենք, որ ադրբեջանցիք Արարատյան դաշտ գան ու սկսեն շատանալ: Մենք նրանց հետ չենք կարողանա ապրել:
- Հարեւանությունը շատ կարեւոր է, միայն թե կռիվ չլինի:
- Կրկին Արցախը կհայաթափվի, հողերը կմնան անտեր:
- Ոչ մի երաշխիք չի կարող ապահովել հայերի իրավունքները Ադրբեջանի կազմում:
- Ինչ զարգացման մասին ենք խոսում, միանգամից կհայաթափեն մեր տարածքները մեզանից: Էլ ի՞նչն կզարգանա Ադրբեջանի տարածքում... իրե՞նք:
- Իմ ամուսինը զոհվել է Ղարաբաղում, բայց ի տարբերություն շատերի, ես կողմ են փոխզիջման միջոցով ղարաբաղյան հարցի լուծմանը, որ երկու պետությունների ու ժողովուրդների միջև թշնամանքը վերանա:
- Պետք է պայքարել երեխաներին հանդուրժող դաստիարակելու համար: Բայց... նրանք իրենց երեխաներին այլ կերպ են մեծացնում:
- Ես ինչքան էլ ցավեմ ու հոգ տանեմ քո ընտանիքի համար, մեկ տասներորդն էլ չեմ անի քո ընտանիքի համար: Օտարը մեզ համար ինչու՞ պետք է իրեն կոտորի ու մեր անվտանգությունն ապահովի:
- Ինչի՞ ենք մենակ իրենց վատից խոսում. «Յա նե վինավատ, օն սամ ուպալ նա մոյ կինժալ ի տակ վոսեմ ռազ...» Սա լրիվ մեր մասին է:
- Դպրոցներում այսօր և Ադրբեջանում և Վրաստանում խեղաթյուրված պատմություն են ուսուցանում: Ինչպես պետք է Ադրբեջանում հայկական դպրոց վարեն:
- Պետք է աշխարհը գիտակցի, որ քրիստոնյա երկիրը չի կարելի նվիրել մուսուլմանին
- Ես անձամբ ատելություն չունեմ ոչ թուրքի, ոչ ադրբեջանցու նկատմամբ, սակայն ադրբեջանցի երիտասարդները միանշանակ հակառակ կերպ են վերաբերվում հայերին:
- Երբ Ղարաբաղը Ադրբեջանի տարածքում էր, մենք ունեինք մշակութային ինքնությունը կորցնելու վտանգ, հաստատ երկրորդ սցենարի դեպքում կկրկնվի նույնը
- Երկրորդ սցենարի դեպքում Ղարաբաղում հայաթափություն է լինելու: ԼՂը պետք է վերաբնակեցնել հայերով:
- Սահմանները բաց՝ տեսել ենք ինչ է լինում, շատ լավ ա, որ փակ է սահմանը, քիչ ենք թուրքացվում, վերջապես մենք ենք մեր երկրի տերը, դրանք մի քանի տարի էլ մնային, չեմ ուզում պատկերացնել, թե ինչ կլինի:

- Հարկավոր է Հայաստանից որքան հնարավոր է շատ բնակիչներ բնակեցնել Ղարաբաղում: Այս միջոցով մենք կկարողանանք ապահովել հայաբնակեցման գաղափարը և կխուսափենք ակամա հայաթափումից:
- Եթե էս տարբերակն ընդունվի, մեր կրոնը, մեր ամեն ինչը կբռնաբարվի:
- Պարսիկներն էլ գնացին-եկան ու լցվեցին, նույնն էլ իրանք, եթե ոտ դրին՝ վերջ, էլ պրծում չունենք:
- Ինքնավարությունը «պահպանվում է», սակայն արդյունքում բնակչությունը թրքացվում է:
- Մեզ բաժանում է իրենց կրոնական անհանդուրժողականությունը: Մենք դահիճի ձեռք չենք հանձնի ինքներս մեզ:
- Եթե նույնիսկ երկրորդ սցենարն իրականանա, Ղարաբաղը կհայտնվի ավելի վատ իրավիճակում, ինչպես Ջավախքը՝ Վրաստանում:
- Սահմանների բացման դեպքում մեծանում է հայերի՝ ադրբեջանցիների կողմից ասիմիլացվելու վտանգը:
- Մյուս կողմից, մինչեւ ե՞րբ պետք է ադրբեջանցիների հետ կոնֆլիկտի մեջ մնանք:
- Եթե Թուրքիան է շահագրգիռ այս հարցով, բա մեր հայրենակիցներով ով է մտահոգվելու, որ դաժան ճակատագրով հենց Թուրքիայի պատճառով հայտնվեցին հայրենազուրկ ու տարասփյուռ վիճակում:
- Այն ժամանակ քիչ էր մնացել մեր երեխաներն իրենց լեզվով խոսեին:
- Երկրորդ սցենարի դեպքում, Ադրբեջանում ապրող հայերը կենցաղային հարցերում կընդունեն Ադրբեջանի սովորույթներն ու ադաթները, ու մի քանի սերունդից հետո այնտեղ հայ չի մնա:
- Մեր դպրոցում միշտ, միշտ եղել է կռիվների խնդիրը, տնօրենն էլ ադրբեջանցի էր, փայտը ձեռքներիս էինք շրջում, որ երեխաների միջեւ ընդհարումները կասեցնեինք:
- Մեր հանճարեղ տաղանդավոր մարդկանց ազգանունները փոխում էին, Հայրապետյանը դարձնում էին Հայրապետով, որ մեր մարդկային ռեսուրսը տանեին, որ մեզ ձուլեին...
- Մեր վատն էն ա, որ մենք բնազդով ենք հայրենասեր, մինչև դանակը չի հասնում ոսկորին, դիվանից վեր չենք կենում...
- Երկրորդ սցենարը ազգերի ինքնորոշման իրավունքի կոպիտ խախտում է:

Ադրբեջանցիներ

- Մենք համաձայն չենք այն փաստի հետ, որ հայերը ապրեն ԼՂ-ում:
- Ես երբեք չեմ ցանկացել լինել Ադրբեջանի կառավարության պաշտոնում:
- Հայերը պետք է ադրբեջանական կրթություն ստանան: Օրինակ՝ Իրանում: ադրբեջաներեն չեն սովորեցնում:
- Ես նույնպես չեի ցանկանա հայերեն ուսուցանվեր Ադրբեջանում:
- Հայերը կարող են օկուպացնել Ղարաբաղի դիրքերը:
- Մենք չպետք է թույլատրենք լեզվի ուսուցանումը .... Այն սխալ է:
- Ես աշխատում եմ "Շիրվան" նավթային կազմակերպությունում և կարծում եմ, որ մեր երկրում պետք է խոսել մեր մայրենի լեզվով:

- Ադրբեջաներենը պետք է ուժով սովորեցնել:
- Եթե չեն ցանկանում, թող այլ երկրում ապրեն:
- Եթե ապրում են մեր հետ, պետք է ենթարկվեն մեր կանոններին:
- Ինձ բոլոր կետերը գոհացնում են, բացի դպրոցներին վերաբերող կետից:
- ԼՂ-ում միայն ադրբեջանցիներ պետք է ապրեն:
- Ընդհանուր առմամբ, մենք կցանկանայինք հայ չտեսնել մեր երկրում:
- Նրանք պետք է ապրեն այնպես, ինչպես մյուս էթնիկ խմբերն են ապրում Ադրբեջանում:
- Հենց որ տրամադրվի անկախությունը, նրանց պետք է տրամադրվեն լեզուներ:
- Հենց որ խաղաղություն լինի, նրանք նորից հարմարավետորեն կապրեն, ինչպես անցյալում:
- Մենք չպետք է համաձայնենք, որ հայերն ապրեն ԼՂ-ում:
- Հայերը մեզ շատ մոտ են:
- Երկու հասարակությունների համար անհնարին է համատեղ ապրելը:
- Երկու հասարակություններ կարող են միայն առանձին ապրել՝ խանութները պետք է առանձին լինեն, դպրոցները ևս:
- Ամեն դեպքում համակեցությունն անհնարին է:
- Ադրբեջանի քաղաքացի հայերը օգտվում են ընդհանուր իրավունքներից:
- Ադրբեջանն իրավական պետություն է. պետական համակարգը մեր անվտանգության երաշխիքն է, ինչպես նաև երաշխավորն է Ադրբեջանի տարածքում ապրող էթնիկ խմբերի:
- Ճնշումները և բռնությունը, ինչպես նաև մարդու իրավունքների խախտման այլ դրսևորումներն ընդունելի չեն:
- Սահմանադրության շրջանակում պետք է իրականացվեն բոլոր իրավունքները:
- Ադրբեջանը երաշխավորում է հայերի՝ մարդու իրավունքների պաշտպանությունը:
- Այն տարածքներում, որտեղ հայերը կոմպակտ ապրում են, կան հայալեզու դպրոցներ:
- Ադրբեջաներենը պետք է ուսուցանվի որպես ազգային լեզու, զուգահեռ պետք է ուսուցանվեն Ադրբեջանի և Հայաստանի պատմությունները:
- Նման սցենարը չի կարող կայուն խաղաղություն ապահովել. Ադրբեջանական հասարակությունը մշտական ազդեցության տակ կլինի:
- Հիմք ընդունելով, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի անբաժանելի մասն է՝ տնտեսական, քաղաքական և սոցիալական ինստիտուտները պետք է վերակառուցվեն:
- Ինչու՞ պետք է Ղարաբաղն Ադրբեջանի կազմում լայն ինքնավարություն ունենա:
- Նրանք, ովքեր հայերեն են սովորում՝ ադրբեջաներեն չեն սովորի:
- Հայերը կարող են հայերեն սովորել, եթե ցանկանում են, սակայն հիմնական լեզուն պետք է մնա ադրբեջաներենը:
- Հայ հասարակությունները պետք է ռադիո, թերթեր ունենան:

- Եվ նաև հայերին չպետք է թույլ տալ զբաղեցնել օրենսդիր կամ գործադիր որևէ պաշտոն:
- Մեր ներկային խորհրդարանական ընտրությունների ժամանակ ազգությունը հաշվի չի առնվում:
- ԼՂ-ի հայերը չպետք է հնարավորություն ունենան ինքնուրույն որոշելու իրենց ճակատագիրը:
- Մենք խորհրդարանում ունենք ռուսներ և հրեաներ, սակայն խորհրդարան հայերի ընտրությունը որևէ կերպ չի կանոնակարգվում:
- Ադրբեջանում 76 էթնիկ խմբեր կան:
- Ինչու՞ նրանք հեղափոխություն չեն իրականացնում:
- Ադրբեջանը շատ հանդուրժող երկիր է:
- Հայերը սովորում են մեր ավանդույթները:
- ԼՂ-ի քաղաքացիներն ադրբեջանցիներ են և, այդ առումով, պատճառ չկա նրանց անկախություն տալու համար:
- Պետությունը պատրաստ է լայն ինքնավարություն տրամադրել , դա չէ հարցը:
- Հասարակությունը մարդկանց խումբ է, ովքեր կիսում են մեկ տարածք, մշակույթ և ավանդույթներ և ունեն միևնույն հիմնախնդիրները:
- Բոլոր քաղաքացիները պետք է ունենան միևնույն իրավունքները՝ անկախ կրոնական և էթնիկ պատկանելիությունից:
- Բոլոր ազգայնական կազմակերպությունները պետք է դադարեցնեն իրենց գործունեությունն Ադրբեջանի տարածքում:
- ԼՂ-ն լայն ինքնավարություն չպետք է ստանա, ԼՂ-ն սնունդ չէ մեր հյուրերի հետ կիսելու համար:
- Զինված ուժերը և ոստիկանությունը պետության հիմնական ուժն են, այդ իսկ պատճառով հայերը չեն կարող նման պաշտոններ զբաղեցնել:
- Սա բավարարում է մեր դիրքորոշումը. ես համաձայն չեմ չորրորդ դրույթ հետ, պետությունը պետք է երաշխիքներ տրամադրի հայերին:
- Մենք կարող ենք արդարանալ, որ չենք կարող ապրել հայերի հետ:
- Այստեղի թերություններից մեկը կարգավորման հանձնում է հայերին:
- Ադրբեջանական պետությունը երաշխավորում է Ադրբեջանի ողջ տարածքում հայերին, որ չի լինի բռնություններ և ճնշումներ ու նրանց անվտանգությունը կապահովվի:
- Ադրբեջանում հայերը, ինչպես նաև ԼՂ-ի բնակչությունը կստանան հնարավորիս ընդգրկուն էթնիկ իրավունքներ և մարդու իրավունքներ:
- Բնակչությունը հնարավորություն է ստանում ընտրելու ուսուցման լեզու, որը ԼՂ-ում կարող է լինել հայերենը կամ մեկ այլ լեզու:
- Օրենսդրությունը նախատեսում է հայերի մասնակցությունը կառավարման համակարգում: Զինված ուժերի և ոստիկանության վերաբերյալ օրենսդրությունը համապատասխանում է հայ հասարակության շահերին:
- Համամասնություն պետք է ձեռք բերվի ընտրություններում և ընդհանուր կառավարման մեջ:
- Շատ անհամաձայնություններ կան ԼՂ-ում հայկական դրամի և լեզվի մնալու հետ կապված:

- Եթե անգամ ԼՂ-ն հետ վերադարձվի, տարածքում ապրող հայերը կօգտագործեն հայկական անձնագրեր:
- Ճիշտ չէ, որ նրանք անձնագրեր են ստանում Հայաստանից:
- ԼՂ-ն պետք է ունենա նույն ինքնավարությունը, ինչ Նախիջևանը:
- Ճիշտ չէ ԼՂ-ում հայկական դրամ օգտագործելը, հետևաբար մենք պետք է բնակչությանը սրան նախապատրաստենք:
- ԼՂ-ն կարող է անկախության լայն մակարդակ ունենալ՝ Ադրբեջանի անբաժան մասը մնալով:
- Հայոց լեզուն ուսուցման լեզու չի կարող լինել:
- Ինչու՞ պետք է հայերը խառնվեն մեր գործերին տարբեր մակարդակներում: ՞
- Թող նրանք ունենան իրենց դպրոցները, հեռուստատեսային ծրագրերը և մաս կազմեն Ադրբեջանի՝ Թաթարստանի մոդելը:
- Եթե խաղաղություն լինի կարող են ապահովել էթնիկ և մարդու իրավունքները:
- Եթե մենք ապահովենք մշակութային անկախություն, մենք պետք է համաձայնենք սրա հետ:
- Մի քանի երիտասարդներ ասում են, որ չեն ցանկանա, որ հայալեզու դպրոցներ գոյություն ունենան:
- Եթե խաղաղություն լինի, մենք դեմ չենք լինի, որ Ադրբեջանի քաղաքական էլիտայում հայ ներկայացուցիչներ լինեն:
- Երկու հասարակությունների համակցության պայմանները պետք է նախապատրաստվեն:
- Հայերը միայն պետք է գան և գնան որպես հյուրեր:
- Հայերի համար առանձին դպրոցներ պետք է բացվեն:
- Մենք չենք ուզում, որ նրանք Ադրբեջանում իշխող դիրք զբաղեցնեն:
- Ընդհանուր առմամբ, պետք է ապահովվեն էթնիկ իրավունքները:
- Մշակութային անկախություն:
- Ադրբեջանը ունիտար պետություն է: Մենք չենք կարող ԼՂ-ին նույն անկախության մակարդակը տալ, որն ունի Նախիջևանը:
- Կրթության ոլորտում յուրաքանչյուրը կարող է իր ընտրությունը կատարել:
- Յուրաքանչյուր քաղաքացի կարող է լեզվի իր ընտրությունը կատարել:
- Եթե մեր անվտանգությունը սասանվի հայերի հետ հարևանություն անելիս՝ մենք դրա կարիքը չունենք:
- Քանի որ նրանք արդեն իրենց սոցիալական կյանքն այստեղ են հաստատել:
- Ես երբեք հայի հետ չեմ սովորի:
- Ադրբեջանցիները չեն գնա ապրելու այն վայրերում, որտեղ հայերն են ապրել:
- Հայերը կարող են նույնը մտածել, հետևաբար համակեցությունն անհնարին է:
- Մենք պատրաստ չենք հայերի հետ համատեղ ապրելուն:
- Մենք անցյալում հայերի հետ ապրել են և միաժամանակ հակամարտություններ ենք ունեցել:

- Նաև մեր համակեցությունը հայերի հետ անհնարին է:
- Մեր սերունդը դա դժվարությամբ կընդունի:
- Միայն օտար երկրներում մենք կարող են խաղաղ միասին ապրել:
- Որոշ ժամանակ անց համակեցությունը կարող է հնարավոր լինել:
- Ղարաբաղում ապրող հայերը պետք է ադրբեջանական քաղաքացիություն ստանան:
- Ղարաբաղի դեպքում կարելի է գործածել Նախիջևանի տարբերակը:
- Լեռնային Ղարաբաղի ինքնավար հանրապետության ստեղծումը կարող է ընդունելի լինել մազ համար:
- Սակայն լայն ինքնավարություն ստանալը ճիշտ չէ և ընդունելի չէ մեր համար:
- Մենք կարող ենք թողել Լեռնային Ղարաբաղում հայերին կրթություն ստանալ իրենց մայրենի լեզվով:
- Հայերը կարող են համապատասխան պաշտոններ զբաղեցնել Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում, սակայն նրանք պետք է Ադրբեջանի քաղաքացիներ լինեն:
- Մենք պետք է կրթությունը զարգացնենք:
- Նման հիմնախնդրից հետո ադրբեջանցիները չեն կարողանա ապրել հայերի հետ:
- Մեկ այլ տարբերակ է Լեռնային Ղարաբաղում Բեռլինի պատի նման պատ կառուցել, որը հնարավորություն կտա մի կողմում հայերի, իսկ մյուս կողմում ադրբեջանցիների բնակության համար:
- Լեզուն և փողը պետք է ադրբեջանական լինեն:
- Իրականում Լեռնային Ղարաբաղում ապրող հայերը պետք է հայաստանյան անձնագրեր ունենան:
- Լեռնային Ղարաբաղի տարածքը պետք է մնա Ադրբեջանի կազմում, սակայն հայերը չեն կարող ապրել ադրբեջանցիների հետ:Քանի որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մասն է կազմում՝ կառավարումը պետք է իրականացվի Ադրբեջանի կողմից:
- Լեռնային Ղարաբաղի հայերի էթնիկ և մարդու իրավունքները կարող են բարձր մակարդակով ապահովվել:
- Լեռնային Ղարաբաղի հայերը կարող են ունենալ նույն իրավունքները, որ ունեն Ադրբեջանի մյուս մասերի փոքր ժողովուրդները:
- Մենք կարող ենք հավատալ, որ անգամ եթե խաղաղության հաստատման վերաբերյալ պայմանագիր ստորագրվի, շատ դժվար կլինի հայերի և ադրբեջանցիների խաղաղ համակեցության հարցը:
- Հնարավոր չէ հանդուրժել հայոց լեզուն և թատրոնը Լեռնային Ղարաբաղում, նախապատվությունը պետք է տրվի ադրբեջաներենին:
- Հայկական դրամը և հայոց լեզուն չեն կարող մնալ որպես պաշտոնական դրամ և լեզու:
- Հայերի մարդու իրավունքները ևս այստեղ պետք է պաշտպանվեն:
- Նախապատվությունը պետք է տրվի ադրբեջաներենին:
- Երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը պետք է ղեկավարվի միայն նախագահի կողմից:

- Ղարաբաղի քաղաքացիները կարող են արտասահման մեկնել միայն Ադրբեջանի անձնագրերով:
- Միայն դրանից հետո կքննարկվի հայերի իրավունքների պաշտպանության հարցը:
- Հայկական ազգային տարադրամը՝ դրամը, չի կարող որպես ազգային տարադրամ օգտագործվել ԼՂ-ում:
- Տնտեսությունն է ցանկացած դրամական հիմքի մեջքին կանգնած, պետք է մեկ դրամական համակարգ լինի:
- Կառավարությունը կերաշխավորի Ղարաբաղի բնակչության անվտանգությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը, որը չի հանգեցնի ճնշումների կամ բռնությունների:
- Հայերը, ինչպես նաև Ադրբեջանում ապրող մյուս բոլոր էթնիկ խմբերը մարդու նույն իրավունքները կունենան:
- Կրթությունը միջնակարգ դպրոցներում պետք է կամընտրական լինի Ադրբեջանի Հանրապետություն կրթական օրենսդրության շրջանակում:
- Հայերը Ադրբեջանի մյուս բոլոր քաղաքացիների հետ կկարողանան մասնակցել կառավարմանը համաձայն Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության:
- ԼՂ-ի բնակչությունը պետք է ստանան իրենց անձնագրերը Ադրբեջանից: Հատուկ վարչակարգի կազմակերպությունները պետք է հիշեն հայկական ծագում ունեցող Ադրբեջանի բնակչությանը:
- Անհնարին կլինի միասին ապրել:
- Չպետք է լինի ԼՂ հասարակություն:
- Ինչու՞ մենք պետք է հետ վերադառնանք առանձին հասարակությունների վիճակին՝ նախնադարյան հասարակության շրջան:
- Մենք կարող են հասնել հակամարտության կարգավորմանը՝ ժողովրդավարական հասարակություն կառուցելով:
- Պետական լեզուն չպետք է երբեք լինի հայերենը, սակայն հայերը որպես փոքրամասնություն կարող են գործածել իրենց լեզուն, սակայն ոչ պետական մակարդակով:
- Հայկական տարադարամն ընդունելի չէ, դրան պետք է մանաթը փոխարինի:
- ԼՂ-ն պետություն չէ, այս իսկ պատճառով բոլոր միջազգային շփումները պետք է իրականացվեն Ադրբեջանի կառավարության և պետության միջոցով:
- Ադրբեջանը միշտ էլ առավելություն է ունեցել հայերի նկատմամբ:
- Նրանք ունեն աշակերտներ և մայրենի լեզվով դպրոցներ:
- Դա նշանակում է, որ մենք նրանց համար ավելի լավ պայմաններ ենք ապահովում, քան մեզ համար:
- ԼՂ-ի բնակիչները պետք է ճանապարհորդելու համար ձեռք բերեն ադրբեջանական անձնագրեր և գործեն ըստ ադրբեջանական պետության օրենքների:
- Ադրբեջանը պետք է օգտագործի այլ պետությունների մոդելները, որտեղ կան փոքրամասնություններ ներկայացնող աշակերտներ:

- Եվ ինչպես են այս պետությունները կառավարում և գործում:
- Օրենսդրությունը և մեխանիզմները պետք է համաձայնեցվեն, և լայն ինքնավարության վերաբերյալ որոշումը պետք է կիրարկվի:
- Կգործածվի դպրոցներում որպես օտար լեզու:
- Հայ ժողովրդի կրոնական գործոնը և մարդու իրավունքները պետք է պաշտպանվեն:
- Մենք պետք է համաձայնենք կրթության հետ:
- Քանի որ սա հակասում է Ադրբեջանի սկզբունքներին և կարող է վտանգել ապագան:
- Պետք է հետ գնան և միասին ապրեն:
- Ադրբեջանը և Հայաստանը պետք է ապրեն խաղաղության մեջ, մենք խաղաղություն ենք ցանկանում:
- ԼՂ-ն մեր տարածքն է և պետք է պարունակի մեր խորհրդանիշերը, դա պետք է բացատրել ԼՂ-ի հայերին
- Մինչև հակամարտությունը ԼՂ-ն շրջան էր, իսկ հիմա այն կդառնա Ինքնավար Հանրապետություն
- Հայերի մասնակցությունը կառավարության օրենսդիր գործունեությանը անհնար է:
- Հայերը, որպես ԼՂ բաղկացուցիչ, կարող են լինել մեր քաղաքացիները և օգտվել բոլոր իրավունքներից:
- Ես համաձայն չեմ ԼՂ-ում ապրող հայերին ինքնորոշման իրավունքի տրամադրմանը, նրանք կարող են լինել ինչպես նախկինում, նրանք կարող են ապրել այնտեղ, առանձին և բացառիկ իրավունքներ չպետք է տրվեն:
- ԼՂ հիմնախնդիրը պետք է կարգավորվի նույնիսկ դե-ֆակտո. դա նշանակում է Ադրբեջանի մաս կազմելով: Ազգային կառավարությունը պետք է այդ տարածքի ժողովրդի համար ապահովի հավասար իրավունքներ:
- Հայերը ևս ի վիճակի կլինեն հավասար իրավունքների հիմքով ծառայել բանակում:
- Ուրեմն դա նշանակում է, որ Ադրբեջանը երկու կողմերին էլ՝ և Ադրբեջանին, և Հայաստանին ապահովում է միևնույն իրավունքներով, դա նշանակում է նաև, որ հայերը ևս կխրախուսվեն ծառայել բանակում:
- Դա իրատեսական չէ, հայերը երբեք չեն ծառայի ադրբեջանական բանակում:
- Հայաստանի քաղաքացիները կարող են ծառայել ադրբեջանական բանակում:
- Եթե մենք հասկանանք ներկա իրավիճակը, ապա սցենար II-ը կարող է ընդունելի լինել:
- Ինչու՞ պետք է ԼՂ-ը բռնազավթվեր՝ քանի որ այս տարածքը հարմար է զբոսաշրջության համար:
- Այս սցենարում մեկ փոփոխություն պետք է կատարվի, այն է՝ հայերի մասնակցության սահմանափակումը օրենդրի գործունեության մեջ:
- «Ղարաբաղի բնակչություն» արտահայտություն գոյություն չունի:

- Խոսքը վերաբերում է ոչ թե լայն ինքնավարությանը, այլ ինքնավարությանը. համաձայն սցենարի ԼՂ-ում ապրող հայերին հայոց լեզուն ուսուցանելու հնարավորություն գոյություն ունի:
- Մենք պետք է նրանց բացատրենք, որ կարող ենք հարևանություն անելով ապրել:
- Այս սցենարում արտացոլված են մեր այսօրվա քաղաքականության նպատակները. երկու ազգերը չեն կարողանա միասին ապրել:
- Նախկին փորձերը չեն կարող կրկնվել:
- Այս հակամարտության մասն է կազմում նաև կրոնը:
- Ես առաջինից բացի մյուս դրույթների հետ համաձայն չեն, քանի որ հայերը երբեք ի վիճակի չեն լինի մեզ հետ ապրել:
- Հայ բնակչությունը չպետք է ներկայացված լինի բանակում, այս հարցը ենթակա է քննարկման:
- Այս սցենարը ձեռնտու է մեզ բացառությամբ մեկ վերապահման՝ բնակչությունը հնարավորություն է ստանում կրթություն ստանալ հայերեն և այլ ցանկալի լեզուներով: Սա հնարավոր չէ:

Ռազմական անվտանգություն

Հայեր

- Առաջին սցենարը անընդունելի է նախևառաջ հայերի համար, մենք համարյա միշտ ռազմական իրավիճակում ենք:
- Առաջին տարբերակի միակ լավ կողմը դա Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովումն է գոյություն ունեցող ֆորմատով: Որպեսզի խուսափեն այն բանից, որ հետագա սերունդները ասեն Ստալինը կամ որևէ մեկը բռնեց ու այս հարցը լուծեց ոչ նպաստավոր պայմաններով, պետք է չշտապել: Բայց շտապեցնում են գերտերությունները:
- Եթե Ղարաբաղը դառնա անկախ, նա անպայման կկործանվի:
- Ինչքան մենք հողեր զիջենք Ադրբեջանին, այնքան վտանգի տակ ենք դնում Հայաստանը:
- հնարավոր է բանակցություններով հայերը շատ բանի հասնեն, սակայն եթե պատերազմի վտանգ լինի, ես կողմ եմ Ավարայրի ճակատամարտի նման ոտքի կանգնենք ու, եթե նույնիսկ մենք չհաղթենք, թույլ չտանք, որ մեզ հաղթեն
- Պետք է կոնկրետ հասկանալ ինչ է նշանակում փոխզիջում: Չէ որ մենք երաշխիք չունենք որ վերադարձնելուց հետո խաղաղ կապրենք:
- Ինքնավարություն միանշանակ բացառում է սեփական բանակը, որը մեզ ձեռ չի տալիս:
- Անվտանգություն. ահա որը պիտի մեր նպատակը լինի:
- Երրորդ տարբերակը վատը չէ, բայց պաշտպանական գոտին պետք է վստահ լինի:
- Շատ վտանգավոր տարբերակ է, պետք է հույսը դնենք միայն մեր վրա:

- Մենք մեր սահմանները պահպանում ենք, ով ուզում ա սահմանապահ լինի, թող իր սահմանների վրա գա, կանգնի:
- Մեր բանակում զինվորի քանակի խնդիր ունենք, պետք է համաձայնենք խաղաղապահների:
- Ես չեմ հավատում միջազգային ուժերին, մենք ենք մեր տերը:
- Մեզ պետք է ճկուն դիվանագիտություն, որ պատերազմը չվերսկսվի:
- Ազատագրված տարածքների կարևորագույն նշանակությունը Ղարաբաղի ու Հայաստանի անվտանգության ապահովումն է:
- Այսօր պետք է երաշխիքներ ստեղծել վաղվա համար:
- Այս իրավիճակի դրական կողմերից էլ նա է, որ Ղարաբարը այսօր իր անվտանգությունն ապահովում է հարակից շրջաններով:
- Ղարաբաղի անվտանգությունը կապահովեն միայն հայկական զորքերը:
- Պատերազմի վերսկսման վտանգը միշտ կա:
- Պայթունավտանգ վիճակ է, պարբերաբար են զինադադարի խախտումները, ու սա խոցելի է դարձնում մեր անվտանգությունը:
- Ստատուս քվոն երաշխիք չէ. պատերազմը կարող է վերսկսվել ամեն րոպե
- Երրորդ սցենարի դեպքում պատերազմը անխուսափելի է, թուրքը մնում է թուրք:
- Կրկին առաջնահերթությունը տալով անվտանգությանը՝ եզրակացնենք անմիջապես. ստատուս քվոյի պարագայում, երբ չկան միջազգային երաշխիքներ անգամ, անվտանգության երաշխավորումն ավելի բարձր է, քան այս՝ երկրորդ սցենարի դեպքում:
- Երկրորդ սցենարը կենդանի է, քանի որ հույս ունեն որ ճնշման և ուժի միջոցով կարող են հասնել հարցի լուծման իրենց հարմար տարբերակին:
- Ո՞ւմ կողմից է երաշխավորվում Հայաստանի ու ԼՂ-ի միջև ցամաքային կապը:
- Ճանապարհները բացել կարելի է միայն խաղաղ ժամանակներում:
- Գինը շատ մեծ է՝ տվեք Զանգեզուրը, տանք Արցախը, ահա թե ինչ են ասում:
- Սա ավելի վտանգավոր սցենար է, քան ստաստուս քվոն, սա պարտվողական սցենար է: Զանգեզուրի տարածքը մենք ինքներս ենք բերում ու դարձնում սակարկելի տարա՞ծք: Այս ռումբը չնկատել չի կարելի:
- Լաչինն ու Մեղրին չի կարելի նույնացնել՝ Լաչինը արյան գնով է ձեռք բերվել, իսկ Մեղրին պե՞տք է հենց այնպես նվեր տանք:
- Մենք նույնիսկ երբ պարտվող երկիր ենք եղել, Մեղրի չենք տվել, հիմա որպես հաղթող երկիր տալիս ենք...
- Պատերազմը կարող է Ադրբեջանին ձեռնտու է, բայց մեզ հաստատ չէ:
- Ադրբեջանն ունի այնքան ռազմական բյուջե, ինչքան Հայաստանի պետական բյուջեն է:
- Բանակը պիտի միշտ էլ պարտադիր լինի, անկախ հացի լուծումից: Մենք չպիտի մոռանանք, թե ինչ հարևաններ ունենք:
- Սա ժամանակավոր դադար է՝ մեր ուժերը հավաքելու համար: Ահա ամփոփումը:

- Որքան սերունդը մեծանում ա, էնքան իրենց ուզածով են դաստիարակում, իսկ մենք մեր երեխաներին բանակից ենք փախցնում
- Մեր անվտանգության խնդիրն ավելի կարևոր է մեր համար: Իրանի հետ կապը ստրատեգիական բացառիկ նշանակություն ունեցող խնդիր է: Մենք զրկվում ենք այլ պետության հետ հաղորդակցումից:
- Հողերը անվտանգության եւ ազգի հեռանկարի հարցեր են լուծում եւ դրանց զիջումը նշանակում է անհեռանկար Հայաստան:
- Այս սցենարում ինձ բացարձակ դուր չի գալիս էդ սուվերեն միջանցքի պահը, չի կարելի Է՞ դա նրանց թույլ տալ:
- Հարակից հողերի վերադարձ, սուվերեն տարածք հավասար է պանթուրքիզմի իրականացում:
- Լավ կյանքի խոստումը Ղարաբաղում մեզ այնտեղ չի տանի, քանի դեռ անվտանգության հարցը չի լուծվել:
- Բոլոր դեպքերում պատերազմի վտանգը նույնն է մնալու, մեր հակառակորդն անկուշտ է, նրանք նաև Սևանա լիճն ու Երևանն էին ուզում
- Ժամանակի հետ աճում է պատերազմի վտանգը, այս իրավիճակը պետք է լուծում ստանա:
- Պատերազմը հնարավորինս պետք է հետաձգել, համոզված չենք, որ ուրիշ ավելի ձեռնտու լուծում հնարավոր է գտնել: Հայաստանի ուժերը բավարար չեն:
- Մեղրին մեր դարպասն է, քանի դեռ Արդբեջանը Նախիջևանով Թուրքիային չի մոտենում, նրա լեզուն կարճ է:
- Եթե պատերազմի վտանգը կա, հարկավոր է մի բան փոխել, ինչքա՞ն կարելի է այսպես շարունակել:
- Էս անգամ էլ որ հող տվեցինք, Երևաննա մենակ մնալու
- Ավելի վտանգավոր է մեր բանակի հոգեբանական կեցվածքը կոտրելը: Հիմա մենք հաղթանակած սերունդ ենք դաստիարակում, իսկ ամեն մի թիզ հող տալը հենց այդ կեցվածքն է կոտրում... Էնպես, որ սրա մասին պիտի մտածենք:
- Սուվերեն միջանցքով կարող է ոչ միայն Հայաստանը հայտնվի թուրքական պետությունների օղակում, այլև Իրանը, այնպես որ այս հարցին դեմ պետք է լինի նաև Իրանը:
- Եթե Ղարաբաղը տվեցինք, մենք կտանք նաև Հայաստանը:
- Մի փոքրիկ շրջան հանձնելու դեպքում՝ ամբողջ Հայաստանը կհայաթափվի այս քաղաքականության պատճառով:
- Սահմանների փակ լինելը հենց մեզ է ձեռնտու... սա անվտանգության, արժանապատվության հարց է:
- Եթե պետության պարագլուխները զգում են, որ կամաց-կամաց մոռացվում է ցավն ու տանջանքը, կարող են պատերազմ սկսել...
- Պետք է մտածել ոչ թե թուրքին հավատալ կամ չհավատալու մասին, այլ այնպես անել, որ մենք հավատանք ինքներս մեզ, մեր իշխանություններին ու մեր ուժին:
- Եթե մենք այսօր հոգեպես ուժեղ լինեինք, էսօր նման վիճակ չէր լինի:

- Ես վստահում էի սովետական բանակին: Իսկ հայկական բանակից վախում եմ:
- Համաձայն եմ, որ պատերազմի վերսկսման վտանգը զգալի է, քանի որ լուրջ առաջընթաց չկա:
- Եթե մնաց նույն վիճակը, Ադրբեջանը, նույնիսկ պատերազմ չսկսելու դեպքում, պարբերաբար հարձակվելու ու պատերազմ է հրահրելու:
- Սահմանի բացումը երրորդ-չորրորդ համաշխարհային պատերազմների կիրահրի:
- Իհարկե այսօրվա զինադադարը խաղաղության պատրանք է ստեղծում, բայց սա լավագույն տարբերակը չէ անվտանգության առումով:
- Նախիջևանը ձեռք են գցել, Ղարաբաղը ձեռք կգցեն, ի՞նչ կմնա: Սյունինքն էլ կգրավեն ու վե՞րջ:
- Երրորդ սցնարի դեպքում հայ բնակչության անվտանգությունը լիովին վտանգված կլինի:
- Եթե շրջապատված ենք լինելու թուրքերով՝ որ ընտանիքը հանգիստ կապրի:
- Այս պահին էլ զինադադար են խախտում, իրենց մոտ թողնենք, դիրքերը մոտեցնենք՝ պատկերացնում ե՞ք, ինչ կլնի: Թշնամուն տուն թողնել չի կարելի:
- Կոնկրետ Գորիսի համար ավելի կարևոր նշանակություն ունի ճանապարհային ազատ կապը Մեղրիի, քան թե Ղարաբաղի հետ:
- Ուժերս պատում է՝ Տաուշի սահմանները լավ ենք պահում, հիմա մեր հատվածում էլ սահմանը մոտեցնենք՝ մեզ համար շատ դժվար կլինի: Մենք տոտալ պատերազմի մասին պետք է ուրեմն խոսենք այդ դեպքում:
- Եթե հարեւան երկիրն ավելի զարգանա տնտեսապես, մեր վախերը կառարկայանան ավելի շատ: Իրենք հիմա էլ են ռազմատենչ հայտարարություններով փորձում վախեցնել:
- Սերունդները կարող է մոռանան պատերազմի նպատակն ու խնդիրը, բայց դրական բան էլ կա, նրանց մտքում արդեն նստած է փաստը՝ Արցախը հայկական հող է: Այլ իրականություն չեն պատկերացնի:
- Էէէէէի, մեզ նոր Նժդեհիկներ են պետք... չկան էէէ...
- Մեր ապահովության համար՝ նման բան չենք անի:
- ՄԱԿ-ի համար շատ դժվար կլինի պահել մեր անվտանգությունը:
- Կոսովոյի անկախությունը ընդունեց միջազգային հանրությունը, բայց կոնֆլիկտը չի լուծվել: Նույնն էլ Ղարաբաղի դեպքում կլինի:
- Սահմանը պետք է ամրացնել...
- Եթե նույնիսկ Բաքուն նավթ չունենա, միեւնույն է, Հայաստանից ուժեղ է լինելու: Եթե նավթը վերջանա էլ, չենք կարող հուսալ, որ նրանք կթուլանան:
- Ստատուս քվոի դեպքում բարձրանում է պատերազմի ռիսկը:
- Գոնե մի պայմանագիր լինի, ասենք, հաստատող, որ մի ինչ-որ հստակ ժամանակ պատերազմ չի լինելու:
- Երրորդ սցենարում Հայաստանը կհայտնվի կաթսայի մեջ:

- Հատկապես հիմա պատերազմի վերսկսման վտանգը շատ մեծ է, ադրբեջանցիների ռազմատենչ հայտարարություններն անսպառ են:
- Մի օր այս վիճակը վերջանալու է, սրա վերջը պատերազմն է:
- Այն, որ Ադրբեջանի հետ սահման չունի Գյումրին, չի նշանակում, որ մենք ավելի պաշտպանված ենք
- Որ վայրկյանին Ռուսաստանը մեզ թողնի, ազերիները կգրոհեն:
- Այսօր տեղեկատվություն կա, որ քուրդ գրոհայիններին բերում են Ղարաբաղի շուրջը բնակեցնելու
- Ոչ պատերազմ ոչ հաշտություն վիճակը շատ վտանգավոր և հեղհեղուկ վիճակ է, նաև մեծ է պատերազմի վերսկսման հավանականությունը:
- Առաջին սցենարի դեպքում կա պատերազմի վերսկսման վտանգ, սակայն եթե այդ վտանգը չլինի, սցենարը մեզ ձեռնտու կլինի
- Ստատուս քվոն մեզ ձեռնտու չի, որովհետև Ադրբեջանը հիմա գնալով հզորանում է, պատերազմը ինչքան ուշ լինի, այքան մեր վիճակը ավելի ծանր կլինի:
- Մեր անվտանգությունը պաշտպանված չի, մենք պետք է միշտ շատ ուժեղ բանակ ունենանք, ինչ էլ որ լինի:
- Մարդիկ պետք է զգան, որ պետության կողմից պաշտպանված են: Դա է Հայաստանի մեծ հիմնախնդիրը:
- Մենք պետք է ապահովենք Ղարաբաղի բնակչության անվտանգությունը սեփական ուժերով:
- Վաղը պատերազմ սկսվի, էլի հասարակ ժողովուրդն է գնալու, ոչ մի օլիգարխի "լակոտ" չի գնալու կռվի:
- Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն տարբերակը երկար պահել չի լինի:
- Ոչ մի երաշխիք չկա, որ այս ստատուս քվոն երկար կշարունակվի:
- Իսկ ով է երաշխավորում, որ տանք ճանապարհի, չեն սկսի ահաբեկչական գործողությունները:
- Որպես զինվորական ասում եմ, սուվերեն տարածք տալով Հայաստանն ավելի կթուլանա: Հիմա մենք ավելի ուժեղ ենք:
- Ո՞վ պետք է տա էդ անվտագության երաշխիքները. ես չեմ հավատում:
- Էս հարցի լուծման համար Հայաստանին մի բան ա պետք՝ ատոմային ռումբ:
- Ինչ իմանանք, որ մի օր Ադրբեջանը վեր չի կենա լրիվ ոտնատակ տա Ղարաբաղը, ոնց որ Վրաստանը հարձակվեց Աբխազիայի վրա:
- Ներկա վիճակը պատերազմավտանգ է:
- Ստատուս քվոն լի է պատերազմի հրահրման վտանգով, ինչը լուրջ հոգեբանական ճնշում է երկու երկրների ժողովուրդների համար:
- Եթե այս սցենարը շարունակվի, մենք տուժելու ենք. մարդկային զոհեր ենք ունենում:
- Ինչպե՞ս կարող է մեզ բավարարել ներկայիս իրավիճակը, եթե օրեցօր աճում է պատերազմի վերսկսման վտանգը
- Մեր համար կենսական է, որ թույլ չտանք, որ պատերազմը վերսկսի:

- Մենք առաջին հերթին պետք է խուսափենք պատերազմից. միգուցե՞ արժե «ավելորդ» կամ«գրավյալ» հողերը վերադարձնենք, միայն թե պատերազմ չլինի:
- Երեկ կրկին կրակոցներ են եղել Խաչիկ գյուղի շրջակայքում:
- Ոչ պատերազմն իհարկե լավ է, հարցի մյուս կեսը՝ ոչ խաղաղություն, արդեն դժվարացնում է մեր կյանքը:
- Հեյդար Ալիեւի հետ ավելի հեշտ կլիներ լեզու գտնել, քան նրա որդու հետ: Իլհամ Ալիեւն ավելի ռազմատենչ է:
- Ես որպես Հայաստանի քաղաքացի ասում եմ, որ մեր ժողովուրդը պատրաստ չի երկրորդ պատերազմի: Մի սերունդ էլ որ ոչնչանա, էլ ազգ չի մնա:
- Մեզ համար ամենակարևորը Ղարաբաղի անվտանգությունն է:
- Ով է ասում, որ մեր ճակատագիրը մեր ձեռքում չի... լավ էլ մեր ձեռքում է, ուղղակի մենք դա չենք կարողանում գիտակցել:
- Եթե հիմա ենք բանակ պահում, հետո էլ կպահենք:
- Բանակը պիտի վճարովի լինի:
- Մենք պետք է կերակրենք մեր բանակին, որն էլ կպաշտպանի մեր տարածքները
- Մեր հողը մեր սեփական զինվորները պետք է պաշտպանեն, ոչ մի միջազգային զորք գործ չունի էդտեղ:
- Մենք մեր իշխանություններից մինիմումը որ պահանջում ենք, դա եղածը պաշտպանելն է...
- Պատերազմը ցույց է տվել, որ քանակը հաղթանակ չի ապահովում:
- Բանակի քանակը իրենց մոտ միշտ էլ շատ է եղել, մենակ մի բանում է բախտներս բերել, որ մեր հակառակորդը թուրք ա ու ոչ թե չեչեն կամ նման մի բան:
- Ես պատերազմի միջով անցել եմ, ու հիմա էլ ամեն տարի դպրոցներից օգնություն են հավաքում ու տանում զինվորներին, որ պինդ մնան ու հողերը լավ պահեն:
- Մեր անվտանգության մի երաշխիք էլ կա. մեր համախմբությունը, վերև ներքև պիտի միասնական լինեն: Այս դեպքում բանակն էլ ուժեղ կլինի, մենք էլ, պետությունն էլ:
- Եղած ռեսուրսը օգտագործում ենք պաշտպանությունը ուժեղանելու համար: Բայց իմացեք, եթե պատերազմ էլ չլինի, անպատճառ հիմնական միջոցները պետք է ուղղվեն մեր բանակին:
- Զարգացած տնտեսություն՝ զարգացած երկիր և ուժեղ բանակ...Սա է մեր նպատակը:
- Խաղաղ ապրենք, չվիճենք, բայց եւ մեր սահմանները պահենք:
- Իսկ ուրիշ ինչպե՞ս, եթե ոչ պարտադիր ծառայություն: Բոլոր երկրների համար էլ բանակի գոյությունն ու ծառայությունը բնական է, ինչու՞ եք առանձնահատուկ շեշտում այդ խնդիրը:

Ադրբեջանցիներ

- Անվտանգությունը պետք է ապահովել 2 կողմերի համաձայնությամբ:
- Եթե հակամարտությունը խաղաղ կարգավորվի՝ ավելի կայուն խաղաղություն կհաստատվի:
- Զինվորները բավականին հաճախ անցնում են մեր տարածք:
- Այս հակամարտության կարգավորումը միայն խաղաղ տարբերակն է:
- Հայաստանն արդեն զգում է,որ Ադրբեջանը պատրաստ է հետ գրավելու իր տարածքները:
- Եթե մենք ցանկանում ենք սա խաղաղ կարգավորել, ապա մենք պետք է զիջումների գնանք:
- ԼՂ-ն չի կարող մնալ բռնազավթված:
- Մենք անվտանգության երաշխիքներ ենք ցանկանում:
- Ընդունելի չէ, որ հայկական զորքերն են ապահովում ԼՂ-ի անվտանգությունը:
- Բռնազավթման դրական գործոններից մեկը մարդկանց մոտ հայրենասիրական ոգու արթնացումն է:
- Մեր համար ամենից կարևորը տարածքային ամբողջականությունն է, և այն պետք է ապահովվի:
- Դրա հիմնական պատճառը մեր անվտանգության ապահովումն է, որն անհիրական է թվում:
- Բաքուն կարող է կորչել, եթե մենք հետո մոռանանք նրանց մասին:
- Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը անվտանգություն չեն ապահովում:
- Ղարաբաղի անկախությունը և Հայաստանի անբաժան մաս կազմելը կարող է անգամ ավելի վտանգավոր լինել Ադրբեջանի համար:
- Թող Հայաստանը ճանաչի մեր տարածքային ամբողջականությունը, մենք էլ մեր հերթին նրանց համար Լեռնային Ղարաբաղում ապրելու պայմաններ կստեղծենք:
- ԼՂ-ն ոչ մի կերպ չի կարող մնալ Հայաստանի բռնազավթման ներքո:
- Այլընտրանքային ուղին կամ պատերազմն է կամ խաղաղությունը:
- ԼՂ-ն երբեք չի կարող լինել Հայաստանի մաս:
- Մենք պարտադիր կերպով պետք է ուժեղացնենք բանակը:
- Վան Կարդսը պետք է գա և նախապատրաստի բանակը:
- Բանակն օրեցօր հզորանում է:
- Բանակը պետք է ավելի կազմակերպված լինի:
- Զինված ուժերում իրավիճակն այնքան էլ լավ չէ, քանի որ զինվորներն իրենք են հոգում իրենց ծախսերը:
- Մեր զինված ուժերը և միջոցները թույլ են և մենք չունենք փորձագետներ, ովքեր սրա վերաբերյալ գիտելիքներ ունեն և ոչ էլ դրան հատկացված ֆինանսական միջոցներ ունենք:
- Զինվորների ազգային գիտակցությունը և ոգին պետք է ուժեղացնել:
- ԼՂ-ի զինված ուժերի Հայաստանի հետ միասին չեն կարող անվտանգություն ապահովել:
- Պետք է լինեն միայն ադրբեջանական զինված ուժերը:

- Տների վրա ծախսվող գումարները պետք է ծախսվեն զինված ուժերի վրա:
- Ես ադրբեջանցի եմ, հետևաբար պետք է պաշտպանեմ և զորավիգ լինեմ իմ հայրենիքին:
- Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը չեն կարող պաշտպանել Լեռնային Ղարաբաղի սահմանները:
- ԼՂ-ն չի կարող անկախ զինված ուժեր ունենալ:
- Ադրբեջանի զինված ուժերը պետք է տեղակայված լինեն ԼՂ-ում:
- Մենք պետք է հզորացնենք բանակը
-

Ժողովրդագրություն

Հայեր

- Եթե ժամանակին 50.000 ադրբեջանցի է ապրել այդ տարածքներում, ապա հիմա, որ վերաբնակեցման անուն լսեն 5.000.000-ով կլցվեն....
- Իսկ ինձ թվում է, որ չպետք է թողնենք: Ադրբեջանցին ուր մտնում հաստատվում ա, ու մենք էլի տանուլ կտանք:
- Փախստականները կգան, որի արդյունքում Ղարաբաղը լրիվ ադրբեջանցիներով բնակեցված կլինի:
- Ադրբեջանցիները լավ դիվանագետ են. մարտավարություն կմշակեն արագ բազմանալու ու վերջ:
- Ձեզ չ՞ի թվում, որ ադրբեջանցին հենց որ կարգին բազմացավ մեր տարածքներում, տարածքային ինքնորոշում է պահանջելու
- ադրբեջանցիների փախստականներին չպետք է թույլատրել հետ վերադառնալ Ղարաբաղ, քանի որ նրանք կբազմանան քսան տարում ու հանրաքվեի արդյունքը կստանան իրենց օգտին
- Մենք լուրջ խնդիր ունենք...Ադրբեջանում հայաթափություն է տիրում, իսկ ԱՄՆ-ում հակառակը՝ հայերի թիվն ավելանում է:
- Այս սցենարի իրականացման դեպքում ոչ մի ղարաբաղցի չի մնա Ղարաբաղում
- Չորրորդ սցենարը պարունակում է դեմոգրաֆիական վտանգ:Ցավոք մենք վերջին տաս տարիներին չենք կարողացել ավելացնել բնակչության թիվը ԼՂ-ում:
- Եթե փախստականները վերադառնան, Ղարաբաղի դեմոգրաֆիկ կազմը էլի կփոխվի, Ադրբեջանցիները էլի մեծամասնություն կկազմեն ու ռեֆերենդումի դեպքում Ղարաբաղը էլի կանցնի Ադրբեջանին:
- Ամբողջ Հայաստանը ղարաբաղցիներով լի է, նրանք իրենց հողի մասին չեն մտածում, մնում է ես գնամ Ղարաբաղում ապրեմ:
- Վերաբնակեցմանը պիտի ազգովի զարկ տանք:
- Վերբնակեցումը մեզ չի բավարարում, որովհետև ադրբեջանցիները մեկի փոխարեն տասը կբնակեցնեն:
- Ադրբեջանցիները ունենում են տասը երեխա, իսկ հայերը լավագույն դեպքում երկուսը: Ամեն դեպքում մենք կտուժենք:

- Տաս տարվա ընթացքում ադրբեջանցիները ավելի շատ կաճեն, քան թե հայերը, այդ պատճառով մենք հանրաքվեով հաղթելու հնարավորություն չենք ունենա
- Սահմանը հենց բացվի, թուրքերը կգան կգրավեն Հայաստանը:
- Չմոռանանք թե ինչպես կառուցեցին Խոջալուն, դա թուրքացման ծրագիր էր:
- Որպես դեմոկրատական տարբերակ, չորրորդ տարբերակը ընդունելի է թվում, բայց չմոռանանք, որ անցումային ժամանակահատվածի ընթացքում ադրբեջանցիների քանակը կարող է էականորեն ավելանի և Ղարաբաղում իրենց «օգտին» շեղի հանրաքվեի արդյունքները:
- Եթե այսպես շարունակվի Ղարաբաղն էլ կդատարկվի, Հայասանն էլ...
- Արագ կերպով Ադրբեջանը ժողովրդագրական առավելության կհասնի թե՛ Ղարաբաղում, թե՛ Հայաստանում:
- Մեզ Ադրբեջանի ծնելիությունն ու նավթը պետք չէ:
- Բոլորս գիտենք ադրբեջանցիները որքան արագ են զարգանում, հինգ-տաս տարի հետո նրանք մեծամասնություն կկազմեն ու հնարավոր է հանրաքվեի արդյունքները մեր օգտին չլինեն:
- Մենք շատ լավ գիտենք մուսուլմանների բազմանալու հակումը... իսկ դա «կատաստրոֆա ա»... Արցախը պետք է մաքուր պահել:
- Իսկ մենք ունենք արդյոք պաշտոնական ճիշտ տեղեկություն, թե ինչքան ադրբեջանցիներ են ապրել ԼՂ-ում մինչ այդ. միայն սա հստակեցնելուց հետո կարելի է ռեֆերենդում անցկացնել:
- Ադրբեջանի ժողովուրդը բազմացող ազգ է, ի տարբերություն հայերի: Մի քանի տարի հետո նրանք մեծամասնություն կկազմեն և հանրաքվեի արդյունքները մեր օգտին չեն լինի:
- Հայերը գնալով նվազում են, իսկ թուրքերը աճում են: Դեմոգրաֆիայի տեսանկյունից նրանք ճնշող քանակական առավելություն ունեն:
- Մեր գյուղի երեխաները գնում են Երևան, էլ չեն վերադառնում
- Եվրոպան արդեն իսկ թուրքերի ձեռը կրակն է ընկել այ մարդ, աճում են ու աճում, դուք պատկերացնում ենք ի՞նչ կլինի:
- Ադրբեջանցիները զոհի հոգեբանություն չունեն, օջախ կորցնելու հոգեբանություն չունեն, քոչվոր ցեղ են, կգան ու կլցվեն, մենք էլ էլի կսկսենք հարևան-հարևան խաղալ ու վերջ, նորից պատմությունը կրկնվի:
- Ստատուս քվոն երկար շարունակվելու դեպքում Ղարաբաղը կհայաթափվի...
- Հայ կինը մաքսիմում երեք երեխա է ունենում, իսկ ընդհանուր առմամբ, տաս ադրբեջանցի կին էլ գա էստեղ, մեր վերջն եկել ա...
- Փախստականների հետ վերադարձը ստեղծում է շատ կարճ ժամանակահատվածում ժողովրդագրական իրավիճակն իրենց օգտին փոխելու վտանգը:
- Մեր շրջաններից մեծ թվով մարդիկ են գնում ԼՂ և եթե ժամանակի ընթացքում ավելի շատ հայեր գնան ԼՂ, վիճակը մեր օգտին կլինի:
- Մեր հզորությունը, ոչ միայն բանակով պիտի ապահովվի, այլ բնակչության միջոցով... եթե մեր հողերը բնակեցվեն, հարցը կիսով չափ կլուծենք:

- Ղարաբաղցին պիտի անձամբ տեր կանգնի. նա պիտի վերադառնա իր հող, իսկ Հայաստանը պիտի աջակցի:
- Տարածքներում բնակեցման հարցը շատ կարևոր է: Մեզ մոտ դա անտեսվում է:
- Առաջնահերթ խնդիրը ղարաբաղցիներին Ղարաբաղ վերադարձնելն է:
- Ավելի կողմնակից եմ, որ աշխարհով մեկ սփռված հայերը վերադառնան:
- Ծրջաններից դուրս եկող երիտասարդությունը մեծամասամբ հետ չի վերադառնում շրջաններ:
- Ես կիսով չափ ղարաբաղցի եմ. ամեն ինչ արել եմ, որ հետ գնամ Էնտեղ ուսուցչուհի աշխատեմ, բայց ամեն ինչ արվեց, որ գնալս խանգարեին... ասել կուզեմ, չկա վերաբնակեցման և ապրեցնելու մասին դիրքորոշում...
- Ադրբեջանցիները խելք ունենային, ժամանակին Արցախն էլ կտային, Նախիջեւանն էլ: Ասեմ՝ ինչու՞: Որովհետեւ եթե հիշեք, թե ինչ արագությամբ էին իրենք բազմանում այստեղ, կհասկանաք: Ժամանակի ընթացքում նրանք մեզանից առավել կլինեին թվաքանակով ու ամեն հարց կլուծեին իրենց օգտին:
- Ղարաբաղում այսօր շատ քիչ բնակչություն կա, պետք է այնտեղ բնակչության աճը խթանել, որովհետեև հողը, նախ, ապրելով են պահում:
- Ղարաբաղից դուրս եկած բոլոր մարդիկ՝ լինի բանվոր կամ նախագահ, պետք է վերադառնա Ղարաբաղ, որպեսզի հզորացնի իր երկրամասն ու վերջնական լուծման հանգեցնի ղարաբաղյան պայքարը:
- Եթե նախկինում Նախիջևանում հայություն չլիներ, հիմա Նախիջևանի ինքնավար մարզ չէր լինի... ասել կուզեմ, որ մեր ուժը մեր բնակչության, հողերի վերաբնակեցման մեջ է:
- Պետությունը պետք է ուղարկի ավարտած ուսանողներին աշխատելու Ղարաբաղում:
- Եթե ուզում ենք Ղարաբաղը պահենք մեզ, պետք չի ղարաբաղցիներին բերել ու լցնել Երևան, իսկ խելառ երևանցիներին տանել լցնել Ղարաբաղ:
- Մեզ ինչն է խանգարում, որ երեխաներ քիչ ունե՞նք՝ մենք աշխատում ենք որակի վրա:
- Մեզ համար առաջնահերթը անվտանգությունն է ու բազմանալը. իսկ վերաբնակեցումը աբսուրդ է:

Ադրբեջանցիներ

- ԼՂ-ի բնակչության աճը կարող է նրանց հնարավորություն ընձեռել վերցնել երկրի կառավարումն իրենց ձեռքը:
- Ղարաբաղի տնտեսությունը պետք է հզորացվի, որպեսզի մարդիկ գնան այնտեղ:
- Ընդունելի շատ կետեր կան այս սցենարում, սակայն եթե կարգավորման այս ուղին ընդունվի մենք պետք է համոզված լինենք, որ բնակչության մեծամասնությունը ադրբեջանցի է:

Սպառնալիքներ և վախեր

Հայեր

- Ես չեմ ուզում ոչ ինչ-որ տարածքներ զիջենք, ոչ էլ այս «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակը շարունակվի: Հարկավոր է ինչ-որ ուրիշ բան մտածել: Եթե մենք տարածք զիջեցինք, նրանք վաղը Սևանն էլ կուզեն:
- Մեր միակ երաշխիքը մեր միասնության և հզորության մեջ է:
- Այսօրվա վիճակը իրավիճակային է, մշուշոտ, անորոշ, յոլա գնալու վիճակ: Այսպես շարունակել չի կարելի:
- Երկար սպասողական վիճակը բարոյա-հոգեբանական տեսանկյունից վտանգավոր է, ազդում է ազգաբնակչության մենթալիտետի վրա:
- Ժամանակը աշխատում է Ադրբեջանի օգտին՝ պետք է հիմա լուծում գտնել այս խնդրին:
- Հարցը քաղաքականից պիտի տեղափոխվի իրավական դաշտ, որտեղ ամեն ինչ հստակ է. ներկայիս Ադրբեջանն իրեն 18-ի Ադրբեջանի իրավահաջորդ չի էլ ճանաչում :
- Չգիտեմ այ մարդ, չգիտեմ, բայց վախենում եմ, վերջում կատվի խաղը՝ մկան մահը դառնա... Բայց աստված տա, մկան դերում մենք չհայտնվենք...
- եթե փոխզիջումների գնանք, պետք է առանց պատերազմի գնանք
- Արագ է պետք մի բան անել: Մի 50-100 տարի որ անցավ, եկող սերունդները այսպես էլ վիզները ծուռ մնալու են
- Այս հարցերը պետք է համաձայնեցնել դաշնակցության հետ:
- Մենք հիմա հողեր ենք տալիս, իսկ դրա դիմաց ստանում ենք լոկ խոստումներ: Ինչի՞ նման է դա:
- Մենք ինքներս մեզ վնաս ենք տալիս, մենք չունենք դիվանագիտություն:
- Այս վիճակը պետք է փոխվի, մարդիկ են ապրում, երկիր կա, վիճակը չի կարող երկար շարունակվի:
- Այսօր է պետք լուծել այս հակամարտությունը, այլապես ինչքան ինչ-որ խնդիր ձգձգվում է, այնքան դժվար է լինում լուծել որևէ խնդիր:
- Այս վիճակի պահպանումը բերում է մեր անվտանգության թուլացմանը ու այս խնդրի ավելի ու ավելի միջազգայնացմանը:
- Սահմանները բացելը շատ լուրջ ռիսկերի առաջ կկանգնեցնի մեզ: Մեզ պետք չեն բաց սահմաններ:
- Ոչ մի խոստում չի իրականանա, սրանք ուղղակի ստեր են:
- Պետք է մտածել Հայաստանի անվտանգության մասին, առաջինը դա է:
- Երիտթուրքերն էլ էին ինչ-որ բան խոստանում ու երաշխավորում... հետո՞:
- Չորրորդ սցենարը մեծ վտանգ ունի իր մեջ, ենթատեքստում քննարկվում է մեր տունը Ադերբաջանին տալու տարբերակը:
- Սահմանները բացելն ավելի վտանգավոր է, ավելի լավ է փակ մնա, քան սրանց հետ սահմաններ բացվեն: Թուրքերը կլցվեն, Հայաստանն էլ կմնա թուրքին: Պատկերացնում եք, որ Գերմանիայում ութ միլիոն թուրք կա, բա որ մի միլիոն այստեղ գա:

- Ադրբեջանի դիվանագիտությունը շատ ուրիշ է, և իրենք երբեք տրվածով չեն բավարարվում: Մեկ տարածք հանձնելու դեպքում, նրանք ավելին կուզեն:
- Եթե երկու բան է ամրագրված, միջազգային իրավունքի երկու նորմ, հակասություն ու թյուրըմբռնում միշտ լինելու է:
- Մենք ներքին վախ ունենք, բազմիցս վառվել ենք օտարի վրա հույս դնելուց...
- Չորրորդ սցենարը նշանակում է. «մենք ոչ մի բան էլ չենք ուզում, ամբողջը ձեզ...»
- Այսօրվա վիճակով թշնամանքը շատ մեծ է և ոչ մի դրական քայլ Ադրբեջանից չի սպասվում
- Այսօր կա պատերազմի վտանգ, քանի հայ ու թուրք կան, պատերազմի վտանգը միշտ էլ լինելու է
- Գալու է մի պահ, որ հանուն զարգացման կառավարությունները կգնան փոխզիջման, սակայն դա չի նշանակում, որ մենք պետք է որևէ հող հանձնենք:
- Ավելի ճիշտ է մեր պայմանները խստացնել ու պահանջները շատացնել:
- Հայ թուրքական սահմանի չբացելը մեր «կիսլառոդի բալոնը» չի փակում:
- Սահմանի բացումը մեզ ինչո՞վ ա հզորացնելու. որ մենք ցանկանանք հիմա էլ կհզորանանք.... ցանկություն է պետք միայն:
- Ադրբեջանը երբեք մեր օգտին ոչինչ չի անում:
- Մենք հաղթել ենք զենքով, պարտվել ենք գրիչով:
- Ինչու՞ ենք մտածում, որ թուրքերը ավելի խելացի չեն, քան մենք և չեն կարող օգտվել բաց սահմաններից:
- Մեր դիվանագետները առաջին գծում հենց նույն օրն են հանձնվելու:
- Եթե ուշադիր նայենք, վերջին երկու դարերում, Ադրբեջանի կռիվը Հայաստանով Նախիջևանի հետ կապ հաստատելն է: Ղարաբաղն էլ նրա համար խաղաթուղթ է:
- Հայ թուրքական սահմանի բացմանը դեմ եմ, քանի որ կռվի ժամանակ Թուրքիան իր զորքերն ավելի հեշտ կհասցնի Ադրբեջան:
- Ժամանակի ընթացքում լինելու է հանգուցալուծում, լինելու է առևտուր: Մեր ճանապարհը բացելու համար խանգարում է Նախիջևանը, այն էլ կվերցնենք, կամ զուգահեռ երկաթգիծ կսարքենք:
- Յուրաքանչյուր գործընթաց ունի եւ դրական, եւ բացասական կողմեր. դրականն այն է, որ Արցախը չի հայաթափվել: Երկրորդ՝ ԼՂ-ն որպես չճանաչված հանրապետություն հնարավորություն է տալիս հազարավոր իր բնակիչներին ապրել իր հայրենիքում եւ ապահովում է իրենց անվտանգությունը: Բացասականն այն է, որ տնտեսական զարգացումը դանդաղում է, երկրորդ՝ զգալի միջոցներ է ուղղում բանակ պահելուն, երրորդ՝ միջազգային առումով եւ ՀՀ-ն եւ ԼՂ-ն որոշակի դժվարություններ ունի: Ամփոփելով. հայ մարդը պետք է կարողանա անվտանգ ապրել իր հայրենիքում, սա է առաջնահերթ: Անկախությունն էլ՝ հետագայում:

- Այսպես երկար շարունակվել չի կարող. դժվարությունները շատ են: ապագան անհայտ է, բլոկադան է խանգարում, Ղարաբաղը չի կարողանում մտնել ֆորմալ հարաբերությունների մեջ
- Եթե համոզված լինենք անվտանգության մեջ, շատ զիջումների կգնանք: Բայց համոզմունք չունենք
- Եթե հիմա գնանք ինչ-որ զիջումների, միանգամից կկորցնենք ամեն ինչ, մենք թույլ չենք, պետք է պայքարենք:
- Մենք պատմության դասերը չենք մոռանում, թուրքը մեզ միշտ էլ մանանա է խոստանում:
- Սխալները կրկնել չի կարելի, խաբվել չի կարելի:
- Երրորդ տարբերակի դեպքում Նախիջևանի հետ կապ ապահովելու Ադրբեջանը ՀՀ-ի տարածքով սուվերեն միջանցք է ստանում-սա անընդունելի է:
- Մենք չպիտի թույլ տանք, որ այս սցենարը իրագործվի, որովհետև մենք չենք կարող իրենց մեր տարածքով դեպի Նախիջևան ճանապարհ տալ:
- Եթե խաղաղություն է հաստատվում, ոչ մեկ չի խանգարի մեքենաները երթևեկեն, բայց դա մեր հանրապետության ճանապարհն է:
- Չկա բնակարան, որ զոհ տված չլինի, հազար ու մի երաշխիք չեն համոզի:
- Մեղրիի քննարկումը պետք է ընդհանրապես արանքից դուրս գա:
- Եթե մենք բարեկամ ենք, էլ ինչի համար են հատուկ ճանապար տալիս, դա ավելորդություն է:
- Սուվերեն տարածքն անընդունելի է. վտանգավոր է մեզ համար:
- Հայը արյուն է թափել այդ տարածքները վերադարձնելու համար, ինչպես կարելի է դրանք հետ հանձնել:
- Երրորդ սցենարի իրականանալու դեպքում Հայաստանը կկորցնի Զանգեզուրը:
- Եթե Քի Վեստի տարբերակը այդքան լավն էր, ինչո՞ւ էին ժողովրդից գաղտնի պահում:
- Մեղրին տալը նշանակում է պանթուրքիզմի իրական նախադրյալ:
- Նախիջևանի հետ կապ Ադրբեջանի համար, բա մենք ինչպե՞ս Պարսկաստանի հետ կապ հաստատենք:
- Հայ- ադրբեջանականն սահմանի բացմանը կտրականապես դեմ եմ:
- Հող վերադարձնելը, սուվերեն տարածք տալը ցեղասպանության շարունակությունն է:
- Եթե Ադրբեջանը ընդունի էլ ղարաբաղցիների ինքնորոշման իրավունքը, կարող է հետո նորից դրանից հրաժարվի, նրանք սրբություն չունեն, սա մեր համար չի կարող երաշխիք լինել:
- Ասում ենք, որ ինշնորոշման գործընթացի ավարտ.... իսկ ի՞նչ ենք ստանալու այդ գործընթացի ավարտից հետո....
- Պետք է աճեցնել մի սերունդ, որը գիտի, որ սա ԼՂ-ն է, որն էլ լիարժեք Հայաստանի տարածք է:
- Ազգային գաղափարախոսություն է պետք. հարևանի հետ հարևանի պես պիտի վարվենք, բայց ինքներս մեր մասին չպիտի մոռանանք:

- Սահմանամերձ գյուղերի վրա է պետք ուշադրություն դարձնել՝ վերաբնակեցնել, աշխատատեղեր ստեղծել, աշխույժ պահել
- Իրանի հյուսիսում ադրբեջանցիներ են ապրում, եթե խնդիր առաջանա, ճանապարհը կփակվի:
- Հայաստանը կտրել-դա դեռևս երիտթուրքերից եկած քաղաքականությունն է:
- Մարգարայում թուրքերը արդեն հարմար հողեր են փնտրում:
- Մեղրիով ճանապարհ տալը նշանակում է, Հայաստանը նվիրել ադրբեջանցուն ու թուրքին:
- Ինչ ուզում են անեն, մենակ կրակոցներ չլինեն: Արդեն հոգնել ենք:
- Կարծես թե, մենք ենք ավելի շատ զիջումների գնում, իսկ Ադրբեջանը՝ ոչ:
- Ամեն մի զինադադար, նոր, ավելի դաժան պատերազմի նախապատրաստումն է, հետևաբար պետք է հարցը լուծել հնարավորինս արագ, բայց ոչ ի վնաս մեզ:
- Այսօր այստեղ իշխում է վախը...Մարդիկ վախենում են սահմանամերձ տարածքները մշակել:
- Եթե պատերազմը վերսկսվի թեկուզ տաս օրով, այս տարածքներում մարդ չի մնա ապրելու. մենք բոլորս կլքենք մեր տները:
- Մենք կռիվ չենք ուզում, ամեն ինչ արեք, մենակ թե խաղաղություն լինի:
- Մենք լավի հույս չունենք, որովհետև գնալով ամեն ինչ վատանում է..
- Ցանկացած անորոշություն անգամ ամենադաժան պատերազմից էլ վտանգավոր է:
- Վախին եթե կուլ գնանք, վաղն էլ կգան կասեն, վախեցնում ենք, Սյունիքն էլ մեզ տվեք:
- Վախի մեջ ապրելն էլ մի բան չէ:
- Սովետական տարիների սխալն էն էր, որ հայերը չգիտեին իրենց պատմությունը: Նույնն էլ հիմա է շարունակվում:
- Մենք էլ ենք մեղավոր, համա մեր ձեռքին ինչ կա. մենք պիտի միավորվենք:
- Մենք պետք ա ազատվենք մեր վախի զգացումից:
- Այժմյան վիճակը շատ լավ է, բացառությամբ այն փաստի, որ վախ կա: Իրավիճակի՝ փաստաթղթերով չամրապնդված վիճակն է պատճառը:
- Ամեն հարց պետք է լուծում գտնի, այս իրավիճակը երկար չի կարող շարունակվել:
- Փոփոխություն ենք ուզում, այս տասնհինգ տարվա վիճակից հոգնել ենք:
- Անընդհատ հարցի լուծումը ձգձգելն ի վերջո բերելու է նրան, որ վերջում հարցը կլուծվի ոչ մեր օգտին:
- Ավելի լավ է Ղարաբաղը տանք Ադրբեջանին, թե չէ ղարաբաղցիները արդեն գրավել են Հայաստանը:
- Պատերազմ չենք ուզում տեսնել, Աստված ոչ անի:
- Ամեն դեպքում պետք է այնպես անել, որ պատերազմ չլինի: Բայց նաեւ չեմ ուզում, որ իմ զոհված որդու թափած արյունն իզուր լինի:

- Իհարկե գոյություն ունի հայաստանցի ու ղարաբաղցի տարբերակումը, բայց Ղարաբաղյան հարցը լուծելիս այս տարանջատումը պետք է մի կողմ դնել:
- Միգուցե դարեդար հարմարվելու մեր ունակությո՞ւնն է այսօրվա վիճակին բերել. պետք է սկսենք պայքարել դրա դեմ:
- Մենք ցանկացած դիվանագիտության, ցանկացած սցենարի քննարկման դեպքում պետք է նույն ազգային գաղափարախոսությունն ունենալ:
- Ավելի լավ է մնա այնպես, ինչպես կա, որովհետև ոչ երրորդ, ոչ չորրորդ, ոչ հինգերորդ ու առավել ևս ոչ էլ երկրորդ սցենարները մեզ համար նպատակահարմար չեն, մի տեղ տարածք ենք տալիս, մի տեղ փախստականներ են հետ գալիս, մի տեղ միջանցքի հարց կա:
- Հայաստանը, պետք է ուշադիր ուսումնասիրի այլ օրինակների, Աբխազիա, Կոսովո... հետո նստի ու իրան ձեռնտու տարբերակը մշակի... չպետք է կուլ գնալ:
- Խոչընդոտում է Հայաստանի զարգացումը, բայց ազդում է և Հայաստանի, և Ղարաբաղի, և Ադրբեջանի իմիջի վրա:
- Այսօրվա կարգավիճակը՝ ստատուս քվոն, ոչ ոքին ձեռնտու չի, ձեռնտու է միայն իշխանությանը:
- Անորոշությունը վատ բան է, ես համաձայն չեմ ստատուս քվոի իրավիճակի հետ, դրական կողմեր չեմ տեսնում:
- Ամեն րոպե սահմանների խախտման վտանգ կա, դրա համար էլ այս սցենարը ձեռնտու չի:
- Կուզենայի, որ Հայաստանը համաձայնվեր այս սցենարին, հետագայում ավելորդ զոհերից խուսափելու համար:
- նաև Հայաստանի բնակչությունը հոգեբանորեն պատրաստ չի Ղարաբաղի հետ միավորվելուն, նախ պետք է մեր խնդրի ներսում բարոյահոգեբանական խնդիրը լուծել, հետո տեղափոխվել քաղաքական դաշտ
- Իրավիճակից չենք վախենում, երբ ասում ենք, թե փոփոխություն է պետք, պարզապես առկախ վիճակից ազատվել է պետք:
- Հոգնել է ժողովուրդը, ժամանակն է ինչ-որ արդյունքի հասնել:
- Անորոշ վիճակում գտնվելով և սահմանամերձ գյուղ հանդիսանալով մենք մշտապես գտնվել ենք վախի մթնոլորտում: Տնտեսական վատ վիճակին դեռ կարելի է դիմանալ, բայց անորոշությանը՝ ոչ:
- Որպեսզի Հայաստանը դուրս գա այս վիճակից, պետք է իշխանությունից դուրս գա այս Ղարաբաղյան կլանը:
- Ստատուս քվոյից անհրաժեշտ է դուրս գալ, գալ կայուն իրավիճակի, որ արտասահմանից օգնություն գա, ու միջազգային հանրությունը ճանաչի Ղարաբաղի անկախություն
- Եթե հարցի լուծումը թողնենք ապագային, ապա դժվար լուծվի հարցը: Ոչ մի երաշխիքի չի կարելի հավատալ: Ով ա երաշխիք տալու, որ վաղը ավելի վատ չի լինի մեր վիճակը:
- Չորրորդ- Ինչու՞ մեր ժողովուրդը չի գնում ազատագրված տարածքները բնակեցնեն, որովհետև պայմաններ չկան ապրելու, նաև վախ կա: Իմ

հորեղբորը կոմբայնի վրա աշխատելուց են ադրեջանցիները գողացել տարել:

- Վտանգ կա, որ հինգ տարվա ընթացքում մենք կհամակերպվենք: Մենք համակերպվող ազգ ենք:
- Հինգերորդ սցենարի դեպքում Հայաստանում անկայունություն է լինելու, պանիկա է սկսվելու
- Ցանկացած փոփոխությունից հարցը ավելի կսրվի:
- Պետությունների ղեկավարները ամիսը մեկ, տարին մեկ հանդիպում են ու ինչ արդյունքներ կան, մենք չգիտենք: Ինչպես հանգիստ վերաբերվենք սրան: Ինչ են անում, խաբում են, թե հուսադրում՝ չգիտենք: Այսպես կախված ինչքան կարող ենք ապրել: Ինչու չեն բացատրում հասարակությանը, թե ինչ է կատարվում:
- «Մինչեւ երբ» հարցի պատասխանը մենք չենք կարող տալ, որովհետեւ մենք մեր կառավարությանն ենք հարցնում, իրենք՝ իրենց:
- Սևանի ավազանն ենք կորցնելու...
- Այսօրվա իշխանությունը ընտրված չէ, նրանք գրավել են իշխանությունը, այսպես շարունակել չի կարելի:
- Այսօր քաղաքացիները տեղեկություն չունեն հիմիկվա դիվանագիտական առաջխաղացման մասին:
- Պրեզիդենտը եթե որեւէ բան ստորագրի, ժողովուրդը դեմ կկանգնի, բնական է:
- Հանրությունը ինֆորմացված չի լիարժեքորեն: Մենք չգիտենք, թե մեր դիվանագետները ինչպես են ներկայացնում մեր երկրի դիրքերը միջազգային ասպարեզում:
- Հայերին հեշտ չէ վախեցնել:
- Տարբերություն կա արդեն հայաստանցիների և ղարաբաղցիների միջև: Լարվածություն չկա, բայց տարբերություններ կան:
- Միայն թե ամեն ինչ խաղաղ ճանապարհով լուծվի՝ ասում եմ որպես զինվորի մայր:
- Հույս չունենք, որ մեր ձայնը կարող է տեղ հասնի:
- Այս իրավիճակը անընդհատ լարվածության մեջ է պահում բոլոր կողմերին:
- Ստատուս քվոն, հնարավոր է, բավարարում է ներկայիս սերնդին: Բայց այսպես ի՞նչքան կարելի է շարունակել:
- Մարդիկ ո՛չ կարողանում են հիմնական տուն շինեն, ո՛չ վերջնական թողնեն գնան՝ անորոշություն է: Պետք է առաջ շարժվել՝ որևէ լուծում տալ սրան:
- Արևմտյան Հայաստանը զիջեցին Թուրքիային, Ղարաբաղը զիջում ենք Ադրբեջանին, Հայաստանն ո՞ւմ ենք զիջելու...
- Նրանք միշտ գտնում են այնպիսի ձեւեր, որ որոշակի պահից իրենց համար տասնապատիկ էլ առավել լավ է դառնում:
- Հայաստանում ապագայի համար ոչ մի երաշխիքներ չկան, ոչ ոք չի կարող ասել, թե այսօրվա երեք տարեկան երեխային տասնհինգ տարի հետո ինչ ա սպասվում ...

- Էս իրավիճակը ինձ դուր չի գալիս, որովհետև մենք վախի մթնոլորտում ենք ապրում:
- Մենք քաղաքակրթությանը զոհ ենք գնացել, հաղթողին հաղթելուց հետո չեն մեղադրում, իսկ մենք թույլ ենք տալիս, որ մեզ մեղադրեն: Ժամանակին Թալիաթ, բայց Սողոմոն էլ ունեինք... իսկ հիմա Հրանտ Դինք, բայց պատասխան չեղավ:
- Բնական է, որ երկրորդ սցենարը մերժելի է: Ադրբեջանը ժողովրդավարության տեսակետից օրինակելի չի:
- Ղարաբաղյան հարցի կողմ է նաև Թուրքիան: Եթե մենք այս հարցը չլուծենք խաղաղ ճանապարհով, մենք այդպես էլ կմնանք Թուրքիայի հետ կոնֆլիկտի մեջ և շրջափակված:
- Ի՞նչ անկախություն, եթե դա անվտանգ չէ:
- Այլընտանքը համարժեք է. անկախություն առանց անվտանգության թե անվտանգություն առանց անկախության:
- Ճանապարհի բացակայության պատճառով շատ է վիճակը դժվարանում, բայց պետության անվտանգության հարցն ավելի կարեւոր է:

Ադրբեջանցիներ

- Մեր ժողովուրդը տառապում է սոցիոլոգիական, ինչպես նաև ֆիզիկական կորուստներից
- Նրանք հողերը նաև փչացնում են էկոլոգիական տեսանկյունից
- Օրենքները, որոնք ընդունվում են ԼՂ-ում, պետք է համապատասխանեն Ադրբեջանի օրենսդրությանը
- Հնագույն ժամանակներից հայտնի է, որ եթե մենք հայերին ազատ տարածք տանք, ապա նրանք նույն բաները կանեն:
- Եթե մենք հետ նայենք անցյալին, մենք այլևս նման հիմնախնդիր չպետք է վերապրենք:
- Կարող է նաև այնպես լինել, որ այնտեղ կարող է վտանգավոր լինել ապրել:
- Մենք ուրախ չենք լինի, եթե տարածքը ճանաչենք որպես ինքնավար:
- Ահաբեկչական կազմակերպությունների և թմրանյութերի անօրինական տեղափոխման համար պայմաններ են ստեղծված:
- Հայկական արմատներ ունեցող քրդերը վտանգի աղբյուր են:
- Դրանում ևս մեկ կետ պետք է ավելացվի, այն է՝ ահաբեկչական կազմակերպությունները պետք է հեռացվեն ԼՂ-ից:
- Այս պահին ամենաանհանգստացնող հիմնախնդիրը ԼՂ-ում թմրանյութերի արտադրությունն է, ինչպես նաև ահաբեկչական կազմակերպությունների կողմից աշխատացվող :
- ԼՂ-ի հայերը չեն կարող արտասահման մեկնելու համար անձնագրեր ստանալ:
- Մեր հիմնական հարցերից մեկը պետք է լինեն մարդու իրավունքները:
- Դա չպետք է միջամտի ներքին գործերին:

- Եթե Լեռնային Ղարաբաղը ինքնավար դառնա, նրանք կարող են հավակնել անկախության:
- Ադրբեջանում պետք է պետական համակարգ լինի:
- Լեռնային Ղարաբաղում կառավարում է անօրինական վարչակարգ:
- Եթե յուրաքանչյուր էթնիկ խումբ ցանկանա իշխանություն ունենալ, ապա աշխարհում կարող է խառնաշփոթ առաջանալ:
- Ճիշտ չէ, որ Հայաստանը և Ղարաբաղը միմյանցից ընդունում են պաշտոնական փաստաթղթեր:
- Սա ապագայում կարող է անարխիա առաջացնել:
- Եթե թափանցիկ ընտրություններ անցկացվեն, ապա միանգամից կարելի կլինի համաձայնության գալ:
- Ղարաբաղի՝ Հայաստանի կազմում մնալ վնասում է ոչ միայն Ադրբեջանին, այլև աշխարհի շատ պետություններին. այնտեղ ծաղկում է ապրում սև շուկան:
- Լեռնային Ղարաբաղի հայերը ճամփորդում են արտասահման՝ Հայաստանից անձնագրեր ստանալով. մենք դեմք ենք դրան:
- Ադրբեջանի հայկական ծագում ունեցող բնակչության անվտանգության հարցը մնում է իրենց հայեցողությանը:
- Եթե Ղարաբաղը մեզ վերադարձվի և ամեն ինչ ընկնի իր տեղը, կնշանակի, որ մենք մոռացել ենք մեր զոհերի մասին:
- Արտասահմանյան ընկերությունների գործունեությունն այնտեղ պետք է դադարեցվի:
- Անգամ եթե հիմնախնդիրը լուծվի՝ շատ շուտ է սահմանի վերաբացման համար, քանի որ քրեական գործերի թիվը կարող է աճել:

Քաղաքականություն և դիվանագիտություն

Հայեր

- Ադրբեջանցիները ամեն կերպ ջանում եմ խայտառակել մեզ միջազգային ասպարեզում: Ո՞ւր են մեր քայլերն ու ստրատեգիան
- Նույնիսկ Հայաստանը այսօր անկախ չի: Գերտերությունների ազդեցության տակ ենք:
- ես գտնում եմ, որ բոլոր բանակցությունները դեռ առջևում են ու Ղարաբաղի հարցի լուծումը դեռ շուտ է , քանի որ Հայաստանը՝ Ռուսաստանին է պետք, Ադրբեջանը՝ ուրիշ ուժերին
- Ղարաբաղը, Մեղրին տանք Ադրբեջանին, Լոռին Վրաստանին ու բոլորով գնանք Երևանում նստենք, հա՞... այ թե ինչի ա ձգտում միջազգային հանրությունը. քաղաք-պետություն դարձնել Հայաստանը:
- Միայն ռուսական զորքերը կարող են պահպանել մեզ անվտանգության գոտում:
- այսօր մենք ու Ադրբեջանը նույն կարգավիճակում ենք, մենք աշխարհում բարձրաձայնում ենք հայկական հողերի մասին, որ թուրքական ձեռքի տակ

է, իսկ Բաքուն գոռում է իր հողերի մասին, որ հայկական վերահսկողության տակ են
- Ռուսաստանին ձեռ է տալիս այսօրվա իրավիճակը. ինչքան խառն է իրավիճակը տարածաշրջանում, այնքան իրենց դիրքերը ամրապնդվում են:
- Իրականում ժողովուրդը խնդիր լուծող չէ, պետությունն է խնդիրը լուծում:
- Պատերազմն անընդունելի է, Վրաստանը մեզ օրինակ:
- պատերազմի վերահսկումը պայմանավորված չէ մեր ու ադրբեջանցիների ցանկություններով, գոյություն ունի միջազգային շահ, որի ձեռքն էլ մենք խաղալիք ենք
- ԼՂ-ն լծակ է Ռուսաստանի ձեռքում. ինչ ուզում, այն էլ անում է:
- եթե ԱՄՆ-ն խնդիր ունի Իրանի հետ, ուրեմն Իրանի սահմանին կից պատերազմի հրահրումը միշտ օդից կախված է, դա կարող է լինել Ղարաբաղի շուրջ պատերազմի վերսկսումը
- իբրև նախկին պատգամավոր, Ղարաբաղում ես հանդիպել եմ միջազգային շատ պատգամավորների ու բանագնացների հետ, ու հասկացել եմ, որ առաջ, երբ մենք խնդրողի կարգավիճակում էինք, ուրիշ վիճակում էինք՝ ավելի վատ, իսկ երբ լինենք պարտադրողի կարգավիճակում՝ մեզ հետ հաշվի են նստում... հիշեք ՝ ուժն է ծնում իրավունք
- Մենք չպետք է մեր հույսը դնենք ուրիշ պետությունների արտաքին քաղաքականության վրա:
- մենք համարվում ենք աս տարածաշրջանում ավելի մեծ հզոր ուժ, քան ադրբեջանական վաթը կամ վրացական ժողովրդավարությունն ու ամերիկամետությունը
- Հարևաններից ոչ մեկին պետք չէ խառնել մեր գործերին, Պարսկաստան, Վրաստան և մնացածը:
- Մենք կկորցնենք Իրանի հետ կապը: Նույնիսկ Վրաստանը բավականաչափ երաշխիք չի: Չի կարելի թույլ տալ որ Հայաստանը դառնա կղզի:
- ԼՂ-ի հարցը պետք է հավասարեցնել հայկական հարցին, Վանը, Էրզրումը, ԼՂ-ն նույնն է:
- Միայն հայերն են ասում, որ Նախիջևանի կարգավիճակը օդում է, իսկ որ, Ղարաբաղի կարգավիճակն է օդում, աշխարհն է ասում ...
- Կարծում եք թե ճի՞շտ ենք անում, որ պարսիկների դեմ դռները լայն բացում ենք
- Սահմանների բացո՞ւմ... սա նշանակում է, որ Ղարաբաղի հարցն այնուամենայնիվ կապված է Թուրքիայից էլ... ճիշտ եմ հասկանո՞ւմ...
- Վերևների պայմանավորվածությունը սուտ բան ա. Կոսովոն վկա:
- Գերտերությունները ոնց որոշեն, այնպես էլ կլինի՝ այս ամբողջը սուտ է:
- Մենք միշտ ասում ենք, Ղարաբաղը հայ-թուրքական հարաբերությունների նախապայման չէ, բայց այս բոլոր սցենարում միշտ սահմանի բացման հարց ենք քննարկում:
- Ավելի լավ կլիներ սահմանները բաց լինեին, ամեն ինչ ազատ լիներ:
- Պետք է հիշել, որ փոքր տերությունները մեծերի ձեռքին միշտ էլ խաղալիք են եղել, սա հենց այս տարբերակն է:

- Ամերիկայի ձայնն է վճռական ինչպես ցեղասպանությունը ճանաչելու հարցում, այնպես էլ Ղարաբաղի անկախության ճանաչման հարցում:
- Թուրքիան միշտ էլ միջամտելու է այս հարցին՝ աջակցելով Ադրբեջանին. նրանք նույն ազգն են:
- Պետք է չմոռանանք Ռուսաստանին, Ռուսաստանը կարող է այնպես անել, որ Թուրքիան չմիջամտի:
- Թուրքիայի նպատակը միայն ԼՂ-ի հարցը ի օգուտ Ադրբեջանի լուծելն է:
- Գերտերությունները թքած ունեն թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի վրա:
- Մենք հիմա գոյատևում ենք, որովհետև թուրքերը գիտեն, որ Ռուսաստանը մեր թիկունքին է:
- Հայաստանը Ռուսաստանի միակ հենակետն է մեր տարածաշրջանում:
- Հարցի լուծմանը նպաստող ցանկացած գերպետություն փնտրում է իր շահը:
- Ամերիկացիները վտանգավոր են, որտեղ գնացել են, սաղ լացել են:
- Վտանգավոր է հայ-թուրքական սահմանի բացումը կապել Ղարաբաղի հարցի լուծման հետ:
- Հայ-թուրքական սահմանը չպիտի բացվի:
- Քանի կա ՌԴ-ԱՄՆ հակամարտությունը, տարածքային հարցեր չեն լուծվելու: Մեր երկու ժողովուրդներին եթե մնա՝ մենք լուծում կգտնենք, սակայն այս երկու հզորների հակամարտության դեպքում լուրջ բախում կա շահերի:
- Չեմ հասկանում, թե ինչ են հայ թուրքական սահմանի բացումը կապում ենք Ղարաբաղի հարցի հետ:
- Սահմանը փակել է Թուրքիան, նա էլ պետք է բացի:
- Ռուսաստանի օգնությամբ է, որ խաղաղությունը հաստատվել է, իսկ առանց Ռուսաստանի էլ որեւէ տեղաշարժ հնարավոր չէ:
- Ղարաբաղի հարցի վերջնական լուծումը կարևոր է թե Հայաստանի համար, թե Թուրքիայի և թե Ադրբեջանի:
- Ֆրանսիա, Ռուսաստան և ՕԲԱՄԱ. ահա մեր դաշնակիցները:
- Մենք պիտի սովորենք գերտերությունների հետ խաղալ. օգտվել նրանց՝ կովկասյան շահերից:
- Մենք Ռուսաստանի ոտքի տեղն ենք այստեղ, իրեն ձեռք է տալիս, որ մենք ամուր լինենք:
- Ադրբեջանցին տեղեկատվական պատերազում մեզ հաղթում է. այ սրա դեմ պետք է պայքարել:
- Մեր հույսը միայն մեծ միջազգային ատյաններն են: Մենք մենակ ենք այդ հարցում և ի վիճակի չենք լուծել այս հարցը:
- Մենք տուժած ենք ամեն կողմից, մենք ձեռք բռնող չունենք:
- Ախր մեզ ոչ մի ճանապարհ էլ պետք չի, մենք խաչմերուկ ենք: Մեզ ուղղակի ռազմավարություն ա պետք էդ խաչմերուկից ճիշտ օգտվելու համար:
- Մենք պիտի զգուշանանք Թուրքիայի փափուկ բարձից:
- Լուրջ աշխատանք ունենք ինֆորմացիոն պատերազմում առաջ անցնելու գործում:

- Թուրքիայի հետ սահմանները բացելը մեզ իսկի էլ պետք չի: Իրանի հետ մեր կապերը ավելի ամրապնդելը մեզ համար շատ ավելի նպաստավոր կլինի:
- Մենք անընդհատ լսում ենք ադրբեջանական կողմից հակահայկական քարոզ, սպառնալիքներ, իսկ Հայաստանի կողմից շատ լուրեր չենք ստանում:
- Հայաստանի Թուրքիային ավելի ա պետք, քան իրենք մեզ...
- Պիտի մեր դիվանագիտությունն այնքան աշխատի, որ մեր հարցը տեղ հասցնենք:
- Պարսիկները խելոք են, մեր ղադրը լավ գիտեն...
- Մեր դիվանակագիտությունը պետք է հասկանա, որ Լեռնային Ղարաբաղի հարցը դա հայկական հարցի բաղկացուցիչ մասն է: Իսկ մենք տարանջատել ենք, ինչն էլ հենց թշնամու ուզածն է:
- Անկախ մեր կարծիքից՝ իշխանավորները, միեւնույն է, իրենց կարծիքին են մնալու:
- Յուրաքանչյուր պետություն իր շահերն է կարևորում. Հայաստանը ու՞մ է պետք, որ...
- Ստատուս քվոն կախված է նաև աշխարհում տեղի ունեցող փոփոխություններից և դա իրենից մեծ վտանգ է ներկայացնում:
- Սահմանի բացումը պետք է լինի առանց նախապայմանների, մենք կառավարության հետ համաձայն ենք:
- Թուրքիա սահման բացել չի կարելի. այսօր Էնտեղի բանտերում մոտ 1500 հայ աղջիկ կա, սա էլ փակ սահմաններով. պատկերացնում ենք, թե հետո ինչ կլինի...
- Սահմանը բացվելուց հետո թուրքերը կլցվեն Հայաստան, և ոչ հակառակը:
- Հայաստան-Ադրբեջան հարաբերությունները սոսկ այս երկու պետությունների հարցը չէ, խելամիտ դիվանագիտության շնորհիվ այստեղ առկա են նաեւ գերտերությունների շահերը, ինչը մեզ ապահովագրում է թշնամու հարձակումներից:
- Հիմի մեզ համար Վրաստանն ավելի շատ վտանգ է ներկայացնում, քան թուրքը:
- Սահմանի բացում առանց նախապայմանների հնարավոր չէ. ի՞նչ է նշանակում, սահման բացի, հետո մենք մեր սահմանները կճշտենք. ո՞ր հարևանը դա կանի՞:
- Հայ-թուրքական սահամանների բացումը դրական չի կարող լինել...
- Չ՛է, չե՛նք ուզում սահմանների բացում:
- Ֆուտբոլային դիվանագիտությո՞ւն... հենց էդ ֆուտբոլիստների համազգեստի վրա Մասիսը գնդակով փոխարինվեց... սա՞ է մեր դիվանագիտությունը...
- Հենց Թուրքիային է ձեռնտու սահմանի բացումը, իսկ սա մենք չենք գիտակցում...
- Մենք չարիքի փոքրագույնը պիտի ընտրենք, երկու մուսուլմանական երկրներից պիտի ընտրենք կապ Իրանի հետ, ոչ թե Թուրքիային:

- Ադրբեջանցիներն ինֆորմացիոն պատերազմներում միշտ հաղթում են: Համ էլ հարուստ են, նավթ ունեն: Այդ պատճառով էլ շատ երկրներ նրանց կողմն են կանգնում կամ էլ չեն ուզում խառնվել:
- Մենք դիվանագիտություն չունենք. այսօրվա իրավիճակը մեր դիվանագիտության թուլության ապացույցն է:
- Այս ամենի իրական պատճառն այն է, որ մենք իսկապես ինքնիշխան չենք...
- Հայաստանը պետք է ոչ թե գնա թուրքերի հետ գաղտնի բանակցությունների, այլ գործադրեն լուրջ դիվանագիտություն, հատկապես աշխարհի ուժեղագույն երկրների հետ, որպեսզի աշխարհը ճանաչի Ղարաբաղի անկախությունը
- Դիվանագիտությունը դիվանագիություն, բայց աշխարհի զարգացումն էլ խաբկանք է. ազգային շահի համար մտածենք...
- Հայ-թուրքական սահմանի բացումը կապ չունի Ղարաբաղի խնդրի հետ:
- Եթե արյուն չթափվի, ուրեմն փոխզիջում պետք ա լինի: Բայց թե ինչ ձեւով, դա արդեն պետք ա մտածեն դիվանագետները:
- Ցեղասպանության հաստատումից հետո կոնկրետություն կլինի ԼՂ-ի հարցում
- Հիմա զենքով չեն պատերազմում, այլ խելքով:
- Մենք չենք կարողանում միջազգային ատյաններին ապացուցել, որ Ղարաբաղը երբեւէ Ադրբեջանի կազմում չի եղել: Մեծ երկրներն իրենց շահերն ունեն: Մենք այդ երկրներին պետք չենք:
- Ադրբեջանական լոբբին շատ մեծ է, դրա համար չորրորդ սցենարը վտանգավոր է մեզ համար:
- Պիտի ադրբեջանցիներին հասկացնենք, որ իրենք պետք է ձգտեն մինիմալին
- Առաջին հերթին պետք է Ռուսաստանի հետ լավ լինենք, ուժեղ պետություն է, բոլորն էլ նրանցից վախենում են:
- Ես այնքան չէի կարեւորի Իրանի դերը, թեեւ զգալի ադրբեջանաբնակ տարածքներ ունի: Իհարկե Իրանին դուր չի գա այս ծրագիրը:
- Կարելի է հայկական հպարտությունը մի կողմ դնել ու վարձել միջազգային դիվանագետների, որոնք ավելի լուրջ ու սառը կվերաբերվեն խնդրին:
- Գիտեք, ժամանակին մոնիտորինգի հանձնաժողովի անդամ մի կին, ասեց մեր կառավարությանը. «Այս տարածքները ձերը չեն, եթե ձերը լինեին, հիմա մենք կգայինք, վերաբնակեցված տարածքներ կտեսնեինք...»
- Մենք պետք է մեր կողմը գրավենք հնարավորինս շատ պետություններ:
- Արտասահմանյան կազմակերպություններն արդարություն են ուզում, մենք էլ: Հարցնում են, պատասխանում ենք, թե ինչ ենք ուզում, էլ ի՞նչ են ուզում:
- Ինչու ղարաբաղցին, ով հաղթել է պատերազմում, այսօր նստած չի բանակցությունների սեղանի շուրջ, այս բանակցությունները պետք է եռակողմ լինեն:
- Մինչեւ մեր ղեկավարությունը, մեր դիվանագիտությունը անմիջականորեն չմասնակցի բանակցություններին, իրական լուծում չենք ունենա:

- Եթե ամբողջ աշխարհը տեսնի, որ ղարաբաղցին կարողանում է իրեն ապահովել թե՛ օրինականության, թե՛ տնտեսության տեսանկյունից, կսկի մեզ հետ հաշվի նստել:
- Մեր գործունեությունը պետք է ուղղված լինի նրան, որ համոզենք ադրբեջանցիներին մեր իրավացիության մեջ:

Ադրբեջանցիներ

- Դրա օրինակներից է Ռուսաստանի կողմից Հայաստանին տրամադրվող 8.5 միլիոնի հասնող ռազմական օժանդակությանը:
- Ռուսաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի միջև հարաբերությունները շատ լարված են:
- Ռուսաստանն ազդում է Թուրքիայի վրա Հայաստանի միջոցով:
- Ռուսաստանն է ստեղծում նման իրավիճակ:
- Ռուսաստանը հետաքրքրված է, որ այս հակամարտությունը չկարգավորվի:
- Դա նշանակում է, որ ԼՂ-ն ասես գործի է նրանց ձեռքում և օգտագործվում է մեր դեմ:
- Փաստն այն է, որ նրանք մեկուսացված են ամեն ինչից:
- ԼՂ-ն օժանդակություն է ստանում միայն Հայաստանից :
- Մյուս հարևանները չեն աջակցում:
- ԼՂ-ն պետք է մնա Ադրբեջանի մասը. տնտեսական, քաղաքականան, ռազմական և սոցիալական ինստիտուտները պետք է վերականգնվեն Ադրբեջանի շրջանակում:
- Ադրբեջանը և միջազգային հանրությունը չեն կարողանա ընդունել ԼՂ-ի անկախության և Հայաստանի կազմում մնալու փաստը:
- Եթե ԼՂ-ն ստանա Նախիջևանին համարժեք ինքնավարության մակարդակ, այն աջակցություն կստանա Ռուսաստանից և Հայաստանից և նորից կառաջնորդվի իր մտքերով:
- Հայաստանի և ԼՂ-ի միջև անմիջական հաղորդակցությունը հակասում է միջազգային ստանդարտներին:
- ԼՂ-ն՝ Ադրբեջանի մասը կազմելով, չի կարող որևէ պաշտոնական փաստաթուղթ ընդունել ոչ Հայաստանից, ոչ էլ մեկ այլ երկրից:
- Եթե Ղարաբաղի ինքնիշխանությունը ճանաչվի, ապա այն կոտնահարի միջազգային օրենքներն ու կանոնակարգերը:
- Եթե անգամ Հայաստանը ցանկանա, այն չի կարողանա Ադրբեջանի հետ համաձայնության գալ հակամարտության կարգավորման վերաբերյալ:
- Թող Ղարաբաղն այլ պետություններից օգնություն չստանա:
- Ադրբեջանը կարող է օժանդակել Հայաստանին՝ միանալու մեծ միջազգային նախագծերի, հենց որ Հայաստանը դադարեցնի իր նվաճողական քաղաքականությունը:
- ԼՂ-ն չի կարող որևէ օգնություն ստանալ դրսից:
- Լեռնային Ղարաբաղը չի կարող արտաքին օժանդակություն ստանալ:

- Քանի դեռ հակամարտությունն այս փուլում է, Հայաստանը՝ որպես բռնազավթիչ, պետք է դուրս մնա տարածաշրջանային բոլոր նախագծերից:
- Թուրքիան լիովին անկախ պետություն է և կարող է ցանկացած պահի բացել և փակել իր սահմանները:
- Միայն Ադրբեջանի զինված ուժերը կարող են դրան հետևել: Միայն տարածքային ամբողջականության վերականգնման պարագայում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանները, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի սահմանները կարող են վերաբացվել:
- Ադրբեջանի, Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանները կբացվեն միայն հակամարտության լիարժեք կարգավորումից և տարածքային ամբողջականության վերականգնումից հետո:
- Այս պահին Թուրքիային բանակցում է Հայաստանի հետ սահմանի բացման ուղղությամբ: Սակայն նրանք փակել են սահմանը ԼՂ հիմնախնդրի պատճառով: Եթե հակամարտությունը չլուծվի, նրանք կարող են քննարկել սահմանի բացման հարցը:
- Սակայն մենք նաև պետք է փորձենք նախևառաջ պաշտպանել մեր շահերը:
- Հենց որ անկախություն ձեռք բերվի, հետաքրքրական է ովքեր են լինելու առաջնորդները:
- Երկրորդ այլընտրանքը Ղարաբաղում փոքր թվով հայեր ընդունելն է:
- Մենք պետք է ակտիվացնենք դիվանագիտական քննարկումները:
- Ադրբեջանը որոշ մակարդակով աջակցում է Վրաստանին. Վրաստանը ևս կարող է այս ոլորտում աջակցել Ադրբեջանին:
- Ռուսաստանն աջակցում է Հայաստանին՝ Ադրբեջանի օդային տարածքի վրայով:
- Միջազգային կազմակերպությունները չեն օգտագործում այս գործառույթը:
- Նախևառաջ մեզ պետք է ճանաչեն արտասահմանում:
- Մենք պետք է շահերի պաշտպանության քարոզչություն իրականացնենք:
- Այս հարցի լուծման գործում մեծ նշանակություն ունեն ոչ պաշտոնական լոբբիստական կազմակերպությունները:
- Անհարժեշտ է ուժեղացնել լոբբիստական գործունեությունը:
- Մեր քարոզչությունը ճիշտ ուղու վրա չէ:
- Հայաստանը հետ է մնում Ադրբեջանի՝ տարածաշրջանային նախագծերում կարևոր դերակատար լինելու պատճառով:
- Մենք պետք է գործադրենք հնարավոր բոլոր ջանքերը այլոց կարծիքը մեր նկատմամբ բարենպաստ դարձնելու համար:
- Արտասահմանում սովորող ուսանողները պետք է այս ուղղությամբ ակտիվ լինեն:
- Քարոզչությունը պետք է ուժեղացնել:
- Հայերն օգտագործում են միջազգային դատարանների ուժերը:
- Ադրբեջանում քարոզչությունը թույլ է:
- Մենք պետք է քարոզչության միջոցով ձևավորվենք հասարակության կարծիքը:

- Այս ոլորտում մեր քարոզչությունը ևս թույլ է:
- Մեր քարոզչությունը թույլ է հատկապես արտասահմանում:
- Մենք պետք է հավասարակշռված քաղաքականություն վարենք և չպետք է վնասենք հարևանների հետ հարաբերությունները:
- Քարոզչությունը լոբբիստական գործունեության շրջանակում պետք է ընդլայնվի:
- Առկա իրավիճակը մեզ ուժեղ լինելու հնարավորություն է տալիս:
- Հայերը պարտվել են քաղաքական պատերազմում:
- Եթե անգամ սցենարներից մեկն ընդունվի, Ռուսաստանն ամեն ինչ կանի քարոզչության միջոցով դրան խոչընդոտելու համար:
- Մենք կարող ենք քարոզչության միջոցով հակամատրության ընթացքը փոխել հօգուտ մեզ:
- Ադրբեջանը պետք է շարունակի իր ջանքերը միջազգային ասպարեզում՝ վերականգնելու իր տարածքային ամբողջականությունը:

Սոցիալ տնտեսական զարգացում

Հայեր

- Առաջին տարբերակի դեպքում Ադրբեջանը գնալով կհարստանա, իսկ Հայաստանը կգտնվի տնտեսական վատ վիճակում և շահեկան դիրքում չի լինի պատերազմի հնարավոր սկսման դեպքում:
- Որպեսզի ԼՂ-ն լինի անկախ, պետք է ունենա բանակ, պետք է ունենա պետական ապարատ, իսկ դա մեծ գումարներ են, այդ իսկ պատճառով այստեղ մեծ դեր պետք է ունենա սփյուռքը:
- Մենք պետք է տնտեսական լծակներով փորձենք օգնել ԼՂ-ի բնակչությանը:
- Տնտեսական ճգնաժամի ներկայիս իրավիճակը ոչ մի դրական տեղաշարժի չի բերի՝ հարցի լուծման առումով
- Ի հակադրության Ադրբեջանի մենք պետք է չգնանք դեպի միապետություն, այլ գնանք ժողովրդավարության. սա մեզ կօգնի:
- Եթե հայերը ձևավորված պետական համակարգ չունենան, ապա շատ կորուստներ կունենան:
- Թեև Անգլիան համարվում է ժողովրդավարական երկիր, բայց Իռլանդիայի խնդիր ունի, այնպես որ ժողովրդավարությունը գործոն չէ:
- Ղարաբաղն առանց Հայաստանի ոչինչ չի կարող անել: Հայաստանն է նրան դրդում և մղում որոշ քայլերի և օգնում:
- Այսօր այնքան խառն է տնտեսական իրավիճակը, որ առաջիկա մի քանի տարիների ընթացքում դժվար թե ինչ-որ լուծում ստանա այս խնդիրը: Այս խնդրի շուրջ կարծես թե դեբատներ ժողովրդի մեջ չի լինում և ես շատ ողջուն եմ ձեր այս քայլը:
- ԼՂՀ-ն ներկայումս ինքն իրեն հռչակել է անկախ... Ադրբեջանի կազմում լինելը նրան հետ կտանի դեպի տնտեսական անկում:
- Ճիշտ կլինի, որ Հայաստանն այնքան հզորանա, որ ինքն իրեն իրավունք վերապահի ԼՂՀ-ի անկախությունը ճանաչի:

- Ռազմական լուծումը տարբերակ չէ: Պետք է ուժեղացնել Ղարաբաղը տնտեսապես ու առաջ շարժվել:
- Մենք պետք է հզորանանք, որ կարողանանք մեր պատմական հողերին տեր կանգնենք մեր հզորությամբ, Ղարաբաղին էլ տեր դառնանք, Նախիջևանին էլ: Կենսաբանական զենք է պետք, որ թուրքը վերացվի:
- Ես համարում եմ, որ մենք ունենք ներքին հնարավորություններ երկրի զարգացման համար: Դրանք չեն օգտագործվում:
- Թող բանակցեն լայ-լայ անեն, այստեղ հզորացնեն
- Հայաստանը Իսրայելից հետո երկրորդ պետությունն է, որ շանս ունի հզորանալու
- Երբ հրադադարը ստորագրվեց, մեր ղեկավարությունը պետք է նստեր ու մտածեր, ոչ թե երկիրը քայքայեր...
- Էականը հող գրավելը չի, երկիր զարգացնելն ա:
- Պետք է վերացնել աղքատությունը, դա իսկապես հնարավոր է:
- Իմ կարծիքով, առաջին տարբերակը մեզ թույլ է տալիս տնտեսապես ուժեղանալ, իսկ հարցերը դրական լուծում են ստանում ուժեղի համար:
- Եթե շարունակվում է այս կարգավիճակը, պետք է գոնե զարգացնել Հայաստանի ներքին դրությունը:
- Մենք որպես մեկ ազգ ամբողջ աշխարհով կարող ենք նույնիսկ շրջափակման դեպքում ուժեղանալ ու էս հարցը լուծել մեր օգտին:
- Սակայն այս վիճակում մենք առաջընթաց չունենք՝ չկան ներդրումներ, չկա ճանաչում, այսպես երկար շարունակվել չի կարող:
- Պետք է տնտեսագիտական հաշվարկներ արվեն, ինչքանո՞վ է մեզ ձեռնտու սահմանների բացումը:
- Ղարաբաղը տալով մենք տնտեսական խնդիրներ չենք լուծի:
- Կարծում եմ ժամանակն է անցնել Հայաստանին: Մեզ էլ է շատ օգնություն հարկավոր... Հերիք է օգնենք միայն Ղարաբաղին:
- Հարցը մեկ այլ կողմից նայենք. ասում ենք անվտանգության համար, մարդու իրավունքների պաշտպանության համար Ղարաբաղը չի կարելի հետ տալ. իսկ ես հարցնում եմ. Հայաստանի կազմում դրանք շատ ենք ապահովվո՞ւմ...
- Ադրբեջանցիք իրենց նոթը /նավթը/ ունեն մունք ել մեր մոլիբդենը, զոդը ու պղինձն ունենք: Մունք էլ պիտի մեր բյուջեն ուժեղցնել ու ոտք գցել թորքի բյուջեի հետ:
- Ինչ ենք ղարաբաղի համար կռիվ տալիս, եթե էսօր բաժանում ենք ղարաբաղցի-հայաստանցի, երբ էս հարցը կլուծենք մեր մեջ, էն ժամանակ էլ հնարավոր կլինի մեկ եզրահանգում անել:
- Մենք խոսում ենք, վտանգի, զոհերի, թափված արյան մասին... մոռանում ենք տնտեսական խնդիրները... Ղարաբաղի հարցի չլուծումը մեզ տնտեսական ցեղասպանության է տանում:
- Մենք ներկա պահին են իշխանությունը չունենք, որ կարողանանք ԼՂ հարցը լուծեն:
- Միեւնույնն ա ժողովրդի վրա ա մնում հարցի լուծումն էլ, հողերի պաշտպանությունն էլ:

- Էսպես սխալ է, տնտեսական աճ չկա...
- Այս վիճակը մեզ բնականաբար չի կարող գոհացնել ու մեղավորն էլ մեք ենք, որովհետև մենք ունենք սփյուռք, որը Ադրբեջանը ու Թուրքիան չունեն, բայց մեր թույլ դիվանագիտությունը լավ չի կարողանում այս խաղաքարտը ճիշտ օգտագործել:
- Կարելի է ուժեղացնել այն քարոզչությունը, որ այդ հողերը մերն են, սակայն այս հարցն առանց փոխզիջման հնարավոր չէ լուծել, իսկ այս վիճակի պահպանումն էլ Հայաստանին ձեռնտու չէ, Ղարաբաղին օգնություն չի հասնում...
- Ինչ տնտեսական զարգացում, ինչ ռեսուրսներ.... քանի դեռ պատերազմի վտանգ կա մեր գլխին կախված, մենք հանգիստ կյանքով չենք կարողանա ապրել ու տնտեսապես զարգանալ:
- Անվտանգությունը և ազգային հպարտությունը չի կարելի տնտեսական շահերի հետ նույն նժարի վրա դնել:
- Էդքան փող, որքան Հայաստանա մտնում, ոչ մի տեղ չի մտնում...Պետք է էդ փողերը նպատակային ծախսել:
- Եթե Աղդամի անծայրածիր հողերը մշակվեին ու ցորեն ցանեին, մեր Հայաստանը մի քանի տարի հացի խնդիր չէր ունենա: Պաշտպանության նախարարն էլ ինձ ասում է, թե այն կողմից մի կրակոցը կայրի ամբողջ դաշտերը... Է, պաշտպանեք, սահմանեք անվտանգության հատուկ պայմաններ:
- Հզորանալ է պետք. ամեն նախադրյալ ունենք՝ խելացի, տաղանդավոր մարդիկ, շնորհալիներ...Մենակ փողը ճիշտ չի ծախսվում”:
- Պետք է մեր սոցիալական վիճակը լավացնենք, որ երկիրը հզորանա:
- Տելետոն են անում, ցույց են տալիս, թե ճանապարհ են նորոգում: Ու ինչ, վե՞րջ, էլ բան չկա՞ կառուցելու, նորոգելու: Հիմնադրամի հավաքած փողերը «լվանում» են, իսկ դրանցով այնքան բան կարելի էր անել Արցախի համար:
- Առանց Հայաստանի օգնության Ղարաբաղը առանձին չի կարող գոյատևել:
- Առաջին հերթին մարդկանց ապրելակերպը լավացնելու մասին պետք է մտածել, որ կարողանանք ուրիշ հարցեր լուծենք:
- Մենք ունենք Ազգային ակադեմիա, ու էլի տարբեր կառույցներ: Դրանք պետք ա աշխատեն հայերին աշխարհում ներկայացնելու ուղղությամբ:
- Մեր երեխաները ուզում են փախնել այստեղից, որտովհետև ոչ մի ապագա չեն տեսնում... Էլ ի՞նչի մասին է խոսքը..
- Սահմանների բացումը տնտեսապես զարգացման հնարավորություն կտա թե՛ մեզ, թե՛ հարևաններին: Ո՞վ ավելի կշահի՝ չգիտեմ:
- Ճանապարհը բոլորիս է հարկավոր զարգացման համար: Բայց հողային հարց այս դեպքում չպետք է լինի:
- Եթե Ղարաբաղյան հարցը լուծվի, գորիսցիներն էլ կշահեն, մեր վիճակն էլ անպայման կլավանա

- Արցախի և Հայաստանի զարգացումը չպետք է կապել սահմանների բացման հետ. ես ասում եմ, որ հիմա այլընտրանքային տարբերակներն ավելի են զարգանում, քան հենց նույն Ադրբեջանը:
- Ներողություն, բայց Ղարաբաղի հարցը սոցիալական կռիվ չէ, այլ էթնիկ...
- Մեր պետության կարևոր խնդիրներից է ամբողջ ազատագրված տարածքները բնակեցնելն ու զարգացնելը:
- Եթե մենք մեր սոցիալ-տնտեսական մակարդակը բարձրացնենք, մենք շատ ավելի կամրանանք:
- Այս վիճակը ոչ մեկին ձեռք չի տալիս, սա սառը պատերազմի վիճակ է, չկա տնտեսական, ֆինանսական և քաղաքական առաջընթաց:
- Ստատուս քվոյից անմիջական տուժողը Գյումրին է. սահմանը փակ է՝ Գյումրին մեռնում է
- Ես կողմ եմ գիտեք երկրորդ սցենարին. Հայաստանը այսօր ինքն իր հարցերը չի կարողանում լուծել, ուր մնաց Ղարաբաղ պահի:
- Ղարաբաղը՝ ելնելով սոցիալական և տնտեսական ոչ լավ վիճակից, այժմ հայաթափվում է կամաց-կամաց:Մենք ուզում ենք ունենալ փոքր տարածք բայց ապրել շատ լավ ու զարգացած երկրում:
- հակամարտությունը պետք է հնարավորին շուտ լուծել, քանի որ, ստատուս քվոյի պայմաններում, Հայաստանից արտագաղթը շատացել է, բնակչությունը նվազել է, իսկ Ադրբեջանում բնակչությունը աճել է
- Մենք նստել խոսում ենք ապագայի մասին, իսկ ես ասում եմ, եկեք մեր երկիրն օրենքի երկիր դարձնենք ու դրանով իսկ բոլոր հարցերը կլուծվեն. Ղարաբաղն էլ մերը կլինի, միջազգային հանրությունն էլ մեզ հետ հաշվի կնստի:
- Առաջին սցենարի պարագայում Հայաստանը պետք է աշխարհի հետ իր դիվանագիտությունը ուժեղացնի: Պետք է տնտեսապես զարգանա, պետք է պաշտպանությունը զարգացնի, այսպես վիճակը անկայուն է:
- Ստատուս Քվոն ձեռնտու չի, Հայաստանը տնտեսական զարգացում չի ապրում, պետք է դուրս գալ այս իրավիճակից անհապաղ:
- Ներկայիս վիճակը Հայաստանի համար տնտեսապես վնասակար է, քանի որ մեր բյուջեի մեծ մասը գնում է բանակին, բնական է, որ պետք է որոշ զիջումներ անենք, որ այս ծանր տնտեսական վիճակից դուրս գանք
- Թուրքիայի հետ սահմանի բացումը մեր տնտեսական վիճակի բարելավման համար միանշանակ անհրաժեշտ է:
- Մենք էլ բոլորս սիրում ենք Երևանը, բայց հիմա այդ ժամանակները չեն. շրջաններին է պետք ուշադրություն դարձնել, որ մարդիկ մի քիչ գոտեպնդվեն:
- Եթե այսօր պետությունը գյուղացու մեջքին չի կանգնում, ձեռքը չի բռնում, այդ պետությունը բա պետություն կդառնո՞ա:
- Գյուղացուն այսպես անտեսում են, հետո էլ ասում են գնա՛, կռվիր:
- Ժամանակի առումով Ադրբեջանը ավելի նպաստավոր վիճակում է, տնտեսապես ավելի արագ զարգանալու հնարավորություն ունի:

- Պետականությունները պետք է ձևավորվի ազատ անկախ ընտրությունների միջոցով: Եթե ժողովրդավարություն չլինի, ոչ մի հարց մեր օգտին չի լուծվի:
- Եթե ուզում ենք տնտեսական աճ ունենալ, պետք է համագործակցել հարևան երկրի /Թուրքիայի/ հետ:
- Պետական ծրագրով պիտի Ղարաբաղի գյուղերը պահեն: Հող պահողը գյուղն ա: Հակառակ դեպքում չորրորդ սցենարն անիմաստ ա: Բայց մեկա մերոնք տենց բան անող չեն:
- Լաչինում ժամանակին 10000 բնակչություն կար, իսկ հիմա 1200հոգի են մնացել:
- Ով՞ է ավելի լավ ապրում. ղարաբաղցին, թե հայաստանցին: Ղարաբաղը օր օրի ծաղկում ու զարգանում է:
- Այսօր պետք է ոչ թե թուրքին փնովել, այլ պետք է երիտասարդների հայրենասիրությամբ դաստիարակել:
- Մենք մեր սփյուռքը չենք ուզում օգտագործել, այլ այն քանդում, քամում ենք... իսկ Թուրքիան այսօր արհեստականորեն գաղթօջախներ է ստեղծում...
- Պետք է փորձել վերաբնակեցնել այն մարդկանց, որոնք ժամանակին թողել են այն տարածքները, սակայն դրա համար պետք է ստեղծել շատ բարեկարգ պայմաններ:
- Պետք է ստեղծվեն պայմաններ, որպեսզի ժողովուրդը վերադառնա Ղարաբաղ:
- Պետք է պայմաններ ստեղծել, որ մարդն ապրի իր հողում, կպած մնա հողին:
- Եթե աշխատանքով, տնով ապահովեն, հիմա շատ երիտասարդներ կգնան այնտեղ կապրեն:
- Ավելի լավ կլինի տեղական տնտեսվարողների մասին մտածելը:
- Նրանք մեզանով են ապրել, մենք նրանցով: Ու էս վիճակից տուժումա հասարակ ժողովուրդը...
- Չգիտեմ, չգիտեմ, շատ բարդ է... բայց պիտի չհուսահատվենք ու ուժեղանանք. մեր ուժը մեր զարգացման մեջ է. մեզ պետք է ժողովրդավարական, տնտեսապես հզոր երկիր, էդ ժամանակ Ղարաբաղն էլ մերը կլինի, Նախիջևանն էլ, Արևմտյան Հայաստանն էլ նվեր:
- Ազգասիրական էմոցիաներից զատ, պետք է մտածել տնտեսական զարգացման մասին: Ամեն դեպքում մտավախություն լինելու է:
- Քանի դեռ հողը պահում էր գյուղացուն, մենք գյուղից չէինք հեռանում:
- Հայաստանի շրջափակումը ղարաբաղյան հարցի հետ կապ չունի:
- Առաջին հերթին մենք պիտի մեր տնտեսությունը զարգացնենք:
- Մենք տնտեսական ոչ մի հարաբերություն այլ պետության հետ չունենք. պիտի հարեւանդ ճանաչի քեզ, որ հարաբերվի:
- Գլուխներիս պետք զոռ տանք, Ճապոնիայի նման սկսենք զարգանալ:
- Եթե մենք ազատ ու անկախ լինենք, մենք մեզ կպաշտպանենք...
- Եթե խելացի օգտագործենք մեր ռեսուրսները, հանածոները /հանքային ջրեր, ոսկի/ շատ ավելի արագ կզարգանանք:

- Բավարար չի հենվել միայն «դուխի»/ոգու վրա, անհրաժեշտ է նաև նյութական/ֆինանսական զարգացում:

Ադրբեջանցիներ

- Մեր տնտեսությունը վնասված է:
- Ապագայում Լեռնային Ղարաբաղը որպես անկախ տնտեսական գոտի պետք է կանոնակարգվի համաձայն Ադրբեջանի օրենսդրության, և բոլոր հարկերը պետք է համալրեն Ադրբեջանի Հանրապետության բյուջեն:
- ԼՂ-ի հայերը ճիշտ մոտեցում չեն ցուցաբերում՝ Հայաստանի անձնագրեր կրելով և հայկական դրաման օգտագործելով:
- Ռազմական ուժերի վրա ծախսվող ֆինանսական միջոցներն ազդում են երկրի տնտեսական ներուժի վրա:
- Հայաստանի ներկայիս թույլ և դժվարին տնտեսական դիրքը կարող է ազդել հակամարտության կարգավորման վրա:
- Հայաստանի ներկայիս դիրքորոշումը հնարավորություն չի տալիս ԼՂ-ում ներդրումների կատարման և դրա զարգացման համար:
- Հայաստանի ներկայից տնտեսական իրավիճակը շատ վատ է:
- Հենց որ մեր բնական ռեսուրսները սպառվեն, այս խնդրի լուծումն ավելի դժվար կդառնա:
- Նրանց առաջին կարիքը տնտեսական զարգացումն է:
- Կարծում եմ, որ Հայաստանում տիրող դժվարին տնտեսական պայմանները կստիպեն նրանց համագործակցել մեզ հետ:
- Հայերենը և դրամական քաղաքականությունը չեն կարող մնալ ԼՂ-ում:
- Հայաստանը հետ է իր տնտեսական զարգացմամբ:
- Իրականում ԼՂ-ն Հայաստանից օգնություն է ստանում:
- Մենք պետք է նրանց տնտեսական շրջափակման մեջ պահենք:
- Հայաստանի զարգացումն ամբողջովին կախված է Ադրբեջանից:
- Տնտեսական հարաբերությունները խթանում են տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացները:
- Մեկ այլ մասնակից նշեց, որ այդ դիրքորոշումը շահեկան չէ, և եթե Լեռնային Ղարաբաղը լիներ Ադրբեջանի մասը մեր շահն ավելի մեծ կլիներ:
- Լեռնային Ղարաբաղը և բոլոր հարակից տարածքները բռնագրավված են, ինչը դժվարեցնում է Կովկասում արդյունավետորեն իրականացնել սոցիալական, տնտեսական և քաղաքական ծրագրեր:
- Հայաստանը հեռու է տարածաշրջանային նախագծերից և Լեռնային Ղարաբաղն էլ չի կարող շահել դրանից, մինչդեռ Ադրբեջանն իր զարգացման փուլում է:
- Մենք պետք է ուժեղացնենք Հայաստանի շրջափակումը:
- Մենք ինտեգրման կարիք ունենք:
- Հայաստանի համար հակամարտության խաղաղ կարգավորման ամենաձեռնտուն այն է, որ սահմանը կբացվի Թուրքիայի հետ:
- Լեռնային Ղարաբաղը հարուստ բնական ռեսուրսներ ունի, որոնք օգտագործվում են հայերի կողմից:

- Եթե Լեռնային Ղարաբաղը հետ վերադարձվի՝ գործազրկության հիմնախնդիրը կնվազի: Ադրբեջանը տնտեսական առաջընթաց և զարգացում կապրի:
- Սակայն դա նորից կարող է հանգեցնել հակամարտության:
- Բաքվի պետական համալսարանում կբացի հայոց լեզվի ամբիոն:
- Մենք հզոր տնտեսական աճ ենք գրանցել:
- Դժվար է լուծում գտնել տնտեսական դիրքի հիման վրա:
- Հայաստանի տնտեսությունը հետ է մնացել:
- Եթե Ղարաբաղը մնա Ադրբեջանի կազմում՝ երկրում սոցիալական և տնտեսական կյանքը կարող է վերածնունդ ապրել:
- Սոցիալական անարդարությունը դժվարություններ է ստեղծում հակամարտության կարգավորման գործում:
- Եվս մեկ այլընտրանք. տնտեսապես զարգանալու համար, անհրաժեշտ է ուժեղացնել ժողովրդավարությունը և դառնալ ուժեղ պետություն:
- Յուրաքանչյուր պետության զարգացումը կախված է իր տնտեսությունից:
- Օրինակ՝ հակամարտության խաղաղ կարգավորումը պայմաններ է ստեղծում Ադրբեջանի տնտեսական զարգացման և ռազմավարական նախագծերի իրականացման համար:
- Սակայն այլ միջոցներով առկա իրավիճակը Ադրբեջանին թույլ չի տալիս օգտագործել իր ողջ ներուժը:
- Ադրբեջանը չի մասնակցում միայն այն նախագծերում, որոնցում Ադրբեջանն է մասնակցում, մինչդեռ Իրանի, Վրաստանի և Ռուսաստանի մասնակցությամբ ծրագրերի մեծ մասում Հայաստանը մասնակցում է որպես տարանցիկ երկիր:
- Հայաստանը հետ է մնում տարածաշրջանային նախագծերից, օրինակ՝ Իրանի հետ նախագծերից:
- Հաղորդակցությունը չպետք է վերականգնվի, քանի դեռ տարածքները հետ չեն վերցվել:
- Բոլոր միջազգային նախագծերից դուրս մնալը Հայաստանի մեղքն է և ընդհանուր առմամբ սա լավ իրավիճակ չէ տարածաշրջանի համար:
- Հենց որ հակամարտությունը կարգավորվի և տարածքային ամբողջականությունը վերականգնվի, Ադրբեջանի և Հայաստանի միջև հաղորդակցությունը կարող է վերահաստատվել:
- Եթե խաղաղ կարգավորվի, ապա Հայաստանի և Թուրքիայի, Հայաստանի և Ադրբեջանի սահմանները կբացվեն:
- Կարծում եմ, որ Հայաստանը որևէ տարածաշրջանային նախագծերից հետ չի մնում:
- Նրանք Իրանի հետ ծրագիր են իրականացնում:
- Եթե ներկայից հակամարտությունը չլիներ, նախագծերի մեծամասնությունը Հայաստանի հետ չէին լինի:
- Եթե Հայաստանը չի համաձայնվում լուծել խնդիրը կառուցողական ճանապարհով, ապա մենք Թուրքիայի հետ միասին պետք է ամրապնդենք նրանց շրջափակումը: Միայն խնդրի լուծման պարագայում է հնարավոր Ադրբեջան-Հայաստան և Հայաստան-Թուրքիա սահմանների բացումը:

- Տնտեսական հարաբերությունները խթանում են տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացները:
- Նավթի արդյունաբերության համաձայնագրերը մեծ շահույթ են բերում Ադրբեջանին
- Հնարավոր է, որ իրադրությունը շուտով փոխվի և Հայաստանը միանա ծրագրին
- Վերջերս Հայաստանում ասեկոսեներ էին պտտվում, իբրև թե խաղաղ կարգավորում հնարավոր չէ Ռուսաստանից իրենց եկող տնտեսական աջակցության պատճառով, որի արդյունքում իրենք կարող են չընդունել տնտեսական համագործակցության մեր առաջարկը :
- Բայց մենք համաձայն ենք, որ տնտեսական ներուժը բավարար չափով չի օգտագործվում:
- Հայաստանը նախագծերից հետ է ընկնում :
- Ադրբեջանական սփյուռքը թույլ է:
- Մեր սփյուռքը թույլ է:
- Մեր ներկայիս ներուժը և ուժը մեզ հնարավորություն կտա այսօր հաղթող լինել:
- Նախևառաջ մենք պետք է հայրենասեր լինենք:
- Այսօր Ադրբեջանի տնտեսական դիրքը շատ լավ է, և մեր ուժը մեր նավթարդյունաբերության մեջ է, սակայն այն անսահմանափակ ռեսուրս չէ:
- Այդ իսկ պատճառով մենք պետք է լուծենք այս հարցը՝ մինչ մեր նավթային ռեսուրսները կսպառվեն:
- Սակայն հենց որ Ադրբեջանում սպառվեն նավթային ռեսուրսները, մենք կհամաձայնենք անգամ ամենավատ սցենարին:
- Հիմա Ադրբեջանը զարգացել է և այս տարբերակն ընդունելի չէ մեր համար:
- Ադրբեջանը զարգանում է տարածաշրջանում:
- Մենք ճշգրտորեն տեղեկացված չենք Հայաստանի ներուժի մասին:
- Հայաստանը չի կարող օգտագործել Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը:
- Ադրբեջանը բավարար բնական ռեսուրսներ ունի, որոնք պետք է օգտագործվեն բանակցությունների ընթացքում:

Ապառազմականացում

Հայեր

- ԼՂ-ն եւ հարակից տարածքները ապառազմականացնել՝ նշանակում է հանձնվել:
- Հայկական ռազմական ուժերը պետք է մնան, չպետք է ապառազմականացվի:
- Ապառազմականացումը նույնպես մեծ վտանգ է ներկայացնում:
- Չորրորդն ամենավտանգավոր տարբերակն է:
- Ապառազմականացման փաստը ընդհանրապես պետք է հանել, մենք պետք ա միշտ, ինչպես ասում է ռուսը, «նա չեկու» լինել:
- Ամենավատ կետը ապառազմականացումն է:
- Ապառազմանակականացում չի կարելի:
- ԼՂՀ-ն ու հարակից շրջանները ապառազմականացնելը նշանակում է նոր ջարդ՝ 1915 թվի պես: Միջազգային իրավունքին ու ուժերին ես չեմ հավատում:
- Ապառազմականացված տարածքները երաշխիք չեն, որ Ադրբեջանը չի հարձակվի
- Ապառազմականացումը նշանակում է մեր ձեռքերը կապենք ու գնանք ասենք մեզ կոտորեք:
- Ղարաբաղում զինաթափում չի կարող լինել, մեր զորքերը չեն կարող այնտեղից դուրս գալ:
- Իաաաաա՛, ո՞նց թե ապառազմականացնում ենք...
- Եթե պիտի ապառազականացնեինք, ինչի՞ ենք էլ կռիվ տվել:
- Չի կարելի համաձայնվել շրջակա տարածքները ապառազմականացնել, քանի որ դրանից հետո մեզ ոչխարի հոտի պես կկոտորեն:
- Ապառազմականացո՞ւմ, խելքներս հացի հե՞տ ենք կերել...
- Ապառազմականացման հարցը ամենասարսափելին է. անվտանգությունը կորցնում ենք:
- Մենք առանց բանակի չենք կարող մեզ պահել: Պատմությունը անընդհատ ցույց է տվել, որ առանց բանակի մեզ հոշոտել են: Հայը միշտ հզոր զորք է ունեցել:
- Թող լինի երրորդ սցենարը, բայց հինգերորդ սցենարով նախատեսված ապառազմականացումն ու Քելբաջարի, Լաչինի հարցը լինի, այ դա կլինի իդեալական սցենար:
- Պետք է անվտանգության գոտի ստեղծել այդ տարածքների անվտանգությունը ապահովելու համար: Ապառազմականացումը պարտադիր է:

Ադրբեջանցիներ

- Եթե զինված ուժեր են պահվում, նախկին դրությունը կկրկնվի:

- ԼՂ-ի սահմանները պետք է պաշտպանվեն Ադրբեջանի Հանրապետության սահմանապահ ուժերի կողմից:
- Զինված ուժերը պետք է տեղակայվեն ԼՂ-ում, ինչպես մյուս տարածքներում են:
- Ադրբեջանական զինված ուժերը պետք է պաշտպանեն և ապահովեն երկրի սահմանների անվտանգությունը, ինչպես նաև ամբողջ տարածքը՝ հենց որ տարածքային ամբողջականությունը վերականգնվի:
- Բոլոր զինված ուժերը պետք է հեռանան ԼՂ-ից, և այնտեղ պետք է տեղակայվեն ադրբեջանական ուժեր:
- Բոլոր օտար ուժերը պետք է հեռանան ԼՂ-ից, իսկ ադրբեջանական ուժերը պետք է այնտեղ տեղակայվեն:
- Միայն իրավիճակի կայունության երաշխիքներ ստանալուց հետո, երկու պետությունների զինված ուժերի ներկայացուցիչները հնարավորություն կունենան պաշտպանելու սահմանները:
- ԼՂ-ն պետք է մաքրվի զինված ուժերից:
- Ադրբեջանական բանակը պետք է պաշտպանի իր սահմանները:
- ԼՂ-ը և շրջապատող ամբողջ տարածքը պետք է ազատագրվի Հայաստանի բանակից:

Միջազգային խաղաղապահ ուժեր

Կողմ

Հայեր

- Խաղաղապահները պետք է ռուսազգի լինեն, նրանց կաշառելը դժվար է:
- Ես համաձայն եմ, որ արտասահմանն ունի ուժ՝ երաշխավորելու թույլերի անվտանգությունը:
- Խաղաղապահ ուժերը պետք են ժամանակ շահելու համար: Եթե այսպես մնա ու խաղաղապահներ գան՝ լավ է:
- Թող ԱՊՀ խաղաղապահներ գան:
- Ավելի լավ կլինի միջազգային խաղաղապահները արդեն հիմա գան, բայց շարունակվի ստատուս քվոյի տարբերակը:
- Կցանկանայինք, որ Ռուսաստանի խաղաղապահ ուժերը գային:
- Միջազգային խաղաղապահ ուժերը պետք է լինեն անկողմնակալ:
- Եթե խաղաղապահ ուժեր են գալու, թող միայն Ռուսաստանից գան: ՆԱՏՕ-ն թող չգա:
- Թող Շվեյցարիայից խաղաղապահներ գան: Կամ Չինաստանից: Նրանք հաստաք չեզոք կլինեն:
- Երևի թե Ռուսաստանը կարող է հանդես գալ որպես երրորդ երկիր, որ վերահսկի երաշխիքների կատարումը երկու երկրների կողմից:
- Կարելի է, թող խաղաղապահներ գան, բայց դրանց կազմում չպետք է լինեն թուրքեր:
- Խաղաղապահին համաձայն ենք, եթե ապառազմականացում չլինի:
- Խաղաղապահը կարող է լինել միայն այն պայմանով, որ մեր բանակն էլ կանգնած կլինի:
- Միայն ռուսները կարող են խաղաղապահ լինել:
- Եթե սահմանները բացվեն , անընդհատ բախումներ են լինելու: Այնպես որ, խաղաղարար ուժերի ներկայությունը պարտադիր է:

Ադրբեջանցիներ

- Ես կողմ եմ, որ այստեղ տեղակայվեն խաղաղապահ ուժեր:
- Վերոհիշյան կանոնները երաշխավորում են Ադրբեջանի և Հայաստանի, Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանների վերաբացումը:
- Խաղաղապահ ուժերը սովորաբար անկողմնակալ են:
- Խաղաղապահ ուժերը կտեղակայվեն տարածքում:
- Մենք պետք է այնպես աշխատենք, որ խաղաղապահ ուժերը մեր շահերը պաշտպանեն:
- Մենք համաձայն ենք խաղաղապահ ուժերի տեղակայման հետ:
- Սակայն խաղաղությունը կարգավորող երրորդ կողմ պետք է լինի:
- Խաղաղապահ ուժերը պետք է բաղկացած լինեն տարբեր ազգերից:

- Պատերազմն անհնարին կլինի օտար ուժերի ազդեցության ներքո:
- Քանի որ համաշխարհային տերությունները չափից շատ են ներդրել տարածաշրջանում:
- Եթե Ադրբեջանն ուզում է լուծում գտնել այս հարցին, ապա միջազգային խաղաղապահ ուժերի տեղակայումը պարտադիր է:
- Միջազգային խաղաղապահ ուժերը կարող են տեղակայվել Լեռնային Ղարաբաղում:
- Համաձայն սրա տարածաշրջանում պետք է տեղաբաշխվեն խաղաղապահ ուժեր:
- Անհնարին կլինի ադրբեջանական ոստիկանությունը պահել հայկական ոստիկանության հետ միասին:
- Մշտապես պետք է միջազգային վերահսկողություն իրականացվի:
- Մեզ համար ձեռնտու է Ղարաբաղում խաղաղապահ ուժերի տեղակայումը:
- Առաջին փուլում մենք պետք է հասնենք այն բանին, որ ադրբեջանական, հայկական, ռուսական և ֆրանսիական զինված ուժերի ներկայացուցիչները հեռանան Ղարաբաղից՝ հանձնելով այն խաղաղապահ ուժերին, ովքեր կապահովեն ԼՂ-ի անվտանգությունը:
- Հայկական բանակը պետք է ամբողջությամբ դուրս գա տարածքներից: Ինչպես նրանք կարող են խաղաղություն ապահովել, եթե բռնազավթել են մեր տարածքները: Միայն այլ խաղաղարար ուժեր պետք է տեղակայվեն այդ տարածքներում բարձր անհրաժեշտության դեպքում:
- Եթե հիմնախնդիրը լուծվի խաղաղության հաստատման ուղիով, ապա միջազգային խաղաղարար ուժեր կտեղակայվեն, սակայն այն պետք է որոշի յուրաքանչյուր կողմ ինքնուրույն, առանց միջնորդների:

ԴԵՄ

Հայեր

- Խաղաղապահ զորքերի տեղակայումն այնքան էլ ձեռնտու չի, քանի որ անորոշ ժամանակով են գալու, հետո էլ չգիտենք՝ նրանք օբյեկտիվ են թե ոչ:
- Մենք խաղաղապահների համաձայն չենք, մենք էլ լավ խաղաղապահ ենք:
- Ոչ մի երկրի խաղաղապահ չպիտի գա Ղարաբաղ ու հարակից շրջաններ, իրենք ոչ մի հարց միևնույն է չեն լուծում
- Այսօր միջազգային խաղաղապահները ոչ մի երկրում էլ խաղաղություն չեն կարողանում ապահովել:
- Մենք մեր սահմանները պահպանում ենք, մեզ խաղաղապահների կարիք չունենք, ոչ մի երաշխիք էլ չկա:
- Միջազգային խաղաղպահները ոչ մի բան չեն ապահովի:
- Կստացվի Կոսովոյի տարբերակը, խաղաղապահները չեն կարող հարց լուծել:
- Խաղաղարար ուժերի տեղակայումը, ինչպես փորձն է ցույց տալիս, բերում է տվյալ հարցի ձգձգմանը:

- Խաղաղապահ ուժերի տեղակայումը դա երրորդ ուժի անհարկի միջամտություն է:
- Մենք մեկ նալին ենք տալիս, մեկ մեխին... համ ասում ենք, մեր հույսը մենք ենք, համ էլ ասում ենք միջազգային խաղաղապահներ...
- Միջազգային ուժերի տեղակայումն էլ հարցի լուծում չէ, բացի այդ՝ ոչ ոք չի կարող երաշխավորել խաղաղությունը: Հիմա հրադադարի պայմանագիր կա, բայց ինչքան զոհեր են լինում, ուրեմն՝ անիմաստ ա խոսել, թե՝ պայմանագիր էղավ, ուրեմն միշտ խաղաղություն կլինի:
- Խաղաղապահը չի լուծելու ոչ մի հարց. մենք ենք լուծելու:
- Իրաքում և Կոսովոյում էլ խաղաղապահ ուժեր գործել են, բայց ինչ արդյունք է տվել, այնպես որ խաղաղապահ ուժերով թող մեր աչքին թոզ չփչեն.. մեր միակ պաշտպանը հայկական բանակն է
- Մենք մեր բանակին վստահում ենք, ի՞նչ խաղաղապահ ուժերի մասին է խոսքը:
- Խաղաղապահները վստահելի չեն, ոչ մի դեպքում, փորձն է ցույց տվել:
- Խաղաղապահ զորքերի մուտք նշանակում է պատերազմի վտանգի մեծացում, նախևառաջ հենց մեր՝ սյունեցիների համար:
- Օտար ուժի ներկայությունը միայն երկու կողմերի համար կաշառվ վերցնելու ծախսերն է մեծացնելու:
- Տարածաշրջանում խաղաղապահ զորքերի մտցնումը անարդյունավետ է, քանի որ այդ ուժերը կարող են կիրառվել Հայաստանի դեմ:
- Խաղաղապահները երբեք հարցի լուծում չեն եղել: Տեսանք ինչ արեցին այլ տարածքներում:
- Խաղաղապահ ուժերի ներկայությունը Կոսովոյում, Հարավսլավիայում... որևէ խաղաղություն կարողացե՞լ են ապահովել
- Ես դեմ եմ, որ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը լինեն այս տարածքում, քանի որ ինձ թվում է, թուրքական զորք կգա, ինչը մեզ ձեռք չի տալիս:
- Իսկ ով է ասում, որ խաղաղապահ ուժերը ինչ-որ էական դիրք կունենան, եկեք հիշենք Բոսնիան:
- Խաղաղապահ զորքերը անվստահելի են: Վաղը մեկ միլիոն կվճարեն նրանց, նրանք աչքերը կպակեն, իսկ այդ ընթացքում Ղարաբաղի գյուղերը կթալանվեն, ժողովուրդն էլ սրի կքաշվի:
- Խաղաղապահները Կոսովոյի պես կլինեն: Ու նրանք էլ հավերժ չեն երաշխավորի:
- Միջազգային խաղաղապահները միայն ավելորդ լարվածություն կմտցնեն՝ լավագույն օրինակը Իրաքն է:
- Մենք էդ խաղաղապահներին լավ ենք ճանաչում... տասնհինգին էլ ռուս խաղաղապահ կար, տեսա՞ք ինչ եղավ:
- Խաղաղապահ զորքերի վրա էլ հույս դնել չի կարելի, մենք մեր հույսը պետք է մեզ վրա դնենք: Պատմությունն է ցույց տվել:
- Խաղաղապահ ուժերը փուչ բան են, հիմա աշխարհի բոլոր հակամարտություններում էլ խաղաղապահներ կան, բայց այդ բոլոր տեղերում էլ շարունակում են մահանալ խաղաղ բնակիչներ

- Խաղաղություն պահողը բանակն է, Արցախն առանց բանակի չի կարող գոյատեւել:
- Միջազգային խաղաղապահներ տեղադրելու իմաստ չունի, որովհետեւ պատերազմ սկսվելու դեպքում իրենք ոչինչ չեն անի:
- Միջազգային խաղաղապահները ի վիճակի չեն պաշտպանել բնակչությանը: Ռուս խաղաղապահները Աբխազիայում էին, սակայն չկարողացան անմիջապես ապահովել անվտանգությունը:
- Նայենք ինչ են անում խաղաղապահները Աֆղանստանում, Իրաքում: Աստված մեզ հեռու պահի:
- Խաղաղապահ ուժերը նշանակում են ՆԱՏՕ-ի ուժեր, իսկ դրան Իրանն էլ դեմ կլինի:
- Մեր հողն է, մենք պետք է պահենք, ի՞նչ խաղաղապահներ:
- Բա որ խաղաղապահներն էլ չեզոք չլինե՞ն: Ռուս խաղաղապահները Օսեթիայում հո չեզո՞ք չէին:
- Մենք ինքներս պետք է պահպանենք մեր սահմանները: Ոչ մի խաղաղապահի էլ չենք վստահում:
- Միջազգային ուժերին չեմ վստահում: Միայն մեր ուժերին եմ վստահում:
- Չի կարելի թույլ տալ որ միջազգային խաղաղապահներ գան, նրանք հարցի լուծում չեն, նրանք հիմնական նպատակը հիմնականում թալան է:
- Միջազգային խաղաղապահների համուհոտն արդեն զգացել ենք. սովետական բանակն ի՞նչ տվեց:
- Թուրքը կաշառման լավ մասնագետ է, դրա ձեռքը խաղաղապահ չի մնա:
- Խաղաղապահն էլ ա մարդ, թուլություն ունի... Էնպես որ, մերոնք մեզ ավելի լավ կպաշտպանեն:
- Հայաստանն էլ, Ղարաբաղն էլ խաղաղապահ ուժերի առկայության դեպքում կհայտնվի օղակման ու շրջափակման մեջ:
- Ռուսների շնորհքը տեսել ենք նախկինում: Տարբերություն չկա, թե ովքեր են խաղաղապահ ուժերը՝ ռուսները, թե թուրքերը:
- Մեր բանակը լավ էլ ամեն ինչ ապահովում ա, էլ ի՞նչ խաղաղապահ: Նաղդը թողնենք, ընկնե՞նք նիսյայի հետևից:
- Թուրքը խաղաղապահի գլխարկ կհագնի, կգա ներսից կմորթի... չե՛նք ուզում:
- Մենք միջազգային խաղաղապահների կարիք չունենք, չենք ուզում, որ խաղաղապահ բանակն ա իրա ծառայությունը նենց կատարել, որ մարդ չզոհվի, մեր դեպքում էլ ա նույնը լինելու
- Հարավային Օսիայում էլ խաղաղապահներ կային՝ քի՞չ մարդ կոտորեցին: Ես ինքս խաղաղապահ եմ, ինչ է, ուրիշի հողի համար այնպես կկռվեմ, ինչպես ի՞մ հողի:
- Վտանգի դեպքում առաջինը հենց խաղաղապահն ա փախչելու:
- Եթե վաղը խաղաղապահ ուժերը գան այս տարածք, նորից ճնշելու են մեզ՝ հայերիս:
- Իսկ ի՞նչ, սովետական զորք չկա՞ր, որ իրենք մեզ կոտորեցին: Նույնն էլ խաղաղապահներն են լինելու:
- Իրենք խաղաղապահներին էլ կառնեն:

- Բայց այն ժամանակ էլ է եղել նման մի բան, ռուսական զորքերը խաղաղապահի դերում էին, բայց ի՞նչ ստացվեց: Մյուսներին էլ չենք հավատում:
- Չորրորդ սցենարը լրիվ 21 թվականի կրկնությունն է. էն ժամանակ էլ ռուսն էկավ, հետո տեսանք չէ՞ ինչ եղավ...
- Խաղաղապահ զորքերին հավատում ենք ոչ ավել, քան ադրբեջանցուն:
- Ռուսը ժամանակին կաշառվում էր, ու «արյունալի խաղաղապահություն անում»... ոչ մի ազգի արյուն ավելի կարմիր չի... մենք մեզ կպահենք...
- Խաղաղապահ ուժերի տեղակայման վտանգը նաև այն է, որ Ադրբեջանը ցանկացած երկրի հետ կարողանում է լեզու գտնել ու օգտագործել նրանց:
- Ի՞նչ խաղաղապահ, հայերենով ասա «վարձկան»:
- Միշտ էլ խաղաղապահները այս կամ այն կողմի համար են կռվել, ոչ մի ուրիշ զինվոր մեր հողերի համար արյուն չի թափի:
- Մենք շատ ենք կարում մեր բանակը պահենք, որ մի հատ էլ մեր հաշվին միջազգային խաղաղապահ կերակրե՞նք:
- Խաղաղապահ կոչված ուժերն ավելի ապակայունացնում են վիճակը, էդ էլ ենք տեսել:
- Միջազգային խաղապահները երբեք էլ օբյեկտիվ ու չեզոք չեն, համոզված եմ, որ դրանց շատ ֆունկցիաներ ավելի լավ կիրագործեն մեր տղաները մեր բանակում:
- Ասում եմ Ձեզ, միջազգային խաղաղապահ ուժերը Ադրբեջանի նախագծած ու մտածած սցենարն է:
- Ասում են՝ միջազգային խաղաղապահներ կգան. ինչի՞ են գալիս, որ մեզ պաշտպանե՞ն, տենց բան չկա՛, կոտորողը կկոտորի՛ ու ոչ մի խաղաղապահի չի՛ նայի, մեզ մենակ մեր բանակը կփրկի:
- Ոչ մի բան էլ չենք թողնելու՝ ոչ հող ենք տալու, ոչ էլ ադրբեջանցի ենք թողնելու ներս մտնեն մեր հող...Խաղաղապահներից էլ ենք կուշտ ու գոհ...
- Մեր անվտանգության միակ երաշխիքը մեր բանակն է. ոչ մի խաղաղապահ, ոչ մի երաշխիք չի կարող մեզ անվտանգություն ապահովել:
- Ամեն ազգ իր սահմանը պիտի պահպանի, խաղաղապահ զորքերի վրա հույս դնել չի կարելի:
- Հիմա խաղաղապահ զորքերին այլ կերպ էլ են ասում՝ սադրիչներ...
- Չէ՛, ադրբեջանցի փախստականը կգա Շուշի ու Ստեփանակերտ, իսկ խաղաղապահ զորքերն այլ տեղ են. ի՞նչ են անելու, երբ երկրի ներսում հայն ու ադրբեջանցին էլի իրար միս կերան:

Ադրբեջանցիներ

- Միջազգային կազմակերպությունները վախենում են, որ ի վիճակի չեն լինի անվտանգություն ապահովել
- Ոչ մի խաղապահ իր առաքելությունը չի կատարել
- Այստեղ հիմանական խնդիրն է պարզել, թե այս խաղաղապահ ուժերը որ երկրներից են

- Աֆղանստանում սարսափելի բաներ են տեղի ունենում խաղաղապահ ուժերի կողմից
- Միջազգային խաղաղապահ ուժերը այնքան էլ չեն կարող օգնել:
- Շատ աշխատանք կարող է կատարվել միջազգային խաղաղապահ ուժերի վերահսկողության ներքո:
- Ռազմական համագործակցությունն ընդունելի չէ:
- Եթե այստեղ տեղակայվեն խաղաղապահ ուժերը, ապա դա աջակցություն կլինի հայերին:
- Եթե միջազգային խաղաղապահ ուժերը ներկայացնեն Ռուսաստանը կամ Ֆրանսիան, մեզ համար դա ձեռնտու չի լինի:
- Եթե ռուս զինվորները ժամանեն ՄԱԿ-ի վերահսկողության ներքո, դա ևս մեզ համար ձեռնտու չի լինի:
- Կարիք չկա Ղարաբաղում միջազգային խաղաղապահներ տեղակայել:
- Խաղաղապահ ուժերի կարիքը չկա, մենք ինքներս էլ ի վիճակի ենք այն կարգավորել:
- Սահմաններին խաղաղապահների կարիք չկա:

Այլ կարծիքներ

Հայեր

- Խաղաղապահ զորքերին ուղարկողները մեծ տերություններն են, որոնք եթե ուզեին արդեն հարցը վաղուց լուծած կլինեին:
- Գուցե ռազմական գործողությունների դեպքում խաղաղարար ուժերի կարիք լինի, բայց հիմա կռիվ չկա՝ նրանք ո՞ւմ են պետք: Երկու կողմերի զինված ուժերը լավ էլ պահպանում են խաղաղությունը:
- Այնքան էական չի, թե միջազգային որ խաղաղապահներն են, եթե իրենց դերում են՝ դա դրական է, սակայն հարցն այն է, որ ոչ թե ԼՂ հարակից հողերը հանձնվեն Ադրբեջանին, այլ հենց այդ տարածքում տեղակայվեն խաղաղապահները: Իսկ Նախիջեւանի միջանցքի մասով, որը Ադրբեջանի կողմից միշտ է շահարկվել, սա մեզ համար ընդունելի չէ:
- Խաղաղապահ ուժերի փոխարեն, թող լինեն ոստիկանական ուժեր, ասենք ՄԱԿ-ի կամ Եվրոխորհրդի, նրանց ֆունկցիաները խիստ տարբեր են
- Եթե միայն պայմանագրային երաշխիքներ են տալիս, դրանք չեն գործելու: Իսկ խաղաղապահներին պետք է տեղակայել հարակից տարածքում, այլ ոչ թե հարակից տարածքը հանձնել. հանձնումը բացառվում է: Արցախն էլ պետք է պահպանի իր բանակը՝ միանշանակորեն:
- Կարծում եմ վատ չէ, եթե խաղաղապահ ուժերը տեղակայվեն ԼՂ-ում , բայց վստահ չենք, որ մեր անվտանգությունը լավ կապահովեն:
- Իրենք ձգտում են մահմեդական աշխարհից բերել խաղաղապահները:
- Մենք փորձ չունենք, օրինակ, ՆԱՏՕ-ի զորքերի հետ, ի՞նչ իմանաս ինչ կլինի, ռուսի հետ ունենք փորձ՝ քիչ թե շատ վստահելի:
- Խաղաղապահները հո հավերժ չե՞ն կարող մնալ: Հենց հեռանան, նույն իրավիճակը կվերականգնվի:

- Ինչ-որ փուլում խաղաղապահների անհրաժեշտություն կլինի, բայց այս պահին նման անհրաժեշտություն չկա:
- Լա՛վ, խաղաղապահ ուժերը որտե՞ղ են տեղակայելու, ասենք թե հայն ու ադրբեջանցին Շուշիում ապրում են միասին...

Ադրբեջանցիներ

- Դա ցույց է տվել խաղաղապահ ուժերի գործունեության շրջանը:
- Միջազգային խաղաղապահ ուժերի՝ տարածաշրջան ժամանումը կնշանակի հակամարտության մեջ միջազգային խաղաղապահների միջամտություն:
- Օտար պետությունների ռազմական ուժերը չպետք է տեղակայվեն Ադրբեջանի Հանրապետության տարածքում, և հետևաբար հայ զինվորներն ադրբեջանցիների հետ մեկ տեղ չեն կարող անվտանգությունն ապահովել:
- Միայն երկու պետությունների միջև հակամարտության կարգավորումից հետո կարող են միջամտել այլ պետությունները:
- Քանի որ չկա որևէ միջազգային կազմակերպություն, որը կարող է երաշխավորել, որ հենց որ մարդիկ վերադառնան՝ նրանց անվտանգությունը երաշխավորված կլինի և նրանք կլինեն պաշտպանված:
- Միջազգային ուժերի կարծիքները կարող են տարբեր լինել. Ով պետք է նրանց միանա, մենք տեսել ենք նրանց այս ողջ ընթացքում:

Ցամաքային հաղորդակցություն

Կողմ

Հայեր

- Սուվերեն միջանցքը վախենալու բան չէ՝ կարող են ինչ-ինչ միջազգային կառույցներ ապահովել այդ միջանցքի նորմալ գործունեությունը:
- Եթե երաշխիքներ լինեն, կարելի է միջանք տրամադրել Նախիջևանով, ինչու՞ չէ:
- Նախիջևանի հետ տանք ցամաքային կապը, մենակ թե հարցը լուծենք մեկընդմիշտ:
- Թող այդ սուվերեն տարածքի համար փող տան ամեն մի կմ համար ու գնան գան, գնան գան:
- Եթե սուվերեն միջանցք ասելով հասկանում ենք ընդամեը վերահսկվող միջանցք, ապա այս սցենարին կողմ ենք:
- Երրորդ սցենարն աշխատող սցենար է, եթե միջազգայնորեն ապահովվի միջանցքի վերահսկողությունը:
- Ավելի լավ ա Մեղրիից մի չեզոք միջանցք տալ, քան թե թողնել ադրբեջանցին հետ գա:
- Սա նախընտրելի տարբերակ է, իսկ միջանցքի հարցն էլ սենց լուծենք. իրենք բացեն մերը, մենք էլ ապահովենք իրենցը:
- Որպես զիջում կարող ենք ընդունել, որ ապահովվի Նախիջեւանի հետ երկաթուղու աշխատանքը:
- Մենք անպայման նաև իրենց պետք է ճանապարհներ տրամադրենք Նախիջևանի հետ կապ ունենալու համար:

Ադրբեջանցիներ

- Հնարավոր չէ ամեն ինչ ինքնաթիռով տեղափոխել, այդ պատճառով պետք է ստեղծել Նախիջևանի հետ կապող ցամաքային ճանապարհ
- Եթե հայերը ցանկանում են ապրել Ադրբեջանում, ապա հայերը ադրբեջանցիներին պետք է տեղ տան
- Ադրբեջանի և Նախիջևանի միջև կապ հաստատելու համար մենք ձեռքն են բերում «միջանցքը»:
- Եթե ամեն ինչ խաղաղ ճանապարհով կարգավորվի, ապա հնարավոր կլինի դեպի Նախիջևան միջանցք կառուցել:
- Նախիջևանը պետք է դառնա միջանցք:
- Միջանցքի հետ վերադարձն ընթացքի մեջ է՝ Հայաստանի և Նախիջևանի միջև հարաբերությունները վերականգնելու նպատակով:
- Ճանապարհը դեպի Նախիջևան պետք է բացի Մեղրիի տարածքով:

- Եթե մենք ԼՂ-ից Հայաստանին միջանցք ենք հատկացնում, ապա Հայաստան ևս Ադրբեջանին Նախիջևանի հետ կապող միջանցք պետք է տրամադրի:
- Տարանցիկ ուղիներից օգտվելու համար Հայաստանը կարող է որոշ զիջումների գնալ:
- Մեղրիի շրջանում պետք է միջանցք լինի:

Դեմ

Հայեր

- Չի կարելի Ադրբեջանին տալ միջանցք: Մինը տանք, տասը կուզի:
- Հայաստանի տարածքում միջանցքն անընդունելի է, մենք չենք վստահում ազերիներին: Ավելի լավ է սահմանամերձ գոտում ինչ-որ տարածք զիջել:
- Մեղրին տանք, Ղարաբաղը ետ բերենք, հետո էլ սկսենք Մեղրիի համար կռիվ անել. այս սցենարը սրան է հանգեցնում:
- Ոչ մի միջանցք Ադրբեջանին, մենք մեր հողերը վերցնում ենք:
- Մեղրիով միջանցք տալն էլ, հարակից շրջաններ զիջելն էլ հավասարապես անընդունելի են:
- Եթե Մեղրիով անցուդարձ լինի, մենք կկորցնենք կապը Պարսկաստանի հետ: Իսկ էս սահմանը շատ կարևոր է Հայաստանի համար:
- Ադրբեջանին մեր տարածքում միջանցք տալը շատ վտանգավոր է, ավելի լավ է Ղարաբաղը անկլավ լինի, քան Հայաստանը «անկլավ» դառնա թուրքական պետությունների միջև:
- Եթե Մեղրին տանք, Հայաստան-Իրան սահմանը մեզ համար փակվում է:
- Երրորդ. Նորմալ մարդու պես մտածենք, ի՞նչ տարածք Հայաստանի տարածքից՝ Ադրբեջանի հաղորդակցման համար: Մենք Զանգեզուր չենք հանձնում, Հայաստանը չենք կիսում:
- Նախ ասեմ բացասականի մասին. ստանում ենք Արցախը, կորցնում ենք Զանգեզուրը: Սուվերեն միջանցքի փոխարեն առաջարկում ենք վերաբացել ճանապարհը, այլ ոչ թե նոր ճանապարհ բացենք:
- Միջանցք տալն անիմաստ է, ճիշտ չէ:
- Սուվերեն տարածքի հարցը չափազանց վտանգավոր է... հարցեր են բացվում, բնակեցնել, վերահսկել..
- Ամբողջությամբ ընդունելի չէ:
- Մեղրիի տարբերակն ավելի վտանգավոր է, քան ստատուս քվոն...
- Այս միջանցքները համարժեք չեն, ոչինչ չենք փոխզիջելու:
- Մեղրիով ճանապարհ տալը շատ վտանգավոր լուծում է մեզ համար:
- Երրորդ սցենարում ամենաանընդունելին միջանցքի հարցն է, շատ գոհ ենք Նախիջևանը իրենցն է, մի հատ էլ միջանցք տանք՞
- Մենք վերցնելու բան ունենք, տալու բան չունենք: Դա էր պակասում, որ Հայաստանի տարածքով դրանց ճանապարհ տանք:
- Հարցնում եք, պատասխանում եմ... Ոչ մի սուվերեն տարածք... վե՛րջ:

- Այ տա, սրանց չե՞ս տեսնում. սենց մի ստից ստատուսի համար, մեզանից էս ինչեր են ուզում....
- Փոխզիջման տարբերակը չի աշխատի....Միջանցքները պետք է մնան
- Եթե Ադրբեջանին Ղարաբաղ-Նախիջեւան ճանապարհ տանք, հետո նրանք Զանգեզուրը իրենց կվերցնեն, կլցնեն ադրբեջանցիներով:
- Եթե Մեղրիում միջանցք տանք Ադրբեջանին, դա մեզ համար շատ բացասական անդրադարձ կունենա:
- Մեղրիի միջանցքը եթե տանք Ադրբեջանին, կկորցնենք կապը Իրանի հետ ու Հայաստանում տնտեսական ճգնաժամ կսկսվի:
- Երրորդ սցենարը ադրբեջանցիներին ձեռնտու կլինի, չէ՞ որ ե՛ւ սուվերեն միջանցք կստանան, ե՛ւ հարակից տարածքները: Իսկ Ղարաբաղը, բացի անկախությունից, ուրիշ օգուտ չի ստանա:
- Ղարաբաղը այսպես թե այնպես մերն է, ինչու՞ զիջենք էլի մի տարածք՝ Մեղրին:
- Ես Մեղրիի միջանցքը տալու տակ ոչ մի լավ բան չեմ տեսնում:
- Նորից պիտի փորձի մխրճվել Հայաստանի միջով Նախիջեւանին կապվելու համար: Էլ չասեմ, որ դա մեր հայկական հողն է:
- Միջանցք տալը անընդունելի է, հենա թող Իրանի տարածքը օգտագործի:
- Ոչ մի սուվերեն միջանցք... մենք շատ հող ունե՞նք, որ մի հատ էլ միջանցք տանք:
- Եթե մենք միջանցք տրամադրենք թուրքերին դեպի Նախիջևան, ապա դրանով խաչ կքաշենք Նախիջևանի հարց ապագայում բարձրացնելու հնարավորության վրա: Իսկ մենք այդ հնարավորությունը ունենալու ենք, երբ թուրքերը ճանաչեն Ցեղասպանությունը:
- Երրորդ- Մեղրին մեր կյանքի ճանապարհն է:
- Պարսկաստանից ունեինք որոշակի հույս, դրա ճանապարհն էլ կփակվի այսպես:
- Եթե մենք կորցնում ենք Իրանի հետ սահմանը, դրա մասին նույնիսկ մտածել էլ պետք չէ:
- Ադրբեջանն ունի Նախիջեւան, որն ունի նույն կարգավիճակը, ինչ Ղարաբաղը մեզ համար: Ուրեմն՝ ինչու ենք մեր պլյուսից հրաժարվում իրենց օգտին:
- Ասվում է միջանցք, սակայն Մեղրին դառնում է Ադրբեջանի սուվերեն տարածքը: Պրակտիկորեն կորցնում ենք Իրանի հետ սահմանը, դա ընդունելի չէ:
- Մեր տարածքով ճանապարհ տնօրինելու իրավունք ենք տալիս՝ դրա լավը ո՞րն է:
- Եթե Մեղրին տանք, կկտրվենք Պարսկաստանից, դրանից բացի Ադրբեջանը կունենա Հայաստան մտնելու դարպաս պատերազմի սկսման դեպքում:
- Մենք Ադրբեջանին ոչ մի միջանցք էլ չպիտի տանք, շատ բան են միանգամից ուզում, համ հողերը համ միջանցք, տենց ոնց կլինի:
- Ինչ Մեղրի, ինչ բան... բա ձեզ Բաթումի պայմանագիր եմ հիշեցնում, սրանց ախորժակին ծանոթ չե՞ք:

- Ինչ սուվերեն միջանցք, մենք ոնց ա, որ միջանցք չունեինք յոլա գնացինք չէ, թող իրանք էլ յոլա գնան:
- Նախիջևան ո՞ւմ մոտ են գնալու. իրենց Նախիջևան գնալ պետք չի էլ, որ միջանցք տանք:
- Ադե, ցավդ տանեմ, չեղավ էլի, ի՞նչ ես համը հանում. երրոդ սցենարը բանի պետք չի, եթե մենք Մեղրի ենք տալիս:
- Մեղրին տալ ոչ մի պայմանով չի կարելի:
- Եթե միջանցքը լինի, ադրբեջանցիները մեծացնելու են լարվածությունը, վիճակը ավելի է վատանալու:
- Եթե կայուն վիճակ ստեղծվի ու լուծումը լինի ի օգուտ մեզ, կարելի է շրջանները աստիճանաբար զիջել, բայց միջանցքների փոխանակման մասին խոսք չի կարող գնալ:
- Նախիջեւանի հետ կապ ունենալու միջանցքը աբսուրդային է հնչում:
- Եթե Ադրբեջանին միջանցք տանք, կռիվներ կսկսվեն, վերջում էլ Մեղրին կվերցնեն:
- Մեղրու միջանցքի տարբերակն ուղղակի աչքակապություն է:
- Բացառվում է Մեղրիով միջանցքը. այսօր դա կզիջենք, հետո էլ ուրիշ տարածք կզիջենք:
- Միջանցք չի կարելի տալ նույնիսկ ԼՂՀ անկախության դիմաց:
- Ինչու՞ տամ: Իմն է:
- Մեղրիի միջանցք տալով մենք ավելի ենք կտրվում մնացած աշխարհից, բացի այդ Թուրքիան ու Ադրբեջանն իրար անմիջականորեն կապվում են, ինչը մեզ բացարձակապես ձեռնտու չէ:
- Եթե մենք Ադրբեջանին մեր տարածքում միջանցք տանք, կկտրվենք մեր ամենաբարիդրացիական հարևանի՝ Իրանի հետ կապից, նման կետը հասկանելի է, որ ընդունելի բան չի:
- Մեղրիով միջանցք տալու կարիք չկա: Պարսկաստանով Նախիջևանի հետ կապ ունեն չէ՞, էդ բավարար է:
- Մենք Ադրեջանին ոչ մի միջանցք չպիտի տանք, Ռուսաստանը Կալինինգրադին ոչ մի ձևով կապված չի, բայց զարգանում է, իսկ մեզ համար Լաչինը անվտանգության համար է պետք:
- Ադրբեջանը Նախիջևանի հետ կապ չպիտի ունենա՝ առաջին հերթին, քանի որ նրանք կկապվեն Թուրքիայի հետ, որ մեզ համար ամենաանթույլատրելին է, ինչ ասես Թուրքիայից կբերեն Ադրբեջան:
- Երրորդ սցենարը շատ վտանգավոր ա Հայաստանի համար. Մեղրին տալով մենք կտրվում ենք Պարսկաստանից, Պարսից Ծոցից...
- Եղած-չեղածը մի ճանապարհ է, որ դա տանք՝ ինչպե՞ս հաղորդակցվենք:
- Մեղրիի միջանցքը չի կարելի տալ, դա մեր կապն է Իրանի հետ, այսօր ճանապարհը կվերցնեն, վաղը ճանապարհի կողքի հողերը, այնտեղ գյուղեր կսարքեն, կգան կլցվեն, սա շատ մեծ վտանգ է իր մեջ պարունակում:
- Մենք միջանցք արդեն ունենք, կարում են, թող իրենք էլ իրենց համար միջանց ստեղծեն, միայն ոչ մեր հաշվին:

- Եթե մենք միջանցք տանք, դա կնշանակի մենք Հայաստանից տարածք ենք տալիս ադրբեջանցիներին: Դա անհնար է, կդառնա անվերահսկելի տարածք ու մեզ անվտանգության երաշխիքներ չեն լինի: Շատ սխալ մոտեցում է:
- Մեղրիով տարածք տալու դեպքում Իրանի հետ էլ դժվարություններ կունենք, կստացվի մենք ուղիղ ճանապարհ ենք կորցնելու եւ դեռ հարեւանի դժգոհությունն ենք հարուցելու:
- Մեղրիի միջանցքով Ադրբեջանն առաջին հերթին կկապվի Թուրքիայի հետ, որն ավելի վտանգավոր է:
- Եթե միջանցքի հարցը դուրս գա, էլի համաձայն չենք երրորդ տարբերակին, մեր հողերը հետ չենք տալու:
- Թուրքը Մեղրիում ի՞նչ գործ ունի... դրա ոտը հայկական հող չի մտնելու...
- Սյունիքը շատ գրավիչ տարածք է ադրբեջանցիների համար:
- Մեղրիի տարածքներով մեր ճանապարհն է անցնում, ո՞նց կտանք: Նորից իրենք սեպ խրեն մեր մե՞ջ:
- Երևի թե շարիաթի օրենքներից է եղած տարածքը ընդարձակելը: Մեղրիով մի փոքր տարածք տալը կնշանակի ամբողջ Զանգեզուրը տալ:
- Նախիջևանի հետ կապը մեծ խնդիր է, նրանք թուրքերի հետ սերտ կապված են ու չի կարելի թույլ տալ որ Ադրբեջանն ամբողջությամբ հեշտորեն կապնվի Թուրքիային: Այս խնդիրը կա քսանական թվականներից, Նախիջևանը Ադրբեջանի մաս դառնալու հենց սկզբերից:
- Երրորդ սցենարի վտանգը մեզ Իրանից կտրելն է:
- Երրորդ սցենարով Ադրբեջանը միանգամից լուծում է ոչ միայն Ղարաբաղի, այլև Նախիջևանի հարցը, մենք հետո չենք կարողանա էլ որևէ իրավունք պահանջել Նախիջևանի նկատմամբ:
- Նախիջևանի միջանցքը մեր պարանոցը կջարդի:
- Նույնիսկ եթե բաց լինի սահմանը, չեմ կարծում որ որևէ մեկը ռիսկ կանի այդ ճանապարհով անցնել:
- Մեղրիի միջանցքը ավելի անընդունելի է, քան տարածքները
- Եթե հարցը խաղաղ լուծվում ա, ինչն ա խանգարում ադրբեջանցուն հանգիստ գնա Նախիջևան, առանց սուվերեն տարածք ունենալու...
- Հայաստանի ամբողջականության համար վտանգավոր սցենարը է երրորդը, նույնիսկ, եթե սուվերեն միջանցքն անցնում է հայ-իրանական սահմանին զուգահեռ:
- Երրորդ սցենարի դեպքում կապը կկտրվի Իրանի հետ, տնտեսապես շատ կտուժենք: Փոխզիջումներ ընդունելի են, բայց ոչ այսպիսիք:
- Երրորդ տարբերակի դեպքում մեղրեցիները կամ պետք ա սրի քաշվեն, կամ հարձակվեն Երևանի վրա:
- Սուվերեն միջանցքը կարող է խանգարել հայ-իրանական տնտեսական կապերին, իսկ Իրանը արտաքին աշխարհի հետ մեր ամենահուսալի կապն է:
- Մեղրին Հայաստանի ամենախաղաղ հատվածներից մեկն է, այնտեղով սուվերեն միջանցք անցկացնելը կարող է ապակայունացնել վիճակն այդ շրջանում

- Երրորդ սցենարն ընդունելի է վերապահումներով՝ սուվերեն տարածքի գաղափարը վանում է:
- Բա մինչեւ հիմա ո՞նց են Նախիջեւան գնում՝ օդային ճանապարհո՞վ: Դե թող այդպես էլ շարունակեն:

Ադրբեջանցիներ

- Հաղորդակցության գործում պետք չէ շտապել:
- Նախիջևանի վրայով Հայաստանի հետ հաղորդակցությունը ևս կարևոր չէ: Միջազգային ռազմական ուժերը կարող են տեղակայվել Ադրբեջանի և Հայաստանի սահմանի վրա՝ Հայաստանում ունենալով մշտական տեղակայում:

Այլ կարծիքներ

Հայեր

- Եթե հնարավոր լինի կառուցել Հայաստան-Ռուսաստան թունել, մենք էլ երբեք խնդիրներ չենք ունենա:
- Երրորդ սցենարն ընդունելի է, եթե Մեղրին լինի ոչ թե արբեջանական վերահսկողության տակ, այլ միջազգային...
- Նախիջևանի հետ կապ են ուզում, թողնենք Սյունիքի սահմանով համատեղ ճանապարհ սարքենք, դրանով էլ կապը կապահովի, դրան էլ գումարած համատեղ աշխատանքը երկու ժողովուրդներին կմտերմացնի:
- Նախիջևանը մենք պետք է վերցնենք Ադրբեջանից, ոչ թե մի հատ էլ միջանցք տանք, որ գնան-գան:
- Մենք պետք է Նախիջեւանն էլ ազատագրեինք, որ այսօր նման վիճակ չքննարկենք:
- Զանգեզուրը ու Ղարաբաղը անհամեմատելի են, չեն համարձակվի Մեղրի ուզեն:
- Լավ, եթե սուվերեն տարածք են ուզում, թող իրանք էլ մեզ իրանց հողատարածքում սուվերեն տարածք տան Ռուսաստանի հետ կապ հաստատելու:
- Այս սցենարը 1921 թվականին արհեստականորեն թշնամիների կողմից վերհանած հարցն է, ինչու չենք հիշում մեր ավելի վաղեմության սահմանները, երբ Մեղրին ու Արցախն էին միասնական հողատարածք:
- Եթե սուվերեն միջանցք տվեցինք, ոչ ոք չի գնա կռվի:
- Եթե անգամ սուվերեն տարածք տանք, էլի Ադրբեջանն անկախություն չի ճանաչի:
- Ռուսները դարասկզբին շատ մտածված ձևով Մեղրիով միջանցք չտվեցին՝ թույլ չտալով Թուրքիային ուղիղ գծով միանալ Ադրբեջանին:
- Դաստիարակենք, հետո կթողնենք մեր ճանապարհով անցնեն:
- Եթե մենք սուվերեն տարածք ենք տալիս, թող թուրքերն էլ մեզ Արևմտյան Հայաստանը որպես սուվերեն տարածք տան:

- Եթե Մեղրիով միջանցք տանք, Ադրբեջանն էլ պիտի մեզ ապահովի, որ դեպի Իրան ճանապարհը պետք է ազատ ու բաց լինի:
- Մեղրիի միջանցքն ամենաշատը ձեռնտու է Թուրքիային իր պանթուրքական նկրտումների աստիճանական իրագործման համար:
- Ղարաբաղի անկախանալը կամ Հայաստանի կազմի մեջ մտնելը Մեղրին տալու գնո՞վ. լա՜վ տարբերակ է...
- Մեղրիով սուվերեն տարածքի տրամադրումը հենց Ադրբեջանի երազանքն է, բայց մոռանում են, որ այս տարբերակով Թուրքիայի հետ կապ հաստատելուն նախ դեմ կլինեն հենց Իրանն ու Ռուսաստանը:
- Ադրբեջանին Նախիջևանի հետ կապ տալու փոխարեն պիտի մտածենք ոնց անենք Նախիջևանը հետ վերցնենք, դա մեր հողն ա ու մենք չենք մոռացել:
- Նախիջեւանը մեր հողն է, եկել են ու մեզանից ուզում են, որ Հայաստանից էլ ճանապարհ տանք, որ կապվե՞ն:
- Եթե Մեղրին տալիս ենք, նշանակում է պաշտոնապես հերքում ենք, որ Նախիջևանը հայկական հող է:
- Նախիջեւանի հետ կա՞պ: Բա դրա դիմաց ինչն է փոխզիջվում, դե որ էդպես է, թող մեզ էլ սուվերեն միջանցք տան Կասպից ծովի նավահանգիստներից մեկը:
- Հլը թուրքին հարցրեք Նախիջևանն իրե՞նցն է, որ մի հատ էլ Նախիջանի հետ ցամաքային կապ են ուզում:
- Ըստ էության Նախիջևանն էլ է մերը, ինչ միջանցքի մասին է խոսքը:
- Ներքին կարգով հիմա էլ ադրբեջանցիները օգտագործում են Մեղրին:
- Սուվերենի փոխարեն պետք է երաշխավորված միջանցք լինի:

Ադրբեջանցիներ

- Նրանք կարծում են, որ եթե Նախիջևանը կարող է առանձին լինել, ապա Ղարաբաղը ևս կարող է առանձին լինել:
- Ադրբեջանի և Նախիջևանի միջև հաղորդակցության կապերը Հայաստանում նորացվել են:
- Դեպի Նախիջևան մուտքի բացումը երկու կողմերի համար էլ ձեռնտու չէ:
- Մենք Նախիջևանի հետ ցամաքային կապի կարիք ունենք, սակայն այն չպետք է ապահովվի այլ տարածքների կորստյան գնով: Մենք կարող ենք մեկնել Նախիջևան Իրանի տարածքով:
- Նախիջևանը պետք է կապվի Ադրբեջանի հետ՝ Հայաստանի և ԼՂ-ի վրայով:

Տարածքներ

Ամեն ինչ կամ ոչինչ

Հայեր

- Հարակից յոթ շրջանները Ադրբեջանինը չեն: Ինչո՞ւ ենք վերադարձնում
- Գրավված տարածքներն էլ մեզ համար Ղարաբաղ են ու Հայաստան, քանի որ այնտեղ մենք զինվոր ունենք ծառայող, ալավերդցիներ ունենք ապրող...
- Մենք կարծում ենք, որ հայկական զորքերի վերահսկվող բոլոր տարածքները Ղարաբաղինն են:
- Մենք մեր կորցրած հողերն ենք վերադարձրել, պետք է արդար վիճակը պահենք ամեն գնով:
- Եթե հարակից հողերը մերը չեն, ուրեմն ի՞նչ են անում մեր զորքերն այնտեղ:
- Մենք պետք է ասենք, որ ազատագրել ենք և ոչ թե գրավել, քանի որ մենք չենք կարող գրավել մեր եկեղեցիները:
- Մենք Ադրբեջանին զիջելու բան չունենք, շրջակա հողերը մերն են, ինչի պիտի տանք Ադրբեջանին
- Մենք ի սկզբանե չպետք է մտածենք որևէ հող վերադարձնելու մասին:
- Ավելի լավ է մնա ստատուս քվոն, իսկ ապրելու գումար ինքներս ստեղծենք, ու տանենք Ղարաբաղը ու շրջակա շրջանները հայերով բնակեցնենք, մենք մեր հարցերը լուծել ենք մեր ուժերով, ավելի լավ է մենք աղքատ մնանք, քան թե մեր տարածքները զիջենք
- Նախ, հարակից 7 շրջան գոյություն չունի, կա ազատագրված տարածքներ, մենք զիջելու ոչինչ չունենք:
- Մեր ձեռքբերումը հանգիստ ու անարյուն չի եղել, մենք մեր հողերը զոհերով ենք ձեռք բերել ու հեշտությամբ հետ գնալ չենք կարող:
- Ղարաբաղի լուծման հարցը ես տեսնում եմ ոչ թե ԼՂԻՄ-ի սահմաններում, այլ այսօրվա սահմաններում:
- Եթե մենք մի մետր հող էլ զիջենք, հետո էլ Երևանն են ուզելու:
- Արյամբ ձեռք բերվածը խոսքով հետ չեն տալիս: Հարակից տարածաշրջանների թեման պետք է մոռանալ:
- Ոչ մի տարածք էլ չենք տա:
- Հող զիջելը հանցագործություն կլինի մեր կողմից: Ոչ մի թիզ հող:
- Եթե հողերը պիտի ետ տան, ուրեմն թող մեզ՝ զոհվածների ծնողներիս էլ հավաքեն ու տան Ալիևին:
- Մենք ուզում ենք մեր տարածքները, ոչ թե ինչ որ ձևական անկախություն Ղարաբաղի համար, ու ոչ մի զիջում չունենք անելու:
- Լեռնային Ղարաբաղը սկսվել ա Ծամխորից ու շարունակվել մինչև Պարսկաստանի սահմանը. հիմա ի՞նչ է մնացել դրանից (էլ չեմ խոսում Դաշտային Ղարաբաղի մասին)

- Եթե հողերն են ուզում, որ վերադարձվեն, թող վերադարձնեն մեր զոհված տղաներին.... հնարավո՞ր է: Էլ ինչ ենք քննարկում:
- Բերեք «գրավված» բառը ի սկզբանե հանենք մեր բառապաշարից. դրանք ազատագրված տարածքներ են:
- Մեր հողերը հետ վերցնելը մեզ 20000 որբ երեխա է արժեցել: Ո՞վ է հարցրել էդ երեխեքին:
- Ազատագրված տարածքները ինչքան հնարավոր է շուտ պետք է բնակեցվի:
- Բոլոր կետերին համաձայն եմ, եթե այս ամենից հետո հասկանանք, որ ոչ մի թիզ չենք հանձնելու: Լաչինով ու Քելբաջարով Արցախ պահել չենք կարողանա:
- Արցախն իր տարածքներով է Արցախ հիմա: Հողերը հետ տալու դեպքում կրկին նույն վիճակը կվերակագնվի, պատերազմը կդառնա անխուսափելի: Թուրքը քո թիկունքում չպետք է լինի:
- Ֆիզուլին Գարեգին շրջանն էր, իրենք դարձրել են Ֆիզուլի, հիմա ասում են՝ մերն է: Բա ինչի մենք էլ ե՞նք մոռացել:
- Ոչ մի թիզ հող, այդ թվում Մեղրիի միջանցքը պետք չէ տալ Ադրբեջանին
- Հենց մի փոքր զիջենք էլի կպահանջեն: Որ օրը զիջենք, հաջորդ օրը կզարթնենք լրիվ ուրիշ մարդկանց մեջ:
- Հայաստանում պետք է ադրբեջանցի չլինի, չպետք է զիջել Ղարաբաղի հարակից շրջանները, և չպետք է թույլ տալ փախստականների վերադարձը:
- Պետք չէ զիջել ոչ մի տարածք, հնարավոր չէ զիջումներով հարց լուծել:
- Հարգելիներս հիշենք, որ հարակից շրջանները հարակից չեն, այլ Ղարաբաղի մաս:
- Հարակից շրջան և այլ սխալ տերմիններ օգտագործելով, մենք առավելություն ենք տալիս մեր թշնամուն, և նրանք մեր ամեն մի օգտագործած տերմին մեր դեմ են օգտագործում:
- Ինչու ենք անվանում հարակից շրջաններ, չէ որ դրանք գրավված շրջաններ են:
- Դրանք մեր հողերն են և մենք դրանք հետ ենք վերցրել:
- Մենք արյուն ենք թափել էդ հողերի համար, ինչի՞ մասին է խոսքը:
- Էլ չասեմ, որ սա ոչ թե փոխզիջումների, այլ հաղթող կողմի զիջումների սցենար է: Մենք իրենց հեքիաթների գինն արդեն տեսել ենք:
- Արյունով վերցրածը հետ չեն տալիս: Տարածքների վերադարձը բացառվում է:
- Մենք արյան գնով ենք մեր հողը ետ վերցրել, ոչ մի փոխզիջում չպետք է լինի:
- Ղարաբաղի հողերը մերն են ու դեպքերի ոչ մի զարգացման դեպքում էլ այդ հողերը չպիտի զիջենք:
- Ինչ է նշանակում գրավյալ տարածք, եթե դրանք պատմականորեն մերն են:
- Ոչ մի տարածք երբեք չենք վերադարձնի:

- Ցանկացած փոքր զիջում բերում է պետության փլուզման, ոչ մի թիզ հող, ոչ մի ճանապարհ:
- Հող տալը դավաճանություն է:
- Պահ, չեմի էլ ինչ... բոլոր տարածքները վերադարձնում ենք, փախստականները վերադառնում են.... էլ ինչ կուզեք:
- Մեզանից հող շատ են խլել, հիմա մենք որոշակի արդյունք ունենք, չենք կարող հետ վերադարձնել:
- Մենք տալիք չունենք, առնելիք ունենք. թող իրենք մեզ Ծահումյանն ու մյուս հայկական տարածքները վերադարձնեն մեզ, որից հետո միայն մենք կխոսենք փոխզիջումների մասին:
- Եթե անգամ մեկ հա հող պետք է հետ տանք, ուրեմն ավելի լավ է այսպես էլ մնա ամեն ինչ:
- Ղարաբաղի հողերը լվացվել են մեր որդիների արյունով, այդ հողերը ոնց հանձնենք:
- Ազատագրված հողերը վերադարձնելու մասին կետը ընդհանրապես ընդունելի չէ:
- Սրանք մեր պապենական հողերն են, մենք դանային էլ կհասնենք:
- Մեզ պետք է Ղարաբաղը ամբողջական... ինչպես, որ կա:
- Ի՞նչ է նշանակում «գրավյալ» տարածք. դրանք բոլորը նախկինում հայկական հողեր են եղել:
- Պետք չէր փոխզիջումային տարբերակների ընտրության հարցում այսքան ժամանակ ծախսել: Որքան շուտ լիներ այս քննարկումը, այնքան հեշտ կլուծվեր խնդիրը:
- Ազատագրված տարածքները հիմնականում բնակեցված են:
- Ղարաբաղի տարածքային ամբողջությունը դեռ չի վերականգնվել: Իսկ դուք ասում եք վերադառնանք Ադրբեջանի կազմ:
- Մենք երբեք չենք խեղճանալու ու ոչ մի հող չենք վերադարձնելու՝ ՎՍՅՈ:
- Բայց չէ որ դրանք մեր պատմական հողերն են, ո՞նց հետ կտանք:
- Ոչ մի շրջան էլ չե՛նք վերադարձնի:
- Մենք ադրբեջանական հող չենք գրավել, որ մի հատ էլ հետ տանք...
- Մենք այս տարածքները խաղաղ ուզել ենք չեն տվել, հետո մեր ուժերով կռվով ազատագրել ենք ու հետ տալու բան չունենք, ոչ մի պատերազմի հաղթող կողմ իրա վերցրած տարածքները հետ չի տալիս:
- Ուզում են շրջաններ հետ տանք, հեսա մի քանի հատ շրջան նոր կգրավենգ ու հետ կտանք, որ հանգստանան:
- Հիմիկվա սահմանը մի թիզ չպիտի խախտվի: ՈՉ ՄԻ շրջան չի կարելի հետ հանձնել:
- Մենք ոչ մի տարածք չենք վերադարձնում:
- Մենք իրենցից հող չենք վերցրել, դրանք մերն են, եթե մեր պալիտիկները սա հասկանային ու էս դիրքից խոսեին էսքան ժամանակ, համոզված եմ, որ այսօր մենք լրիվ տարբեր հինգ սցենար կունենայինք, ընդ որում՝ ի օգուտ մեզ:
- Մեր հողերը պիտի մնան մեզ ու դառնան մեր պետության մաս, պետք է վստահ լինենք, որ մեր ուժերով կարող ենք ամեն ինչի հասնել:

- Շահումյան, Գետաշեն, Մարտակերտ՝ դրանք էլ պետք է վերցնենք, այլ ոչ թե այսօրվա եղածից մի բան էլ զիջենք Ադրբեջանին:
- Փոխզիջումների կարելի է գնալ, բայց ոչ հողերի հաշվին, դեռ մեր հողերն էլ պիտի տան, մենք մեր պատմական հողերն ենք ազատագրել, դեռ կան հողեր, որ պետք է ազատագրել:
- Այս բոլոր հողերն էլ մերն են, ի՞նչ ենք քննարկում:
- Չեմ համաձայնվում, թե մենք փոխզիջումների չենք գնում, նորմալ բանակցությունների ժամանակ եթե արդար բան լինի, կհամաձայնվենք:
- Մեր սահմանները մենք գծել ենք դեռ շատ վաղուց... Հիմա մենք դրա մի մասն ենք ազատրագրել... Ասել կուզեմ հարակից շրջան որպես այդպիսի չկա:
- Եղած հողերը հանձնելու փոխարեն պետք է նոր հողեր նվաճելու մասին մտածել:
- Տարածքներ հետ տալու մասին խոսք անգամ չպետք է լինի:
- Հարեւանը հարեւանին բանջարանոցից մի սանտիմետր չի տալիս, ինչո՞ւ պետք է հող տանք թշնամուն:
- Էլ ինչի՞ համար էինք արյուն թափում, որ հողերը հանձնենք:
- Է՛, մենք էլ հա Թուրքիայից ենք հող ուզում... так что, թող հա ուզեն, մեկ ա տվող չկա...
- Մենք մեր հողերը հետ չենք տա, բայց նաեւ սպասում ենք, որ մեզ ճանաչեն:
- Հող տա՞լ... համա էստեղ որ աղջիկ չլիներ, կասեի հա՛, թե ինչ եմ մտածում:
- Հենց մի փոքր «ուստուպկա» արեցիր, հա ուզիլ տին:
- Մենք ձեր ասած հարակից շրջանները սահմանադրորեն ամրագրել ենք որպես մեր հողեր: Ի՞նչ հարակից շրջան եք ասում:
- Շան պոչ կստանան, հող չեն ստանա:
- Ոչ մի տարածք վերադարձնելու մասին խոսք լինել չի կարող:
- Հարակից շրջանները... եթե հարակից շրջան կգտնեն, թող հետ տան, բայց տենց բան չկա:
- Հինգերորդ սցենարում Լաչինն ու Քելբաջարը մնում են մեր վերահսկողության տակ.... Ո՛չ, բոլոր հողերն են մեր վերահսկողության տակ մնում:
- Սրանք հարակից տարածքներ չե՛ն, սրանք մեր Սահմանադրությամբ ամրագրված տարածքներ ե՛ն:
- Հարակից շրջանները, ուրեմն ասեմ, դրանք Իրանն է ու Ադրբեջանը: Լա՞վ, կարող ենք հետ տալ այդ հարակից շրջանները:
- Սա հնարավոր չի, մենք հողեր չենք վերադարձնում:
- Մեր որդիները, հայրերը արյուն են թափել, հողեր չենք վերադարձնում:
- Հազար ասեցի, հարակից տարածք չի, ազատագրված տարածք ա... սենց ա էլի. դուշմանը տնից ա լինում:
- Ես կարծում եմ, որ մենք սանտիմետր հող չունենք զիջելու: Իմ ամուսինը զոհվել է ու ես ամեն բան կորցրել եմ: Բայց որ չլինի, թե մենք պատրաստ չենք զիջումների, ասեմ. կարող ենք այդ հատվածները, որոնք դժվար է մեզ համար պահել, փոխանակենք մեզ ցանկալի այլ տարածքների հետ:

- Մենք ախր փոխզիջում չենք տեսնում: Բան չկա զիջելու:
- Ի՞նչ ԼՂՀ հարակից տարածքներ: Մենք սահմանադրորեն ամրագրել ենք դրանք որպես մեր պետության անբաժանելի մաս, ու նման արտահայտությունները ոտնձգություն են մեր Սահմանադրության հանդեպ:
- Մենք ավել հողեր չենք վերցրել Ադրբեջանից, մենք ուղղել ենք մեր անցյալի սխալները, ազատագրելով մեր պատմական տարածքները, որ մեր պապերի օրոք կորցրել էինք:
- Հարակից շրջանները որտե՞ղից մտան, չէ որ դրանք նույն Ղարաբաղն է:
- Չկան գրավյալ տարածքներ, կան ազատագրված տարածքներ:
- Արդեն իսկ հարակից շրջաններ անվանելը սխալ է. դրանք ազատագրված տարածքներն են:
- Ազատագրված տարածքները մեր վարչական միավորների մեջ են, մեր զինվորները պահում են մեր բոլոր հողերը:
- Ես տեղյակ չէի, որ բացի Ղարաբաղից գրաված տարածքներ կան, որոնք ԼՂՀ վարչական տարածքի մեջ չեն մտնում :
- Հերիք է մի թիզ հող զիջել, ապա դա կլինի նոր պատերազմի սկիզբը:
- Իհարկե սա ամենաընդունելի տարբերակն է և, ըստ էության, երկու կողմից էլ փոխզիջում է ենթադրում:

Ադրբեջանցիներ

- Իրականությունն այն է, որ կորցրել ենք տարածքները:
- Տարածքները, որը կորցրել ենք արյան միջոցով, պետք է նույն եղանակով էլ վերադարձենք:
- Պատմաբանները պետք է ապացուցեն նրանց, որ այս տարածքները մերն են:
- Բոլոր տարածքները պետք է վերադարձնել առանց պայմանների:
- Բոլոր տարածքները պետք է վերադարձվեն և նրանք պետք է շարունակեն ապրել ԼՂ-ում:
- Կարևոր չէ ինչպես, սակայն մենք պետք է վերականգնենք մեր տարածքները:
- Տարածքները խաղաղ ճանապարհով հետ չեն բերվում՝ միայն պատերազմի միջոցով:
- Լեռնային Ղարաբաղը և հարակից տարածքները պետք է վերադարձվեն Ադրբեջանին առանց պայմանների:
- Այս պահին Ադրբեջանի մաս հանդիսացող Լեռնային Ղարաբաղի տարածքը բռնազավթված է հայերի կողմից, որը պետք է վերադարձվի Ադրբեջանին առանց նախապայմանների և պայմանների:
- Լեռնային Ղարաբաղը և հարակից տարածքները գտնվում են անօրինական զավթիչներից մաքրման գործընթացում, իսկ անվտանգությունն ապահովվում է Ադրբեջանական բանակի կողմից:
- ԼՂ-ն և հարակից տարածքները Ադրբեջանի մասն են կազմում և դա պետք է լինի քննարկման առարկա:

- Պատմականորեն բոլոր հայկական հողերն Ադրբեջանինն են եղել:
- Մենք պետք է հետ նվաճենք այս տարածքները մեր արյունով:
- Եթե Ադրբեջանը տնտեսապես հզոր է, ապա հեշտ կլինի ցանկացած միջոցով մեր տարածքների հետ ստացումը:
- ԼՂ-ն չի կարող մնալ բռնազավթված:
- ԼՂ-ի տարածքները պետք է հետ վերադարձվեն:
- ԼՂ-ն և բոլոր հարակից տարածքները պետք է հետ գրավվեն, սակայն ԼՂ-ի ճակատագրի որոշման հարցը չպետք է օրակարգում լինի:
- Սահմանները պետք է հետ վերցվեն:
- ԼՂ-ն և հարակից տարածքները պետք է հետ վերցվեն:
- Երբ մենք խոսում են տարածքների վերադարձի մասին, մենք նկատի ունենք Լեռնային Ղարաբաղը և հարակից բոլոր տարածքները՝ Լեռնային Ղարաբաղը ևս պետք է վերադարձվի:
- Տարածքները մերն են և պետք է մնան մեզ:
- Ղարաբաղի տարածքները պետք է հետ վերցվեն:
- Ղարաբաղը և հարակից տարածքները պետք է հետ գրավվեն առանց քննարկման:
- Բոլոր տարածքները պետք է հետ գրավվեն:
- Եվ բոլոր տարածքները պետք է վերամիավորվեն:
- Մենք պետք է ազատագրենք ԼՂ-ն և բոլոր հարակից տարածքները Հայաստանի բռնազավթումից բոլոր հնարավոր միջոցներով:
- Լեռնային Ղարաբաղն իրավականորեն Ադրբեջանի մասն է և այլ տարբերակ չկա:
- Ցանկալի տարբերակը պետք է պաշտպանի մեր տարածքային ամբողջականությունը:
- ԼՂ-ն Ադրբեջանի անքակտելի մասն է եղել անկախությունից ի վեր:
- Նախևառաջ մենք պետք է վերականգնենք տարածքային ամբողջականությունը:
- Մեր նպատակն է, որ Ղարաբաղը կրկին միանա Ադրբեջանին:
- Ղարաբաղը չի կարող առանձնացվել Ադրբեջանից:
- Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի անբաժանելի մասն է:
- Այն Ադրբեջանի տարածքի մասն է:
- Ըստ մեզ հիմա Ադրբեջանը չի կարող զիջումների գնալ:

Հարակից տարածքներ

Հայեր

- Բանակցություններ եթե լինեն, բնականաբար, պետք է լինեն փոխզիջումներ,սակայն չպետք է հանձնել այն հողերը, որոնց վրա հայի արյուն է թափվել:
- Թույլատրելի եմ համարում, որ ոչ բոլոր յոթ շրջանները, բայց մի երկուսը տանք իրենց, բայց պիտի պահանջենք վերադարձնել Շահումյանը:

- Կետը, որ Լեռնային Ղարաբաղի հարակից բոլոր տարածքները վերադարձվում են, անընդունելի է ...չնայած մեր նախկին ԳԽ-ն Հայաստանի մաս է հռչակել ԼՂԻՄ տարածքը, որի սահմաններում գրավված տարածքները չկան:
- Բոլոր տարածքները վերադարձնել Ադրբեջանին՝ սա նորմալ տեսակետ չէ:
- Տարածքները ուշ թե շուտ զիջվելու են, ուղղակի կարևոր է, որ զիջումների որոշումը իմաստուն կայացնել
- Ծփումը հարևանների հետ, ուշ թե շուտ ստացվելու է և կայանալու է, սակայն այդ շփմանը չէինք ուզի հասնել հողերը վերադարձնելու միջոցով:
- մեզ Ղարաբաղի իրավական կարգավիճակը այս պահին չպետք է հետաքրքրի, մեզ պետք է պահպանել գրաված տարածքները
- Մեր համար լավ երաշխիք է հողերը մաս-մաս վերադարձնելը, սակայն իմ կարծիքով ադրբեջանցիները չեն համաձայնի այս տարբերակին:
- Եթե հարակից շրջանները տրվեն Ադրբեջանին, բայց դա նպաստի հարցի ԽԱՂԱՂ լուծմանը, թող այդպես լինի...
- Գալիք սերունդների համար դրանք արդեն կորցրած հողեր են համարվելու, քանի որ նրանք այդ հողերի համար արյուն չեն թափել
- Պետք է տալ այն տարածքները, որ մեր պաշտպանական գոտին չխախտվի:
- Հարակից հողերի վերադրաձնել չկա, այլ զիջել կա:
- Եթե Ադրբեջանն ասում է, Ղարաբաղ կարող ես անկախանալ, մեզ էլ հարակից շրջաններ պետք չեն:
- Ծայրահեղ դեպքում կարելի է զիջել ազատագրված տարածքները /բացի ԼՂՀ-ն/:
- Յոթ շրջանների վերադարձման հարցը կարելի է ընդունել, եթե փոխարենը ընդունվի կարգավիճակը:
- Ղարաբաղում կան շրջաններ, որոնք գրավված են, կարելի տալ դրանք և ոչ թե Աղդամն ու Ֆիզուլին:
- Եթե մենք հանձնեցինք ցանկացած հարակից տարածք, ապա պատերազմն անխուսափելի է:
- Չպետք է մոռանալ, որ հարակից շրջաններն անվտանգության համար են գրավել:
- Ցանկացած տարածք հանձնելու դեպքում ԼՂ-ում կմնա միայն ցուցանակը և ոչ թե հայեր:
- Մենք խոսում ենք յոթ շրջանները վերադարձնելու մասին, բայց մոռանում ենք, որ Ադրբեջանը Ղարաբաղն էլ հետն է ուզում, մենք այդ շրջաններում արյուն ենք թափել, բարոյական իրավունք չունենք յոթ շրջանները հետ տալ Ադրբեջանին:
- Երբ մենք գրավում էինք այդ տարածքները, մտածում էինք այն մասին, որ դրանցից մի քանիսը հենց դրա համար էլ գրավում ենք, որպեսզի հետագայում վերադարձնելու բան ունենանք:
- Հերիք է, մի անգամ գրիչով Ղարաբաղը տվել են թուրքին, առանց կռվի հող չենք տա: Եթե պիտի հողեր վերադարձնենք, ինչու այդքան գերեզման առաջացավ:

- Եթե մենք Ղարաբաղի շրջակա տարածքները գրավել ենք արյունով, ապա դրանք հետ վերադարձնելու տարբերակը չի կարող անգամ քննարկման հարց լինի:
- Հնարավոր չի՞ Հայաստանից կարիքավոր ընտանիքներին վերաբնակեցնել ազատագրված տարածքներում:
- ԼՂ և հարակից տարածքների բնակեցումը գործոն է, որ Հայաստանի օգտին պիտի աշխատի:
- Եթե Ադրբեջանը պահանջում է հարակից շրջաններ, մենք էլ Ծահումյան ու Նախջևան ունենք:
- Երրորդ տարբերակը լավագույնն է, սակայն մի վերապահումով, որ հարակից շրջանները բոլորը հետ չվերադարձնենք, մեզ պետք է պահենք Լաչինն ու Քելբաջարը, հակառակ դեպքում այս տարբերակը ընդունելի չի:
- Թող Ադրբեջանը վերադարձնի նախ այն շրջանները, որոնք իրենք են գրավել, Գետաշենը, Մարտունու մի մասը և մնացածը, մենք էլ դրանք կփոխանակենք մեր զբաղեցրած տարածքների հետ, դա լավագույն լուծումը կլինի:
- Հարակից տարածքները հանձնելով մենք անվտանգությունը ապահովել չենք կարողանում, սա բացառելի է:
- Տարածք վերադարձնելը պարտվելու նշան է, իսկ մենք չենք պարտվել:
- Փաստորեն մենք հանձնում ենք հողերը, հետո նոր սկսում ենք բանակցե՞լ, աբսուրդ է:
- Ախր ասում են, հարակից շրջան, բայց չեն հարցնում, թե ինչ նշանակություն ունեն դրանք մեզ համար:
- Հարակից շրջանները կարող ենք վերջիվերջո տալ, եթե միջազգային հանրությունը ճանաչի ԼՂ-ի անկախությունը:
- Տարածքների վերադարձման խնդիրը վաղ թե ուշ ծագելու է, որովհետև միջազգային կառույցները չեն ընդունելու գրաված տարածքները:
- Կարելի է հարակից շրջանները փոխանակել Նախիջեվանի, Ծահումյանի հետ... Բայց չի կարելի հարակից շրջան տալ խաղաղության դիմաց:
- Աղդամը Մարտունու համար նույնն է, ինչ Լաչինը ողջ Ղարաբաղի համար:
- Կրկին փաստենք, որ ԼՂ հարակից տարածքներում կարող ենք տեղակայել խաղաղապահ ուժեր, սակայն այդ տարածքների հանձնումը Ադրբեջանին՝ բացառում ենք:
- Ես հողերի վերադարձին դեմ եմ, եթե քննարկում ենք դա, պետք է քննարկենք նաև Նախիջևանի վերադարձի հարցը: Սա հնարավոր չէ, Ադրբեջանը չի համաձայնվի, հետևաբար էլ ստատուս քվոն շատ երկար ժամանակ կշարունակվի:
- Ջհանդամը վերադարձնեն իրանց հողերը, կարևորը Ղարաբաղը մերն է:
- Բայց եկեք լուրջ վերաբերվենք: Եկեք Լաչինը և Աղդամը պահենք, մյուսները վերադրաձնենք:
- Մարդիկ գրավյալ տարածքների համար կռվել են, բայց վերջնական նպատակը Ղարաբաղի անկախությունն էր. այս դեպքում նրանց զոհողությունն արդրացված էր:

- Երբ խոսում ենք հարակից շրջանների վերադարձի մասին, չպետք է մոռանանք որ քսան կիլոմետր բուֆերային զոնան բոլոր դեպքերում պետք է պահպանվի:
- Տարածքների զիջման միջոցով մենք կզրկվենք Իրանի հետ կապից: Դա անթույլատրելի է:
- Հարակից շրջանների վերադա՞րձ: Հիմա էնպես կտամ, ճամփեն կմոռանաք:
- Հողերը ետ տալ պետք չէ, քանի որ մեծ գնի շնորհիվ է այն ձեռք բերվել:
- Եթե պատերազմական իրավիճակ է, եթե արյուն է թափվել, հարակից շրջանները հնարավոր չէ հետ տալ: Եթե գրավել ենք, էլ հետ չենք տա
- Էն տարածքները, որոնք մեզ համար անվտանգության երաշխիք են, կարելի է մտածել: Բայց Շահումյանն ու Գետաշենը՝ երբեք:
- Եթե հողերը վցերադարձնենք, դաժան փորձը կարող է կրկնվել:
- Մեր սխալը նա է, որ հարակից շրջանները գրավելուց հետո արագ չբնակեցրերցին դրանք. այդ ժամանակ, ո՞վ պիտի պահանջեր այդ հողերի վերադարձ...
- Արյունով վերցված հողը չի կարելի վերադարձնել ազնիվ խոսքի դիմաց:
- Ազատագրված տարածքները զիջելու միակ տարբերակը Գետաշենի ու մնացած հայկական հողերը հետ վերադարձնելն է: Ու չմոռանանք, որ Գանձակը/Կիրովաբադը պատմական հայկական տարածք է:
- Ո՞նց թե հարակից շրջանները հետ ենք տալիս... ուրեմն մենք մեզ դեռ կարող ենք թույլ տալ հող հետ տա՞լ... Էսքան տվել ենք, հերիք չի:
- Փողզիջման դեպքում մենք տալիս ենք հարակից տարածքները, բայց ինչ ենք ստանում դրա փոխարեն Ադրբեջանից, էդ ինչ փոխզիջում է:
- Մենք Աղդամը որ հետ տանք, ոնց որ մի ժամանակ է եղել, տենց էլ հիմա, մեզ կռմբակոծեն այնտեղից:
- Հարակից տարածքները տալով մենք մեր անվտանգության մի մասն էլ կորցնում ենք:
- Մենք կտանք Խոջալուն, Աղդամը, բայց ոչ Շուշին:
- Եթե հողեր հանձնենք, մոտակա գյուղերն էլ են թուրքերով լցվելու:
- Եթե մենք տարածքներ զիջենք դա կերկարացնի մեր սահմանը, իսկ դա կպահանջի ավելի մեծ թվով զինակոչիկներ:
- Շրջակա տարածքներից յուրաքանչյուր թզի համար մենք արյուն ենք թափել, դրանք հետ վերադարձնելը պատերազմական օրենքներին հարիր չի:
- Ես կարծում եմ, որ հարակից տարածքների վերադարձը հակասում է նաև Ռուսաստանի շահերին:
- Անընդունելի է հարակից շրջանները վերադարձնելը՝ նույնիսկ ստատուսի հաշվին:
- Ես հարակից տարածքի զիջմամբ անկախություն ստանալու դեմ եմ: Մենք արդեն զգացել ենք մեր մաշկի վրա, երբ Արդրբեջանը մեր սահմանի մոտ է: Նույնը չենք ուզում...
- Հիմա համաձանվելու է հողերը վերցնի՝ առանց փոխհատուցման, հետո էլ մեզանից փոխհատուցում կուզեն:

- Եթե մենք հարակից տարածքները վերադարձնենք, թող իրենք էլ Ծահումյանը վերադարձնեն:
- Տարածքների փոխանակություն հնարավոր է, խելոք մշակելու դեպքում սա ընդունելի է:
- հարակից տարածքները չպետք է դառնան վիճարկման առարկա, նույնիսկ այն դեպքում, երբ Բաքուն ճանաչում է Ղարաբաղի կարգավիճակը
- Եթե նույնիսկ, հինգերորդ սցենարով, մենք վերադարձնենք գրավված տարածքները, միևնույն է ադրբեջանցիները այդքանով չեն բավարարվի:
- Եթե մենք վերադարձնենք գրավված տարածքները, ապա ի՞նչ պատասխան պետք է տանք զոհված ազատամարտիկների ընտանիքներին:
- հինգերորդ տարբերակում նույն անորոշությունը կա խնդրի վերջնական լուծման առումով, բացառությամբ այն փաստի, որ ազատագրված հինգ շրջանները վերադարձնում ենք իրենց, ինչը վատ է
- Հողերը մեր երաշխիքն է, ոչինչ չենք տալու:
- Մենք ունենք խաղաղ գործընթաց, որի շրջանակներում ազատագրված տարածքները կոչվում են հարակից: Սա փաստ է, և մենք այդպես էլ պիտի կոչենք դրանք:
- Միևնույն է այս գրավված հողերը մենք չենք կարողանում լիարժեք օգտագործել. ոչ-ոք չի իմանում, թե վաղը դրանց հետ ինչ կլինի:
- Ադրբոջանցիները միշտ ջանալու են վերադարձնել իրենց պատկանող տարածքները:
- Պատերազմի վտանգ կա, անկախ նրանից տարածքները մեր ձեռքում են, թե ոչ
- Առանց զիջումների պատերազմն անխուսափելի է:
- պետք է հաշվի առնել կոնկրետ այն բնակիչների կարծիքը, որոնց տարածքները վիճարկման առարկա են
- Ես դեմ եմ, որ բոլոր տարածքները հետ վերադարձնենք. սա մեր երաշխիքն է:
- Գրավված հողերը վերադարձնելու են, անկախ նրանից, որ մենք չենք ուզում:
- Եթե հողի ազատագրման համար արյուն է թափվել, ապա դա վերադարձնելը ճիշտ չէ:
- Եթե ասենք երկու շրջան վերադարձնենք, ինձ թվում է դրանից լարվածությունը չի իջնի, այլ կավելանա:
- Նույնիսկ եթե շրջակա շրջանները հետ տանք, Ադրբեջանը միևնույն է կարող է Ղարաբաղի համար նորից պատերազմ սկսել, էլ ինչի ենք հետ տալիս:
- Տարածքները հետ վերադարձնելու պայմանը ընդունելի կարող է լինել միայն Նախիջևանը զիջելու միջոցով:
- Երրորդ. անարդար է, զիջումները միայն հայկական կողմից են, ու ահավոր զիջումներ են:
- Հարակից տարածքների վերադարձը անվտանգության համար մեծ սպառնալիք է:

- Ազատագրված ոչ մի հողից հրաժարվել չի կարելի: Սա մեր անվտանգության հարցն է:
- Աղդամը տանք իրանց, դրա փոխարեն թող տասնհինգ թվականի ցեղասպանությունը Ադրբեջանը ճանաչի, ու այդպես ամեն հողը զիջելով մի բան պահանջենք:
- Թուրքերը հենց հարակից շրջանները հետ վերցրեցին, կլծվեն Ղարաբաղը վերադարձնելու գործին: Իսկ խաղաղապահ ուժերին ես չեմ հավատում:
- Մենք միևնույն է հետագայում պահանջելու ենք այդ տարածքները, հետևաբար ի՞նչ իմաստ ունի այդ տարածքների զիջումը այսօր:
- Ղարաբաղի շրջակա շրջանների համար մենք արյուն ենք թափել, և հետ տալ այդ տարածքները չի կարելի, օրինակ Քելբաջարը գտնվում է Վարդենիսի և Ղարաբաղի միջև, այդ տարածքները ոնց հետ տանք, նույնիսկ պետք է ավելի շատ տարածքներ գրավենք:
- Ես չգիտեմ, վաղը կամ մյուս օրը ազատագրված հողերը վերադարձնելու են, թե չէ, որ իմանամ այնտեղ բնակվեմ, թե չէ:
- Օրինակ Ջաբրաիլում մարդիկ գիտեմ, որ տասներեք տասնչորս տարեկան երեխաներ ունեն, իրենց երեխաների հայրենիքը արդեն Ջաբրաիլն է. շրջակա տրածքներում նոր սերունդ է ծնվել, ուրեմն այդ հողերը արդեն մերն են:
- Հարակից տարածքների հանձնումը արդեն նշանակում է խեղդել Ղարաբաղին՝ ինչ մնաց Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում:
- Դրանք մեզանից գրավյալից ավելին են ուզում: Իսկ մենք այս տարածքների համար արյուն ենք թափել:
- Ոչ մի տարածք չպետք է վերադարձվի Ադրբեջանին:
- Թող իրենք ետ վերադարձնեն մեր զոհերին, մենք էլ հետ վերադարձնենք տարածքները:
- Երրորդ տարբերակը անընդունելի է, քանի որ հարց է դրված շրջակա տարածքների վերադարձման համար. այդ տարածքները հզոր պլացդարմ են, այնտեղից մեզ հեշտությամբ կռմբակոծեն:
- Ոչ մի հայկական հող չպետք է վերադարձնել Ադրբեջանին՝ ներառյալ հարակից շրջանները:
- Հարակից հողերը վերադարձնելը նշանակում է հետ գնալ կոնֆլիկտի ելակետ՝ ամեն ինչ տալ քամուն:
- Եթե շրջակա տարածքները տալիս ենք, ուրեմն ամբողջ Ղարաբաղը տալիս ենք Ադրբեջանին
- Այն ժամանակ, երբ որ մեր որդիները գնում էին զոհվելու, թող հենց այդ ժամանակ էլ ասեին, որ այդ հողերը հետ ենք տալու, որ իրանք էլ իզուր չզոհվեին:
- Ոչ բոլոր տարածքները կարող ենք զիջել: Օրինակ՝ Քալբաջարը, Ֆիզուլին, Լաչինը:
- Ռազմավարական նշանակության տարածքները պետք է չզիջե՛լ:
- Միայն փոքր ցամաքային կապը Հայաստանի ու Արցախի համար բավարար չէ մեր անվտանգությունը ապահովելու համար:

- Չեմ կարծում, որ այստեղ որևէ մեկը կա, ով համաձայն է որևէ տարածք հանձնել՝ մեր ամուսինները, եղբայրներն ու հայրերն են դրանք ազատագրել՝ ո՞նց կարելի է:
- Հարակից շրջանները հանձնեցինք, նրանք կսկսեն արդեն ավելին պահանջել:
- Մենք գտնում ենք, որ մենք չպետք է զիջենք գրավյալ տարածքները:
- Եկեք այն տարածքները, որոնք պատկանում են ադրբեջանցիներին ետ տանք իրենց ու վերջ, այդքան բան կարող ենք զիջել, ոչ ավել:
- Հիմա խելոք գտնվենք այնչափ, որ հնարավորինս քիչ զիջումների գնով լինի ամեն բան:
- Շրջակա տարածքները կարող ենք տալ Ադրբեջանին միայն եթե փոխարենը մեզ վերադարձնեն Նախիջևանը
- Ետ վերադարձնելու հարցը պիտի որոշեն էդ շրջանների բնակիչները:
- Կարելի է հարակից շրջանները փոխանակել Շահումյանի ու Արցախի մյուս գրավված տարածքների հետ:
- Եթե հանձնենք հողերը, շատ շուտ ադրբեջանցիք բարբարոսաբար կհայաթափեն Ղարաբաղը ու դրանից հետո արդեն մենք ընդհանրապես պահանջելու ոչինչ չենք ունենա:
- Հեշտ եք ասում: Մեր տղաները գնան զոհվեն, հետո էլ ասեք տվեք, տվեք մեր հողերը խալխին, հա՞:
- Հարակից տարածքների վերադարձ հնարավոր է միայն երրորդ սցենարի դեպքում, ոչ մի այլ տարբերակ:
- Շրջակա տարածքները ուզենանք թե ոչ, միևնույն է մի օր հետ ենք տալու, քանի որ դա իրենց պատմական տարածքներն են:
- Վերջիվերջո գոնե մի կտոր հող պիտի վերադարձվի, քանի որ առանց զիջման հակամարտության կարգավորումն անհնարին
- Եթե ուզում ենք, որ մեր պատմական տարածք Ղարաբաղը դառնա մերը, պետք է գնանք փոխզիջման ու իրենց հետ տանք իրենց պատմական տարածքները՝ շրջակա շրջանները:
- Եթե Ադրբեջանին պատկանող շրջանները վերադարձնում ենք, թող իրենք էլ, օրինակ, Շահումյանը վերադարձնեն:
- Եթե մի թիզ հող էլ զիջեցինք, ոչ մի ցամաքային ճանապարհների բացման մասին խոսք չի լինի:
- Եթե հարակից շրջաններ ենք վերադարձնում, ապա Ղարաբաղի անկախության հետ մեկտեղ Նախիջևան պիտի պահանջենք:
- Եթե ուզում են շրջակա շրջանները հետ տանք, թող իրենք էլ մեզ Նախիջևանը հետ տան:
- Բացի Լաչինից մյուս տարածքները որ հանձնենք, Ղարաբաղը կմնա շրջափակված գերի Ադրբեջանի կողմից:
- Մեզ համար անընդունելի է գրավված տարածքների վերադարձը Ադրբեջանին:
- Իսկ ես համաձայն չեմ հողերի վերադարձի հետ... ստրատեգիական նշանակության հողի վերադարձը անընդունելի է, հակառակ դեպքում, մի

քանի տարի հետո նույն անկախ Ղարաբաղում թուրքը նույնությամբ կռիվ կսկսի:

- Էդ մի փոքր տեղը տվինք, միանգամից գալու լցվելու են ու էլի գրավեն:
- Հարակից տարածքների զիջումը Հայաստանի պարտությունն է և՛ դիվանագիտական, և՛ ռազմական, և՛ տնտեսական առումով:
- Պետք է գնանք զիջումների, որ կարողանանք մուսուլմանական երկրների միջև մեր խաչը բարձր պահենք, ու առհասարակ գոյատևենք, ու որ Թուրքիայի հետ էլ մեր հարաբերությունները արագորեն կարգավորվեն, քանի որ Թուրքիան մեր երակն է:
- Մենք արյան գնով վերցրել ենք հողերը, որ նորից վերադարձնե՞նք...
- Ի՞նչ է նշանակում, բոլոր բերրի տարածքները նորից վերադարձնենք Ադրբեջանի՞ն:
- Բա որ գրաված տարածքներ վերադարձնենք ու զոհվածների ընտանիքներ բողոքե՞ն: Ու քաղաքացիական պատերազմ սկսվի Հայաստանի ներսում:
- Մենք չպետք է Ադրբեջանից անգամ միջանցք ուզենք, ավելի ճիշտ կլինի, որ իրենց տարածքները տանք իրենց, Ղարաբաղը մնա մերը, էս հարցը լուծվի գնա, թող մուտք ու ելք չունենանք, բայց հարցը լուծվի:
- Շրջակա հողերը հաշվարկով ենք ազատագրել, եթե մի թիզ հող էլ հետ տանք, Ասկերանում էլ մարդ չի մնա, ոչ մեկ չի թողի իրա երեխեն ստեղ ապրի, որովհետև այս տարածքը ռմբակոծության տակ կընկնի:
- Հարակից շրջան որ տամ, տակն ի՞նչ ա մնում...
- Երբ էդ յոթ տարածքները մեր ձեռքին չէին, ադրբեջանցին օրական 20կմ առաջ էր գալիս...
- Բուֆեռնի զոնա հաստատ պետք ա. առանց դրա, ոչ մեկը մեզ չի էլ ճանաչի...
- Հարակից շրջաններից ամենահեռավորներն ու անկարևորները միայն կարելի է վերադարձնել, ընդ որում միայն փոխանակման դեպքում, ասենք Շահումյանի հետ:
- Եթե մեկ մի թիզ տվեցինք, հաջորդ քայլին մի ոտնաչափ ավել կպահանջեն, ու էսպես շարունակ...
- Իսկական փոխզիջումը կլինի «հող՝ հողի դիմաց»: Ղուբաթլին տանք, Շահումյանը, Գետաշենը վերցնենք:
- Ինչ-որ զիջում պետք է լինի՝ առանց զիջման հնարավոր չէ: Միգուցե այդ առումով երրորդ տարբերակը լավագույնն է:
- Եթե Աղդամն ու մյուս շրջանները վերադարձնենք, էլի ադրբեջանցիք գալու են մեզ շրջափակեն ու պատերազմ սկսեն:
- Եթե հարակից շրջանները տանք, ստացվում է, որ Ադրբեջանն իր բանակը պիտի բերի ու մեր քաղաքների գլխին տեղակայի. մենք ինչպե՞ս կարող ենք այդ դեպքում այստեղ ապահով ապրել:
- Անընդունելի է ազատագրված բոլոր տարածքները վերադարձնելը. պետք է պահել առնվազն քառասուն կիլոմետր անվտանգության գոտի:
- Աաաա, ի՞նչ ես ասում, էէէ... էդ յոթ շրջանը որ հետ տվեցինք, պատերազմի վերսկսման դեպքում, ի՞նչ ենք անելու...

- Հարավային դարպասը՝ Աղդամը, միակ երաշխիքն է մայրաքաղաքի համար:
- Վույ, մենք էստեղ փռշտում ենք, իրենք էնտեղ լսում են... էդ տարածքներն էլ որ հետ տանք, ասա սասներս կտրինք, էլի...
- Երրորդը նշանակում է, որ մենք կունենանք ԼՂԻՄ-ի տարածքը և Լաչինի մի նեղ միջանցք. սա չի կարող երաշխիք լինել ազգային անվտանգության տեսանկյունից:
- Դե էլ Լաչինն ի՞նչ է մեզ տալու, եթե մնացած բոլոր հողերը, որ մեր անվտանգությունն են ապահովում, հետ տանք:
- Բացի անվտանգությունից, ասեմ, որ հենց էդ հարակից շրջանների հաշվին ենք ապրում... տնտեսապես էլ շատ կտուժենք:
- Հողերը վերադարձնելը բացառվու՛մ է:
- Առնվազն տասը կիլոմետր անվտանգության գոտի է պետք, որպեսզի հետևես նրանց առաջնային գծի անցուդարձը:
- Բացասական կողմն այն է, որ հարակից տարածքները տալով մեր անվտանգությունը չենք ապահովում, ադրբեջանցու հետ միանգամից շփման գիծ ունենալը վտանգավոր է:
- Եթե համաձայնվում ենք Աղդամը տանք, հաշվեք Ասկերանը տալիս ենք:
- Եթե Աղդամը տանք, մենք մի քանի հայկական բնակավայրերի կզրկենք ուղիղ կապ ունենալուց, ճանապարհ չենք ունենա: Մեզ այդպես մասնատում են:
- Մենք յոթ շրջան տալով իրականում յոթ չենք տալիս, այլ ողջ Ղարաբաղն ենք տալիս. ներկայիս սահմանը լեգոյի նման է, քանի ոչ մի մասնիկ հանելով փլում ենք ողջ աշտարակը:
- Մի կիլոմետր էս կոմ, էն կոմ... եթե էսպես շարունակենք մտածել, մեզ մորթելն էլ քիչ ա:
- Եթե հող հետ տալու մասին խոսք գնա, ապա միայն փոխանակման պայմանով, կարող են մեր գյուղերից հեռու շրջաններից հող տանք, Շահումյանի հետ փոխանակենք:
- Ցանկացած սցենար ապառազմականացման կամ տարածքի վերադարձի պայմանով անընդունելի է:
- Կարծում եմ, որ երկուստեք զիջումների կարելի է գնալ, եթե ապահովվի Ղարաբաղի անկախությունն ու ցամաքային կապը Հայաստանի հետ /ներառյալ Քելբաջարի շրջանը/:
- Հարձակվողը Ադրբեջանն է եղել: Չգային, չտուժեին, ու հիմա էլ «իրենց» հողերը չուզեին:
- Տարածքների զիջում... ահա այն կետը, որի առկայության դեպքում, ոչ մի սցենար ընդունելի չէ:
- Այն տարածքները, որ արյան գնով են վերցված, թույլատրելի չի վերադարձնել
- Հողերը ոչ մի դեպքում պետք չի հետ տալ, ավելի լավ է ստատուս քվոն ավելի երկար տևի:
- Արյունով վերցրած հողը երբեք, ոչ մի ժամանակներում չի կարելի հեշտությամբ տալ...

- Եթե մենք հողերը հետ տանք, էլ մեր նահատակներին ինչ պատասխան ենք տալու, այդ մարդկանց թափած արյունը կմնա մեր վրա:
- Եթե մենք հող տանք՝ մենք ոչնչացած ենք:
- Հարցնում եք, ասում եմ հող չենք տալիս, էլ ինչի եք հա հարցնում, վահ...
- Որ մի կտոր հող տանք, ադրբեջանցիները կգան կլցվեն էլի, այս քայլը սխալ կլինի, ժողովուրդը դա չի ուզում, բայց քաղաքականությունը այլ բան է թելադրում:
- Եթե հարակից շրջանները վերադարձնենք, էլ ի՞նչ անվտանգության մասին է խոսքը:
- Մեզ անվտանգության գոտի է հարկավոր, պետք է ուրիշ կերպ լուծել հարցը:
- Հարակից շրջանները ո՞նց հետ կտանք: Դեհ պատկերացրեք, թե Ֆիզուլիում կրկին ադրբեջանցիներ լինեն, մեր քաղաքներն ու գյուղերը նորից ադրբեջանցու սեպով կբաջանվեն: Նորից նույն վիճակին կվերադառնանք:
- Նախիջեւան կամ կրկին 88թվական: Ահա ինչ կլինի, եթե հարակից շրջանները հանձնենք:
- Ախորժակը ուտելուց է բացվում, շրջակա հողերը որ տանք, կգան բուն Ղարաբաղն էլ կվերցնեն:
- Ձիջում գնալուց էլ, չգնալուց էլ կանգնելու ենք վտանգի առաջ, բայց հողային զիջումների մասին, միևնույն է, խոսք չի կարող գնալ:
- Հիմա ադրբեջանցի սնայպերները կրակում են մեր սահմանապահների վրա, տարածքները վերադարձնելու դեպքում կրակելու են մեր բնակավայրերի ու խաղաղ մարդկանց վրա:
- Հարակից տարածքներ չենք տա, անհավատալի բան է:
- Նույնիսկ հիմա ենք վախենում... եթե հարակից տարածք տանք, պատկերացնում ես՝ ի՞նչ կլինի:
- Շատ վաղ է հող տալը, հավատալու մասին խոսելը... ժամանակ է պետք:
- Երրորդ տարբերակը անընդունելի է հիմնականում տարածքների վերադարձման կետի պատճառով, մենք դրան չենք կարող համաձայնվել:
- Եթե տարածքները վերադարձնենք, նորից նույն պատմությունը պիտի կրկնվի:
- Հարակից տարածքներում է սկսվում մեր անվտանգության գոտին: Մենք այդտեղից ենք ապահովում մեր խաղաղությունը:
- Մենք չենք հավատում, որ հիմա հողերը տալուց հետո, տարիներ անց ադրբեջանցիները կկատարեն իրենց խոստումը:
- Աղդամի ամեն մի մետրի համար արյուն ենք տվել... Էնպես որ, թող ադրբեջանը հարձակվի ու վերցնի... Եթե կարող է:
- Ֆիզուլին մեզանից ինը կիլոմետր է հեռու: Ուրեմն նա կլռի՞, մեզ հանգիստ կթողնի՞: Սովետի ժամանակ էլ ասում էին՝ անվտանգ է, իսկ ինչ էր իրականում, մոռացա՞ք:
- Լավ ենթադրենք երկու շրջան պահում ենք, համոզված եմ, հետո ինչ-որ խարդավանքով կամ դիվանագիտությամբ կվերցնեն ու էլի ոչինչ չի մնա:

- Ծուշին վերցրել ենք ու խաղաղություն ենք ձեռք բերել: Եթե վերադարձնենք, ի՞նչ իմաստ կունենա մեր կռիվն ու հաղթանակը:
- Հող տալը ցանկացած տարբերակում սխալ ա, մեր կապը Հայաստանի հետ չի կարելի կորցնել, ոչ չորրորդ, ոչ էլ հինգերորդ սցենարով:
- Աղդամը, Ֆիզուլին սովետական քաղաքներ են, դրա համար այդքան հեշտ լքեցին... Ավելին, Ֆիզուլին մալականների շրջանն էր, ոչ թե թուրքական...
- Ցանկացած փոխզիջում չպիտի թողնի որ էդ հեռավոր հրթիռները հասնեն մեզ:
- Կարելի է վերադարձնել մի քանի ոչ ստրատեգիական նշանակություն ունեցող հողեր, եթե ճանաչվի մեր անկախությունը:
- Որքան սահմանը մոտենա, այնքան մեր անվտանգությունը կթուլանա:
- Հարակից շրջանները վերադարձնելն անհնար է:
- Հարակից շրջան չենք ասում, այլ ասում ենք. «անվտանգության գոտի»... հո իզուր չե՞նք էսպես ասում:
- Ես որ ադրբեջանցուն վերադարձնեմ շրջակա հողերը, ինքը փոխարենը իմ մահացած բալեն ինձ վերադարձնելու՞ է:
- Մենք ստրատեգիական կարևոր տարածքներ ենք գրավել, որը մեզ համար օդ ու ջուր է... Զիջելն անիմաստ է:
- Մենք հիմա ոչ մի դեպքում չպիտի խոսենք հարակից շրջանների Ադրբեջանին ինտեգրելու մասին, դրա մասին իրավունք չունենք խոսել գոնե մի քսանհինգ տարի, մինչև սերունդ փոխվի ու ռազմական վտանգը փոխվի քաղաքական խնդրի:
- Մի մետր հող տալ, նշանակում է կիլոմետրերով հետ գնալ:
- Մենք էսօր անվտանգ ենք այդ հարակից շրջանների շնորհիվ, ի՞նչ զիջումների մասին է խոսքը:
- Հարակից շրջանների մասին կետի առկայությունը, կարծես, պատերազմի վերսկսման կոչնակն ու գույժը լինի:
- Տարածքները միանշանակ չտվինք, անցնենք հաջորդ սցենարին:
- Գետաշենը, Մարտունաշենը, Չայլուն, Ծամխորը ու էլի շատ հողեր արդեն զիջել ենք...Էլ ի՞նչ զիջենք: Դե թող գան մեր տունն էլ տամ, ես էլ գնամ...
- Եթե էտ տարածքների վրա մեր ռազմական հսկողությունը թույլ տան, ապա մենք կարող ենք այդ տարածքները տալ, որ իրենք ոչխար պահեն կամ ցանք անեն, հակառակ դեպքում սա չլնող բանա:
- Ֆիզուլին Հադրութի անվտանգություն ա, առանց Լաչինի ու Քյալբաջարի օդից կկախվենք,Աղդամը մայրաքաղաքի ու սամանամերձ տարածքների կապն ա... հասկանո՞ւմ եք, որ զիջելու բան չունենք:
- Կարող ենք զիջել միայն շատ հեռու գտնվող հողերը: Լաչինը, Քելբաջարը, Աղդամը, Ֆիզուլին զիջելու տարբերակ չունենք:
- Կոմպրոմիսի դեպքում հողը կարելի է փոխել միայն հողի հետ, ուզու՞մ են շրջակա շրջանների մի մասը՝ կտա՛նք, բայց մեր տարածքների դիմաց:
- Իհարկե պետք է որոշ տարածքներ հանձնել, բայց կան շրջաններ, որոնք մխրճված են Ղարաբաղի սրտի մեջ:
- Երրորդ սցենարի մեջ ամենամերժելի պահը հարակից շրջանների ու Լաչինի միջանցքի վերաբերյալ է:

- Եթե պետք է տարածքներ հետ տանք, ապա պետք է իմանանք, որ բանակցությունների սեղան պետք է վերադարձվի Շահումյանի և Գետաշենի "ենթաշրջանները":
- Եթե ԼՂՀ-ն կապ պիտի ունենա միայն Հայաստանի հետ, էլ ինչ պետություն...
- Ղարաբաղը պետք է Պարսկաստանի հետ ինքնուրույն կապ ունենա... դա միայն ֆիզուլին կարող է լինել:
- Երրորդ սցենարին կողմ ենք բացառությամբ այն կետի, որով պիտի ազատագված տարածքները հանձնենք:
- Եթե մենք հարակից շրջաններ ենք պատրաստվում տալ, Արցախի ստատուսի հարցը պետք է հենց հիմա լուծվի, ոչ թե հետագայում:
- Ղարաբաղը ոսկի հողեր ունի, դրանք մեզ համար շատ կարևոր են:
- Իհարկե, լուծումը միայն դա է՝ հողի դիմաց՝ հող: Միայն այդ դեպքում ենք համաձայն:
- Եթե առանց պատերազմի ենք ուզում, գոնե պետք է մի երեք-չորս շրջան տանք Ադրբեջանին:
- Ռազմավարական տեսանկյունից՝ կան տարածքներ, որ անհնար է ու չի կարելի փոխանակել: Սակայն հնարավոր է գտնել տարածք, որ կարող ենք Շահումյանի դիմաց փոխանակել:
- Վազգեն Սարգսյանը դեռ գրում էր, որ տարածքների փոխանակում հնարավոր է, որոշ տարածքներ: Մենք կարող ենք որոշ տարածք տանք ու դիմացը մեր Շահումյանը հետ վերցնենք:
- Հայաստանը կարող է զարգանալ հենց Ղարաբաղի ու հարակից շրջանների հնարավորությունները օգտագործելով:
- Դե եթե մենք հետ ենք տալիս հարակից հողերը, եկեք մենք էլ հետ ուզենք Նախիջևանը, դա էլ մերն է:
- Չորրորդ սցենարով ստրատեգիական վայրեր կան, որոնց տալը վտանգավոր է, պետք է մտածել տալուց առաջ և ճիշտ որոշում ընդունել:
- չորրորդ տարբերակում, եթե պայմանագրի խախտման պարագայում Ադրբեջանը պատերազմ սկսի, ապա մեր դիրքերը թուլանում են, քանի որ հարակից տարածքներն արդեն չեն ծառայում իբրև Ղարաբաղը պաշտպանող պարիսպներ
- Ինչքան էլ Հայաստանը հաղթող կողմ է, այս հարցում թելադրող չի կարող լինել, որովհետեւ կան ազատագրված տարածքներ ու բուն Արցախ:
- Սովետի ժամանակ Ղարաբաղին հարակից շատ լավ, բերրի ու հարուստ հողեր են եղել... Եթե մենք փոխզիջումների ենք գնում, նրանք էլ թող այդ հողերը մեզ տան:
- Այդ տարածքները պետք է մնան որպես չեզոք գոտի, ոնց որ Իսրայելն ու Սիրիան:
- Ցանկացած սցենար, որ պիտի ընդունվի, պիտի բացառի հարակից շրջանների վերադարձ և սուվերեն տարածքի տրամադրում...
- Մի քիչ հեռուն նայենք. եթե ուզում ենք ընդունվել միջազգայնորեն, ապա ճիշտ չէ մեր հարևանի նկատմամբ այսքան թշնամաբար վերաբերվել, բայց

միևնույն է, հողերը հետ վերադարձնելը Ղարաբաղի անվտանգությունը վտանգում է:

Ադրբեջանցիներ

- Սակայն շարունակում են տարածքները օկուպացված պահել:
- Եթե շահութաբեր լիներ, շատ ավելի վաղ տարածքները վերադարձրած կլինեին:
- Մենք պետք է հետ վերադարձնենք մեր տարածքները:
- Մեր բնակչությունը պետք է պատռաստ լինի տարածքների վերադարձնելուն:
- Օկուպացված տարածքները պետք է վերադարձվեն:
- Ճիշտ չի լինի մեր տարածքները տալ հայերին:
- 7 շրջանները առանց Ղարաբաղի լավ չեն:
- Տարածքները բռնազավթված են, սակայն, մեր կարծիքով, մեծ տերությունները չեն համաձայնում վերադարձնել Ղարաբաղը:
- Մենք չենք կարող զբաղվել մեր սեփական հողերի առևտրով, ինչը նշանակում է, որ մենք չպետք է համաձայնենք Լեռնային Ղարաբաղը հետ ստանալու, սակայն հարակից տարածքները թողնելու հետ:
- Զանգելանում և Քուբադլիում աճում են տուբերկուլոզ բուժող հարթ ծառեր, որոնք հիմա վաճառվում են Իրանին :
- Մենք ի վիճակի չենք լինի օգտագործել այս տարածքները:
- Հիմա այդ տարածքները անօգուտ են:
- Մենք ի վիճակի չենք լինի վերստանալ այդ տարածքները:
- Ադրբեջանը չի կարող իր տարածքը նվիրել մեկ այլ երկրի:
- Սա մեր համար հարմար չէ՝ այս տարածքները հիմա անօգուտ են:
- Տարածքները կվերադարձվեն մեզ:
- Տարածքները հետ ստանալուց առաջ անհրաժեշտ է այն մաքրել:
- Փախստականները պետք է հետ ուղարկվեն և տարածքները պետք է հետ գրավվեն:
- Տարածքները պետք է վերադարձվեն, և մարդիկ պետք է վերադառնան իրեն հայրենի հողեր:
- Եթե խաղաղության տարբերակ կա, մենք պետք է դրանով առաջնորդվենք, այլապես տարածքները պետք է հետ վերադարձվեն պատերազմի միջոցով:
- Հայերը մեզ տարածք չեն վերադարձնի, մենք պետք է հույս չունենանք:
- Եթե անգամ տարածքները հետվերցվեն, մենք Հայաստանի հետ որևէ հարաբերություն չպետք է ունենանք:
- Մենք չենք ասում, թողեք նրանք վերցնեն տարածքները:
- Տարածքներն ամեն դեպքում մերն են:
- Մյուս տարածքները պետք է վերադարձվեն Ադրբեջանին:
- Ինչ էլ որ պատահի մենք չենք պատրաստում լքել մեր տարածքները:
- Եթե ԼՂ-ն մեզ չվերադարձվի, մյուս տարածքները հետ ստանալու մեջ իմաստ չի լինի:

- Եվ քանի որ հայերը քրիստոնյաներ են, նրանք ավելի հին են և միգուցե ավելի հին հայացքներ ունեն տարածքների առումով. ես այսպես եմ կարծում:
- Հայաստանը պետք է վերադարձնի տարածքները և ոչինչ չպահանջի:
- Մենք պետք է վերականգնենք մեր տարածքները միայն պատերազմի միջոցով:
- Բոլոր բռնագրավված տարածքները չեն վերադարձվի, եթե անգամ Հայաստանը որոշի զիջումների գնալ:
- Համաձայն այս սցենարի Ադրբեջանի և Հայաստանի միջև հարաբերություններ կարող են ծավալվել, երբ Լեռնային Ղարաբաղն ու մյուս տարածքները հետ վերադարձվեն:
- Տարածքների որոշ մասի հետ ստացումն այս սցենարի դրական կողմն է:
- Մենք կարող ենք համաձայնել հակամարտության երկարաձգման հետ միայն մեկ պայմանով, այն է՝ տարածքների վերադարձը, դրանից հետո կարող ենք շարունակել քննարկումները:
- Մենք պետք է կարողանանք հետ ստանալ մեր հողերը, երբ ցանկանանք:
- Մեր կարծիքով, տարածքների վերադարձը կարող է ձեռնտու լինել Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի հայերի համար:
- Որքանով Հայաստանը ներգրավված է ուրիշի տարածքների գրավման գործում, այնքան այն չի կարող միանալ միջազգային նախագծերին:
- Տարածքները պետք է հետ վերցվեն:
- Մեզ համար շահեկան է հարակից տարածքները հետ ստանալը:
- Հայաստանի կողմից բռնազավթված մյուս տարածքները ևս դժվար հարց են:
- Ամեն դեպքում պետք է հետ գրավել հարակից տարածքները:
- Եթե Ադրբեջանի տնտեսությունը շարունակի զարգանալ, ինչպես հիմա, ապա մենք կկարողանանք խաղաղ ճանապարհով հետ ստանալ մեր տարածքները:
- Բռնազավթված տարածքները պետք է հետ գրավվեն:
- Մենք պետք է հզորացնենք տարածքների ազատագրման մեր ռազմավարությունը:
- Հայերը պետք է վերադարձնեն բռնազավթած տարածքները և պայմաններ ստեղծեն այնտեղ մեր հասարակության ապրելու համար:
- Հայերը գրավյալ տարածքները հեշտ չեն թողնի: Նրանք ճնշման կարիք ունեն:
- ԼՂ անկախության խնդիրը չպետք է քննարկվի հիմա, առաջին հերթին անհրաժեշտ է ազատագրել մեր տարածքները, Ադրբեջանի հասարակությունը պետք է վերադառնա, և միայն դրանից հետո բոլոր այլ հարցերը կարող են քննարկվել:
- Մենք անդրադարձել ենք այս թեմային նախկին սցենարների ժամանակ. Իհարկե գրավյալ տարածքները պետք է վերադարձվեն, հակառակ դեպքում հակամարտության կարգավորման վերաբերյալ քննարկում չպետք է լինի:

- Հարակից տարածքը պետք է ազատագրվի, հայկական բանակը պետք է դուրս գա ԼՂ-ից և հարակից տարածքից:

«Միջանցք»

Հայեր

- Լաչինն ու Քյալբաջարը չի կարելի վերադարձնել:
- Քելբաջարն ու Լաչինը միանշանակ մերը պետք լինեն:
- Լաչինի ու Քելբաջարի տալու հարցը պետք է փակել:
- Լեռնային Ղարաբաղի տարածքները թող վերադարձվեն Ադրբեջանին, դա իրենց տարածքներն են, մեզ թող մնա Ղարաբաղն ու Լաչինի միջանցքը:
- Մենք չենք կարող պահել միայն Լաչինը ու Քելբաջարը, օրինակ նույն Աղդամը պակաս կարևորություն չունի Ղարաբաղի անվտանգության համար, ոնց կարելի է քննարկել այդ տարածքները հետ վերադարձնելու հարցը
- Պիտի լաչինի կարգավիճակը առանձնացվի մյուսներից
- Բացի Քելբաջարից, Լաչինից ադրբեջանական հողերը կարելի է վերադարձնել:
- Երրորդից-հինգերորդ սցենարներում Լաչինի և Քարվաճառի շրջանները պետք է պարտադիր մնան մեր կազմում... ֆիզուլին էլ...
- Ռեալ տարբերակ՝մենք միանգամից իրենց հողերն ենք տալիս, բացի Լաչինից:
- Քելբաջարի վերադարձ բացառվում է. այն մեր ու Ղարաբաղի մեջտեղն է. ցանկացած անախորժության դեպքում, մենք ենք հարվածի տակ լինելու:
- Մենք Լաչինը նվաճել ենք արյունով, ինչ հիմա թողնենք սենց իրանց հանձնենք հա, ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ Սյունիքով ինչ-որ ցամաքային տարածք նրանց տրամադրել:
- Լաչինը բավարար չէ Հայաստանի և Ղարաբաղի միջև լիարժեք կապ ապահովելու համար. իսկ Մեղրիով նրանց «ճանապարհ» տալը շատ թանկ կնստի մեզ վրա, կամ էլ Ադրբեջանը շատ խոշոր զիջումների պիտի գնա, որ համաձայնվենք:
- ԼՂ- ի հարցում ՀՀ-ի մաս չի համարվում Քալբաջարը: Եթե մենք միասին պետք է ապրենք, ապա այդ մասը պետք է տանք
- Հայերը չպետք է մոռանան, որ թե՛ Լաչինը, թե՛ Քելբաջարը հայկական հողեր են:
- Լաչինն ու Քելբաջարը թուրքերին հանձնելուց հետո առնվազն մի տաս-քսան տարի հետո նորից պատերազմ է լինելու:
- Լաչինը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի համար: Դրա վերադարձը բացարձակապես անընդունելի է:
- Հինգերորդ տարբերակի դեպքում միևնույն է վերջում հարցեր են ծագելու կապված Լաչինի միջանցքի հետ: Օրինակ, կարող են այնտեղ պայթյուններ լինել և այլն, ու այդ ամեն ինչից նորից կոնֆլիկտ սկսվի:

- Հա, երաշխիքը երաշխիք, բայց չէ որ հարցի լուծումից հետո, երբ հարցը լուծվի, Ադրբեջանն էլի կհարձակվի:
- Պատերազմի սկսման դեպքում Լաչինի միջանցքի գրավումով շատ հեշտությամբ կմեկուսացվի Ղարաբաղը: Վտանգավոր պայմաններ են պատերազմի սկսման դեպքում:
- Քելբաջարը մեզ պետք է պաշտպանվելու համար, կենսական նշանակություն ունի:
- Մենք կարող են տալ իրենց շրջակա շրջանները, բացի Քելբաջարից ու Լաչինից, բայց փոխարենը վերցնում ենք իրենցից Շահումյանը:
- Քելբաջարը և Լաչինը չպետք է հետ տրվի ոչ մի դեպքում, եթե այլ լուծում չգտնվի, թող ավելի լավ է այսպես էլ մնա, բայց հողերը հետ չտանք:
- Հայաստանը ու Ղարաբաղը կապող տարածքները չպետք է հետ տալ: Կարելի է, ասենք, ֆիզուլին վերադարձնել:
- Քելբաջարը և Լաչինը անվտանգության նշանակություն ունեն ոչ միայն Ղարաբաղի, այլև Հայստանի համար, այս շրջանները մյուսների նկատմամբ ավելի մեծ կարևորություն ունեն:
- Եթե Շուշին, Լաչինը ու Քելբաջարը մնան մեզ, մնացած շրջանները կարող ենք հետ տալ:
- Պահել Քելբաջարը, Լաչինը և անպայման տասնհինգ կմ անվտանգության գոտի ստեղծել... Մնացածների մասին կարելի է մտածել:
- Հինգերորդ սցենարը տանում է նրան, որ մենք մենակ Լաչին ենք ունենալու...
- Մենք Ադրբեջանից ուզում ենք Ղարաբաղը, Լաչինը, Շահումյանը:
- Լաչինը, Քելբաջարը, Ղուբաթլուն ոչ մի դեպքում հետ չի տրվելու:
- Հինգերորդ սցենարի երաշխիքը լավը չի, հիմա կարող ենք շրջանների մի մասը հետ տալ, հետո իրենց խոստումից կհրաժարվեն, ու մեր զիջած հողերը կմնան իրենց:
- Մեր երաշխիքը՝ Քելբաջարն ու Լաչինը նույնիսկ հետագայում զիջելու դեպքում նորից վերադառնում ենք սկզբին՝ կոտրած տաշտին:
- Լաչինի ու Քալբաջարի հարցը լուծելու բան չկա, ոչ ինչ-որ բանից առաջ, ոչ ինչ-որ բանից հետո, եթե տանք, մեր ճակատագիրը պարզ ա...:
- Քելբաջարը արդեն Ղարաբաղի մաս ա, բնակեցված ա, ինչ մեր տարածքը տանք իրենց:
- Ես այստեղից ոնց եմ դուրս գալու, Լաչինի նեղ միջանցքով՝ իրենց տարածքներո՞վ:
- Ցանկացած պահի այդ Լաչինով նեղ միջանցքը կփակեն: Սուտ է ասում, թե կապահովի անվտանգությունը:
- Քելբաջարն էլ է Հայաստան, Լաչինն էլ, մեր երկիրը չպիտի մասնատենք:
- Եթե Լաչինի շրջանը տանք, բայց միջանցքը պահենք, մեզ ոչ մեկ չի կարող երաշխավորի, որ այդ ճանապարհը անվտանգ կլինի:
- Քարվաճառի ու Լաչինի միջանցքը տա՞լ դրանց... Դա «երազանքա....»
- Լաչինը երբեք չի կարելի վերադարձնել:
- Ամեն դեպքում Լաչինը պարտադիր պետք է լինի մերը:

- Գրավված հողերը մերը չեն, բայց կարծում եմ, որ պետք է Լաչինն անպայման մեզ մնա
- Իրենց ձեռքին չի՞ չէ՞, որ իրենք համաձայնվեն մեզ տան, չտան.... Լաչինն էլ մերն է, Քելբաջարն էլ:
- Ղարաբաղի ու Հայաստանի միջև ցամաքային անվտանգ կապը շատ կարևոր է:

Ադրբեջանցիներ

- Մենք դեմ ենք, որ Քելբաջարի և Լաչինի շրջանները մնան Հայաստանին:
- Հակամարտության կարգավորումից հետ տարածքներից ոչ մեկը չի մնա Հայաստանի վերահսկողության ներքո և պետք է վերադարձվեն Ադրբեջանին, այդ թվում նաև Քելբաջարի և Լաչինի շրջանները:
- Քելբաջարի և Լաչինի շրջանները ևս պետք է վերադարձվեն Ադրբեջանին:
- Քանի որ այս տարբերակը մեր համար ընդունելի դրական դրույթներ ունի, Քելբաջարի և Լաչինի շրջանների վերադարձը կարող է հետաձգվել՝ որպես լուծում:
- Որպեսզի հարուստ բնական պաշարներով Քելբաջարի և Լաչինի շրջանները չթողնվեն հայերին, պետք է համաձայնել նրանց ավելի շատ տարածքներ տալ:
- Ամեն դեպքում առկա է կապ Հայաստանի և ԼՂ միջև: Այն տրամադրվում է ներկա կարգավիճակով: Սակայն եթե մենք ԼՂ հիմնախնդիրը լուծենք ի նպաստ մեզ, հայերը կարող են մուտք ունենալ դեպի Լաչին:
- ԼՂ և Հայաստանի միջև ցամաքային կապը կտրամադրվի, սակայն այս տարածքները պետք է վերադարձվեն մեր հսկողության տակ և մենք կտանք երաշխիքներ:
- Քելբաջարն ու Լաչինը չեն կարող մնալ Հայաստանի վերահսկողության ներքո:

Այլ կարծիքներ

Հայեր

- Հինգերորդ սցենարում պետք է անպայման ներառել Շահումյանի հարցը:
- Չէի ուզենա որ Ղարաբաղյան ոչ մի հող զիջման գնա, բացառապես այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ Ղարաբաղի:
- Ազերիները դեռևս շարունակում են Ղարաբաղը իրենց հսկողության տակ պահել:
- Եկեք հարակից շրջանները տանք, բայց հետո հենց մենք մեր ուզածին հասնենք, էլի ետ գրավենք:
- Եկեք ազատագրված տարածքները տանք ոչ թե Ադրբեջանին, այլ որպես բուֆերային զոնա՝ խաղաղապահներին:
- Եթե հարակից շրջաններն ենք քննարկում, ինչի մեր տասնչորս գյուղերը, Շահումյանի հարց չկա:

- Մի ամիս էլ մնար Բաքուն էլ կվերցնեինք
- Ադրբեջանն էլ հողեր ունի վերադարձնելու: Շահումյան ու Գանձակ ունենք:
- Եթե թուրքն ուզում է այս Ղարաբաղի մասին, մենք ողջ հողերի մասին կխոսենք: Նախիջևանը մեզ համար դաս է:
- Պետության համար զուտ տարածքը կարևոր է:
- Չեմ կարծում որևէ փաստով կարողանանք Գետաշեն ու Շահումյան պահանջենք, որովհետև այն ԼՂԻՄ-ի կազմում չէ: Ցավալի է...
- Ստատուս քվոյի տարբերակը, բայց Շահումյանն ու Գետաշենը Ադրբեջանը վերադարձնում է ԼՂ-ին:
- Շահումյանը զուտ հայկական տարածք է և պետք է մնա Հայաստանի կազմում:
- Ինչ վերաբերում է չորրորդ կետին, ապա Շահումյանի, Գետաշենի վիճակն այստեղ չի երևում:
- Այստեղ միայն ԼՂՀ-ն է քննարկվում, իսկ Շահումյանի մասին խոսք չկա:
- Երկրորդ սցենարի դեպքում Ադրբեջանի ամբողջ տարածքում եղած հայկական հողերը պետք է վերադարձվեն հայերին:
- Ղարաբաղի հարակից շրջանների վերադարձի դիմաց պետք է ստանանք մեր պատմական Նախիջևանը:
- Բա մեր Գետաշենն ու Շահումյա՞նը... Բա էդ հողերը...
- Դե թող մեր Գետաշենը տան, Արծվաշենը, Շահումյանը, մենք էլ մեր տարածքային ամբողջականությունն ենք ուզում ապահովել:
- Մենք պետք է Գանձակն ու Գեդաբեկը այն ժամանակ վերցնեինք ու վերցնում էինք, իշխանավորները չթողին:
- Ադրբեջանն էլ հայկական շրջաններ ունի գրաված՝ Շահումյանն ու Մարտակերտի հյուսիսային մասը, թող իրենք էլ էդ տարածքները վերադարձնեն:
- Եթե զիջումների մասին եք խոսում՝ ասեմ լուծումը. ՀՈՂԻ ԴԻՄԱՑ՝ ՀՈՂ: Վերադարձնում են մեր Արծվաշենը, Շահումյանը, Նախիջեւանը, մենք էլ հասկանում ենք, թե ինչու ենք տալու Աղդամը:
- Մենք Արծվաշեն ունենք, որ պետք է հետ տան, մենք Շահումյան ունենք, մենք Գանձակ ունենք, որ մեզ պետք է հանձնեն: Տալու՞ են, որ եկել եք ու քննարկում եք, թե մենք հողեր ենք իրենց տալու:
- Մինչև Քուռ գետը ընկած տարածքը պիտի մաքրենք Ադրբեջանից:
- Կիրովաբադի փոխարեն թող Նախիջևանը մեզ տան...
- Այսօր Շահումյանը վերաբնակեցվել է ռազմատենչ չեչեններով, և ով պիտի պատասխան տա դրա համար:
- Ինչի չենք քննարկում Շահումյանի, Գետաշենի հարցը, ինչի ենք այս տարածքների մասին մոռացել, դրանք էլ են մերը:
- Հարց. երրորդ սցենարը ենթադրում է ԼՂԻՄի տարա՞ծքը: Շահումյա՞նը... պետք է հաստակեցնել:
- Ինձ թվում է, որ Ադրբեջանի գլխավոր ցանկությունը մեր Զանգեզուրին տիրանալն է:
- Այդ հարակից տարածքները նախկինում էլի հայկական են եղել...

- Զիջում գնալիս պետք է հիշել Շահումյանը, Նախիջևանը ու Էլի շատուշատ հողեր:
- Ամեն կետում ասվում է «վերադարձնել Ադրբեջանին»: Բա մեր հողերը ո՞վ պետք է վերադարձնի:
- Դե եթե մենք իրանց պատմական հողերը պետք է տանք, թող Թուրքիան էլ մեր պատմական հողերը տա: Հնարավոր բան է՞:
- Մեզ պետք է վերադարձնեն մինչև 14 թվականն ունեցած մեր հողերը:
- Ներողություն, էս Նախիջևանն ու ա՞... էս թղթի վրա, Նախիջևանի հարց չկա՞:
- Զիջումներ պետք են, բայց ոչ մեր կողմից:
- Եթե Ադրբեջանը Շահումյանը վերադարձնի, այնտեղ ապրող ադրբեջանցիներն ի՞նչ են անելու: Չէ՞որ հայերն ու ադրբեջանցիները միասին չեն կարող ապրել:
- Շահումյանցին իրեն ղարաբաղցի արդեն չի համարում, ասում ա ղարաբաղցիք իրանց տարածքները պահեցին, իսկ մեզ չօգնեցին, որ մենք էլ ազատվենք, ոնց կարելի է այս հարցը այսպես թողնել:
- Երրորդ տարբերակում նշվում է, որ հետ ենք վերադարձնում ադրբեջանական հողերը, բայց չի խոսվում մեր հողերի մասին, որ դեռ իրանք պետք է մեզ վերադարձնեն:
- Եթե իրենք տարածք են ուզում, մենք էլ ծովից-ծով Հայաստանն ենք ուզում ...
- Մարտակերտի կեսը իրենց ձեռն է, Շահումյանն էլ: Թող գոհանան:
- Մինչև ժդանով հողեր ունենք, հիմա մեր ձեռքին չեն դրանք... Սա արդեն իսկ մեծ զիջում է մեր կողմից:
- Շուշին Թիֆլիսի ու Երևանի հետ հայկական մշակութային կենտրոններից է ու որպես այդպիսին պետք է մնա:
- Մեր միակ փոխզիջումը Բաքուն չգրավելն է:
- Ինչի՞ մենք մեր կորցրած հողերի հարցը չենք դնում բանակցությունների սեղանին ... Ղարաբաղի սահմաններն ավելի մեծ էին:
- Մարտունու տարածաշրջանում ադրբեջանական գյուղ չկար: երկու գյուղ հիմնեցին, ու ընդամենը տաս տարի հետո այդ գյուղերը ամենամեծն էին տարածքով ու բնակչությամբ:
- Արցախում հսկա տարածքներ կան, որոնք ամայի են, հարկավոր է դրանք վերաբնակեցնել, եկած օգնությունն ուղղորդել այդ նպատակին:
- Հայաբնակ նախկին տարածքները բնակեցված են ադրբեջանցիների կողմից, իսկ հայերը միայն գրավել են տարածքները, սակայն չեն բնակեցրել, ինչն ամենամեծ բացթողումն է ղարաբաղյան պայքարում:
- Վերջապես, ամեն մարդ պետք է ապրի իր տարածքում:
- Զինադադարը չի նշանակում, որ մենք լուծել ենք Ղարաբաղի հարցը, դեռ կան շատ շրջաններ, որոնց հարցը պետք է լուծվի:
- Գրավելու հարցը ավելի հեշտ է, քան գրավված տարածքները պահելը:
- Տասնհինգ տարի առաջ մի գեղ ես գրավել, հիմա քյալա ես տալիս, ասում ես չեմ տա ու չեմ տա: Բա պիտի մի բան էլ դու տաս, չէ՞: Բա էլ ինչո՞ւ ենք բանակցություն վարում:

Ադրբեջանցիներ

- Սահմանակից տարածքներում մարդիկ ապրում են վատ պայմաններում
- Հայերը կարողացել են բանավոր մեկնաբանել տարածքների՝ իրենցը լինելու հանգամանքը, իսկ մենք հիմա պետք է ցույց տանք, թե իրականում այդ տարածքները մերն են:
- Սկզբի համար նշենք, որ հայերը բռնազավթել են ադրբեջանական տարածքները:
- Եթե նրանք շարունակենք ապրել այստեղ, մենք կփորձենք բռնազավթել Ադրբեջանի տարածքները:
- Հայերն առել են այդ տարածքները:
- Թող տերերը հետ ստանան հողերը, թող դրանք մերը լինեն:
- Եթե ԼՂ-ն մնա Ադրբեջանի կազմում, խաղաղություն պետք է ապահովվի ողջ տարածքում:
- Մենք ամենուրեք կարող են հայտարարել, որ այս տարածքները մերն են:
- Լեռնային Ղարաբաղը ինքնավար կդառնա որպես Ադրբեջանի անբաժան մաս և այն ժամանակ, երբ բոլոր հարակից տարածքները կվերադարձվեն Ադրբեջանին:
- Մենք չենք կարողանա նոր սերնդի առաջ արդարանալ, որ այդ տարածքները ոչ թե ձերն են, այլ մերը:
- Պատմականորեն ԼՂ-ն Ադրբեջանի կազմում է եղել, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը բռնազավթել է մեր տարածքները:
- Եթե հայացք նետենք անցյալին, կտեսնենք, որ Հռոմը բռնագրավել էր աշխարհի մեծ մասը, սակայն դա չի նշանակում ամենևին, որ բոլոր տարածքները հիմա պետք է վերադարձվեն նրան:
- Ոչ ոք տարածքները հետ չի տալիս:
- Եթե մենք Հայաստանին իր ապագան ինքնուրույն որոշելու հնարավորություն տանք, ապա նրանք պետք է մեզ վերադարձնեն Զանգեզուրի տարածքը:
- Կորսված տարածքները կարող էին ափսոսել Ադրբեջանի համընդհանուր զարգացումից:

Փախստականներ և ներքին տեղաշարժված անձինք

Կողմ են վերադարձին

Հայեր

- Փախստականների հարցը ամեն դեպքում անխուսափելի է. պետք է թողնենք, որ գան, բայց նաև պետք է փորձենք այսպես ասած ճնշել, օգտագործենք իրենց քաղաքականությունը:
- Փախստականները պետք է վերադառնան իրենց բնակավայրերը, երկու կողմից էլ, ադրբեջանցիները թող վերադառնան, եթե հայերն էլ վերադառնան:
- Փախստականների վերադարձը վտանգ չի, Ղարաբաղը արդեն հայերի ձեռքում է, հետո հարց է, նոր սերունդը գկնա, թե չի գնա, նրանց մոտ էլ չեն մնացել փախստականներ:
- Եթե բացառվում է Ադրբեջանի կազմում լինելը, ես խնդիր չեմ տեսնում, թող արդբեջանցիները գան, ապրենք:
- Փախստականների վերադարձը պետք է կատարվի միայն ադրբեջանական տարածքների վրա: Եթե գալիս են, թող գան, բայց ոչ Շուշի, կամ Մարտակերտ:
- Միջազգային օրենքներով մենք չենք կարող արգելել փախստականների վերադարձը:
- Եթե անկախ լինենք, կամ Հայաստանի կազմում, է, թող վերադառնան: Հայերս գնում ենք, չէ՞, Թուրքիայում կամ Սիրիայում ապրելու:
- Մոտ կես միլիոն մարդ եկավ Հայաստան, սակայն նրանք պետք է հասկանան, որ դա ժամանակավոր բնույթ է կրում և ուշ թե շուտ վերադառնալու են:

Ադրբեջանցիներ

- Տնտեսական տեսանկյունից յուրաքանչյուրը պետք է իր հայրենիք վերադառնա:
- Մեր հասարակության համար կարևոր է վերադառնալը:
- Փախստականները պետք է հետ գնան:
- Ղարաբաղի տարածքում ապրող փախստականների իրավունքները պետք է վերանայվեն:
- Երկու ազգերի տեղաշարժված անձիք և փախստականները պետք է վերադարձվեն իրենց հայրենի հողեր:
- Երկու ազգությունների փախստականները և տեղահանված անձիք կվերադառնան իրենց հայրենի հող և կապահովվի նրանց խաղաղությունը և անվտանգությունը:

- Հիմնական հարցը փախստականների վերադարձն է և միայն այն դեպքում, երբ բռնազավթված տարածքները հետ կվերադարձվեն, կքննարկվեն կարգավիճակի հարցը:
- Տեղաշարժված անձիք միանշանակորեն պետք է վերադառնան իրենց հայրենի հողեր:
- Վերադարձի ծրագր շրջանակներում փախստականները կարող են հետ վերադարձվել:
- Հիմա , երբ 20-25 տարիներից հետո փախստականները հետ կվերադառնան իրենց հայրենիք, կարող է հանրաքվե անցկացվել:
- Հենց որ փախստականները հետ վերադարձվեն, պետք է ապահովվի նրանց սոցիալական, տնտեսական և կանոնակարգային անվտանգությունը:
- Արդեն 300 տարի է, ինչ նրանք կռվում են սրա համար. փախստականները պետք է հետ ուղարկվեն Հայաստան և նրանք պետք է մասնակցեն սոցիո-քաղաքական աշխատանքներին:
- Այստեղ ապրող հայրերը կարժանանան նույն աստիճանի հարգանքի, որքան որ իրենց հայրենիք վերադարձած փախստականները:
- Իրենց հայրենիք վերադարձող փախստականների պետք է փոխհատուցում վճարել:
- Տեղահանվածները վերադառնում են հետ և ձեռք են բերում երկու հասարակությունների համակեցության երաշխիքներ:
- Իններորդ դրույթը կարելի է ընդունել միայն փախստականներին հետ ուղարկելու և տարածքային ամբողջականությունը վերականգնելուց հետո: Տասներորդ դրույթի համաձայն պատերազմ սկսելու հնարավորություն կա:
- Փախստականները պետք է հետ վերադարձվեն:
- Հենց որ տարածքները հետ վերադարձվեն, փախստականները պետք է հետ ուղարկվեն:
- Իրականում նրանք կարող են գնալ այլ տեղեր, կամ կարող են չգնալ:
- Այս տարբերակը շատ առավելություններ ունի՝ փախստականները հետ կգնան, այլևս պատերազմ չի լինի:
- Հայերը և ադրբեջանցիները, ովքեր ապրել են Լեռնային Ղարաբաղում պատերազմից առաջ, պետք է այնտեղ ապրեն հիմա:
- Փախստականները կվերադառնան իրենց հայրենի հողեր:
- Այս գործընթացի հիմնական խնդիրը տեղահանվածների՝ իրենց հայրենիք վերադարձն է:
- Հենց որ Ղարաբաղը հետ բերվի, հայերը կկարողանան ապրել Ադրբեջանի տարածքում, ինչպես մյուս բոլոր ազգերը:
- Տեղահանված մարդիկ պետք է հետ ուղարկվեն:
- Միայն ԼՂ-ն հետ ստանալուց հետո՝ ադրբեջանցիները կարող են այնտեղ բնակվել:
- Փախստականների իրավունքները պետք է ամբողջովին վերականգնվեն:
- Նույնիսկ ստատուս-քվոյի պահպանման դեպքում փախստականները պետք է վերադառնան

- Առկա է նաև հակամարտության <քայլ առ քայլ> կարգավորումը. գրավյալ տարածքները վերադարձվում են; փախստականները վերադառնում են: Հաստատվում է խաղաղություն: Ինչ-որ ժամանակ անց կարգավիճակի հարցը կարող է քննարկվել: Հավանաբար մենք որևէ այլ բանի կարիք չէինք ունենա և կսկսեինք ապրել ինչպես նախկինում:

Դեմ են վերադրաձին

Հայեր

- Առնվազն 20 տարի հետո վերաբնակեցված տարածքները ադրբեջանական կդառնան, ինձ լսեք:
- Չեմ ցանկանա որ ադրբեջանցիները վերադառնան Շուշի: Ինչքան էլ հարևանություն անենք նրանց հետ, միևնույն է հայեր վերջը վաղ թե ուշ թողնելու դուրս են գալու հենց Շուշիից:
- Հինգերորդ սցենար չի ընդունվի, քանի որ փախստականների վերադարձ չի լինի:
- Ադրբեջանցի փախստականներին չպետք է թողնել Ղարաբաղում բնակվել, այլապես նոր կռիվ կսկսվի:
- Փախստականների վերադարձին դեմք ենք:
- Փախստականների վերադարձը մեզ ձեռնտու չի, բացի այդ, ո՞ր հայը հետ կգնա Ադրբեջան:
- Դա նշանակում ա, մենք ադրբեջանցիներին ասենք, եկեք մեր քաղաքաներում ու գյուղերում ապրեք ու տողատակում հասկանանք, թե մեզ էլ դուրս հանեք:
- Եթե իրենց փախստականները ուզում են վերադառնան, իսկ մերոնք չեն գնա իրենց նախկին բնակավայրերը, ուրեմն՝ էստեղ Ադրբեջանի հայտնի ագրեսիվությունը կգործի եւ Ղարաբաղում հայ չի մնա:
- Մենք չենք կարող երաշխիքներ տալ, որ Ղարաբաղը հայերով կկարողանանք վերաբնակեցնել, ու տարիներ հետո հանրաքվեով մեր տարածքները կփոխենք:
- Պետք է ադրբեջանցիներին ուղղակի արգելել վերադառնալ ԼՂ: Բախումները հայերի և ադրբեջանցիների միջև անխուսափելի են:
- Ես աբսուրդ եմ համարում փախստականների վերադարձը, քանի որ նրանք շարունակելու են անկարգություններ անել և շարունակվելու են կոնֆլիկտները: Հետևաբար ավելի լավ է որոշակի տարածքներ տալ Ադրբեջանին, սակայն չթողնել, որ ադրբեջանցիները ապրեն մեր կողքին:
- Սումգայիթի դեպքերից հետո հենց այս դպրոցից սկսած ադրբեջանցի աշակերտներին սկսեցին դպրոցներ չթողնել, ամենինչից իրենց կտրեցինք, կամաց կամաց թողեցին գնացին, ոնց թողենք այդ գաղթականները հետ գան:
- Ղարաբաղյան պատերազմը մեզ փրկեց, այս շրջանի մոտ քառասուն գյուղերից միայն երեքն էին հայկական, այս դպրոցն էլ խառը դպրոց էր,

ուներ երեք ադրբեջանական և մեկ հայկական դասարաններ, որ պատերազմը չսկսվեր, այս շրջաններն էլ ադրբեջանական կլինեին արդեն:

- Մենք վերջապես ադրբեջանաթափ եղանք, շատ լավ եղավ, որ սենց եղավ, թե չէ արդեն Երևանին էին հասել, լռիվ թուրքանալու էինք:
- Եթե ադրբեջանցին գա Ստեփանակերտ ապրի, վաղը մյուս օր Ղարաբաղը կդառնա Նախիջևան:
- Եթե փախստականները վերադառնան, սա կնշանակի կրկին վերադառնալ Ադրբեջանի գերիշխանության, դրանք աստիճանաբար Հայաստան էլ կներխուժեն այսպես:
- Փախստականի վերադարձ նշանակում ա Նախիջևանի կրկնողություն կլինի:
- Հինգերորդին համաձայն եմ առանց փախստականների կետի:
- Մենք Շուշին չենք կարող նորից թուրքերով բնակեցնել:
- Եթե ադրբեջանցի փախստականները վերադառնան, նրանք շատ արագ կբազմանան ու հանրաքվեի ժամանակ Ղարբաղը կանցնի Ադրբեջանի կազմը:
- Մտավախությունը նաև այն է, որ ադրբեջանցի փախստականների թիվը մեծ է:
- Հինգերորդ տարբերակին համաձայն եմ, բացի փախստականների վերադարձի կետից. Շուշիում ադրբեջանցիք ՉՊԵՏՔ է լինեն:
- Ավելի լավ է փակ երկրում ապրենք, բայց հանգիստ խղճով:
- Ադրբեջանցիները գալով Հայաստան, կհիմնավորվեն կրկին ու շատ հեշտությամբ ի վերջո կգրավեն ամբողջ Հայաստանը:
- Ադրբեջանցիներին ընդունող չկա: Մեջտեղ արյուն կա, սպանություն կա: Այս տարբերակը միանշանակ բացառվում է:
- Ասենք Խոջալուի նախկին բնակիչը նորից վերադարձավ: Կրկին նախկին իրավիճակն է կրկրվելու: Էլ ինչու՞ ենք էս ամեն ինչը արել:
- Նոր սերունդը չգիտի ինչ է նշանակում ապրել ադրբեջանցիների հետ կողք-կողքի. դա իրենց համար նորություն կլինի: Տաս տարի հետո էլի ադրբեջանցիք կտնավորվեն, կշատանան ու էլի մեզ կնեղեն:
- Ադրբեջանցիները Շուշին քանի անգամ են վառել, հենց մի քիչ մոռանում էինք, նորից տները վառում էին, իրանց ոնց թողենք հետ գան:
- Մինչև պատերազմը էսպես էր. մի թուրք հովիվ գալիս էլ Ղարաբաղ հիմնվում, հետո բարեկամին էր բերում, ընկերոջը, մի քանի ամիս հետո գյուղի կարգավիճակ էին ստանում, գալիս էին հայկական գյուղերում հիմնվում էին, ու մի քանի ամիս անց մեզ գերակշռում էին, մենք համաձայն չենք իրենց իրավունք տալ, որ նորից նույնը անեն:
- Ադրբեջանական սփյուռք Ղարաբաղում... շտոտը դուրս չի գալիս:
- Զոռով ազատվել ենք դրանցից՝ ոչ մի փախստական թող չգա: Ու չեն էլ գա. գալիս են, ի՞նչ անեն:
- Թուրքիայում սաղ իրանցն էր, մեր ֆիդայինները չէի՞ն գործում... լավ էլ բունտ էին անում... հիմա ի՞նչ տարբերություն փախստականը մեր հող ա հետ գալիս թե իր, էլի կռիվ ա անելու:

- Հին փախստականը չի գա, մենք էլ չենք համաձայնվի... Ի՞նչ լավություն են արել, որ մի հատ էլ հետ ընդունենք:
- Եթե փախստականներին թույլ տանք հետ գան, ռեֆերենդումը կորցրած բան է:
- Հայկական ընտանիքը միջինը չորս հոգուց է բաղկացաց, իրենցը՝ տաս: Պարզ հաշվարկ:
- Մենք հողը ականազերծեցինք, հիմա փախստականը գա մշակի՞... բա չէ՛...
- Փախստականների վերադարձի տարբերակը պետք է բացառվի:
- Փախստականին բերելը նշանակում է տունը ներսից փլել:
- Վերաբնակեցման սցենարը մենք տեսել նք Խոջալլուում... Տեսանք, թե դա ինչ արդյունք ունեցավ... Նույնը կլինի նաև հիմա:
- Շա՞տ շնորհակալ ենք փախստականների վերադարձից, թող իրենց պահեն:
- Ինչո՞ւ պիտի թուրքը մեր հողի վրա ապրի:
- Իրենք կգան, որպեսզի արագորեն բազմանան ու կրկին նույն վիճակին բերեն մեզ՝ մեր եկեղեցիները ավերեն, մեզ մեր ինքնությունից զրկեն:
- Փախստականների վերադարձ, հողերի վերադարձ, խաղաղապահ զորքեր... ամենաանընդունելի պայմաններն են:
- Աղդամի հազարավոր ծնունդ գրանցված է Ստեփանակերտում... սա արդեն վտանգավոր մանրուք է:
- Փախստականների վերադարձը ավելի վտանգավոր է, քան պատերազմը:
- Շատ լուրջ և մեծ բացթողում կա այս տեքստում: Չի կարելի գրել ԼՂ հայեր, բա էլ ովքե՞ր են ապրում հայերից բացի: Առանց այդ էլ Ադրբեջանը շահարկում է իրենց համայնքի իբրեւ գոյությունը: Չի կարելի, մենք մեր հողում ենք ու օտարներ չկան, չեն լինելու:
- Կարծում եմ, շատ սխալ կլինի, եթե թույլ տանք, որ դրանք վերադառնան: Անթույլատրելի է:
- Եթե վերադառնան, դա էթնիկական մեծ վտանգ է ... Նրանք մտածում են ազգի քանակի, թե՞ որակի մասին:
- Իրենց փախստականը գալիս է Ղարաբաղ, դա նպատակային է, իսկ մեր փախստականը գնում է Բաքու, ինքը ռեֆերենդումի չի մասնակցելու՞, տենց չի լինի:
- Այլ տարբերակ՝ վեցերորդ-հինգը, բայց փախստականների հարցը պետք է հստակեցվի:
- Հինգերորդ սցենարը կարելի է ընդունել միայն փախստականների վերադարձի մասին կետ հանելուց հետո, քանի որ հակառակ դեպքում ցանկացած հանրաքվե Ադրբեջանի օգտին կլինի:
- Հանրաքվեն պետք է անցկացնել առանց փախստականների վերադարձի:
- Համաձայն եմ, որ ղարաբաղյան պատերազմի ամենամեծ արդյունքը Հայաստանից ադրբեջանցիների հեռանալն էր:
- Չորրորդ սցենարում ամենաանընդունելին Շուշիի և Ստեփանակերտի վերաբնակեցումն է:
- Դրական կողմն այն է, որ մենք մեր հողի տերն ենք, ու Հայաստանն ադրբեջանցիներից մաքրազարդվել է:

Ադրբեջանցիներ

- Բարդ իրավիճակ կարող է ստեղծվել, և այն արդեն ստեղծվել է, սակայն Ադրբեջանը չպետք է գնբա այնտեղ, քանի որ այն ոչ մի օգուտ չի տա
- Կառավարությունն ի վիճակի չի լինի ապահովել անվտանգությունը:

Մենք չենք վերադառնա, նրանք չեն վերադառնա

Հայեր

- Փախստականների վերադարձը շատ զարմացրեց: Վանդակից փախած թռչունը երբեք չի վերադառնա:
- Ես կռվի ժամանակ փախել, եկել եմ ու չեմ վերադառնա, եթե ադրբեջանցի փախստականը հետ գա:
- Ադրբեջանցին էլ չի գա:
- Եթե փախստականները գան, նրանց ամեն օր ծեծելու ենք, կվախենան, չեն գա:
- Բաքվի հայը երբեք Բաքու չի վերադառնա, համենայն դեպս հիմա:
- Աղդամում եմ ծառայել, Աղդամը այնպես է քայքայվել տարիներ շարունակ, որ նրանք չեն կարողանալու վերադառնալ:
- Փախստականների համարժեք վերադարձ չի լինելու:
- Հայերը չեն գնա Ադրբեջանում ապրելու:
- Ադրբեջանցիները չեն վերադառնա Ղարաբաղ և Հայաստանի իշխանություններ ներքո չեն ապրի
- Այդ երբ է եղել, որ հայը թուրքին վտարել է ու հետո հետ ա եկել.... նրանց էն օրն ենք գցել, որ հետ գան:
- Փախստականները չեն վերադառնա...
- Ես Բաքու չեմ վերադառնա: Այնտեղ, Բաքվի կենտրոնում թողել եմ բնակարանս ու արդեն այստեղ տեղավորվել:
- Ինձ թվում է ոչ մի փախստական էլ չի գա, բոլորն էլ կվախենան, հատկապես մենք՝ հայերս:
- Ներկա վիճակով համաշխարհային հանրության համար առավել իրատեսական տարբերակը սա է, բայց փախստականները հետ գնացողը չեն:
- Ոչ մի հայ փախստական չի գնա Ադրբեջան, ու մենք էլ չենք ուզում, որ իրենք հետ գան:
- Մեր փախստականների մեծ մասը գնացել է Ռուսաստան, Էնպես որ էլ չեն վերադառնա, ոչ մի պայմանի դեպքում...
- Ես չեմ կարող պատկերացնել, որ ադրբեջանցի փախստականը վերադառնա, տեսնի իր տունը քանդված, նա ո՞նց կարող է խաղաղ ապրել իր հարևանի հետ:
- Սումգայիթի ու Բաքվի փախստականներն այնպիսի հոգեբանական վիճակում են, որ նրանք այլեւս երբեք չեն ցանկանա վերադառնալ:
- Չեն գա, դրանք արդեն գիտեն, որ հայերն էլ պատասխան կարող են տալ:

- Ադրբեջանցի փախստականներն էլ չեն վերադառնա: Նրանք էլ են մեզ նման մարդիկ:
- Եթե ինքս ապրել եմ Բաքվում, զգացել եմ իրենց վերաբերմունքն ու ուզում եմ ասել, որ մեր երկու ազգերը իրար կողքի պարզապես չեն կարող ապրել:
- Բացառվում է, որ փախստականները հետ գնան նախկին բնակության տեղերը. թե՛ հայերը և թե՛ ադրբեջանցիները:
- Փախստականների հարցը արդեն իսկ լուծված է. նրանք ոչ մի դեպքում չեն վերադառնա:
- Ոչ ադրբեջանցիները կվերադառնան, ոչ էլ հայ փախստականները: Հազիվ մի հինգ տոկոսը վերադառնա:
- Հայ գաղթականների տներում հիմա ադրբեջանցիներ են ապրում, լավ էլ ապրում են, մենք ուր հետ գնանք:
- Ոնց կարող են հայերը գնան ու իրենց հին տներում հանգիստ ապրեն, մենք դեռ "կացինի" պատմությունը գոնե լավ ենք հիշում:
- Հալա մի տեսեք դրանք կվերադառնա՞ն:
- Նույնիսկ փախստականների վերադարձի դեպքում որոշ ժամանակ հետո, նկատելով հայերի վերաբերմունքը իրենց նկատմամբ, նրանք նորից հեռանալու են:
- Համաձայն չեմ, որ իր մաշկի վրա կռիվ տեսած փախստականը հետ կգա:
- Լավ կյանքը տեսնողը չի ուզենա վերադառնա ավելի դժվար կյանքի:
- Ասենք թե թղթի վրա համաձայնվեցինք, հաշտվեցինք, էն ո՞ր հայը կգնա էլի Սումգայիթ ու Բաքու կապրի:
- Ինչպես են նրանք պատկերացնում, որ փախստականները կվերադառնան...
- Մերոնք հո թուրքերի մեջ չեն վերադառնալու ապրեն: Շահումյան տատս ու պապս չեն գնա: Հո չենք կորցրել մեր բոլոր բնազդները:
- Վերաբնակեցումն անհնար է. կհամաձայնեն մենակ կրիմինալները...
- Չեմ կարծում, որ այդքան ապրումներից ու այդքան բան տեսնելուց հետո որևէ փախստական կվերադառնա իր տուն:
- Իսկ ինձ թվում է ոչ ոք չի գա, ինձ թվում է, որ կգիտակցեն, որ սա իրենց հողը չի: Հետո էլ վախի զգացում ունեն չէ՞, պարտված երկիր են վերջ ի վերջո:

Ադրբեջանցիներ

- Անհնարին է միասին ապրել:
- Եթե անգամ հակամարտությունը կարգավորվի, տեղաշարժված անձիք հազիվ թե ի վիճակի լինեն վերադառնալ իրենց հայրենիք, քանի որ նրանք արդեն հաստատվել են Ադրբեջանում և դրա տարբեր մասերում:
- Փախստականները ամբողջովին իրենց հայրենի տներ չեն վերադառնա:
- 17-18 տարիների ընթացքում ծնված երեխաները կվերադառնան արդյո՞ք Ղարաբաղ:
- 20 տարուց շատ չեն լինի վերադառնալ ցանկացող տեղահանված անձիք:
- Անիրատեսական է փախստականների վերադարձը:

- Տեղահանված մարդիկ մերժում են հետ վերադառնալու առաջարկը:
- Ադրբեջանցիները երբեք չեն գնա ապրելու Հայաստան, քանի որ կվախենան:

Վերաբերմունքը

Հայեր

- Փախստականների վերադարձի խնդիրը շատ վտանգավոր է:
- Հինգերորդ. եթե իրենց փախստականները վերադառնալու են, իսկ հարց չի առաջանում, որ իրենք թվով ավելի շատ են դառնալու, քան հայ բնակչությունն է: Իսկ մեզ մոտ միայն Բաքվից ավելի շատ են փախստականները, քան Արցախից, ուրեմն իրենք ավելի շատ են լինելու:
- Փախստականների հարցը ինչպես է լուծվելու, երբ միշտ էլ թուրքերը հայերին կուլ տվող են եղել:
- Ղարաբաղում փախստականների խնդիրն է, շուտով Ղարաբաղում բնակչության կեսը կլինեն ադրբեջանցիները, հետո էլ շնորհիվ փախստականների ադրբեջանցիները մեծամասնություն կդառնան: Արդեն կբացվի ազգային ինքնորոշման հարցը: Կդառնան ադրբեջանցի
- Փախստականների վերադարձը գործնականորեն անհնարին երևույթ է:
- Եթե ադրբեջանցի փախստականները վերադառնան Ղարաբաղ ու ապրեն Ղարաբաղի կանոններով, բայց եթե պիտի Ադրբեջանի կանոններով ապրեն մենք համաձայն չենք:
- Ադրբեջանցիները խորամանկությամբ կարողանում են սերունդների մեջ թույն ներշնչել հայերի ու հայաստանցու հանդեպ, դրա համար էլ փախստականների վերադարձը վտանգավոր է, քանի որ նրանք կարող են դիվանագիտորեն լռել, սակայն տակից իրենց խառնակչությունն անել:
- Մենք մոտ կես միլիոն փախստական ունեինք: Ազատագրված տարածքները պետք է բնակեցվեին հենց փախստականներով: Սա իրավաբանորեն էլ հիմնավորված կլիներ, քանի որ նրանք Ադրբեջանի քաղաքացիներ են:
- Ադրբեջանը պիտի փոխհատուցի փախստականներին իրենց բոլոր կորուստները, մենք այլ բան չունենք նրանց հետ խոսելու:
- Այո, իրենց փախստականները կհամաձայնվեն ու կգան:
- Փախստականների վերադարձի պայմանում պատերազմի վտանգը ավելի մեծ կլինի: Թշնամանքը նրանց մեջ ավելի շատ է:
- Թուրք փախստականը հենց մեր թաղած ոսկիների մասին լեգենդներով գայթակղված կգա մեր հող: Մեր իսկ լեգենդը ադրբեջանական կառավարությունը մեր դեմ կօգտագործի:
- Եթե ադրբեջանցիները վերադառնան, Ղարաբաղը կհայազրկվի:
- Ադրբեջանցիների բազմանալուց պետք չի վախենալ, մենք էլ շատ երեխա ունենանք, հողերը բնակեցնենք, տեսնենք դրանից հետո ով պիտի մեզ դուրս անի:

- Ինձ թվում է, շատ քիչ հայ կգնա բնակվելու այդ տարածքներում, հաշվի առնենք նաև այն փաստը, որ ազերիները շատ երեխա են ունենում, որ նրանք արդեն հիմա մեզնից շատ-շատ են:
- Փախստականների վերադարձը կարող է ստեղծել նրանց համար գործազրկության խնդիր ու նաև ազգամիջյան բախումների նոր վտանգներ
- Եթե փախստականները վերադառնան, վախի մթնոլորտը անպայման կտիրի, ինձ թվում է հայերը չեն կարողանա ադրբեջանցիների կողքին ապրել՝ անգամ երաշխիքներ ունենալով:
- Թող ադրբեջանցիները վերադառնան ու ապրեն հայերի մեջ ու զգան, թե ինչ է նշանակում ապրել ուրիշ ազգի մեջ ու լինել փոքրամասնություն: Այո, վտանգ կա, որ դեմոգրաֆիական վիճակը կարող է փոխվել մի երկու սերունդ հետո, բայց դա միայն թուրքերից չէ կախված, այլ նաև մեզանից:
- Չորրորդ սցենարի դեպքում հինգ տարի հետո վերադարձած փախստականները մեծամասնություն կկազմեն:
- Հենց փախստականները գան, մի "հինգ-վեց" օրից նույն պատմությունն է դառնալու, գյուղապետերը ադրբեջանցի են լինելու, ամեն ինչ արդեն իրենք էլ կառավարելու և այդպես շարունակ:
- Եթե ադրբեջանցի փախստականները վերադառնան հայկական տարածքների վրա, որոշ ժամանակ հետո այդ տարածքի հիսուն տոկոսից ավելին կլինեն ադրբեջանցիներ:
- Եթե նույնիսկ փախստականները հետ վերադառնան երկու կողմից էլ, միևնույն է առաջվա հարգանքը իրար նկատմամբ հնարավոր չէ:
- Եթե ադրբեջանցին եկավ Հայաստանում ապրելու, ապա ժամանակի ընթացքում կվերանա հայկական մշակույթը, հայկական ազգային հերոսները կմոռացվեն:
- Մենք երկար տարիներ միասին ապրել ենք: Եթե իրենք վերադառնային անգամ մեզ մոտ, Մասրիկ, տաս տարի հետո այստեղ հայեր չէին մնա: Էլ ուր մնաց իրենք այն հողեր վերադառնան:
- Ձեռքս չի բռնում այս տարածքում տուն սարքեմ, վստահ չեմ որ վաղը ադրբեջանցու բաժին չի դառնա:
- Եթե փախստականները վերադառնան, տասը տարի հետո նրանք ավելի շատ կլինեն, քան մենք:
- Եղեգնաձորում ադրբեջանական գյուղեր եղել են, և մենք ադրբեջանցիների հետ կողք կողքի ապրել ենք առանց կռվի, քանի որ մի ամուր բռունցքի ներքո ենք ապրել, որի անունն էր ԽՍՀՄ, հիմա ուզում ենք, որ այդ ամուր բռունցքի դերը կատարի Հայաստանը:
- Ադրբեջանցիները շատ արագ բազմանում են ու մի քանի տարում մենք հաստատ կդառնանք փոքրամասնություն, եթե փախստականները վերադառնան
- Մենք չենք կարողանա ապահովել, որ հետ եկող փախստականների քանակը չգերազանցի 1988թ. ծավալները:

- Նույնիսկ եթե համաձայնվենք, որ ադրբեջանցիները հետ գան, պետք է հասկանանք, որ նրանք միանգամից հետ չեն գա, դա ժամանակ կպահանջի:
- Աաաա՛, դուք չեք ճանաչում է, դրա համար ասում եք, չեն գա, կգան, սենց կլինի, նենց կլինի... Լավ էլ կգան:
- Թուրքն ու հայը հնարավոր չի միասին ապրեն, ես էդպես բան չեմ պատկերացնում, խաղաղություն հնարավոր չի լինի ապահովել նման պայմաններում:
- Մեր այսօրվա վերաբնակեցման ծրագիրը մի հատ տուն տալով սահմանափակվելու է, իսկ ադբեջանցիք քայլ առ քայլ, «սողալով» գալու են էլի մեր աչքի առաջ շատանան:
- Պատկերացնու՞մ եք, թուրքերը վերադառանան, ու թուրք երիտասարդները սկսեն ծառայել մեր բանակում:
- Փախստականները որ եկան, հիմա էլ կասեն, ազգային փոքրամասնություն ա, մի հատուկ ֆակուլտետ բացենք: Բացենք, լավ չի լինի, չբացենք, կասենք, մարդու իրավունք, միջազգային հանրություն, ֆրա-ֆրանգստան, էս կողմ, էն կողմ...
- «Փախստականները վերադառնում են ու քայլեր են ձեռնարկվում խաղաղ համակեցության համար».... հա, բա ոնց, էլ ինչ նոր հեքիաթներ:
- Մի կին որ երկու տղա ա կորցրել, ճանապարհին որ թուրք տեսնի, ի՞նչ կանի... մատերով աչքերը կհանի, անկախ նրանից ով ով ա:
- Փախստական եք ասում, իսկ եթե իրենք էլ ասում են, թե Ղարաբաղն իրենց սահմաններում է՝ ուրեմն էլ ի՞նչ փախստական
- Բա այդ տարածքներում հիմա մերոնք են ապրում, մեր ընտանիքները բա ու՞ր են գնալու:
- Փախստականների հարցը բանակցային գործընթացից պետք է հանել. արդեն տասնութ տարի է սա է իրավիճակը, հայերն էլ հետ չեն գնա Բաքու:
- Երեսուն հազար ադրբեջանցի է դուրս եկել Ղարաբաղից, բայց հետ կգան արդեն հարյուր երեսուն հազար...
- Իրենց փախստականները էնքան շատ են հետ գալու, որ երկուսին սպանենք, իրեքը մեկա մնալու են:
- Մինչև 1917 թիվը Նախիջևանում հայերը մեծամասնություն էին, իսկ հիմա՞:
- Փախստականները եթե գան, գիտեք՝ ինչքան արագ են բազմանում: Տարիներ անց ժողովրդագրական պատկերը կփոխվի, հանրաքվե կանցկացնեն ու կստանան իրենց ուզածը:
- Ադրբեջանցիները շատ արագ բազմանում են. պատկերացնում եմ, թե ինչ կլինի, եթե որոշեն հանրաքվե անցկացնել:
- Ղարաբաղից փախստական չկա... Դա միայն թուրքական քաղաքականության արդյունքում է, էթնիկ հարկադիր զտում:
- Ալիևը Մեջլիսի նախագահ եղած ժամանակ հայտարարեց. «Ես որ եկա իշխանության, Ղարաբաղում չորս տոկոս ադրբեջանցի էր ապրում, իսկ հիմա՝ քսանյոթ: Մի տաս տարի հետո Ղարաբաղի հարցը կլուծենք»: Դե արի ու հավատա ադրբեջանցիներին:

- Փախստականների վերադարձի դեպքում տաս-քսան տարի հետո էս տարածքները ադրբեջանական կդառնան:
- Թուրքը հողի համար միշտ էլ կգա: Էստեղի հողերը շատ լավն են, նրանք Բաքուն էլ կթողնեն, կգան...
- Ադրբեջանցիները շատ արագ են բազմանում, եթե գան հետ մի քանի տասնամյակ հետո մեզ թվապես կգերակշռեն:
- Ադրբեջանցիները լույսի արագությամբ են բազմանում, դրա դեմն առնել չի լինի:
- Նույնիսկ ադրբեջանցիների տեսանկյունից «փախստական» հասկացություն գոյություն չունի. իրենք «իրենց» երկրի մի շրջանից գնացել են մյուս շրջան:
- Թուրքերի էգերը տարին երկու անգամ երեխա են բերում, որ համաձայնվենք փախստականները գան, կկործանվենք:
- Հնարավոր չէ պատկերացնել, թե ինչպե՞ս Հայաստանում բնակվող ղարաբաղցիները կվերադառնան ԼՂ:
- Չորրորդ տարբերակը ընդունում ենք, թող ադրբեջանցիք գան ապրեն, բայց մենք էլ մեր նախապայմաններն ունենք:
- Իսկ սեփականության, կորուստների փոխհատուցում չենք ուզո՞ւմ... Որքան հայ կար հենց նույն Բաքվում, ընդ որում՝ հարուստ հայեր...
- Խնդիրը պետք է նժարի վրա դրվի... այս դեպքում, մի բան էլ Ադրբեջանն ա մեզ պարտք:
- Ադրբեջանի ընդդիմադիրները մեղադրել են իրենց նախագահին փախստականների մասին խոսելու համար, որովհետեւ այդպես դեֆակտո ընդունում են մեր անկախությունը:

Ադրբեջանցիներ

- Փախստականները մեզ համար խնդիրներ են ստեղծում:
- Ադրբեջանցիները ԼՂ-ի պատմական բնակիչներն են:
- Ադրբեջանցիները հիմա տեղահանվածներ են:
- Անվտանգության անհրաժեշտ բոլոր նախապայմանները պետք է հաստատվեն տեղաշարժվածների հետ վերադարձի համար:
- Հենց որ հակամարտությունը կարգավորվի, ԼՂ-ում երկու հասարակությունների միջև ծագած յուրաքանչյուր այլ հարց պետք է լուծվի մարդու իրավունքների շրջանակում:
- Հայաստանի փախստականների կարգավիճակն ոչ մի տեղ հաշվի չի առնվել, այս հարցն ինչպե՞ս է լուծվելու:
- Հենց որ բոլոր փախստականները հետ վերադառնան, անհնարին կլինի ԼՂ-ին որևէ կարգավիճակ տալ:
- ԼՂ-ում ոչ մի դաս չպետք է ուսուցանվի հայերենով, և ինչպես նշված էր նախորդ դրույթում, նույն չափի հարգանք կտածվի այստեղ ապրող հայերի և ԼՂ-ի փախստականների նկատմամբ:
- Մնացյալ թողնված գյուղերը լիքն են հայերով:

- Նրանք կսկսեն ապրել ԼՂ-ում, միայն հավաստիանալուց հետո, որ իրենց անվտանգությունը կապահովվի:
- Ոչ ոք չի պատասխանում այն հարցին, թե որտեղ են ապրելու տեղաշարժված մարդիկ:
- 1988թ-ի պատերազմի ժամանակ հայերը հեռացան Ադրբեջանից, 1989թ-ին նրանք վերադարձան հետ և կառավարությունը պաշտպանեց նրանց իրավունքները:
- Մեծ միջոցներ, ինչպես նաև թաղամասեր են կառուցվում փախստականների համար յուրաքանչյուր տարի:

Փասխստականների վերադարձ. Քաղաքական շահարկում ու արտաքին գործոններ

Հայեր

- Ադրբեջանցի փախստականն էլ չի գնա, բայց իրենց միգուցե բռնի ուժով բնակեցնեն...
- Սա ադրբեջանական սցենար է. իրենք կվերադարձնեն ուռճացված թվերով բնակչություն, հետո հանրաքվե կկազմակերպեն. արդյունքները կանխատեսելի են: Իրենք եռակի աճելու ենք բնակչության քանակով, ու իրենց համար ցանկալի լուծում են տալու: Բացառվում է:
- Քսան տարի անցել է ու փախստականները ցրվել են, որն այստեղ, որն այնտեղ: Արդեն նոր կյանք են ձևավորում: Փախստականների թեման պետք է այլևս չքննարկվի:
- Հայ փախստականները չեն վերադառնա Ղարաբաղ, բայց ադրբեջանցիները՝ հեռահար նպատակներով կվերադառնան ու նույնիսկ մեծ գումարները կստանան Ղարաբաղում ապրելու համար
- Եթե փախստականները գան, հաստատ այնպես կկարգավորվի դա Ադրբեջանի կառավարության կողմից, որ շատ քիչ ժամանակահատվածում իրենք ինքնըստինքյան կդառնան Ադրբեջանի մի մաս:
- Ադրբեջանցի փախստականները չեն վերադառնա իրենց նախկին բնակավայրերը, եթե իրենց պետությունը ստիպողաբար չուղարկի, որպեսզի ապահովվի հետագայում անցկացվելիք հանրաքվեում հաղթանակը
- Այստեղ մի խորամանկ միտք կա. վերաբնակեցման պայմաններում ադրբեջանցիները ավելի արագ կբազմանան և ...
- Կգան գրանցված-չգրանցված հազարավոր ընտանիքներ, բայց կողք-կողքի ապրել չենք կարողանա, որովհետեւ իրենք գիտեն՝ մենք առաջինը չենք հարվածի: Ուրեմն՝ մենք էլի տանուլ տա՞նք:
- Ավելի մտահոգիչ է փախստականների վերադարձի հարցը, բացի փախստականներից բնակչության այլ հոսք կլինի:
- Դրանք ում ասես որպես փախստական կբերեն ու կլցնեն Արցախը: Բա մեր փախստականների՞ն ով է հատուցելու:
- Փախստականների վերադարձի ցանկացած գաղափար ուտոպիա է:

- Երեւի թե փախստականների վերադարձը մեզ համար վտանգավոր է, որովհետեւ մենք չգիտենք, թե ինչ թիվ են մոգոնել արդեն:
- Կարծում եմ, որ իրենք շատ ուռճացված թիվ են ներկայացնելու փախստականների հարցով, այդ պատճառով էլ հոգ չեն տարել փախստականների համար, արհեստական ճամբարներ են ստեղծել ու միջազգային հանրությանը դա են ցույց տալիս:
- Փախստականի անվան տակ էնքան մարդ կգա Ղարաբաղ:
- Իրենց կստիպեն գալ ու իրենք կգան: Դրանց մոտ ընդունված է բազմակնությունը, ընտանիքում այնքան արագ են երեխաներ ունենում, իսկ մենք՝ մեկով ենք գոհանում: Տարիներ անց դրանց ձայներն ավելի շատ են լինելու ու հանրաքվեի ելքն էլ պարզ է ինչ կլինի:
- Մեկ այլ տարածքի թուրքերի համար այնքան վատ պայմաններ կստեղծեն, որ դրանք կգան այստեղ ապրելու, իսկ ղարաբաղցի թուրքը հետ չի գա:
- Ադրբեջանի կառավարությունը նյութական հնարավորություն ունի ֆինանսավորելու հայերի արտագաղթը Ղարաբաղից:
- Ադրբեջանցի փախստականները այնքան շատ չեն, ինչքան ասում են, ուրիշ թուրքեր ու քոչվորներ բերել խառնել են փախստականների թվին, ոնց կարա վեց հազար հոգանոց գյուղ լինի:
- Թուրքն իր կամքով չի գա ստեղ ապրի, բայց կստիպեն որ գան:
- Ադրբեջանը ամեն վերադարձած փախստականին այնքան փող կտա, որ մեր մոտ տասը տուն կկառուցի, իսկ մենք չենք կարող նման բան ապահովել:
- Փախստականի անունի տակ իրենց ժողովուրդը կբերեն կլցնեն մեր մոտ:
- Ադրբեջանը շատ գրագետ օգտագործում է փախստականների գործոնը: Նրանց պահում են վատ պայմաններում, ու միջազգային կազմակերպություններին տանում ցույց տալիս նրանց: Իսկ մեզ մոտ արդեն փախստական հասկացություն գրեթե գոյություն չունի:
- Եթե թուրքը վստահ չլիներ, որ իր ազգը հետ կգա, էդքան չէր բոռա փախստական, փախստական. սա շատ մանրակրկիտ մշակված քաղաքականություն է:
- Ես ավելի քան վստահ եմ, որ իրենք հատուկ քաղաքականություն են վարում, որ հազարավորների վերադարձնեն իբրեւ փախստականների:
- Դրանց սցենարն է. ազերի փախստականին հետ բերեն, խաղաղապահով պաշտպանեն ու հանրաքվեի արդյունքը դարձնեն իրենց օգտին:

Անհամաչափություն և կողմնակալություն

Հայեր

- Ադրբեջանցի փախստականները միանգամից կվերադառնան, հայերը հետ չեն գնա:
- Բա հայ փախստականների հարց ինչի՞ չի քննարկվում...
- Եթե համաձայնվում ենք փախստականները հետ գան, բա հայ փախստականները ի՞նչ լինեն:

- Մեր փախստականներն էլ չեն գնա. պետք է ստեղծել պայմաններ՝ հայկական դպրոցներ լինեն, մշակույթի կենտրոններ, աշխատանքով ապահովեն:
- Փախստականների մասին խոսել նշանակում է փաստել, որ միայն ադրբեջանցիներն են վերադառնալու հայկական հողեր ու երկրաչափական պրոգրեսիայով աճելու են:
- Եթե արծարծում են փախստականների հարցը, ապա ինչ կլինի մեր փախստականների հե՞տ:
- Ադրբեջանցի փախստականը կվերադառնա, եթե ոչ կամովի, ապա բռնի ուժով... իսկ հայ փախստականը երբեք չի վերադառնա:
- Չորրորդ սցենարի դեպքում մեզ ձեռք չի տալիս փախստականների վերադարձը, հայերը չեն գնա Ղարաբաղ, իսկ նրանք կգնան ու կշատանան:
- Փախստականների հարցը մեզ ձեռնտու չի, որովհետև ոչ մի հայ չի գնա Բաքու ու Սումգայիթ, մենք միայն վնասներ կկրենք:
- Հայ փախստականները հիմնականում քաղաքաբնակ են, իսկ ադրբեջանցիները՝ անասնապահներ: Այս պատճառով էլ նրանք կվերադառնան, իսկ մենք՝ ոչ:
- Եթե մեր դիրքերը մի քիչ թուլացնենք, ադրբեջանցիները կգան ու կլցվեն Հայաստան, բայց չեմ կարծում, որ հայերը երբևէ նորից կգնան Ադրբեջան:
- Այսօր Ադրբեջանի փախստականները ապրում են Ադրբեջանում, դրա համար շատ արագ հետ կգան, իսկ մեր փախստականները դուրս են գնացել, ոչ մեկն էլ հետ չի գալու:
- Մենք ուզում ենք Կիրովաբադ վերադառնանք, իրենք թույլ կտա՞ն:
- Եթե իրենք ուզում են վերադառնալ իրենց տները, բա մեր պապերին ով տարավ իրենց ծննդավայր:
- Փախստականները պետք է վերադառնան ու ապրեն իրենց տներում, բայց ոչ ադրբեջանցիները:
- Փախստականների վերադարձի առաջարկը միայն ադրբեջանցիների համար է, մեր հայերը էլ հետ չեն գնա Ադրբեջան, այս հարցը պետք է մեջտեղից դուրս գա:
- Տարբերակների պահանջները և առաջարկությունները չեն արտահայտում Արցախի (մասնավորապես) և Հայ ժողովրդի շահերը: Մի դեպքում հաշվի է առնվում ադրբեջանցի փախստականների գործոնը և աչքաթող է արվում հայերի վերադարձը Շահումյանի, Գետաշենի, այլ բնակավայրեր: Համաձայն չեմ և ոչ մի տարբերակի:
- Եթե պայմանավորվում ենք, որ բոլոր փախստականներ վերադառնալու են, բա ինչպե՞ս պիտի լուծվի Բաքվի եւ Սումգայիթի փախստականների հարցը:
- Հայ փախստականները հիմնականում կրթված մարդիկ են եղել, քաղաքաբնական, ի տարբերություն, ադրբեջանցիների, այդիսկ պատճառով էլ, հայ փախստականը չի գնա, իսկ քոչվորությանը սովոր արդբեջանցին կգնա...

- Փախստականներ, ասելով ու՞մ նկատի ունեք.. միայն հայ փախստականներին, թե ադրբեջանցիներն էլ:
- Փախստականների մասին խոսելիս չմոռանանք, որ մերոնք մնալու են Հայաստանում, որովհետեւ իրենց քշել են, իրենք սպանդից փախել են Բաքվից, ոչ թե Արցախից: Իրենք են հազարներով վերադառնալու, բա մերո՞նք:
- Մենք այստեղի ադրբեջանցիներին այնպես լավ ենք ճանապարհել՝ իրենց վերմակներով, տան ապրանքով, մինչեւ սահմանն ուղեկցել ենք: Իրենք հաճույքով կվերադառնան:
- ՄԱԿ-ը ազգերի ինքնորոշման սկզբունք ունի, Ադրբեջանն ի՞նչ է մոգոնելու նոր: Հետո՝ մենք այստեղ բառ չտեսանք Շահումյանի մասին, ու ուր է մեր փախստականների մասին մտահոգությո՞նը: Հետո ինչ որ մենք ավելի շատ ենք հոգացել մերոնց մասին՝ այդ մարդիկ տուն, ունեցվածք են կորցրել, իրենց ինչու չեն ապահովում վերադարձ:
- Ես փախստական եմ ու երբեք հետ չեմ գնա, ու գիտեմ, որ հայերից ոչ մեկը չի գնա հետ, բայց իրենք կգան կլցվեն Շուշի, Ասկերան էլ, մենք չենք գնա, որովհետև մահից ենք փախել, ինձ ուզում էին սպանել Բաքվում, ու որ չփախչեի կսպանվեի հաստատ:
- Ադրբեջանցին էնքան «տուլաշ» ա, որ անպայման հետ կգա: Իսկ մենք ինքնասիրություն ունենք, հայրենասիրություն ունենք:
- Ադրբեջանցի փախստականը հետ կգա, որովհետև այստեղ ծաղրուծանակի չեն ենթարկվել, գնալուց իրենց ամբողջ ունեցվածքը իրենց հետ տարել են, նույնիսկ մեր զորքերը տարել են իրենց ապահով սահմանը անցկացրել են, իսկ մենք վախից փախել ենք ու հետ չենք գնա:
- Բաքվից այստեղ եկածները չեն գնա Բաքու, բայց ադրբեջանցի փախստականները հետ կգան:
- Մինչև պատերազմն ադրբեջանցիք այստեղ 25% էին, հիմա որ ասենք հետ պիտի գան փախստականները կստացվի, որ իրենց գնացածներն իրենց սերունդների հետ են գալու, իսկ մեր գնացածները հետ չեն գալու: Հանրաքվեի դեպքում պարզ է արդյունքն ինչ կլինի:
- Փախստականների հարցը մեր օգտին չի, մերոնք չեն գնա հետ Բաքու, բայց իրանք կգան հետ:
- Բաքվից հազարավոր մարդիք փախել են Ռուսաստանի գյուղերում կով են պահում հիմա, բա դրա պատասխանները ով կտա:
- Փախստականների հարցը որ բարձրանա, ազերիները կգան, բայց հայերը չեն գնա հետ, այս հարցը մեջտեղից հանեք:
- Թող հայ փախստականները հետ գան էստեղ ու հողը շենացնեն: Սա հերիք է:
- Ինչու ասվում է, որ փախստականները կվերադառնան Շուշի, Ստեփանակերտ, բայց Բաքուն կամ Սումգայիթը չի նշվում:
- Ադրբեջանցիները կգան, հաստատ, վազելով կգան..Բայց մենք երբեք չենք գնա:

Ապագային նայելով, կարգավորման հետաձգումը

Ապագան անորոշ է, հակամարտությունը՝ չլուծված

Հայեր

- Ներկայիս իրավիճակը նպաստավոր են համարում Հայաստանի համար: Միանշանակ համոզված եմ, որ ի վերջո Ադրբեջանը կհամակերպվի այն մտքին, որ Արցախը պետք է լինի Հայաստանի կազմում:
- Ամենից ցավալին այն է, որ Հայաստանն էլ չի ճանաչել Ղարաբաղի անկախությունը:
- ԼՂ-ի առանձնացումը մեծ տերությունների սցենար էր. այդ իսկ պատճառով այս իրավիճակը կպահպանվի դեռ մի որոշ ժամանակ:
- Մենք ուզում ենք մեր ունեցածին տեր լինենք ընդամենը. ագրեսիայի կաթիլ անգամ չունենք
- Ամենահարմար տարբերակն առաջինն է՝ սա այն է, ինչ ուզում ենք. նույն դրամը, նույն լեզուն, նույն անձնագիրը: Ու ոչինչ էլ անորոշ չէ:
- Սա չարիքի փոքրագույնն է, սակայն սա վաղվա օր չունեցող իրավիճակ է:
- Չեմ կարող ասել, որ սա երկարատև իրավիճակ կարող է լինել:
- Ցանկացած անորոշ վիճակ չի կարող երկար տևել, բայց դա արդեն դառնում է անորոշություն:
- Փոխզիջումների անպայման պետք է գնալ..
- Դե ֆակտո ԼՂՀ-ն անկախ պետություն է, մեզ դե յուրե ոչինչ պետք չէ:
- Եթե Ղարաբաղի անկախությունը ճանաչվի, պատերազմի վտանգը մեր գլխին միշտ կախված կլինի:
- Ղարաբաղյան հարցը ինչ-որ մի տարբերակով կլուծվի ամենաուշը մինչև տասնհինգ թվականը
- Ես Ղարաբաղն անկախ չեմ տեսնում:
- Ինքնորոշման իրավունքի վրա մենք ենք հիմնվում, ադրբեջանցիները՝ տարածքային ամբողջականության. այսպես մենք դեռ երկար կշարունակենք:
- Այս սցենարով լավն այն է, որ տարածքները մնում են հայկական ուժերի հսկողության տակ, աստիճանաբար հնարավոր է տնտեսական աճ: Ցավոք դա դանդաղ է ընթանում, փաստաթղթերի, միջազգային ճանաչման հետ կապված հարցեր կան, սակայն եթե բանակցությունները գնում են դեպի փակուղի՝ այս պահպանված վիճակն այնքան էլ վատ չէ մեզ համար:
- Ճանաչումն այնդքան էական չէ, ավելի լավ է պահպանվի այս վիճակը:
- Կիպրոսի նման կարելի է այդպես երկար շարունակել, չնայած նրան, որ աշխարհը չի ճանաչում:
- Այս պահի դրությամբ լավագույն ելքը սա է՝ ստատուս քվո-ն:
- Ամենառեալ , օպտիմալ տարբերակը հայերի համար ստատուս քվոն է:
- Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն կարգավիճակն ավելի լավ է:

- Եթե անցնի ժամանակ և Ղարաբաղը մնա այս վիճակում, հետագայում ամեն ինչ ավելի կմեղմանա: Պետք է աշխատենք խաղաղ ճանապարհով պահպանենք այս վիճակը:
- Այսպես գնա՝ փորձենք դե յուրե ճանաչմանը ձգտել:
- Ինչքան շուտ լուծվի Ղարաբաղի հարցը, այնքան ավելի ճիշտ կլինի:
- Ղարաբաղյան հարցը իրականում արդեն լուծված է մեր օգտին, մնում է սպասենք մինչև մեծ տերությունները այս որոշման տակ ստորագրեն
- Այսօր էսպես որ երկար մնա, Ադրբեջանը կուզի ռազմական ուժեղանալ ու պատերազմ սկսել: Սա չպետք է մոռանանք ու պետք է կարողանանք լուծում գտնել:
- Քարտեզի կռիվ ենք անում, բա մեզ պետք է. դուք ղարաբաղցուն հարցնում եք, իրեն ճանաչում պետք է թե ոչ: Ղարաբաղցին էդ ճանաչման վրա թքած ունի:
- Շատ կարևոր է, որ Ղարաբաղը ճանաչում ստանա միջազգային կազմակերպությունների կողմից:
- Ինչ է անկախությունը մեր համար, օրինակ այսօրվա մեր վիճակը անկախություն է, թե ուզում ենք որ միջազգային հանրությունը կամ Ռուսաստանը ճանաչեն Ղարաբաղի անկախությունը, ինչպես եղավ Աբխազիայի, Օսեթիայի կամ Կոսովոյի դեպքում:
- Փոքր տարածք է, Ղարաբաղին ոչ ոք չի ճանաչի որպես անկախ պետություն:
- Ադրբեջանը երբեք էլ չի ճանաչելու Ղարաբաղի անկախությունը, մինչև միջազգային կազմակերպությունները չճնշեն Բաքվին:
- Ինչի՞ ԼՂՀ-ն որպես վիճելի տարածք չի ընկալվում իր իրական տարածքներով:
- Ղարաբաղի հարցը արդեն լուծված ա: Հետագայում աշխարհն ուզած-չուզած հաշվի ա նստելու Ղարաբաղի հետ:
- Արցախը պետք է մասնակից կողմ լինի բանակցությունների, մենք՝ նախագահող կողմը Մինսկի խմբում: Թող Ադրբեջանն ու Արցախը քննարկեն լուծումը, մենք կնպաստենք արդար պայմանավորվածությանը:
- Արցախը հիմա դե ֆակտո Հայաստանի տիրապետության տակ է. մեր փողը, մեր բանակը, մնում է մի թուղթ ստորագրենք էլի:
- Լավ է, որ Ղարաբաղը չի ճանաչվում, որովհետև դա կլինի միայն այն դեպքում, երբ վերադարձվեն հարակից տարածքները, իսկ դա մեր անվտանգության համար կործանարար կլինի:
- Ադրբեջանը ոչ մի դեպքում թույլ չի տա, որ Արցախը միջազգայնորեն ճանաչվի:
- Միշտ ասում էին, որ Կոսովոյի հարցի լուծումից հետո մեր հարցն էլ կլուծվի, բայց այդպես չեղավ: Երեւի մեր պահանջատիրական իրավունքները լավ չենք ներկայացնում:
- Դե ֆակտո անկախ է մեր Արցախը, Ադբեջանը պետք է մեզ թողնի լինենք թե չէ՞:
- Իսկ վերամիավորման համար ինչի չենք մտածում, որ պետք է տարածքները վերաբնակեցնել...

- ԼՂՀ բնակչությունը կնախընտրի ավելի ինքնիշխան պետություն լինել, քան միավորվել Ադրբեջանին, և պետք է նաև այս քաղաքականությունն օգտագործել, քանի որ եթե իդեալական երկիր էլ դառնա Ադրբեջանը, հայերի համար այն չի կարող դառնալ իդեալական
- Թույլ տվեք մի մեջբերում անեմ ադրբեջանցու խոսքից. «Եթե ես ղարաբաղցի լինեի, ոչ մի կերպ չէի համաձայնվի Ադրբեջանի կազմում լինել...» Սրանից ավել ի՞նչ ենք ուզում...Ես կարծում եմ, որ ղարաբաղցիներն այսօր հստակ չեն որոշել՝ միանալ Հայաստանին, թե ոչ:
- եթե Ղարաբաղը միանա Հայաստանին, պետք է մեծ ներդրումներ անի պետությունը նաև ԼՂՀ-ում, իսկ այսօր կառավարությունը չի կարողանում Հայաստանը պահել, մնաց Ղարաբաղը պահի:
- Հենց ԼՂ-ն դառնա անկախ պետություն, հաջորդ օրը ազերիները կհարձակվեն ու կուտեն Ղարաբաղը:
- ԼՂՀ-ն համաձա՞յն է անկախ լինել
- Ղարաբաղը վաղուց հայացել է, սական չի կարող անկախ լինի:
- Քանի դեռ ԼՂՀ-ն Ադրբեջանի հետ պետականորեն հաստատված, ճանաչված սահմաններ չունի, խնդիրը չի լուծվի:
- 94 թվականին պիտի ճանաչեինք, վերջացնեինք
- Հա լավ, որ ԼՂՀ-ն ճանաչվեց, դրանից հետո ի՞նչ՝ Ադրբեջանը չի կրակելո՞ւ...
- Այժմ ԼՂ ընդամենը խաղաքարտ է գերտերությունների ձեռքում:
- Միջազգային հանրությունը կարող է որոշել Ղարաբաղյան հարցը լուծել ի օգուտ այն երկրի, որին հետագայում կարող է օգտագործել իր նպատակների համար: Օրինակ՝ Ադրբեջանի դապքում դա կարող է լինել նավթի պաշարները:
- Ղարաբաղը չի համաձայնվելու ոչ Հայաստանի և ոչ էլ Ադրբեջանի կազմում լինի
- Ղարաբաղը մերն է ու մերն էլ կմնա:
- Այսօր ԼՂ-ի հարցը ցավոք մեր լուծելու խնդիրը չէ, այլ՝ մեծ տերությունների:
- Եկեք ռեալ մտածենք, Ադրբեջանի կառավարությունն էլ պետք է պատասխան տա իր ժողովրդի առաջ, թե ինչ եղավ Ղարաբաղը:
- Խորհրդային տարիներին, սովետին մեկ էր, Ղարաբաղը Հայաստանի, թե Ադրբեջանի կազմում է, իսկ հիմա սա օրհասական, շատ կարևոր խնդիր է:
- Երկու հզոր պետությունների՝ Ռուսաստանի եւ Ամերիկայի քաղաքական խաղի հաջող ընթացքով կլուծվի նաեւ մեր հիմնահարցը:
- Պետք է հասկանալ, որ ցանկացած գերտերություն ունի սեփական շահերը: Եթե գերտերությունը նպաստի Հայաստանին, հավասարակշռությունը կանցնի Հայաստանի կողմը, և հակառակը:
- Ո՞վ է ճանաչելու Ղարաբաղի անկախությունը, եթե մենք ինքներս չենք ճանաչել:
- Նույնիսկ Հայաստանը չի ճանաչել Արցախի անկախությունը, երբ մյուսներն էլ ճանաչեն՝ իհարկե զարգացումն ավելի արագ կլինի:
- Եկեք Ղարաբաղին տանք հնարավորություն, որ հանդես գա որպես առանձին պետություն բանակցություններում, մենք դրանով մի քայլ առաջ կգնանք:

- Մենք շատ անելիք ունենք միջազգային ասպարեզում, գերտերություններին մեր տեսակետը ներկայացնելու ու մերը առաջ տանելու համար:
- Թող Ղարաբաղում ապրող հայերը որոշեն իրենց ապագան: Մենք խաղաղ ապրում ենք, իրենք են վտանգի մեջ: Իրենք թող որոշեն ինչպես վարվել:
- Իհարկե, բացասական է, որ միջազգային ճանաչում չկա, ինչի հետեւանքով չկա միջազգային օգնություն: Ադրբջանն էլ անընդհատ խախտում է զինադադարը:
- Ինձ թվում է՝ Ղարաբաղը ոչ Հայաստանի, ոչ էլ Ադրբեջանի հետ չի ուզում ապրել: Թող անկախանա, իր համար հանգիստ ու անկախ ապրի:
- Եթե Ադրբեջանը պնդում է տարածքային ամբողջականությունը, մենք էլ պիտի մեր տարածքների ամբողջականությունը պահպանենք:
- Երկու կողմերն էլ ջուր են ծեծում, գլուխներս տանում, բայց հարց չեն լուծում: Ղարաբաղն ինքը պետք է որոշի իր ճակատագիրը:
- Մենք պետք է միջազգային հանրությանը հասկացնենք, որ Ղարաբաղը Ադրբեջան չի:
- Ղարաբաղյան հարցը ավելի հեշտ կլուծվի, եթե բանակցող կողմերի շրջանակը ավելի հեշտ կլինի, ինչքան շատ միջազգային մարմիններ ու գործոններ խառնվեն, այնքան ավելի շատ շահեր են խառնվում ու հարցի լուծումը ձգձգվում է:
- Այս տարիների ընթացքում չկա միջազգային ճանաչում եւ չի լինում տնտեսական ներդրում:
- Ղարաբաղն ուզում է ապացուցել, որ կարող է եւ արժանի է անկախ պետություն լինել:
- Որպեսզի Ղարաբաղը լինի մերը նախ միջազգային արենայում պիտի դա ընդունվի:
- Վերջիվերջո միջազգային հանրության համար էլ անցանկալի պետք է որ լինի մեր այս կախյալ վիճակը:
- Այսքան արյուն ենք թափել, ուզում ենք, որ Ղարաբաղը Հայաստանի կազմում լինի, սակայն դա կարող է իրավիճակն ավելի սրել:
- Ղարաբաղի համար մեր երիտասարդները զոհվեցին, ու մեզ էլ պատերազմ պետք չի, բայց միջազգային ատյաններն էլ չեն կարողանում մի կոնկրետ որոշման գալ, բայց պետք է ձգտենք ու անենք ամեն մի բան խաղաղ ձևով, որ Ղարաբաղը դառնա Հայաստանի մի մասը
- Գրավել ենք, է, մերն է, բայց ով է ընդունում այս փաստը: Միայն մենք:
- Թող իրավիճակ սրվի, բայց թող Ղարաբաղը Հայաստանի կազմում լինի:
- Այս իրավիճակը անորոշ է մնալու, ոչինչ չի փոխվի:
- Հիմա մեզ ինչ է պետք՝ ղարաբաղցու լավ ապրելը, թե վերջնականապես Հայաստանին վերամիացումը:
- Եթե կարողանային՝ վերջիվերջոյին կհասնեին, կառավարությունները չեն կարողանում ոչինչ փոխել:
- Եթե նույնիսկ Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ մտնի, ՄԱԿ-ն իր քարտեզը չի փոխի:

- Ամեն որպէս մտածում ենք, որ ահա-ահա մի բան կփոխվի: Ու վախով ապրում ենք:
- Ամբողջ խնդիրը միջազգային երկու սկզբունքների՝ ազգերի ինքնորոշման ու տարածքային ամբողջականության սկզբունքների հակադրությունն են:
- Մենք ինչի ենք Արդբեջանի հետևից ընկել, եկեք բռնենք այլ երկրներին, ստիպենք ճանաչել Ղարաբաղի անկախությունը:
- Այն որ այժմ հրադադար է, Ռուսաստանի և Թուրքիայի շնորհիվ է, նրանց դերը մեր տարածաշրջանում շատ մեծ է
- Ազգային ինքնորոշման ու տարածքային ամբողջականության խնդիրները կոնֆլիկտի մեջ են:
- Միջազգային հանրությունը պահպանում է ներկայիս վիճակը, որ երկու կողմերին էլ ավելորդ չգրգռի, նրանք ցանկանում են մի փոքր խաղաղեցնել կրքերը, նոր ինչ-որ լուծում գտնեն այս հարցին:
- Ամենակարեւորը ղարաբաղցիների ցանկությունն է, ինչու՞ պետք է մենք որոշենք:
- Սա, ավելի շուտ, գերտերությունների կռիվն է, ոչ թե հայերի ու ադրբեջանցիների:
- Սերբական հողում ստեղծվեց Կոսովոն, իսկ մեր պատմական հողերի վրա մեր ազգաբնակչությունը չի կարող իր պետությունը պահե՞լ:
- Ինչու՞ միջազգային կառույցները չեն ճանաչում Ղարաբաղի անկախությունը, եթե Ղարաբաղը ինքը ուզում է անկախ լինել: Դա արդեն այդ միջազգային կառույցների խնդիրն է, չե՞ք տեսնում:
- Այն, որ այսօր մենք չգիտենք, թե կոնկրետ ինչ լուծում ենք ուզում այս հարցին, գալիս է նրանից, որ մեզ վերևներից սխալ կամ թերի ինֆորմացիա է գալիս:
- Եթե ՄԱԿ-ը ընդունի, որ ԼՂՀ-ն ինքնավար է, ապա Ադրբեջանի ընդունումը կարևոր չէ, բայց Առանց Ադրբեջանի հաստատ չի ընդունի:
- Կոսովոն շատ ուժե՞ղ էր, որ իր ուզածին հասավ, իսկ մենք անկախ լինելով չենք կարողանում մի Ադրբեջան համոզել...
- Ադրբեջանը ինչքան ուզում է թող քարտեզների վրա Ղարաբաղը ու շրջակա շրջանները գծի իր տարածքում, մեզ համար մեկ է, կարևորը, որ մենք վերահսկենք այս շրջանները, իրանք թող քարտեզ նկարեն:
- Ուսումնասիրենք բոլորի շահերը եվ այդ համատեքստում գտնել մեր սեփականը... Ահա միակ լուծումը:
- Այսօրվա վիճակը գնում է նրան, որ Ղարաբաղը, վերջիվերջո, կստիպի ճանաչել իր ինքնորոշման իրավունքը:
- Այսօրվա իրավիճակը չարիքներից փոքրագույնն է: Սա կարծում եմ հաստատ մի հիգ տարի էլի կշարունակվի:
- Պետք է փորձենք դեռ մի բան էլ ստատուս քվոյից առաջ գնանք. մեր պատմական հողերը վեցնենք:
- Ինչպե՞ս գնանք բանակցությունների առանց մեր կարգավիճակն իմանալու:

- Ադրբեջանը երբեք մեր անկախությունը չի ընդունի, բանակցային սեղանին հինգերորդ սցենարը չի էլ քննարկվում: Իսկ կարգավիճակի հարցը միջազգայնորեն պետք է սահմանվի:
- Եթե մենք ուզում ենք Հայաստանին միանալ, դա ոչ մի վատ բան չի նշանակում: Աշխարհում հայտնի են ազգեր, ժողովուրդներ, որոնք չեն ցանկանում ապրել մի պետության կազմում ու հանգիստ առանձնանում են:
- Ժիրինովսկին մի անգամ ասել է, որ Ղարաբաղը ավելի լավ կլինի միացնել Ռուսաստանին, այլ ոչ Հայաստանին կամ Ադրբեջանին: Իմ կարծիքով դա շատ լավ որոշում կլինի, չեզոք գոտի կլինենք, շատ ավելի լավ կապրենք:
- Այսօրվա իրավիճակից ցանկացած շեղում, փոփոխություն շատ ռիսկային է:
- Ասենք թե, Հայաստանը ճանաչեց մեր անկախությունը, ի՞նչ պիտի լինի: Պատերա՞զմ: Գերտերությունները կթողնե՞ն գան մեզ կոտորեն: Աբխազիային չթողեցին ջարդեն:
- Իրենք ուժ են հավաքու՞մ... բայց մենք էլ հո քնած չենք, մենք էլ ենք ուժեղանում: Մեր խնդիրը կլուծվի ժամանակի ընթացքում:
- Մենք պատրաստ ենք ևս մի տաս տարի էլ չճանաչված պետությունում ապրել, միայն թե նորից պատերազմ չլինի:
- Եթե այսպես շարունակվի, հավանաբար կգանք լուծման, միջազգային ճանաչումն էլ կլինի արդունքում: Ունենք երկու տարբերակ արդեն՝ Կոսովո եւ Աբխազիա: Բայց հավանաբար մենք էլ երրորդ, անգլիացիների ասած «ունիկալ» տարբերակն ենք լինելու:
- Թեկուզ այս պայմաններով էլ ապրենք, երբ չգիտենք, թե վաղն ինչ կլինի, սակայն ավելի լավ է, քան որոշում ընդունենք, որով կվերադառնա արհավիրքը:
- Քանի որ այս պահի դրությամբ մենք չենք կարող հարցը լուծել մեր օգտին ու քանի որ միջազգային հանրությունը կոպիտ ասած «հիսուն-հիսուն» սկզբունք է կիրառում, այսօրվա իրավիճակը մեզ ավելի շատ օգուտ է տալիս, քան Ադրբեջանին:
- Տաս տարի առաջ է լավ, թե հիմա՞: Իհարկե, հիմա: Խաղաղ ենք, ապրում ենք մեր տներում:
- Շատ երկար այսպես չի կարող շարունակվել:
- Պետք է լուծում լինի, բայց հիմա նման հեռանկրա չեմ տեսնում:
- Մենք պատմականորեն էլի ունեցել ենք երկու հայկական պետություն ու նրանցից մեկը կործանվել է, կկրկնվի նույնը, եթե փորձեր չանենք արագ վերամիավորվելու, այս հարցը չի կարելի ձգձգել:
- Ինձ թվում ա, որ էս ձև շարունակվելու դեպքում պատերազմը վերսկսվելու ա: Բայց պատերազմ կլինի նաև այլ պետությունների միջամտության դեպքում:
- Անորոշ վիճակում գտնվելը վատ է, ինչքան սա խորանա, այնքան կդժվարանա խնդիրը լուծել:
- Ղարաբաղի հարցի շուրջ բանակցությունները պետք է մի արդյունք տան. չի կարող երկար մնալ այսպես.

- Մեզ ձեռնտու չի այս վիճակը, եթե մենք այս ժամանակը պիտի չօգտագործենք հզորանալու համար:
- Վատը անորոշ վիճակն է: Իմ փաստաթղթով ոչ մի տեղ չեմ կարող գնալ, մինչեւ հարյուր հոգու չդիմեմ, թույլտվություն չվերցնեմ:
- Մեզ տաս տարի է ստատուս չեն տվել, ո՞նց ենք ապրում...
- Դժվար ապրենք, բայց՝ ազատ: Սա է լինելու մեր սկզբունքը:
- Ժամանակն է, որ Հայաստանը քայլեր ձեռնարկի Ղարաբաղը ճանաչելու ուղղությամբ: ու՞մ ենք ուզում համոզել, եթե հենց մեր եղբայր Հայաստանը չի մեզ ճանաչում:
- Հայաստանը բարոյական տեսակետից սպասում է, որ ուրիշ երկրները նախ ճանաչեն Ղարաբաղի անկախությունը հետո նոր ինքը, բայց սա սխալ մոտեցում է: Պետք է Հայաստանը առաջինը ճանաչի մեր անկախությունը, որ ուրիշներն էլ հետևեն Հայաստանի օրինակին:
- Էսօր եթե Ղարաբաղը Հայաստանի կազմում չի, դա արդեն զիջում է մեր կողմից:
- Մենք իհարկե հասկանում ենք, որ բացասական բաներ էլ կան այս իրավիճակում, սակայն առավել կարեւոր է մեր ձեռքբերումը: Սովետական Միությունն էլ անմիջապես չէր ճանաչվել միջազգայնորեն:
- Ցանկացած այլ սցենարի դեպքում պատերազմի վտանգն ավելի մեծ է լինելու, եթե Ադրբեջանին շատ հնարավորություններ ու իրավունքներ շարունակենք տալ:
- Համամիտ եմ, որ ժամանակի ընթացքում մենք կստանանք մեր ճանաչումը:
- Այն, ինչ այսօր ձեռք ենք բերել, ավելի ձեռնտու է, քան ցանկացած այլ լուծում:
- Ուրիշ ճար չկա, դեռ քանի հնարավոր է այս վիճակը պետք է շարունակել պահպանել:
- Կարգավիճակ ունենաք, պորոխի բոչկի վրա կըլնենք, կարգավիճակ չունենանք, ֆիզիկական անվտանգության հետ մեկտեղ բախվելու ենք ցանկացած պահի հարկադրանքի ենթարկվելու վտանգին: Մի խոսքով, երկու ջրի մեջտեղ ենք մնացել:
- Ճիշտ է, մենք մեր զենքի ուժով ենք հասել այս վիճակին, բայց սա երկար չի կարող շարունակվել:
- Այս իրավիճաը խիստ փոփոխական է, ով իմանա, թե հավասարակշռությունն ում օգտին կփոխվի, ու ով ինչպես սրանից կօգտվի: Սա լուծում չի, իսկ մեզ հարցի լուծում է հարկավոր:
- Մենք պետք է կոնկրետ քայլել կատարենք, որ միջազգային հանրությունը ճանաչի Ղարաբաղի անկախությունը:
- Երեկ ավելի շատ հնարավորություններ ունեինք, քան այսօր: Վաղը այդ շանսերը կրկին կքչանան:
- Եթե այս հարցին մենք կոնկրետ լուծում չտանք հիմա, վաxը կարող է շատ բան կորցնենք:
- Այսպես երկար շարունակվել չի կարող, վերջնական լուծում է հարկավոր:

- Սա անհրաժեշտաբար ստեղծված վիճակ է, ոչ թե ուզում էինք կամ չէինք ուզում:
- Ի՞նչ միջազգային հանրություն: Օսեթիային պե՞տք է Ֆրանսիայի, Անգլիայի, Չինաստանի ճանաչումը: Չէ, իրեն բավարար է միայն Ռուսաստանի ճանաչումը:
- Արցախի լուծումը հետևյալն է. Վատիկանի կարգավիճակին համապատասխան կարգավիճակ մեր տարածաշրջանում:
- Կոնֆլիկտը տեղի է ունենում Հայաստանի և Ադրբեջանի միջև, իսկ Ղարաբաղի ժողովուրդը կարծես սպասում է խնդրի լուծմանը, սակայն մնում է պասսիվ:
- Առայժմ այս դրությունը լավ է, զինադադար է:
- Կոսովոյին Ամերիկան պաշտպանեց ու Կոսովոն անկախացավ, այսինքն պետք է պայքարենք, որ Ղարաբաղի անկախությունը ճանաչեն մեծ տերությունները:
- Անորոշություն է՝ օրինակ, հնարավոր չէ գործուղում ձևակերպել Լեռնային Ղարաբաղ, որովհետև, փաստորեն, այդպիսի երկիր կամ մարզ գոյություն չունի: Պետք է ճանաչել Ղարաբաղի անկախությունը:
- Ղարաբաղցիների ճակատը պինդ է՝ ոնց կա, թող տենց մնա:
- Հիմնական նպատակը անվտանգությունն է. Լավ է լինել չճանաչված, քան ավելի փոքր տարածք ունենալ:
- Առաջին սցենարը, իմ կարծիքով ունի միայն մեկ դրական կողմ, դա ժամանակի գործոնն է. սերնդափոխությունը կբերի ԼՂ-ի ավելի դրական, մեզ համար դրական լուծմանը:
- Վիճակը ձգձգվում է, ուստի տեսնում եմ մեծ հնարավորություն զիջումների համար...
- Ժամանակի ընթացքում աշխարհը ստիպված կլինի ներկայիս վիճակը ընդունել որպես նորմալ: Ստատուս քվոն պիտի շարունակվի
- Եկեք սպասենք, որ մենք չլինենք պատերազմի նախաձեռնողները
- Մեզ ներկա վիճակը ձեռք է տալիս, պետք է բանակցությունները դադարեցնել և շարունակել ապրել...
- Իսկ իմ կարծիքով, ժամանակի գործոնը ի վնաս մեզ է աշխատում:
- Հարցի կարգավորման միակ լուծումն այն է, որ սպասենք մինչև մի օր Հայաստանը այնքան կուժեղանա, որ բռունցքը կխփի սեղանին, կասի՝ "այսպե՛ս", և բոլորը կենթարկվեն
- Ստատուս քվոն Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի համար լավ է, ինչքան երկար շարունակվի, այնքան լավ:
- Ստատուս քվոն պայթյունավտանգ իրավիճակ է, բայց եթե իրավիճակը չպայթի, ժամանակը կաշխատի մեր օգտին, կունենանք ավելի երկար ժամանակ գոյություն ունեցող Ղարաբաղի Հանրապետություն
- Առաջին սցենարը կա ու կա, ավելի լավ է «Սուտի բանակցել», քան Ղարաբաղը տալ:
- Ես կողմ եմ առաջին սցենարին, քանի որ գոնե խաղաղություն ունենք...
- Կարծում եմ, որ ստատուս քվոն ընդունելի տարբերակ է, բայց այս դեպքում առաջընթաց, զարգացում չկա:

- Միևնույն է, լավագույն տարբերակը ստատուս քվոն է՝ եկեք մեխը հիվանդի գլխից չհանենք, կարող է մեռնի:
- Ժամանակի ընթացքում թուրքերը կհամակերպվեն Ղարաբաղի կորստի հետ՝ պետք է ձգձգել այս իրավիճակը:
- Միգուցե ևս մի առ ժամանակ, շատ կարճ հնարավոր է այս վիճակը պահել, բայց ոչ շատ երկարատև:
- Էս վիճակը կշարունակվի այնքան, մինչև ադրբեջանցիները կհաշտվեն ղարաբաղի կորստի հետ:
- Բանակցությունները համբերություն են պահանջում, պետք է ժամանակ շահել ու իրական շահել, թող կրքերը նստեն, մենք հզորանանք
- Այս վիճակն առայժմ մեզ ձեռնտու է:
- Ստատուս քվոն դեռևս մեզ հարմար է, մնացածը ժամանակի խնդիր է, որը մեր օգտին կլինի:
- Թող ստատուս քվոն պահպանվի: Ինչպես ցեղասպանությունը չէին ընդունում ու սկսեցին կամաց-կամաց ընդունել, այնպես էլ Ղարաբաղի անկախությունը կսկսեն ընդունել:
- Ուշ լինի, նուշ լինի, մի քիչ էլ կսպասենք:
- Ճանապարհներն են փակ, զարգացումն է դանդաղում, սակայն եթե իրենք իրենցն են պնդելու, մենք մեր ձեռքբերումից չենք հրաժարվելու՝ ստատուս քվոն պահպանելը մեզ համար ընդունելի է: Սա մեզ հնարավորություն է տալիս ժամանակ շահել ու ապրել, զարգանալ:
- Ստատուս-քվոյի պահպանումը կարեւոր է եւ ընդամենը ժամանակի խնդիր կա՝ վերջնականապես խնդիրը հոգուտ հայության լուծելու համար:
- Այսօր ինչ-որ կա ու ունենք պետք է պահենք, ազատագրված տարածքներից ոչ մի թիզ հող չպետք է տալ. ուստի այո ստատուս քվոն լավ է
- Ճիշտ է, եթե համեմատենք, պատերազմական իրավիճակից լավ է, բայց սա ընդամենը ժամանակավոր է, ամենամինիմալն է:
- Ստատուս-քվոն հեռանկարային է այն առումով, եթե յուրաքանչյուր հայ ունենա ազգային մտածողություն եւ իր հողի վրա իրեն չզգա օտար ու ստրուկ:
- Ստատուս քվոյի պահպանումը կարող ենք նաև մեր օգտին ծառայեցնել. Ղարաբաղում մարդկանց բնակեցնել և այլն:
- Ստատուս քվոն երկու երկրներիս համար էլ հիմա դեռ ձեռնտու է, բայց կինը չի կարող միշտ հղի մնալ, նա պետք է ժամանակին նաև ծննդաբերի:
- Նոր պահանջների առաջ քաշելը մեզ համար ավելի վտանգավոր է. հետևաբար պետք է համակերպվել ստատուս քվոյին:
- Երկու երնեկ միասին չի լինում. եթե ստատուս քվոն ենք ընդունում, ուրեմն պիտի համակերպվենք տնտեսական դժվարություններին ու պատերազմի վախը մեր սրտերում ապրենք...
- Արդեն 15 տարի ա, էս վիճակին ենք, էլ հնարավոր չէ. պետք է պայմանագիր կնքվի, բայց պայմանով, որ Ղարաբաղն էլ մասնկացի:
- Ստատուս-քվոն լավ է, եթե հնարավոր լինի ապահովել կայուն խաղաղություն:

- Պետք է այսօրվա վիճակը պահպանել, սակայն ամեն հայ պետք է այս երկրի համար իր ներդրումը անի, հզորացնի Հայաստանը:
- Մեր կռիվն իրավական է. հետևաբար պետք է այս վիճակը շարունակել այնքան, որ մեր օգտին լուծվի հարցը. միակ փոփոխությունը պետք է լինի այն, որ Ղարաբաղը գոնե խորհրդակցական ձայնով մասնակցի բանակցություններին:
- Այս իրավիճակը կբերի արաբա-իսրայելական իրավիճակին, ոչ մի լավ բան սրանից չի կարելի ակնկալել:
- Դիվանագիտական ճիշտ քայլերի դեպքում՝ ստատուս քվոյի պահպանումն այնքան էլ կարեւոր չէ: Այսինքն՝ վիճակը ձեռնտու չէ եւ պետք է մտածել կոնկրետ առաջընթաց գրանցելու համար, որը լինի առավել երաշխավորված ու ապահովի անվտանգությունը, խաղաղությունը:
- Մենք ստատուս քվոյին սովորել ենք, հանգիստ ապրում ենք, բայց թշնամին էլ ուժեղանում է...
- Իրավիճակը այսպիսին է դեռ և լուծում չի ստանալու, քանի դեռ մեծ տերությունները չեն կարողանում ինչ-որ մեկի լիարժեք ազդեցություն ապահովել այստեղ:
- Ստատուս քվոն լավ է մի կողմից, որ ակնհայտ պատերազմ չկա: Բայց դեհ նաեւ տնտեսական աճ չկա, այսպես որ շարունակվի, Արցախը հետ է մնալու:
- Ստատուս քվոյի պահպանման դեպքում մենք մեզ ապահով ենք զգում:
- Միգուցե ավելի լավ է մնա ստատուս քվոն, թող որոշ ժամանակ էլ այսպես մնա, որ պայմանները բարելավվեն, այդ ժամանակ կմտածենք:
- Այսօրվա վիճակը՝ ստատուս քվոն չի կարող երկար շարունակվել, քանի որ Ղարաբաղում ու Հայաստանի սահմաններում գրանցվող զոհերը կարող են լցնել համբերության բաժակը և ժողովուրդը կուզի հանգուցալուծել խնդիրը:
- Քանի դեռ շարունակվում է ստատուս քվոն, շատ են դեպքերը, երբ ոչ պատերազմական այս վիճակում մեր տղաները մահանում են սահմանին:
- Ստատուս քվոն Հայաստանի համար ձեռնտու չէ, սակայն մենք ստիպված ենք պահել այս կարգավիճակ:
- Այս իրավիճակը Հայաստանի եւ Արցախի համար ավելի լավ է, որովհետեւ ցանկացած այլ պարագայում կրկին պատերազմ է սկսելու: Ավելի լավ է այս վիճակը պահենք:
- Այս իրավիճակը պետք է պահպանել այնքան ժամանակ, որ մեր տնտեսությունը զարգացում ապրի, միջազգային ատյաններում մեր դիրքը հզորանա, մարդկանց կենցաղը բարելավվի:
- Ստատուս քվոյի դեպքում ամեն ինչ ավելի հանգիստ է, եթե ինչ-որ բան փոխվի վիճակը ավելի կբարդանա:
- Ստատուս քվոյի պահպանումը երկար ժամկետում ի վերջո կբերի նրան, որ Ղարաբաղը մի գեղեցիկ օր կճանաչվի Հայաստանի մաս, այլ ոչ թե անկախ պետություն: Մենք էլ հենց սա ենք ուզում:
- Ստատուս քվոն եթե երկար տևի, Հայաստանն ու Արցախը կշահեն:
- Թերևս ստատուս քվոյի պահպանումը չարիքի փոքրագույնն է:

- Ստատուս քվոն դա ուղղակի ժամանակ շահել է, որպեսզի թուրք չմիավորվի ու նորից մեզ ջնջնի:
- «Ստատուս քվոն» լավ է այնքանով, որքանով որ պահպանվում է խաղաղ իրավիճակը:
- Ստատուսը պահպանելն արժե մինչեւ մեր հզորացումը, երբ արդեն կձեռնարկենք հարցի լուծումը:
- Ավելի լավ կլինի մնա Ստատուս քվոն մինչև կգտնվի մեզ համար ավելի նպատակահարմար լուծում:
- Իհարկե ստատուս քվոն ձեռնտու չէ, սակայն մյուս կողմից էլ չպետք է շտապել և հարցը լուծելու համար ինչ-ինչ անորոշ քայլեր անել
- Ստատուս քվոի պահպանումը ներկայում ճիշտ է՝ մինչև Ղարաբաղի ինքնավարության ճանաչումը:
- Կարծում եմ, որ տասնիհինգից քսան տարիների ընթացքում միայն կարելի է գտնել եռակողմ փոխզիջման ընդունելի հնարավորություն, դրա համար էլ այսօրվա ստատուս քվոն և հայկական կողմի և ադրբեջանական կողմի համար ընդունելի է
- Ստատուս քվոի տարբերակը լավն է, միայն պետք է այն դե ֆակտոյից վերածել դե յուրե իրավիճակի:
- Մեզ ավելի ձեռնտու է ազատագրված տարածքները պահել, քան զիջել, որովհետև զիջելուց սահմանագիծը կերկարի երեք անգամ և մեր ծախսերը էլ ավելի կավելանան: Պետք չէ վախենալ պատերազմից, որովհետև այն նույնքան վախենալի է հակառակորդի համար: Այսօրվա իրվիճակը ամենաձեռնտուն է, ինչպես էլ որ հաշվենք:
- Քանի իմ, Ալիևի ձեռքին արյուն կա, ոչ մի փոխզիջում չի լինի... պիտի ստատուս քվոն շարունակվի, մինչև սերնդափոխություն լինի:
- Ստատուս քվոն կարող է ձգվել այնքան ժամանակ, մինչև Ադրբեջանը չորոշի խնդիրը լուծել ռազմական ճանապարհով, դրա համար էլ ստատուս քվոյի լուծման հարցում պետք է նախաձեռնող լինի Հայաստանը:
- Ստատուս քվոյում մի կետ պետք է ավելացնել՝ պետք է վերաբնակեցում իրականացնել:
- Դժվար է, դժվար, երեխեք, ստատուս քվոյից լավը չկա...
- Մենք ստատուս քվոն պահպանելով կարող ենք զարգանալ, եթե ճիշտ ու էֆեկտիվ կառավարենք տնտեսությունը: Մեր պրոբլեմը ներսում է՝ հարկային քաղաքականություն, կոռուպցիա, գազի գին, մոնոպոլիաներ և այլն:
- Ստատուս քվոյի վիճակը որոշակի չափով մեր օգտին է, քանի որ մենք այժմ կարող ենք օգտվել այդ տարածքներից տնտեսապես:
- Մենք շատ դրական վիճակում ենք հիմա, եկենք փաստերին նայենք. մենք այսօր Ադրբեջանի քսան տոկոսը մեր ձեռքում ենք պահում:
- Տարբերակ առաջին. Ժամանակն աշխատում է մեր օգտին, ու եթե ստատուս քվոն շարունակվի, այսօր կամ վաղն իրենք համակերպվելու են այս կարգավիճակի հետ, Արցախը մերն է:

- Այս սցենարի միակ վատ կողմը այն է, որ ԼՂն առանձին պետության կարգավիճակ չունի, բայց դե ոչինչ. Կիպրոսի մի մասն էլ ճանաչված չի, լավ էլ ապրում են...
- Մեզ այս տարբերակը ձեռք է տալիս, ավելի լավ ա սոված մնանք, բայց սենց մնա:
- Ստատուս քվոն մեզ շատ ձեռնտու է, տարիներով ամեն ինչ լավ է եղել, թող սենց էլ մնա, ժամանակը ամեն ինչ էլ լուծում է:
- Զինադադարը օգտակար է և՛ Հայաստանի համար, և՛ Ադրբեջանի համար:
- Ստատուս քվոն ներկայում լավագույն տարբերակն է մեզ համար: Մենք մեր խնդիրները հիմնականում լուծել ենք՝ մեր հողերը հայկական են, մենք միայն մի խնդիր ունենք լուծելու՝ միջազգային ճանչումը, դա էլ կլինի աստիճանաբար:
- Այն որ այսօր պատերազմ չկա արդեն ամենամեծ դրական բանն է:
- Ստատուս քվոն պատերազմի չի բերի՝ չեմ հավատում: Թող այսպես էլ մնա:
- Ստատուս քվոյին մենք շահում ենք:
- Ներկայացված տարբերակներից ոչ մեկը չի բավարարում ոչ միայն մեր, այլև Ադրբեջանի շահերը. ունենք հինգ անհայտով երկու հավասարում, սա շատ բարդ և անլուծելի խնդիր է, հետևաբար քանի որ Ղարաբաղը արդեն տասնութ տարի անկախ է, թող այսպես էլ շարունակվի, մինչև որ մի օր հիայտ կգան լուծման նոր տարբերակներ, որ ավելի ընդունելի կլինեն:
- Պատերազմը ընդունելի չէ ոչ միայն մեր, այլև ադրբեջանական կողմի համար, այդ պատճառով առաջին տարբերակը շատ հարմար տարբերակ է:
- Ստուս քվոն հնարավորություն կտա երկու ժողովուրդների միջև հարաբերություններ հաստատել:
- Ժամանակի մեջ մենք կշահենք:
- Ստատուս քվոն պետք է հետաձգել՝ կոնկրետ երաշխիքներով:
- Մենք դիմանալու ենք, ստատուս քվոն մեզ միեւնույն է՝ հարմար է:
- «Ստատուս քվոն» նրանով է լավ, որ գոնե տասնհինգ տարի հրադադարի պայմաններում ենք ապրում:
- Այժմյան անորոշությունը միգուցե քաղաքական տեսանկյունից մեզ օգուտ է, քանի որ ցանկացած արագ լուծում հանգեցնելու է պատերազմական գործողությունների, իսկ այսպես դանդաղ որ գնանք, կհասնենք կայուն լուծման
- Մեր ձեռքբերումն այսօր այն է, որ Ղարաբաղում հայերն ապրում են հարաբերական անդորրի պայմաններում, ու պատերազմ չկա:
- Մարդիկ այսօր Արցախում հանգիստ ապրում են, թեկուզ ճանաչումը միայն Հայաստանի կողմից է, այնուամենայնիվ, սա ձեռքբերում է:
- Թերևս ստատուս քվոն կարելի կլինի պահպանել այնքան, մինչև Ադրբեջանի նավթի պաշարները սպառվեն և միջազգային հանրության հետաքրքրությունը Ադրբեջանի նկատմամբ մարի:
- Լեռնային Ղարաբաղն արդեն ինքնորոշվել է և վերջ: Եթե չենք ճանաչում, ուրեմն ստատուս քվոն պիտի շարունակվի էնքան ժամանակ, մինչև ճանաչեն:

- Ինչ վերաբերվում է անկախության ճանաչմանը... դեռ ժամանակը չէ. մենք ցեղասպանության հարց ունենք, իսկ սփյուռք չի կարող երկու խնդիր միաժամանակ լուծել:
- Այս վիճակը շահեկան է մեզ համար՝ մենք ոչ մի թիզ չենք հանձնում, ժամանակ ենք շահում:
- Ստատուս քվոն մեզ ձեռնտու է այնքանով, որ Ադրբեջանում էլ մի սերունդ է մեծանում, որը հարմարվել է այս վիճակին:
- Ադրբեջանցիները մի սերունդ հետո ավելի քիչ կցանկանան իրենց կորցրածը ետ բերեն:
- Մենք պետք է պահենք ստատուս քվոն մինչև Ադրբեջանի նավթը ավարտվի:
- Ամեն դեպքում հիմնական հողերը մեր վերահսկողության տակ են ու սա է կարեւորը: Բանակցային գործընթացում սա մեզ առավելություն է տալիս:
- Մենք մեր սերունդներին սա բեռ չենք թողնում, այլ հանգիստ վիճակ ենք փոխանցելու, կփոխվեն հայացքներ, մոտեցումներ ու լուծում կգտնվի ժամանակի մեջ:
- Պետք է ամեն ինչ մնա, ինչպես որ կա, մինչև ԼՂ-ի հարցը դրական լուծում ստանա:
- Ինչքան երկար տևի, այնքան ի վնաս մեզ է ժամանակը աշխատելու. գնալով ինչ ձեռք ենք բերել, դա էլ կկորցնենք:
- Հակամարտությունը պետք է լուծել խաղաղ ճանապարհով: Այս իրավիճակը ձգձգելը շատ ավելի վտանգավոր կլինի:
- Ինչքան ձգձգենք հարցի լուծումը, էնքան ջուր ենք ծեծելու...
- Ինչան ձգվում է լուծումը, այնքան սերնդափոխություն է լինում, մարդիկ հարմարվում են այս իրավիճակին:
- Ասում ենք սերնդափոխություն, սերնդափոխություն, բայց եկեք չմոռանանք, որ սերն ու ատելությունն արյունով անցնող երևույթներ են:
- Ժամանակը ի օգուտ մեզ է աշխատելու:
- Վիճակը պահանջում է լուծում: Առաջին սցենարը անվերջ պահելու մեջ արդյունք և պոտենցիալ չկա:
- Այս վիճակը վերջիվերջո պետք է լուծում ստանա, թող հինգ տարի էլ այսպես ձգենք, բայց միևնույն է հետո կանգնելու ենք այս հարցի լուծման առաջ, էլ ինչի ժամանակ ձգենք:
- Ըստ ինձ մենք ժամանակին ստիպված ենք լինելու բացել սահմանները, ուզենք թե չուզենք...
- Կդիմանանք, թող դանդաղ զարգանանք կամ չզարգանանք, բայց ոչ մի զիջում:
- Իսկ իմ կարծիքով ինչ-որ լուծում պետք է գտնվի, այս իրավիճակը ինչքան կարող է այսպես շարունակվել:
- Ինչքան կարող ենք դիմանալ, համբերել, ինչ ժամանակ է դեռ պահանջվելու, ինչքան համբերենք... ամեն դեպքում լուծման պետք է հանգենք:
- Ապագայում շատ բան կարող է փոխվել: Այսօր մենք ոչինչ չենք կարող անել:

- Պետք է դեռ հետաձգվի հարցի որոշումը, մինչև հարմար նախապայմաններ ստեղծվեն: Իսկ մինչ այդ հայերը պետք է համախմբվեն ու հզորանան:
- Ամեն դեպքում փոխզիջման տարբերակ պետք է գտնել, քանի որ ներկա իրավիճակը երկար չի կարող շարունակվել:
- Երկաթը տաք-տաք են ծեծում, ինչքան ժամանակ է անցնում, այնքան դժվարանում է մեր վիճակը:
- Այսօրվա իրավիճակը մեզ նոր բարեկամներ գտնելու հնարավորություն է տալիս, ինչը ապագայում մեզ «ձիու քայլ» կատարելու շանս կտա՝ ապահովելով հաղթանակը:
- Ժամանակը հիմա մեր օգտին է աշխատում, քանի որ հիմա շատ թե քիչ նորմալնի դրության մեջ ենք:
- Ժամանակը մեզ է օգուտ, ստատուս քվոն մեզ է օգուտ, միակ վտանգը պատերազմն է, որ չլինի, այսօրվա տարբերակը ամենալավն է:
- Ժամանակը աշխատում է մեր հակառակորդի օգտին: Մենք աշխատում ենք բանակի որակի վրա, Ադրբեջանը՝ քանակի:
- Սերնդափոխությունը, բնական է, իր հետևանքները պիտի ունենա. իր մաշկի վրա կռիվ զգացած սերունդն այլ կերպ է հարցին նայում, բայց նոր սերունդն էլ այլ ուժ ունի, որը մենք չունենք...
- Միջազգային հանրությունը աստիճանաբար մեր կողմն է անցնելու, ժամանակը մեր օգտին է աշխատում:
- Եթե մենք ամուր պահենք զոհված ազատամարտիկների ընտանիքների հետ կապը, սա իր լավ ազդեցությունը կունենա սերնդի դաստիարակության վրա:
- Պետք է փոխել սերնդի հոգեբանությունը և իմացության մակարդակը. ներկա քիչը (հայոց պատմություն իմացողը) պիտի աշխատել դարձնել գերակշռող:
- Ցեղասպանությունն էլ սկզբում չէին ճանաչում, բայց հիմա բազմաթիվ երկրներ են ճանաչել, չէ՞: Նույն ձևով էլ պետք է շարունակենք աշխատանքը Ղարաբաղի միջազգային ճանաչման ուղղությամբ:
- Հնարավոր չի ասել ժամանակը մեր օգտին է, թե ոչ, քանի որ օր օրի իրավիճակներն ու շահերը փոխվում են:
- Եթե շատ ժամանակ անցի, կռիվ արդեն չի լինի, որովհետև նոր սերունդը ավելի մեղմ ա վերաբերվելու
- Եթե Ադրբեջանի հրացանը երկար չկրակի, վերջում կժանգոտի, ուրեմն ժամանակը մեր օգտին է:
- Մի տաս-քսան տարի հետո ամեն ինչ լավ կլինի... Էնպես որ հող տալու կարիք չկա:
- Նավթը անվերջ չի, մի օր վերջանալու է, բացի այդ Ադրբեջանի տարածքում փոքրամասնությունները գլուխ են բարձրացնում, որ իրենց հանգիստ թողենք, մի քանի տարածքում իրենք իրենց կքանդվեն:
- Էս հարցը կլուծվի մենակ էն ժամանակ, երբ մեր երկու տարեկան երեխեն դառնա պրեզիդենտ ու նրանց մոտ էլ հիմիկվա երեխեն դառնա պրեզիդենտ:

- Երիտասարդները պետք է դեռ երկար ապրեն այստեղ, իսկ դրա համար խաղաղություն է հարկավոր ու հողերը պահել:
- Խնդրի լուծումը մեր մեջ է, պահպանենք Շարժման սկզբի մեր ոգին ու կկարողանանք համոզել բոլորին, որ մենք ճիշտ ենք:
- Ժամանակը մեր օգտին է, քանի որ Ադրբեջանի գլխավոր խաղաքարտը՝ նրա պաշարները, վերջանալու են մի օր, ու Ադրբեջանը կդադարի միջազգային հանրության համար հետաքրքրություն ներկայացնել
- Մեր ժողովուրդը միշտ էլ ուզում է լավ ապրելու տեղ գտնի... կհամբերենք այնքան, որքան պետք է...
- Հարցի լուծումը կախված է նոր սերնդից. ինչ գաղափարով որ մեծացավ, էն էլ կստանանք... Հաղթելու համար, հաղթողի կեցվածք պիտի սերմանվի պետական մակարդակներով:
- Կարծում եմ, որ եթե երկար ժամանակ կարողանանք պահպանենք իրավիճակը, մենք կստանանք ճանաչում:
- Ժամանակի հետ վտանգի զգացումը նվազում է: Սերունդ է փոխվում, ու հաջորդ սերունդն այդքան էլ ագրեսիվ չի լինի:
- Հարցը թողնենք ապագային ինքն իրեն կլուծվի:
- Չորրորդ սցենարը ինձ հիշեցնում է երեխուն համոզելու եղանակ. «ազիզ ջան, ինձ լսի, որ մի օր հենց ազատվեմ գանք մարոժնի ուտելու »... մի օր էլի... օրերից մի օր...
- Հարցը լուծում կգտնի, եթե Ալիեվները իշխանությունը վերջանա:
- Ժամանակի ընթացքում կարելի է գնալ զիջումների, բայց շատ քիչ:
- Չորրորդ սցենարն անորոշության խորհրդանիշն է:
- Լրիվ դառավ էն առածը. «և գայլը կուշտ մնա՞ և գառը՝ կենդանի՞...»

Ադրբեջանցիներ

- Եթե հակամարտությունը խաղաղ կարգավորվի՝ ավելի կայուն խաղաղություն կհաստատվի:
- Դրա օրինակներից է Ռուսաստանի կողմից Հայաստանին տրամադրվող 8.5 միլիոնի հասնող ռազմական օժանդակությանը:
- Ռուսաստանն ազդում է Թուրքիայի վրա Հայաստանի միջոցով:
- Հենց որ մեր բնական ռեսուրսները սպառվեն, այս խնդրի լուծումն ավելի դժվար կդառնա:
- Դա նշանակում է, որ ԼՂ-ն ասես գործի է նրանց ձեռքում և օգտագործվում է մեր դեմ:
- Նրանց առաջին կարիքը տնտեսական զարգացումն է:
- Կարծում եմ, որ Հայաստանում տիրող դժվարին տնտեսական պայմանները կստիպեն նրանց համագործակցել մեզ հետ:
- Մենք կարող ենք արդարանալ, որ չենք կարող ապրել հայերի հետ:
- Եթե մենք ցանկանում ենք սա խաղաղ կարգավորել, ապա մենք պետք է զիջումների գնանք:
- Շատ անհամաձայնություններ կան ԼՂ-ում հայկական դրամի և լեզվի մնալու հետ կապված:

- Ճիշտ չէ ԼՂ-ում հայկական դրամ օգտագործելը, հետևաբար մենք պետք է բնակչությանը սրան նախապատրաստենք:
- Ինչու՞ պետք է հայերը խառնվեն մեր գործերին տարբեր մակարդակներում:
- Հայաստանի զարգացումն ամբողջովին կախված է Ադրբեջանից:
- Մեր հիմնական հարցերից մեկը պետք է լինեն մարդու իրավունքները:
- Եթե մեր անվտանգությունը սասանվի հայերի հետ հարևանություն անելիս՝ մենք դրա կարիքը չունենք:
- Մենք ինտեգրման կարիք ունենք:
- Հայաստանի համար հակամարտության խաղաղ կարգավորման ամենաձեռնտուն այն է, որ սահմանը կբացվի Թուրքիայի հետ:
- Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը անվտանգություն չեն ապահովում:
- Մեկ այլ տարբերակ է Լեռնային Ղարաբաղում Բեռլինի պատի նման պատ կառուցել, որը հնարավորություն կտա մի կողմում հայերի, իսկ մյուս կողմում ադրբեջանցիների բնակության համար:
- Լեզուն և փողը պետք է ադրբեջանական լինեն:
- Լեռնային Ղարաբաղում կառավարում է անօրինական վարչակարգ:
- Լեռնային Ղարաբաղը հարուստ բնական ռեսուրսներ ունի, որոնք օգտագործվում են հայերի կողմից:
- Իրականում Լեռնային Ղարաբաղում ապրող հայերը պետք է հայաստանյան անձնագրեր ունենան:
- Հայաստանի և ԼՂ-ի միջև անմիջական հաղորդակցությունը հակասում է միջազգային ստանդարտներին:
- Եթե անգամ Հայաստանը ցանկանա, այն չի կարողանա Ադրբեջանի հետ համաձայնության գալ հակամարտության կարգավորման վերաբերյալ:
- Տնտեսությունն է ցանկացած դրամական հիմքի մեջքին կանգնած, պետք է մեկ դրամական համակարգ լինի:
- Եթե յուրաքանչյուր էթնիկ խումբ ցանկանա իշխանություն ունենալ, ապա աշխարհում կարող է խառնաշփոթ առաջանալ:
- Եթե Ղարաբաղը մեզ վերադարձվի և ամեն ինչ ընկնի իր տեղը, կնշանակի, որ մենք մոռացել ենք մեր զոհերի մասին:
- Մենք կարող են հասնել հակամարտության կարգավորմանը՝ ժողովրդավարական հասարակություն կառուցելով:
- Սոցիալական անարդարությունը դժվարություններ է ստեղծում հակամարտության կարգավորման գործում:
- Յուրաքանչյուր պետության զարգացումը կախված է իր տնտեսությունից:
- Ադրբեջանը և Հայաստանը պետք է ապրեն խաղաղության մեջ, մենք խաղաղություն ենք ցանկանում:
- Օրինակ՝ հակամարտության խաղաղ կարգավորումը պայմաններ է ստեղծում Ադրբեջանի տնտեսական զարգացման և ռազմավարական նախագծերի իրականացման համար:
- Կարող է մի օր գալ, երբ Ադրբեջանին ամենևին չհետաքրքրի միջազգային հանրությունը:

- Ներկայիս իրավիճակը կհանգեցնի ապագայում պատմության աղավաղմանը, և հիմնախնդիրը լուծում չի ստանա:
- Որքան ժամանակն անցնում է, մարդիկ անտարբեր են դառնում դրա հանդեպ և մոռացության են մատնում այդ հիմնախնդիրը:
- Մենք գրեթե ուշացել ենք:
- Եթե Ադրբեջանն ի վիճակի չէ իրավական առումով արդարացնել ԼՂ-ի անկախությունը, ապա երկրներից ոչ մեկն էլ դա չի կարողանա անել:
- Կարծում եմ, մենք պետք է լուծենք այս հարցը, քանի որ հիմա ավելի շատ հնարավորություններ ունենք:
- Այս հարցը պետք է որքան հնարավոր է շուտ լուծվի՝ Ադրբեջանի շահերի շրջանակում:
- Ժամանակն Ադրբեջանի օգտին է աշխատում:
- Այս հարցն այնքան էլ հեշտ չի լուծվի:
- Ադրբեջանը պետք է շարունակի տարածքային ամբողջականության գործընթացը:
- Ադրբեջանի և ողջ տարածաշրջանի համար շահեկան կլինի, եթե հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորվի՝ տարածքային ամբողջականության սկզբունքի շրջանակում:
- Ստատուս քվոյի երկարաձգումը հնարավոր է դարձնում Ադրբեջանի կողմից այդ տարածքների կորուստը:
- Քանի որ մեր զարգացումը կախված է նավթի արդյունաբերությունից, դա մեզ համար հարմար չի լինի:
- Որքան ժամանակն անցնում է, այնքան այս թեման կորցնում է իր հրատապությունն աճող սերնդի աչքերում:
- Մենք սպասում ենք, որ միջազգային պայմանները փոխվեն:
- Սերնդի փոփոխություն պետք է տեղի ունենա՝ այս հարցը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար:
- Նախագահի փոփոխությունը ևս հետաձգում է հարցը:
- Մենք շատ ենք ուշացել:
- Ոչ Հայաստանը, ոչ էլ նրան աջակցող որևէ այլ երկիր չեն ցանկանա, որ Լեռնային Ղարաբաղը վերադարձվի առանց նախապայմանների:
- Մեր սպասողական դիրքը կապված է հակամարտության խաղաղ ճանապարհով լուծման հետ:
- Որքան ժամանակն անցնում է, հակամարտության կարգավորումն ավելի դժվար է դառնում:
- Ժամանակն անցնում է, մենք որոշ քննարկումներ ենք ունենու, սակայն կրկին ժամանակն աշխատում է հօգուտ մեզ:
- Դրա համար ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ:
- Հին սերունդը հեռանում է կյանքից, իսկ նորերը մոռանում են դրա մասին:
- Պետք է սահմանվի խաղաղ բանակցությունների ժամանակացույցը:
- Մենք չենք կարող անվերջ շարունակել բանակցությունները:
- Ժամանակը մեր օգտին է և ի տարբերություն Հայաստանի, մենք զարգանում ենք ավելի արագ ու ուժեղ:

- Որքան շուտ կարգավորենք հիմնախնդիրը, այնքան լավ, քանի որ գալիք սերունդը բացարձակապես կմոռանա, որ ԼՂ-ն մեզ է պատկանում:
- Իրականում բոլոր խնդիրները պետք է արագ լուծվեն. Առանց այն էլ կարգավորումը այնքան տարիներ ձգվեց:
- ԼՂ հակամարտության կարգավորման ձգձգմամբ մենք ոչինչ շահում. մենք վերադառնում ենք դեպի ստատուս-քվո, ինչ է այն մեզ տալիս: ԼՂ և Ադրբեջանի 7 բռնագրավված շրջան: Հետևաբար, մենք պետք է լուծենք հիմնախնդիրը որքան հնարավոր է շուտ:
- Հակամարտության կարգավորման առաջարկներից մեկը «Կովկասյան պետության» ստեղծումն է, որը կկառավարեն հայերը, ադրբեջանցիները և վրացիները:

Լեռնային Ղարաբաղը անկախ կամ Հայաստանի կազմում

Հայեր

- Եթե հնարավորություն ունեմ լինել անկախ, ինչո՞ւ մտնել ինչ-որ մեկի թրի տակ
- Փաստ է որ Ղարաբաղը Հայաստանինն է և հնարավոր չէ գնալ փոխզիջման: Լեռնային Ղարաբաղը ստացել է օգնություն, եղել են այդպիսի դեպքեր, սակայն ստացել է Հայաստանի միջոցով: Ավելի հեշտ կլինի վերջնականապես միացնել Ղարաբաղը Հայաստանին և ավարտել:
- Ղարաբաղը՝ Ադրբեջանի կազմում երբեք չպետք է լինի այլևս, քանի որ գառը ոչխարներին երբեք պահ տալ պետք չի, եթե նույնիսկ գայլը խոտակեր է դարձել
- Ոչ մի կարգավիճակով չի կարելի է անգամ մի պահ մտածել ԼՂ-ի ինչ-որ կարգավիճակի մասին Ադրբեջանի կազմում:
- Ղարաբաղը պետք է գոյություն ունենա որպես անկախ պետություն:
- Ադրբեջանը թող ճանաչի Ղարաբաղը, որն էլ իր բանակը ունենա, իսկ եթե դրա համար պետք է հարակից շրջանները զիջել, ուրեմն պետք զիջել:
- Մենք Ղարաբաղի համար ենք պայքարել, իսկ մենք նրանց համար, չնայած որ մենք ավելի շատ զոհեր ենք տվել: Հետևաբար ավելի լավ կլինի, որ Ղարաբաղը միանա Հայաստանին որպես 11-րդ մարզ:
- Ղարաբաղը պետք է լինի Հայաստանի կազմում:
- ԼՂ-ի խնդիրը համայն հայության խնդիր է: Ես չեմ պատկերացնում ԼՂ-ն Հայաստանի կազմում նաև, ԼՂ-ն պետք է անկախ լինի:
- Ղարաբաղը՝ անկախ կամ Հայաստանի կազմում, շատ ընդունելի տարբերակ է և ճիշտ ձևակերպում:
- Լեռնային Ղարաբաղը սուվերեն պետություն է, թող ինքն էլ որոշի, թե ինչ է զիջում:
- ԼՂ-ն պետք է ճանաչվի միջազգային հանրության կողմից:
- Լեռնային Ղարաբաղը պետք է ճանաչվի միջազգային կազմակերպությունների կողմից և ստանա օգնություն:

- Ղարաբաղը համարվում է Հայաստանի մաս և այդ ամենն ամրագրված է ՀՀ ԳԽ առաջին գումարման և ԼՂԻՄ ԳԽ համատեղ հռչակագրում, այսինքն հարցը լուծված է և բանակցություններ պետք չեն:
- Եթե Ղարաբաղում ազգային լեզուն հայերենն է, իսկ տարադրամը՝ հայկական դրամը, հետևաբար ճիշտ կլինի, որ Ղարաբաղը միանա Հայաստանին:
- Կարելի է Կոսովոն համարել նախադեպ, թեև Ռուսաստանը չկարողացավ շուտ հասնել, երբ միջամտեց, արդեն ուշ էր:
- Իրականում Ղարաբաղը երբեք Ադրբեջանի կազմում չի եղել:
- Մենք մեր դիվանագիտությունն այնքան պիտի հզորացնենք, որ կարողանանք քաղաքականից իրավական դաշտ տեղափոխումներ անել:
- ԼՂՀ-ն երբեք Ադրբեջանի կազում չի եղել, իսկ ԽՍՀՄ-ը պարզապես քաղաքական որոշում էր:
- Ղարաբաղը երբեք ադրբեջանական չի եղել, միշտ էլ հայկական է եղել:
- Ղարաբաղը պետք է լինի անկախ պետություն և ունենա իր սեփական պետությունը, այլ ոչ թե լինի Հայաստանի կազմում:
- Ղարաբաղը պետք է լինի Հայաստանի կազմում, կարիք չկա, որ մի ազգը կիսվի ու դառնա երկու պետություն, մենք պետք է միասնական լինենք:
- Երկու կողմերն էլ պետք է որոշ բաներ հասկանան. ադրբեջանցիները պետք է հաշտվեն Ղարաբաղը հանձնելու գաղափարի հետ:
- Ղարաբաղը միայն Հայաստանի կազմում պետք է լինի:
- Ես համամիտ եմ, որ Ղարաբաղն անկախ չի կարող լինել, միայն Հայաստանի կազմում:
- Ղարաբաղը երեք հազար տարի եղել է մերը և մերն էլ պետք է մնա:
- Ընդունելի է միայն Ղարաբաղի անկախության կամ Հայաստանի կազմում լինելու տարբերակը, անվտանգության օղակում ռուսական զորքերի տեղակայմամբ
- Եթե ԼՂՀ-ում հայ է ապրում, ուրեմն նա պիտի հայկական հողի վրա ապրի:
- Ներկայումս ԼՂՀ նույն Աբխազիայի կարգավիճակում է: Նրանց Հայաստանի անձնագրեր ենք տվել, հիմա երկրորդ քայլը պիտի կատարվի. ինքնավարության իրավունքի կիրառում:
- Հայաստանը պետք է ճանաչի ԼՂՀ:
- Սցենար 3. անկախ կամ Հայաստանի կազմում
- Կոսովոն ո՞նց ճանաչեցին առանց Սերբիայի, տենց էլ Ղարաբաղը կճանաչեն առանց Ադրբեջանի:
- Ղարաբաղը արդեն Հայաստանի կազմում է, բայց պետք է անպայման դա օրինական ձևով լուծվի:
- Ղարաբաղը պետք է Հայստանի մարզի կարգավիճակ ստանա: Վերջ:
- Բոլոր ղարաբաղցիները կստանան հայաստանի անձնագիր և կգա ժամանակ, որ ինքնստինքյան ԼՂն կմիացվի Հայաստանին:
- Լավ կլինի առաջին սցենարով ամեն ինչ գնա, բայց ԼՂ-ն միջազգայնորեն ճանաչվի: Սա կլինի ամենալավ տարբերակը:

- Կողմ ենք ոչ թե այս կարգավիճակին, այլ այն, որ ընդունվի որոշում ԼՂ-ն Հայաստանին միացնելու մասին, քանի որ և անձնագրերը, և դրամը, և լեզուն այնտեղ հայկական են:
- Ինտեգրվելու համար ճանաչումը անհրաժեշտ պայման է:
- ԼՂ-ի շարժումը երբ որ սկսվեց, մենք ուզում էինք, որ միանար Հայաստանին, մեզ պետք չի, որ դառնա անկախ պետություն:
- Ղարաբաղը երբեք չի եղել Ադրբեջանի մաս ու չի կարող լինել:
- Ահա, հասանք հենց մեր ուզածին, ԼՂՀ-ն անկախ կամ մեր կազմում...
- Ղարաբաղի ժողովուրդը պետք է որոշի ուզում է միանալ Հայաստասնին, թե ոչ:
- Սա ընդունելի է, որովհետեւ ԼՂ-ն ստանում է անկախ ստատուս, շրջափակումից դուրս կգանք, պատերազմի վտանգը կնվազի: Ճանապարհը կբացենք, թող ով ուզում է գնա:
- Թող Ղարաբաղը լինի առանձին պետություն, մենք էլ եղբայրական թիկունք կկանգնենք իրեն:
- ԼՂՀ-ն երբեք Ադրբեջանի կազմում չի եղել: ինչո՞ւ ենք այս եզրույթից շեղվում:
- Ղարաբաղի ժողովուրդն ինքը պետք է որոշի ՝ Հայստանի հետ, թե Հայստանի կազմում:
- Ադրբեջանը ճանաչում է ԼՂ-ի անկախությունը, Լաչինը պահում ենք, մնացածը վերադարձնում ենք:
- ԼՂ-ն պետք է անկախանա, կամ միանա Հայաստանին, իսկ մյուս՝ գրավված-ազատագված տարածքները, թեկուզ, թող մնա նրանց:
- Ասում էին . «Ղարաբաղ, միացի՛ր Հայաստանին», հիմա էլ ասում են «Հայստան, միացի՛ր Ղարաբաղին»
- Մեր ժողվրդի կամքը մեկն է, ՀՀ-ն օրենք ընդունի ու Ղարաբաղը մտնի Հայաստանի կազմում: Այ դա կլինի նոր ստատուս-քվոն:
- ԼՂ-ն պետք է ճանաչել որպես առանձին միավոր:
- Ղարաբաղը պիտի ինքնուրույն պետություն լիմի, լրիվ առանձին:Նույնիսկ Հայաստանին էլ պիտի օգնի:
- Որ Ղարաբաղն անկախ լինի, Հայաստանն էլ հանգիստ կզարգանա:
- Մենք ուզում ենք, որ միջազգային հանրությունը ճանաչի Ղարաբաղի անկախությունը: Ղարաբացիներն էլ են դա ուզում... Նրանք ուզում են լինել անկախ:
- Եթե Ղարաբաղն անկախ լինի, կարծես թե երկու Հայաստան կստացվի. դա էլ նպատակահարմար չեմ գտնում:
- Ղարաբաղը մետք է դառնա Հայաստանի մի բաղկացուցիչ մասը: Ինչ անուն կդնեն իրենք իրենց՝ մարզ թե նահանգ, թող իրանք մտածեն:
- Էս առաջին սցենարը մեզ ձեռա տալիս, Ղարաբաղը պիտի լինի անկախ, կամ Հայաստանի կազմում
- Ես ուզում եմ Ղարաբաղը լինի Հայստանի կազմում, ես ղարաբաղցի եմ ու էդպես եմ ուզում:
- Ես դեմ եմ, որ Ղարաբաղը լինի առանձին, որովհետև առանց Հայստանի հովանավորության չի կարող:

- Ղարաբաղն առանց Հայաստանի օգնության չի կարող իր անվտանգություն ապահովել, այնպես որ Ղարաբաղը անմիջապես պետք է միանա Հայաստանին:
- Միանշանակ պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտան միավորել Հայաստանը և Ղարաբաղը:
- Թող անկախ պետություն լինի, պարտադիր չէ Հայաստանի կազմում լինի, փաստացի արդեն անկախ է:
- Մենք պիտի բանակացությունների ընթացքում շեշտը դնենք այն բանի վրա, որ Սովետական Միության ընթացքում ԼՂ-ն ճանաչվել է որպես պետություն:
- Մեզ բանակցություններ պետք են միայն Ստատուս Քվոյի իրավական ձևակերպման շուրջ:
- Մեզ համար կարևոր չէ միջազգային ատյանների կարծիքը, մենք պիտի ուղղակի միանանք Ղարաբաղին, ու վերջ:
- Ղարաբաղը պետք է լինի Հայաստանի մարզերից մեկը, ուզում են ղարաբաղցիները, թե չէ:
- Պետք է նախ Ադրբեջանը ճանաչի Ղարաբաղի անկախությունը, հետո Ղարաբաղն ու Ադրբեջանը իրար մեջ հողերի հարցը քննարկեն:
- Ղարաբաղը Հայաստան է և Հայասանը՝ Ղարաբաղ:
- Մեզ հարկավոր է եւս մեկ հայկական պետություն: Միայն այդ դեպքում մենք կարող ենք քննարկել հող զիջելու մասին:
- ԼՂ-ն պետք է դառնա անկախ պետություն:
- Արդյոք ճիշտ է ունենալ երկու հայկական պետություն թե ոչ. այ էստեղից պիտի սկսենք հարցը քննարկել:
- Հայաստանը պետք է ճանաչի ԼՂՀ որպես ինքնուրույն պետություն և բանակցող կողմ:
- ԼՂՀ-ն պիտի անկախ լինի և վե՛րջ:
- Հիմա ճիշտ ժամանակն է ճանաչելու Ղարաբաղի անկախությունը:
- Ղարաբաղը Հայաստանի մարզ է:
- Ելցինը երբ եկավ իշխանության հայտարարեց, որ ՌԴ-ն ճանաչում է Ցարական Ռուսաստանի կնքած բոլոր պայմանագրերը, հետևաբար Ղարաբաղը Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասն է կազմում: Հիմա ազերիները պետք է ազգային ինքնորոշման իրավունք տա ղարաբաղցիներին:
- Հայաստանի համար ավելի ընդունելի է, որ Ղարաբաղը Հայաստանի կազմում լինի, ոչ թե անկախ:
- Ղարաբաղը պետք է անկախ դառնա կամ դառնա Հայաստանինը իր շրջակա շրջաններով, բայց ադրբեջանցիները չգան հետ իրենց տները, թող մնան իրար մեջ իրար ուտեն:
- Մենք ուզում ենք որ մեր Ղարաբաղը լինի մեր Հայաստանի կազմում, զիջումը այն թող լինի, որ առավելագույնը Ղարաբաղը անկախանա, հենց հիմա պետք է ռեֆերենդում անցկացնել, քանի դեռ այնտեղ բոլորը հայեր են:

- Հիմա անհրաժեշտ է աշխատել ԼՂՀ-ն մտցնել Հայաստանի կազմի մեջ: Մենք մերն ենք ազատել, մենք զավթիչ չենք:
- Առաջին տարբերակն ի սկզբանե սխալ է, որովհետև Ղարաբաղը պետք է լինի ոչ թե անջատ, այլ պարտադիր Հայաստանի կազմում:
- Թե՛ անկախ, թե՛ Հայաստանի կազմում, երկուսն էլ մեզ ձեռնտու է:
- Եթե Ադրբեջանը համաձայնվում է, որ Արցախը Հայաստանի կազմում է, այդ դեպքում որոշ տարածքներ կարող ենք հանձնել:
- Միջազգային կազմակերպություններն ու պետությունները պետք է ընդունեն Ղարաբաղը՝ Հայաստանի կազմում:
- Ղարաբաղը երբեք ծնկի չի եկել, ուրեմն մենք էլ պիտի բռունցք դառնանք և Ղարաբաղն ու Հայաստանը չպետք է տարբերվեն:
- Ղարաբաղի անկախությունը հենց մենք պիտի ճանաչենք ու մեր օրինակով ստիպենք ուրիշներին ճանաչեն:
- Ղարաբաղը անհիշելի ժամանակներից է Հայաստանի մասն եղել: Սա է ամեն ինչի հիմքը:
- Կարգավիճակի հարցը հենց ղարաբաղցին պիտի լուծի, ոչ մենք, որ ուրիշը պիտի չխառնվի:
- Ադրբեջանն ով ա, որ պետք է ընդունի կամ չընդունի Ղարաբաղի Հայաստանին միանալը
- Մեր նպատակը իրավիճակի ֆորմալիզացիան չի, Ղարաբաղի ու Հայաստանի միացումն է:
- Ղարաբաղի հարցն արդեն լուծված է. ուրիշ բան պետք չէ քննարկել: Ղարաբաղը Հայաստանինն է:Լեռնային Ղարաբաղը հայի բնիկ հայրենիքն է՝ Արդախ, Խաչեն: Այն երբեք չի եղել ադրբեջանցունը: Ադրբեջանը ոչ մի իրավունք չունի տնօրինելու հայի հողին ու ջրին, պատմական մշակույթին:
- Ղարաբաղը պետք է լինի Հայաստանի կազմում, ի՞նչ Ադրբեջանի կազմում լինելու մասին ենք խոսում:
- Ես ուզում եմ Ղարաբաղը Հայաստանի կազմում լինի:
- Ես անկախացման կողմնակից եմ:
- Մենք մեր ընտրությունն արդեն կատարել ենք. մեր հողերը մերն են և վերջ:
- Մեր բոլորի ցանկությունը Ղարաբաղի միացումն է, եթե ոչ, գոնե անկախությունը:
- Ղարաբաղը չի ուզում Հայաստանի կազմում լինել, ուզում է անկախ լինել:
- Լեռնային Ղարաբաղը պետք է իրավական ձևով պատկանի Հայաստանին, որ ներկայիս անհանգիստ իրավիճակին վերջ տրվի
- Առաջինը Հայաստանը պետք է ճանաչի Ղարաբաղի անկախությունը, հետո պահանջենք, որ միջազգային հանրությունը ճանաչի:
- Միգուցե Ղարաբաղը ուզո՞ւմ է միանալ Հայաստանին, բայց նրան թույլ չե՞ն տալիս: Միգուցե Հայաստանի նախագա՞հը չի ուզում:
- Մենք ուզում ենք, որ Ղարաբաղը լինի Հայաստանի կազմում, բայց այս երկուսի բնակիչները պիտի հավասար իրավունքներ ունենան, բանակում էլ հավասար ձևով վերաբերվեն:
- Մենք ուզում ենք Ղարաբաղը հիմա ոնց կա մտնի Հայաստանի կազմ ու վերջ:

- Նախ պետք է համոզվենք, որ ղարաբաղցիներն ոզում են Հայաստանին միանալ. հնարավոր է նրանք գերադասեն Ադրբեջանի կազմում լինել:
- Ղարաբաղի համար ամենից կարևորը կարգավիճակն է ու միջազգային ճանաչումը, որ մեր դրոշն էլ բարձրանա տարբեր ատյաններում ու հրապարակներում:
- Մենք մեր նպատակին՝մայր Հայաստանին միավորվել կամ անկախության կարգավիճակ ստանալ, պետք է հասնենք առանց պատերազմի:
- Եթե ի վերջո պիտի ճանաչեն Ղարբաղի անկախությունը, թող սկզբից ճանաչեն, հետո մտածենք, թե ոնց ենք իրար հետ հաշտվելու:
- Արկադի Վոլսկու ժամանակ դեռ նա ասաց, որ մեզ պետք է երկու Հայաստան. ինչո՞ւ եք ուզում միանալ, թող հիմա երկու հայկական պետություն լինի, որ երկու ձայն հնչի ու ավելի ուժեղ լինեք: Ես էլ եմ այդպես կարծում, եթե մենք հիմա Հայաստանին միանանք, այդպիսով կվնասենք նաեւ Հայաստանին: Հիմա մենք պետք է անկախ պետություն լինենք:
- Ես կողմ եմ անկախությանը, բայց ոչ միացմանը... մի անգամ սովետական Հայաստանը մեզ դավաճանեց... հիմա ես հենց Հայաստանին էլ չեմ հավատում...
- Բոլոր կողմերից էլ ձեռնտու է անկախանալը. թե՛ մեր, թե՛ իրենց համար:
- Մենք ամեն մի դարասկզբին ինչի ենք ուզում ինչ-որ մեկին միանալ... Չե՞նք կարող ինքնուրույն սկսենք դարն ապրել...
- Ով է այսօր ղարաբաղցին, եթե այսօր երկրից դուրս գալու համար նրան անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր, մենք նույն քաղաքացին ենք, ինչպես ղափանցին, լոռեցին և այլոք:
- Մեր ժողովրդի միակ փրկությունը որպես պետություն ճանաչվելու մեջ է. անվտանգության այլ երաշխիք չկա:
- Ազգը պետք է ազատ ու անկախ լինի. ուրիշ խնդիր չկա:
- Մեր պրեարիտետը պիտի լինի սահման գումարած կարգավիճակ... այս պայմաններում լոխ լավ կլինի:
- Ռուսաստանը ճանաչեց չէ՞ Աբխազիային ու Օսեթիային, ինչո՞ւ Հայաստանն էլ Ղարաբաղի անկախությունը չի ճանաչում
- Ի՞նչ իրավունքով եք գրում Լեռնային Ղարաբաղ, մենք պետություն ենք, ոչ թե աշխարհագրական տարածք: Մենք Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ենք:
- Սա ԼՂ հակամարտություն չի, սա ԼՂՀ եւ Ադրբեջանի հակամարտություն է, չգիտես ինչու Հայաստանը՝ թողած Նախիջեւանի ու այլ տարածքների խնդիրը, մեր փոխարեն մեր հարցն է լուծում: Սա մեր ու ադրբեջանցիների հակամարտությունն է:
- Ինձ չի հետաքրքրում Ադրբեջանի ուզածը: Ուզի-չուզի, պետք է հաշտվի մեր արդեն ձեռք բերած անկախության հետ:
- 18-ին միայն Ղարաբաղի Խնուսի ջոկատն էր կռվում ու մեզ պաշտպանում... իսկ հիմա ինչերից եք խոսում. չի կարելի առանձնացնել Ղարաբաղն ու Հայաստանը... Ամոթ է:

- Երրորդի միայն վերնագիրն է, որ գրավում է. բոլոր կետերն անընդունելի են: Անունը կա, ամանունը չկա:
- Երրորդ տարբերակի դեպքում կվերադառնանք նույն նախապատերազմական վիճակին:

Ադրբեջանցիներ

- Մենք երբեք չեն կարողանա ճանաչել Լեռնային Ղարաբաղը որպես Հայաստանի անքակտելի մաս:
- ԼՂ-ն չի կարող պետություն լինել:
- Անկախ ԼՂ արտահայտությունը պետք է վերացվի, քանի որ այն հակասում է Ադրբեջանի միասնականության սկզբունքին և դժվարացնում է ապագան:
- Ղարաբաղի անկախությունը և Հայաստանի անբաժան մաս կազմելը կարող է անգամ ավելի վտանգավոր լինել Ադրբեջանի համար:
- Այս սցենարն այն է, ինչ կուզեն հայերը տեսնել:
- Այս սցենարը հարմար չէ մեզ համար, և այլևս պատճառ չկա, որ մենք այն քննարկենք:
- Ընդհանուր առմամբ, ԼՂ-ի տարածքը Հայաստանին միացնելը վկայում է մեր պարտության մասին:
- Սա այն տարբերակն է, որը հայերին է ձեռնտու:
- Այս սցենարում միայն սահմանի բացումն է համապատասխանում մեր շահերին:
- Մենք և հայկական կողմը կարող են համաձայնության գալ երրորդ սցենարի շուրջ: Դեպքերի զարգացումը համաձայն այս սցենարի շահեկան է մեր համար:
- Երրորդ սցենարը Ադրբեջանի պարտությունն է:
- Երրորդ սցենարի հետ մենք 50/50 համաձայն ենք:
- Չորրորդ սցենարի առաջին դրույթն որևէ կերպ ընդունելի չէ:

Լեռնային Ղարաբաղը՝ Ադրբեջանի մաս

Հայեր

- Իսկ ի՞նչ է նշանակում «Ինքնավարության ամենաբարձր կարգավիճակ»:
- Եթե Ադրբեջանը մուտք գործեց ԼՂՀ, դա մեզ համար նոր խնդիրներ կստեղծի:
- Ինչ վերաբերում է երկրորդ դրույթին՝ Ադրբեջանի կազմում, լրիվ անընդունելի է:
- Արցախը Ադրբեջանի կազմու՞մ. սա անկարելի է, նույնիսկ տեսականորեն անիմաստ է քննարկել:
- Միանգամայն մերժելի է: Ադրբեջաանի կազմում Ղարաբաղի համար հեռանկարներ չկան:

- Մենք մինչ օրս շատ զոհ ենք տվել, որ համաձայնվենք Ղարաբաղը «հետ» վերադարձնենք Ադրբեջանի կազմի մեջ:
- Համաձայն ենք, Ադրբեջանի կազմում Ղարաբաղը կզարգանա... բայց առանց հայի...
- Ղարաբաղի ապագան միայն Հայաստանի կազմում է, ինչպե՞ս կարող ենք մտածել Ադրբեջանի կազմ վերադարձնելու մասին:
- ԼՂ-ն Ադրբեջանի կազմում լինելու տարբերակը պիտի բացառվի:
- Ղարաբաղը երբեք չպետք է լինի Արբեջանի կազմում, որովհետև խոստումները չեն կատարվի, երբեք:
- Անկախ Ղարաբաղում արդեն երկու սերունդ է մեծացել, այդ սերունդները էլ չեն համաձայնվի այդ տարածքները նորից տեսնել Ադրբեջանի կազմում:
- Ես չեմ հավատում, որ կլինի մի ղարաբաղցի, որ ինչ ա ազատ աշխարհով ֆրֆրալու համար կհամաձայնվի Ադրբեջանի մի մաս դառնա:
- Սրա տակ Ադրբեջանի միակողմանի ցանկությունն է: Դեհ իհարկե սա մեզ համար ընդունելի չէ, ոչ ոք սա չի ընդունի:
- Եթե Ղարաբաղը Ադրբեջանի կազմում լինի, հայերն ու ադրբեջանցիները հո չե՞ն կարող նույն բանակում ծառայել: Իրար կկացնահարեն-կսպանեն:
- Ղարաբաղն արդեն Ադրբեջանից ազատագրվել է: Այն այլեւս երբեք Ադրբեջանի կազմում չի լինի:
- Ղարաբաղցուն ոսկու սարեր էլ տան, չի համաձայնվի Ադրբեջանի կազմում լինել: Նույնն էլ հայաստանցիների համար:
- Ղարաբաղը մերն է եղել պատմականորեն, ուրեմն չենք կարող հանդուրժել, որ հետ վերադարձվի Ադրբեջանին:
- Ադրբեջանցիները փաստերի հետ չեն ուզում հաշվի նստել: Մեր Արցախը իրենց անկախ Ադրբեջանի կազմում չի եղել, եղել է խորհրդային երկրի կազմում:
- Երկրորդ սցենարը երկար չի կարող շարունակվել, քանի որ աստիճանբար Ղարաբաղը կլուծվի Ադրբեջանի կազմի մեջ:
- երկրորդ սցենարում իրավական հենք չկա, քանի որ Բաքուն երբեք չի կարող ապացուցել, որ ԼՂՀն-ի իրավականորեն իրենց է պատկանել, իսկ եթե իրենցը չի եղել, ինչպես են ցանկանում հետ վերադարձնել իրենց
- Եթե վերադառնանք խորհրդային տարիներին, ԼՂ ինքնավարությունը լրիվ ձևական բնույթ է կրելու:
- Ադրբեջանում այն պայմանները չեն, որտեղ կարող է Ղարաբաղը դիմանալ, ԼՂՀ-ն Ադրբեջանի համար կարող է դառնալ կույր աղիքի նման մի բան, որից ամեն դեպքում Բաքուն պիտի ցանկանա ազատվել
- Լայն ինքնավարությունը լեզվի առումով իրատեսական չէ, որովհետև Բաքուն միևնույն է պահանջելու է, որ բոլոր օֆիցիալ փաստաթղթերը լինեն ադրբեջաներեն
- մենք հարց ենք բարձրացել, որ Ղարաբաղը մերն է լինելու և երկրորդ սցենարը կնշանակի ջուր լցնել մեր պայքարի վրա, սա հարցի լուծում չէ, այլ հարցի սկիզբ
- Ի սկզբանե Ղարաբաղը հայկական տարածք է եղել, ինչ տարածքային ամբողջականության մասին է խոսքը:

- Կա սցենար Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու: Դա ադրբեջանցիների միակ սցենարն է՝ ոչ աջ, ոչ ձախ, իսկ մենք տարբեր տարբերակներ ենք քննարկում:
- Երկրորդ սցենարը անընդունելի է: Եթե մենք այսքան տարի պայքարել ենք, որպեսզի Ղարաբաղը անցնի Ադրբեջանի կազմ, իսկ այսօր մենք զիջում ենք Ղարաբաղը Ադրբեջանին, ուրեմն մեր այդքան պայքարը ապարդյու՞ն է:
- Որ տարբերակում, որ գրված է ԼՂ դառնում է Ադրբեջանի մաս, պետք է այդ տարբերակը պարզապես չքննարկել:
- Արդյոք վաղը Ղարաբաղը կստանա՞ ինքնավար մարզի ստատուս:
- Ուրեմն ազգի դավաճան է ասողը, թե Ղարաբաղը Ադրբեջանի կազմում է:
- Երբ է միջազգային հանրությունը մեր թիկունքին կանգնել, որ հիմա կանգնի, թե Ադրբեջանի կազմում կարող ենք ապրել: Երկնքից մանանա չի թափվում, բան չի փոխվել:
- Եթե Ղարաբաղը մտնի Ադրբեջանի կազմի մեջ, կամ հայերը կձուլվեն, կամ էլ նորից պատերազմ կսկսվի:
- Երկրորդ տարբերակը բոլորովին անընդունելի է՝ աբսուրդ է: Եթե Ղարաբաղը մնում է Ադրբեջանի կազմում, ապա ի՞նչ իմաստ ուներ այս ամեն ինչը:
- Ոչ մի հայ էլ չի թողնի, որ հայկական հողը մտնի Ադրբեջանի կազմի մեջ
- Ղարաբաղցին կյանքում չի համաձայնվի Ադրբեջանի կազմում լինել:
- Ադրբեջանի կազմում Ղարաբաղի գտվելու հեռանկարը բացառվում է նույնիսկ Ադրբեջանում ժողովրդավարական պրոցեսների հաստատման դեպքում, քանի որ հակամարտությունը գենետիկ արմատներ ունի:
- Սցենարը գրված է Ադրբեջանի համար...
- Ջավախքը Վրաստանի կազմում թշվառ պայմաններում է, պատկերացնու՞մ եք Ղարաբաղի վիճակն Ադրբեջանի կազմում:
- Միլիոն էլ թափեն Հայաստան՝ Ղրաբաղը չենք տալու: Նա առևտրի առարկա չի:
- Նույնիսկ եթե Ադրբեջանը Ղարաբաղին պահի բամբակների մեջ, չի կարելի համաձայնվել ու մեր պատմական տարածքները տանք իրենց:
- Մենք իրենց առաջարկած ինքնավարությունը հիմա էլ ունենք, ինչ է, ուզում են մեր ինքնավարությունից հրաժարվենք, նորը վերցնե՞նք:
- Պատերազմից առաջ էլ էինք ինքնավար, բայց այդքան զոհեր ենք տվել, մեզ համար երկրորդ սցենարը անընդունելի է
- «Ադրբեջանի կազմում»-ը մեզ համար անցած էտապ է:
- Երկրորդ սցենարի դեպքում Ղարաբաղը կհայտնվի նույն Նախիջևանի կարգավիճակում:
- Ես վերնագիրը կարդում եմ. «Ադրբեջանի կազմում», ես էլ չեմ էլ շարունակում կարդալ, ինչ մանանա էլ խոստանաք...
- Ղարաբաղը ոչ մի դեպքում Ադրբեջանի կազմում չի լինելու: Անհնար ա:
- Ոչ մի դեպքում ազգերի ինքնորոշումը ոսկու ու նավթի հետ փոխել չի կարելի:

- Այսքան կորուստներից հետո «Ադրբեջանի կազմում» սցենարը չի քննարկվում, անհնար ենթադրություն է:
- Ինչու՞ պետք է Արցախը մտնի Ադրբեջանի կազմ: Էդ դեպքում Ադրբեջանն էլ պետք է մտնի Ռուսաստանի կազմի մեջ:
- Հնարավոր է լուծման ճանապարհ գտնել, զիջումների գնալ, սակայն Ղարաբաղը Ադրբեջանի կազմում՝ անհնար է:

Ադրբեջանցիներ

- Մենք համաձայն չենք այն փաստի հետ, որ հայերը ապրեն ԼՂ-ում
- Ես երբեք չեմ ցանկացել լինել Ադրբեջանի կառավարության պաշտոնում
- Հայերը պետք է ադրբեջանական կրթություն ստանան: Օրինակ՝ Իրանում ադրբեջաներեն չեն սովորեցնում
- Ես նույնպես չեի ցանկանա հայերեն ուսուցանվեր Ադրբեջանում
- Հայերը կարող են օկուպացնել Ղարաբաղի դիրքերը
- Մենք չպետք է թույլատրենք լեզվի ուսուցանումը .... Այն սխալ է
- Ես աշխատում եմ "Շիրվան" նավթային կազմակերպությունում և կարծում եմ, որ մեր երկրում պետք է խոսել մեր մայրենի լեզվով
- Ադրբեջաներենը պետք է ուժով սովորեցնել
- Եթե չեն ցանկանում, թող այլ երկրում ապրեն
- Եթե ապրում են մեր հետ, պետք է ենթարկվեն մեր կանոններին
- Օրենքները, որոնք ընդունվում են ԼՂ-ում, պետք է համապատասխանեն Ադրբեջանի օրենսդրությանը
- Ինձ բոլոր կետերը գոհացնում են, բացի դպրոցներին վերաբերող կետից
- Անվտանգությունը պետք է ապահովել 2 կողմերի համաձայնությամբ
- ԼՂ-ում միայն ադրբեջանցիներ պետք է ապրեն
- Ընդհանուր առմամբ, մենք կցանկանայինք հայ չտեսնել մեր երկրում:
- Նրանք պետք է ապրեն այնպես, ինչպես մյուս էթնիկ խմբերն են ապրում Ադրբեջանում:
- Հենց որ տրամադրվի անկախությունը, նրանց պետք է տրամադրվեն լեզուներ:
- Հենց որ խաղաղություն լինի, նրանք նորից հարմարավետորեն կապրեն, ինչպես անցյալում:
- Մենք չպետք է համաձայնենք, որ հայերն ապրեն ԼՂ-ում:
- Հայերը մեզ շատ մոտ են:
- Ապագայում Լեռնային Ղարաբաղը որպես անկախ տնտեսական գոտի պետք է կանոնակարգվի համաձայն Ադրբեջանի օրենսդրության, և բոլոր հարկերը պետք է համալրեն Ադրբեջանի Հանրապետության բյուջեն:
- Երկու հասարակությունների համար անհնարին է համատեղ ապրելը:
- Երկու հասարակություններ կարող են միայն առանձին ապրել՝ խանութները պետք է առանձին լինեն, դպրոցները ևս:
- Ամեն դեպքում համակեցությունն անհնարին է:
- Ադրբեջանի քաղաքացի հայերը օգտվում են ընդհանուր իրավունքներից:

- Ադրբեջանն իրավական պետություն է. պետական համակարգը մեր անվտանգության երաշխիքն է, ինչպես նաև երաշխավորն է Ադրբեջանի տարածքում ապրող էթնիկ խմբերի:
- Ճնշումները և բռնությունը, ինչպես նաև մարդու իրավունքների խախտման այլ դրսևորումներն ընդունելի չեն:
- Սահմանադրության շրջանակում պետք է իրականացվեն բոլոր իրավունքները:
- Ադրբեջանը երաշխավորում է հայերի՝ մարդու իրավունքների պաշտպանությունը:
- Այն տարածքներում, որտեղ հայերը կոմպակտ ապրում են, կան հայալեզու դպրոցներ:
- Ադրբեջաներենը պետք է ուսուցանվի որպես ազգային լեզու, զուգահեռ պետք է ուսուցանվեն Ադրբեջանի և Հայաստանի պատմությունները:
- Հիմք ընդունելով, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի անբաժանելի մասն է՝ տնտեսական, քաղաքական և սոցիալական ինստիտուտները պետք է վերակառուցվեն:
- Ռազմական ուժերի վրա ծախսվող ֆինանսական միջոցներն ազդում են երկրի տնտեսական ներուժի վրա:
- Ինչու՞ պետք է Ղարաբաղն Ադրբեջանի կազմում լայն ինքնավարություն ունենա:
- Հնագույն ժամանակներից հայտնի է, որ եթե մենք հայերին ազատ տարածք տանք, ապա նրանք նույն բաները կանեն:
- Նրանք, ովքեր հայերեն են սովորում՝ ադրբեջաներեն չեն սովորի:
- Հայերը կարող են հայերեն սովորել, եթե ցանկանում են, սակայն հիմնական լեզուն պետք է մնա ադրբեջաներենը:
- Եթե մենք հետ նայենք անցյալին, մենք այլևս նման հիմնախնդիր չպետք է վերապրենք:
- Հայ հասարակությունները պետք է ռադիո, թերթեր ունենան:
- Կարող է նաև այնպես լինել, որ այնտեղ կարող է վտանգավոր լինել ապրել:
- Մենք ուրախ չենք լինի, եթե տարածքը ճանաչենք որպես ինքնավար:
- Եվ նաև հայերին չպետք է թույլ տալ զբաղեցնել օրենսդիր կամ գործադիր որևէ պաշտոն:
- Մեր ներկայիս խորհրդարանական ընտրությունների ժամանակ ազգությունը հաշվի չի առնվում:
- ԼՂ-ի հայերը չպետք է հնարավորություն ունենան ինքնուրույն որոշելու իրենց ճակատագիրը:
- Մենք խորհրդարանում ունենք ռուսներ և հրեաներ, սակայն խորհրդարան հայերի ընտրությունը որևէ կերպ չի կանոնակարգվում:
- Ադրբեջանում 76 էթնիկ խմբեր կան:
- Ինչու՞ նրանք հեղափոխություն չեն իրականացնում:
- Ադրբեջանը շատ հանդուրժող երկիր է:
- Հայկական արմատներ ունեցող քրդերը վտանգի աղբյուր են:
- Հայերը սովորում են մեր ավանդույթները:

- ԼՂ-ի քաղաքացիներն ադրբեջանցիներ են և, այդ առումով, պատճառ չկա նրանց անկախություն տալու համար:
- Պետությունը պատրաստ է լայն ինքնավարություն տրամադրել , դա չէ հարցը:
- Հասարակությունը մարդկանց խումբ է, ովքեր կիսում են մեկ տարածք, մշակույթ և ավանդույթներ և ունեն միևնույն հիմնախնդիրները:
- Բոլոր քաղաքացիները պետք է ունենան միևնույն իրավունքները՝ անկախ կրոնական և էթնիկ պատկանելիությունից:
- Բոլոր ազգայնական կազմակերպությունները պետք է դադարեցնեն իրենց գործունեությունն Ադրբեջանի տարածքում:
- ԼՂ-ն լայն ինքնավարություն չպետք է ստանա, ԼՂ-ն սնունդ չէ մեր հյուրերի հետ կիսելու համար:
- Միայն սրանից հետո հնարավոր կլինի թողնել հայերին մասնակցել Ադրբեջանի սոցիո-քաղաքական կյանքին:
- Զինված ուժերը և ոստիկանությունը պետության հիմնական ուժն են, այդ իսկ պատճառով հայերը չեն կարող նման պաշտոններ զբաղեցնել:
- Սա բավարարում է մեր դիրքորոշումը. ես համաձայն չեմ չորորդ դրույթ հետ, պետությունը պետք է երաշխիքներ տրամադրի հայերին:
- Այստեղի թերություններից մեկը կարգավորման հանձնում է հայերին:
- Ադրբեջանական պետությունը երաշխավորում է Ադրբեջանի ողջ տարածքում հայերին, որ չի լինի բռնություններ և ճնշումներ ու նրանց անվտանգությունը կապահովվի:
- Ադրբեջանում հայերը, ինչպես նաև ԼՂ-ի բնակչությունը կստանան հնարավորիս ընդգրկուն էթնիկ իրավունքներ և մարդու իրավունքներ:
- Բնակչությունը հնարավորություն է ստանում ընտրելու ուսուցման լեզու, որը ԼՂ-ում կարող է լինել հայերենը կամ մեկ այլ լեզու:
- Օրենսդրությունը նախատեսում է հայերի մասնակցությունը կառավարման համակարգում: Զինված ուժերի և ոստիկանության վերաբերյալ օրենսդրությունը համապատասխանում է հայ հասարակության շահերին:
- Համամասնություն պետք է ձեռք բերվի ընտրություններում և ընդհանուր կառավարման մեջ:
- Եթե անգամ ԼՂ-ն հետ վերադարձվի, տարածքում ապրող հայերը կօգտագործեն հայկական անձնագրեր:
- Եթե ԼՂ-ն ստանա Նախիջևանին համարժեք ինքնավարության մակարդակ, այն աջակցություն կստանա Ռուսաստանից և Հայաստանից և նորից կառաջնորդվի իր մտքերով:
- ԼՂ-ն կարող է անկախության լայն մակարդակ ունենալ՝ Ադրբեջանի անբաժան մասը մնալով:
- Հայոց լեզուն ուսուցման լեզու չի կարող լինել:
- Թող նրանք ունենա իրենց դպրոցները, հեռուստատեսային ծրագրերը և մաս կազմեն Ադրբեջանի՝ Թաթարստանի մոդելը:
- Եթե խաղաղություն լինի կարող են ապահովել էթնիկ և մարդու իրավունքները:

- Եթե մենք ապահովենք մշակութային անկախություն, մենք պետք է համաձայնենք սրա հետ:
- Մի քանի երիտասարդներ ասում են, որ չեն ցանկանա, որ հայալեզու դպրոցներ գոյություն ունենան:
- Եթե խաղաղություն լինի, մենք դեմ չենք լինի, որ Ադրբեջանի քաղաքական էլիտայում հայ ներկայացուցիչներ լինեն:
- Երկու հասարակությունների համակցության պայմանները պետք է նախապատրաստվեն:
- Հայերը միայն պետք է գան և գնան որպես հյուրեր:
- Հայերի համար առանձին դպրոցներ պետք է բացվեն:
- Մենք չենք ուզում, որ նրանք Ադրբեջանում իշխող դիրք զբաղեցնեն:
- Ընդհանուր առմամբ, պետք է ապահովվեն էթնիկ իրավունքները:
- Մշակութային անկախություն:
- Ադրբեջանը ունիտար պետություն է: Մենք չենք կարող ԼՂ-ին նույն անկախության մակարդակը տալ, որն ունի Նախիջևանը:
- Կրթության ոլորտում յուրաքանչյուրը կարող է իր ընտրությունը կատարել:
- Դա չպետք է միջամտի ներքին գործերին:
- Յուրաքանչյուր քաղաքացի կարող է լեզվի իր ընտրությունը կատարել:
- Ես երբեք հայի հետ չեմ սովորի:
- Մեկ այլ մասնակից նշեց, որ այդ դիրքորոշումը շահեկան չէ, և եթե Լեռնային Ղարաբաղը լիներ Ադրբեջանի մասը մեր շահն ավելի մեծ կլիներ:
- Նաև մեր համակեցությունը հայերի հետ անհնարին է:
- Մեր սերունդը դա դժվարությամբ կընդունի:
- Որոշ ժամանակ անց համակեցությունը կարող է հնարավոր լինել:
- Ղարաբաղում ապրող հայերը պետք է ադրբեջանական քաղաքացիություն ստանան:
- Ղարաբաղի դեպքում կարելի է գործածել Նախիջևանի տարբերակը:
- Լեռնային Ղարաբաղի ինքնավար հանրապետության ստեղծումը կարող է ընդունելի լինել մազ համար:
- Սակայն լայն ինքնավարություն ստանալը ճիշտ չէ և ընդունելի չէ մեր համար:
- Մենք կարող ենք թողել Լեռնային Ղարաբաղում հայերին կրթություն ստանալ իրենց մայրենի լեզվով:
- Բաքուն կարող է կորչել, եթե մենք հետո մոռանանք նրանց մասին:
- Հայերը կարող են համապատասխան պաշտոններ զբաղեցնել Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում, սակայն նրանք պետք է Ադրբեջանի քաղաքացիներ լինեն:
- Եթե Լեռնային Ղարաբաղը ինքնավար դառնա, նրանք կարող են հավակնել անկախության:
- Ադրբեջանում պետք է պետական համակարգ լինի:
- Մենք պետք է կրթությունը զարգացնենք:
- Թող Հայաստանը ճանաչի մեր տարածքային ամբողջականությունը, մենք էլ մեր հերթին նրանց համար Լեռնային Ղարաբաղում ապրելու պայմաններ կստեղծենք:

- Նման հիմնախնդրից հետո ադրբեջանցիները չեն կարողանա ապրել հայերի հետ:
- Քանի որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մասն է կազմում՝ կառավարումը պետք է իրականացվի Ադրբեջանի կողմից:
- Լեռնային Ղարաբաղի հայերի էթնիկ և մարդու իրավունքները կարող են բարձր մակարդակով ապահովվել:
- Եթե Լեռնային Ղարաբաղը հետ վերադարձվի՝ գործազրկության հիմնախնդիրը կնվազի: Ադրբեջանը տնտեսական առաջընթաց և զարգացում կապրի:
- Սակայն դա նորից կարող է հանգեցնել հակամարտության:
- Լեռնային Ղարաբաղի հայերը կարող են ունենալ նույն իրավունքները, որ ունեն Ադրբեջանի մյուս մասերի փոքր ժողովուրդները:
- Բաքվի պետական համալսարանում կբացի հայոց լեզվի ամբիոն:
- Հայերի մարդու իրավունքները ևս այստեղ պետք է պաշտպանվեն:
- Նախապատվությունը պետք է տրվի ադրբեջաներենին:
- Երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը պետք է ղեկավարվի միայն նախագահի կողմից:
- ԼՂ-ն՝ Ադրբեջանի մասը կազմելով, չի կարող որևէ պաշտոնական փաստաթուղթ ընդունել ոչ Հայաստանից, ոչ էլ մեկ այլ երկրից:
- Կառավարությունը կերաշխավորի Ղարաբաղի բնակչության անվտանգությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը, որը չի հանգեցնի ճնշումների կամ բռնությունների:
- Հայերը, ինչպես նաև Ադրբեջանում ապրող մյուս բոլոր էթնիկ խմբերը մարդու նույն իրավունքները կունենան:
- Կրթությունը միջնակարգ դպրոցներում պետք է կամընտրական լինի Ադրբեջանի Հանրապետություն կրթական օրենսդրության շրջանակում:
- ԼՂ-ի բնակչության աճը կարող է նրանց հնարավորություն ընձեռել վերցնել երկրի կառավարումն իրենց ձեռքը:
- Ադրբեջանի հայկական ծագում ունեցող բնակչության անվտանգության հարցը մնում է իրենց հայեցողությանը:
- Եթե Ղարաբաղը մնա Ադրբեջանի կազմում՝ երկրում սոցիալական և տնտեսական կյանքը կարող է վերածնունդ ապրել:
- Անհնարին կլինի միասին ապրել:
- Չպետք է լինի ԼՂ հասարակություն:
- Ինչու՞ մենք պետք է հետ վերադառնանք առանձին հասարակությունների վիճակին՝ նախնադարյան հասարակության շրջան:
- Պետական լեզուն չպետք է երբեք լինի հայերենը, սակայն հայերը որպես փոքրամասնություն կարող են գործածել իրենց լեզուն, սակայն ոչ պետական մակարդակով:
- Հայկական տարադարամն ընդունելի չէ, դրան պետք է մանաթը փոխարինի:
- Ադրբեջանը միշտ էլ առավելություն է ունեցել հայերի նկատմամբ:
- Եվ լայն ինքնավարության գաղափարը պետք է հստակեցվի:

- Ադրբեջանը պետք է օգտագործի այլ պետությունների մոդելները, որտեղ կան փոքրամասնություններ ներկայացնող աշակերտներ:
- Եվ ինչպես են այս պետությունները կառավարում և գործում:
- Օրենսդրությունը և մեխանիզմները պետք է համաձայնեցվեն, և լայն ինքնավարության վերաբերյալ որոշումը պետք է կիրարկվի:
- Կգործածվի դպրոցներում որպես օտար լեզու:
- Հայ ժողովրդի կրոնական գործոնը և մարդու իրավունքները պետք է պաշտպանվեն:
- Մենք պետք է համաձայնենք կրթության հետ:
- Քանի որ սա հակասում է Ադրբեջանի սկզբունքներին և կարող է վտանգել ապագան:
- Պետք է հետ գնան և միասին ապրեն:
- Այս քննարկումը վերաբերում է բարձր ինքնավարությանը: Սակայն մինչ օրս ոչ-ոք մեզ չի բացատրել, թե ինչ է նշանակում այդ «բարձր ինքնավարությունը»
- Մինչև հակամարտությունը ԼՂ-ն շրջան էր, իսկ հիմա այն կդառնա Ինքնավար Հանրապետություն
- Հայերի մասնակցությունը կառավարության օրենսդիր գործունեությանը անհնար է:
- Հայերը, որպես ԼՂ բաղկացուցիչ, կարող են լինել մեր քաղաքացիները և օգտվել բոլոր իրավունքներից:
- ԼՂ հիմնախնդիրը պետք է կարգավորվի նույնիսկ դե-ֆակտո. դա նշանակում է Ադրբեջանի մաս կազմելով: Ազգային կառավարությունը պետք է այդ տարածքի ժողովրդի համար ապահովի հավասար իրավունքներ:
- Անկասկած, Լեռնային Ղարաբաղը պետք է մնա Ադրբեջանի կազմում:
- Նախևառաջ պետք է ապահովվի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը:
- Հայերը երբեք չեն համաձայնի, որ ԼՂ-ն լինի Ադրբեջանի մաս, դա իրատեսական չէ:

Փախստականների և հարակից տարածքների հարցի լուծում՝ թողնելով կարգավիճակի որոշումը ապագային՝ հանրաքվեի միջոցով

Հայեր

- Կարգավիճակի հարցը ապագայում սցենարը վտանգում է փոխզիջումային տարբերակով հարցի լուծումը:
- Հինգերորդ սցենարը բավականին ընդունելի է, ավելի լավ է, քան ստատուս-քվոն:
- ԼՂ-ի կարգավիճակը ամրագրելու ի՞նչ երաշխիք պետք է ունենանք:

- Ադրբեջանը «պրիզնատ» ա գալիս, որ ղարաբաղցին ինքնորոշվելու իրավունք ունի:
- Արդեն ինքնորոշված ժողովրդին ինքնավարություն պետք չէ:
- Նախ Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի ճանաչում, հետո նոր Ղարաբաղը կարող է մտածել զիջումների մասին: Ու միշտ պետք է հիշել, որ Ղարաբաղն է կոնֆլիկտի կողմը, մենք չենք:
- Նախ պետք է հասկանալ, թե ինչ ենք ասում Լեռնային Ղարաբաղ ասելով՝ Խորհրդային Միության ժամանակ եղած տարածքնե՞րը, թե ազատագրված տարածքների հետ միասին:
- Ադրբեջանի կողմից ԼՂ-ի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչումը ու հարակից շրջանների վերադարձը միաժամանակ վստահություն չի ներշնչում՝ նախ ճանաչում, հետո վերադարձ:
- Թող նախ լուծվի կարգավիճակի հարցը, հետո նոր ադրբեջանցիները վերադառնան, այդ դեպքում նրանք ոչ մի վտանգ չեն ներկայացնի:
- Թող նախ Ադրբեջանն ընդունի Ղարաբաղի կարգավիճակը, հետո նոր կքննարկենք մնացած տարածքների հարցերը
- Ի՞նչն է պատճառը, որ հիմա ինքնորոշման հարցը լուծվի:՞
- Որոշ ժամանակ կարելի է տալ ինքնորոշման իրավունք, հետո Ղարաբաղն ինքը կորոշի միանալ Հայաստանի՞ն, թե մնալ անկախ:
- ԼՂՀ-ն ինքորոշվել է, միջազգային դիտորդները պարբերապար այցելում են... ինքնորոշումը միջազգային սկզբունք է, հետևաբար միջազգային հանրությունն էլ պարտավոր է ենթարկվել իր իսկ հռչակած սկզբունքին:
- Ղարաբաղն արդեն իր կարծիքն ասել է, օրինակ 1988 թ.՝ որոշում ընդունելով Հայաստանի կազմում լինելու մասին: Ի՞նչ կարիք կա ևս տաս տարի սպասել ու նորից ղարաբաղցիների կարծիքը հարցնել:
- Պետք է այնպես անենք, որ Ղարաբաղը անպատճառ դառնա Մինսկի Խմբի անդամ ու մենք էլ ճանանչենք իրենց անկախությունը
- Ղարաբաղի ներկայացուցիչն անպայման պիտի ներկա լինի Ադրբեջանի հետ ԼՂ կարգավիճակի վերաբերյալ բանակցություններին:
- Երբ Ղարաբաղում կարգավիճակի մասին ռեֆերենդում անեն, այնտեղ ադրբեջանցիների թիվը կարող է ավելի շատ լինել, եւ ինքնորոշման հարցը չի լուծվի: Միայն հիսուն հազար հոգի կարող է Ծուշի վերադառնալ:
- Ինքնորոշման իրավունքը պետք է միանգամից իրագործվի: Եթե ռեֆերենդումը, ասենք, տասը տարի հետո լինի, այդ ժամանակ Ադրբեջանի «ռեխը» ո՞վ է փակելու:
- Մինչեւ կարգավիճակի հարցը չլուծվի, ոչ մի տարածք չենք տալու: Կարեւորը կարգավիճակի հարցն է:
- խնդրի միջնաժամկետ լուծումը հարկավոր է, քանի որ միջազգային հանրությանը պետք է ապացուցել, որ Ղարաբաղը երբեք չի եղել Ադրբեջանի կազմում, բացի խորհրդային տարիներից և չի կարող լինել ապագայում, քանի որ վտանգ կստեղծվի Ղարաբաղում ապրող հայ ազգի համար
- Հողերը տանք միայն այն դեպքում, երբ ԼՂ հարցը վերջնականապես, փաստացի լուծվի:

- Ադրբեջանը պետք է ընդունի ղարաբաղցիների ազգային ինքնորոշման իրավունքը:
- Ղարաբաղը հիմա ինքնորաշված է, ինչ կարևոր է, թե հարևանները այս փաստը կճանաչեն, թե չէ:
- Նույնիսկ եթե Ղարաբաղը անկախանա կամ մտնի Հայաստանի կազմի մեջ՝ եթե մենք հարակից շրջանները վերադարձնենք, նրանք առիթ կստանան Ղարաբաղը վերադարձնելու:
- Նույնիսկ եթե Ղարաբաղը ինքնորոշվի հինգերորդ տարբերակով, ո՞նց է միջազգային հանրությունը երաշխավորում, որ հետո Ադրբեջանը չի հարձակվի ու նորից գրավի Ղարաբաղը:
- Ադրբեջանը երբեք Արցախի ինքնորոշման իրավունքը չի ճանաչի:
- Ադրբեջանը երբեք Ղարաբաղին ինքնորոշման իրավունք չի տա, չեմ հավատում:
- Թող ղարաբաղցիները որոշեն հանրաքվեով Ադրբեջան են ուզում, թե՞ Հայաստան:
- Եթե Ղարաբաղը դառնա Ադրբեջանի կամ Հայաստանի մաս, պատերազմը կշարունակվի, միայն Ղարաբաղի անկախությունը կարող է բերի խաղաղության
- Ղարաբաղը ինքնուրույն չի կարող որոշել իր ստատուսը:
- Ղարաբաղցին իր կարծիքն ունի, իր ձայնն էլ պետք է լսենք:
- Նախ կարգավիճակի հարցը պետք է լուծենք, հետո ամեն ինչ հնարավոր է: Կարգավիճակը հիմա, ոչ թե ապագայում:
- Առաջնահերթ պայմաններից մեկը Ղարաբաղի մասնակցությունն է բանակցություններին...
- Ինչու՞ են առանց ինձ իմ հողի հարցը բանակցում. Ղարաբաղն էլ պետք է նստի բանակցային սեղանին:
- Ադրբեջանը թող սկզբից ճանաչի մեզ, հետո նոր կլսենք իրենց կարծիքը, ոչ թե մենք զիջումների գնանք, հետո ճանաչեն կամ ոչ:
- Մենք մեր ռեֆերենդումը արդեն արել ենք, ուրիշ ռեֆերենդում էլ չենք անելու:
- Ստատուս ենք ուզում առանց հողերը հանձնելու:
- Թող իրենք մեզ ստատուս տան, հետո մենք կմտածենք, հող տանք թե չէ:
- Այսօրվա մեր ամենակարևոր հարցը Ղարաբաղի կարգավիճակի հարցն ա, եթե ուզում են բանակցությունները նորմալ շարունակվեն, թող այս հարցը գլխից լուծեն:
- Արցախը ապահովել է միջազգային բոլոր իրավական փաստաթղթերի սահմանած նորմերը: Այնպես որ միջազգային ճանաչման խնդիրն այլ տեղում է թաքնված:
- Մի տարբերակ կա. Ադրբեջանն ընդունում է կարգավիճակը, ու երկուստեք սկսում են տնտեսական համագործակցությունը: Սա ապագայում կարող է հարթել անհանդուրժողականության մթնոլորտը:
- Հայաստանը պետք է ճանաչի Ղարաբաղի անկախությունը, հետո մեր մոտ ռեֆերենդում լինի ու դառնանք Հայաստանի մարզ: Եթե տեսնեն մենք

ուզում ենք ապրել, մեզ կօգնեն, եթե չուզենանք ապրել, մեզ ոչ մեկ չի աջակցելու:
- Ադերբաջանն ո՞վա, որ մեզ կարգավիճակ տա. էդ մենք պիտի անենք:
- Թող որոշումն ընդունեն, որ Ղարաբաղի անկախությունը ճանաչում է, ու թող ով ցանկանում է վերադառնալ՝ վերադառնա, մենք էլ իրենց քաղաքականությունը իրենց հանդեպ կկիրառենք:
- Մուշեցին իր զոքանչին ինքներորդ հարկի պատուհանից "ազատ է արձակում" ու ասում, որ մյուսները սպանում են, իսկ ինքը ազատ է արձակում իր զոքանչին: Չորրորդ սցենարը դրա նման մի բան է - "Ղարաբաղին" ազատ են արձակում
- Չորրոդը թուրքական դիվանագիտության սցենար է
- Ես հինգերորդ տարբերակին դեմ եմ, սա մեզ հարմար չէ:
- Հինգերորդ տարբերակը ճիշտ ա, որովհետև մեր ձեռքին «կոզր» կլինի:
- Չորրորդ սցենարը երկրորդ սցենարի նախապայմանն է:
- Չորրորդ սցենարը միֆ է:
- Ռեալ վտանգ է ռեֆերենդումի անցկացումը, ասենք տասնհինգ տարի հետո. որոշումը ի վնաս մեզ է լինելու հաստատ:
- Ես ռեֆերենդումի մեջ շատ մեծ վտանգ եմ տեսնում, դա մեր օգտին չի լինելու:
- Փախստականները որ հետ գան, նախ թվաքանակով մեզ կգերակշռեն, համ էլ հայերի վրա ուժ կգործադրեն, ու հանրաքվեում մենք Ղարաբաղը կկորցնենք:
- Ադրբեջանցի փախստականները եթե հետ գան Ղարաբաղ, հանրաքվեի դեպքում արդյունքը լրիվ ուրիշ կլինի:
- Մենք մեր հանրաքվեն արդեն արել ենք. եթե նորից հանրաքվե արվի, մենք լավ գիտենք, թե ինչպես «կնկարեն» դրա արդյունքները ադրբեջանցիք:
- Իմ կարծիքով առաջին տարբերակի և այս վերջինից հողերի պահումը, որպես երաշխիք , կլինի լավագույն տարբերակը:
- Ամենաառաջինը պետք է լուծվի կարգավիճակի հարցը, հետո նոր քննարկվեն մնացած հարցերը, իսկ ավելի ճիշտ պետք է բոլոր հարցերը լուծվեն միաժամանակ, եթե ինչ-որ հարց մնա հետոյի, էլ չի լուծվի:
- Կոնկրետ երաշխիքների տարբերակը, ժամանակի ընթացքում, կարող է լավագույնը դառնալ:
- Եթե իրոք մտքներին կա մեզ անկախություն տալու, թող հիմա տան, էլ ինչի են քսան տարի սպասում, հողեր ուզում, որ նոր ճանաչեն:

Ադրբեջանցիներ

- Մենք անվտանգության երաշխիքներ ենք ցանկանում:
- Ադրբեջանցիները չեն գնա ապրելու այն վայրերում, որտեղ հայերն են ապրել:
- Հայերը կարող են նույնը մտածել, հետևաբար համակեցությունն անհնարին է:
- Մենք պատրաստ չենք հայերի հետ համատեղ ապրելուն:

- Մենք անցյալում հայերի հետ ապրել են և միաժամանակ հակամարտություններ ենք ունեցել:
- Դրա հիմնական պատճառը մեր անվտանգության ապահովումն է, որն անիրական է թվում:
- Միայն օտար երկրներում մենք կարող են խաղաղ միասին ապրել:
- Մենք կարող ենք հավատալ, որ անգամ եթե խաղաղության հաստատման վերաբերյալ պայմանագիր ստորագրվի, շատ դժվար կլինի հայերի և ադրբեջանցիների խաղաղ համակեցության հարցը:
- Ճիշտ չէ, որ Հայաստանը և Ղարաբաղը միմյանցից ընդունում են պաշտոնական փաստաթղթեր:
- Սա ապագայում կարող է անարխիա առաջացնել:
- Եթե թափանցիկ ընտրություններ անցկացվեն, ապա միանգամից կարելի կլինի համաձայնության գալ:
- Ղարաբաղի տնտեսությունը պետք է հզորացվի, որպեսզի մարդիկ գնան այնտեղ:
- Եթե սա իրական անկախություն է, մենք չպետք է մեզ խաբենք, միակ ելքը ԼՂ-ի կորստյան հետ համակերպվելն է:
- Ես համաձայն չեմ ԼՂ-ում ապրող հայերին ինքնորոշման իրավունքի տրամադրմանը, նրանք կարող են լինել ինչպես նախկինում, նրանք կարող են ապրել այնտեղ, առանձին և բացառիկ իրավունքներ չպետք է տրվեն:
- ԼՂ-ն Ադրբեջանի մասն է. ես համաձայն չեմ ոչ Հայաստանի մաս լինելու փաստին, ոչ էլ ինքնորոշմանը:
- Ադրբեջանի կառավարությունը ընդունում է ԼՂ քաղաքացիների՝ Հայաստանի հասարակության ճակատագիրը որոշելու իրավունքը: Սա երաշխավորվում է միջազգային մակարդակում:
- Հակամարտության կարգավորման հետաձգումը և ապագային թողնելը շահեկան չէ մեզ համար և արագորեն պետք է լուծվի:
- Հանրաքվեի արդյունքում ԼՂ-ն կմնա նրանցը:
- Մենք չպետք է թույլ տանք, որ որևէ բան կառուցվի հանրաքվեի հիման վրա:
- Հինգերորդ սցենարը լավագույնն է:
- Հայերը, ինչպես և ադրբեջանցիները պետք է գնան և ապրեն միասին և միայն դրանից հետո կորոշվի երկրի ճակատագիրը:
- Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի և Սահմանադրության շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հայերը կարող են որոշել իրենց ճակատագիրը:
- Կարճ ժամանակահատվածում Ադրբեջանի տարածքի բաժանումը որևէ տիպի քվեարկության միջոցով անընդունելի է:
- Լեռնային Ղարաբաղի բնակչությունը կարող է որոշել իր ճակատագիրը համաձայն Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի և Սահմանադրության:
- Բռնազավթված տարածքները պետք է վերադարձվեն, ապա Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման հիմնախնդիրը կլուծվի փոխադարձ ըմբռնման հիման վրա :

- Անկախության հարցով հանրաքվե չի անց կացվի:
- Եթե հանրաքվե անց կացվի, ապա բոլոր հայերը կքվեարակեն հօգուտ անկախության, և նմանատիպ բանավեճերի ու ջանքերի կարևորությունը կկորի:
- 20 տարի է ինչ ադրբեջանցիները չեն ապրում ԼՂ-ում, և նրանց պետք կլինի հավելյալ 20 տարի հանրաքվեում ձայներ հավաքելու համար:
- Հանրաքվե անց չի կացվի:
- Ո՞վ այստեղ կղեկավարի հանրաքվեի անցկացումը:
- Եվս տաս տարվա մակարդակ է բացվում:
- Ժամանակն այստեղ արտացոլված չէ:
- Պետք է ավելի խիստ ապացուցվի:
- Ադրբեջանը չի կարող ընդունել հայերին հնարավորություն տալ որոշելու իրենց ապագան:
- Հանրաքվեի ընթացքում հաղթելու հնարավորություն չկա:
- Այսօր ճակատագրի որոշումը կարող է իրականացվել Ադրբեջանի կազմում:
- Մենք չենք ընդունում մեր ճակատագրի սահմանման սկզբունքը:
- Եթե անգամ հայերը վերադարձնեն յոթ շրջանները, ԼՂ-ն պետք է մնա Ադրբեջանի կազմում:
- ԼՂ-ի կողմից սեփական ճակատագրի որոշման սկզբունքն անընդունելի է:
- Ադրբեջանը միացել է միջազգային կոնվենցիային, հետևաբար առանց իր ցավը մոռանալու պետք է զիջումների գնա՝ տարածքային ամբողջականության սկզբունքի շրջանակում:
- Ադրբեջանի Հանրապետությունը չի կարող թողնել, որ ԼՂ-ի բնակչությունը հասկանա, որ կարող է ինքը որոշել իր ճակատագիրը:
- Սակայն չկան երաշխիքներ, որ այն կվերադարձվի:
- Ամեն ինչ պետք է ժամանակին անել. այս հարցի կարգավորումը 15 տարուց մեծ հարցականի տակ է:
- Հանրաքվեի արդյունքում քվեները կարող են 50-50 կիսվել:
- Սակայն սա նաև ռիսկային սցենար է, քանի որ ամեն ինչ թողնվում է ապագա հանրաքվեի վրա:
- Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների վերադարձնելը մեզ կարող է կոչվել հակամարտության «քայլ առ քայլ» կարգավորում:
- Հենց որ բոլորը վերադառնան իրենց տեղը, անհրաժեշտ է հանրաքվե անց կացնել:
- Երկու հասարակությունները կապրեն միասին 8-10 տարի, վերջում, եթե ցանկանան, հանրաքվե կանցկացնեն:
- Մենք կարող ենք համաձայնվել այս սցենարի հետ, սակայն հայերի թիվն ավելի մեծ է, քան ադրբեջանցիներինը, և եթե ընտրվի հանրաքվեի տարբերակը, իրավիճակն ավելի կբարդանա:
- Ադրբեջանի քաղաքական իրավիճակը ձևավորվում է, քանի որ հանրաքվեի ժամանակ հայերը չեն քվեարկի Ադրբեջանի օգտին:
- Համաձայն այս սցենարի, որոշ աշխատանքներ Լեռնային Ղարաբաղում ավարտին հասցնելով՝ հանրաքվեի արդյունքում կարգավորել հակամարտությունը հօգուտ Ադրբեջանի:

- Հենց որ տարածքները հետ բերվեն, հնարավոր կլինի քննարկել կարգավիճակի հարցը:
- Հենց որ տարածքները վերադարձվեն առանց պայմանների և նախապայմանների, Ադրբեջանի կառավարության կողմից կդիտարկվեն կարգավիճակի նման այլ հարցեր:
- Ադրբեջանի կառավարությունը պետք է մտածի Ղարաբաղի բնակչության աճի մասին, որպեսզի հանրաքվեի արդյունքում կարողանա բավարար քվեներ հավաքել:
- Հիմնական խնդիրն այս հակամարտության մեջ այն է, որ հայերին չտրվի հնարավորություն ինքնուրույն որոշելու իրենց ճակատագիրը, քանի որ նրանք դա կընդունեն որպես ինքնավարություն և անկախություն:
- Մեր պաշտոնյաները համաձայն են թողնել երկու շրջանները Հայաստանի վերահսկողության ներքո, սակայն ժամանակն աշխատում է մեր օգտին:
- Շահեկան չի լինի, եթե խաղաղապահ ուժերը վերադառնան հանրաքվեից հետո:
- Եթե մենք նրանց հնարավորություն տանք որոշելու իրենց ճակատագիրը:
- Վաղը նրանք կարող են պահանջել այլ անսպասելի բաներ:
- Խնդրում եմ պատկերացրեք, որ հանրաքվեն կանցկացվի քառասուն տարուց, միաժամանակ այս սցենարը մեզ համար ձեռնտու կլինի:
- Ինքնորոշման մասին կան շատ կարծիքներ. մի մասը համաձայն է դրա գոյությանը, մյուսները՝ ոչ:
- Միայն ԼՂ հարակից տարածքների վերադարձից հետո է հնարավոր քննարկել կարգավիճակի հարցը:
- Այս սցենարը ընդունելի է այն դեպքում, եթե հանրաքվեն անցկացվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության պայմաններում:
- Ոչ ոք չգիտի՝ ինչ տեղի կունենա 10-15 տարի անց, հետևաբար մենք կարող ենք համաձայնել:
- Այս ընթացքում մենք պետք է աշխատանք տանենք Հայաստանի հասարակության հետ, և դրա համար միջոցներ պետք է հատկացվեն:
- Մենք պետք է նրանց բացատրենք, որ իրենց շահերից է բխում մնալ Ադրբեջանի կազմում:
- Մասնակիորեն համաձայն եմ 5-րդ սցենարի հետ, քանի որ Ադրբեջանի համար տնտեսական ձեռքբերումներ կային:
- Շատ մարդիկ են Հայաստանից վերաբնակեցվել Լեռնային Ղարաբաղում, և համաձայն այս սցենարի, եթե անգամ արդյունքում ադրբեջանցիները հաղթեն, հավանական է, որ հայերը լայն ինքնավարություն ձեռք կբերեն:
- Այս սցենարի մյուս թերությունը Քելբաջարի և Լաչինի շրջանների չվերադարձնելու ռիսկն է:
- Հակամարտության խաղաղ կարգավորման համար չորրորդ սցենարն ամենալավն է:
- Այս սցենարի թերությունն այն է, որ Ադրբեջանը հնարավորություն չի ունենա միջամտել Լեռնային Ղարաբաղի ներքին քաղաքականությանը:
- Չորրորդ սցենարն ամենաանհարմարն է մեզ համար:

- Այս սցենարը կարող է համարվել ընդունելի, հենց որ ԼՂ-ի անկախության մասին արտահայտությունը հանվի:

Վստահություն

Հայերը չեն վստահում ադրբեջանցիներին

- Երկրորդ սցենարը մենք արդեն տեսել ենք՝ հայաթափում, իրավունքների ոտնահարում:
- Պատմությունը միտում ունի կրկնվելու: Նախիջևանը հայաթափվոց հակառակ սահմանադրության: Նույն պատմությունը կկրկնվի Ղարաբաղում, եթե ընդունվի երկրորդ սցենարը:
- Ո՞վ պիտի ապահովի... Ադրբեջա՞նը: Ես չեմ հավատում, չեմ վստահում...
- Երկրորդ սցենարը չի երաշխավորում որ Սումգաիթյան ջարդերի նման իրադարձություններ չեն կրկնվի: Գերտերությունները ասում են, որ կօգնեն, բայց երբ կօգնեն և ինչպես... դա հարցականի տակ է:
- Երրորդ տարբերակի վատն էլ այն է, որ նույնիսկ այս դեպքում ոչ մի երաշխիք չկա, որ Ադրբեջանն էլի չի վերսկսի պատերազմը:
- Իսկ ես կարծում է, որ անվտանգության մասին խոսելը, պարզապես ինքնաարդարեցնում է, ես համոզված եմ, որ նույնիսկ եթե մենք բոլոր երաշխիքներն էլ ունենանք, որ Ադրբեջանի կազմում Ղարաբաղում երկնքից մանանա կթափվի, էլի մենք կասենք ոչ. մենք հողը պահել ենք ուզում:
- Հայի ու ադրբեջանցու կողք կողքի անվտանգ ապրելը ո՞րն է, է՞
- Լավ բան է, որ ադրբեջանցիները ընդունում են ղարաբաղցիների ինքնորոշման իրավունքը, լավ է, որ Ղարաբաղը կամ մտնում է Հայաստանի կազմ, կամ դառնում է անկախ: Բայց երաշխիք այնուամենայնիվ չկա, որ ազատագրված տարածքները զիջելուց հետո Ղարաբաղի ու Հայաստանի սահմանամերձ բնակավայրերը չեն հայտնվի հակառակորդի հրետանու կրակի տակ:
- Սումգայիթից դուրս եկածը կարծում եք Սումգայիթ կգնա նորից: Իհարկե՝ ոչ:
- Այն ակնկալիքները, որ իրենք ունեն մեր ունեցվածքի հանդեպ, մենք իրենց ունեցվածքի հանդեպ չունենք: Տարբերությունը սա է:
- Ազերիները երբեք չեն կատարի խոստումները: Հնարավոր է, որ մենք էլ չկատարենք:
- Մենք վստահ ենք, որ Սումգայիթը կկրկնվի, եթե մեր փախստականները վերադառնան:
- Մենք չենք վստահում Ադրբեջանին, մինչև իրանք կոմպրոմիսի չգնան, մենք չենք գնա:
- Հինգերորդ սցենարը վտանգավոր է, նրանք կգան հետ, իսկ մերոնց չեն ընդունի:
- Արդեն ապրել ենք Ադրբեջանի կազմում...
- Վստահության բացակայության խնդիր կա
- Էդ ինքնավարությունը մի անգամ տեսել ենք, հետն էլ էն ժամանակ, երբ Մոսվկան հսկում էր...

- Երկրորդ տարբերակում ներառված երաշխիքները վստահություն չեն ներշնչում: Մենք չենք վստահում ադրբեջանցիներին:
- Ադրբեջանցիների որևէ հայտարարություն պետք չի լուրջ ընդունել, քանի որ նրանք անվստահելի գործընկերներ են բոլոր առումներով
- Հնարավոր չի նույնիսկ զիջումներից հետո վստահել թուրքերին:
- Առերես թշնամությունը ցույց չի տրվում, բայց այն միշտ էլ կլինի:
- Համաձայն չենք երկրորդ սցենարին, քանի որ ադրբեջանցին և հայը կողք-կողքի ապրել չեն կարող:
- Երկրորդ սցենարի պարագայում վստահության խնդիրն է, վստահություն բացարձակապես չկա:
- Սա մեզ խաբելու դասական տարբերակն է:
- Երբ Ղարաբաղը Ադրբեջանի կազմում էր, Ղարաբաղը ամբողջովին հայաթափվեց, մենք չենք կարող վստահել Ադաբեջանին
- Հայն ու ադրբեջանցին երբեք չեն կարողանա իրար հետ նույն գյուղում ապրել, դա բացառված է
- Մենք թուրքերի ու ադրբեջանցիների երաշխիքները տեսել ենք...
- Հա լավ, Ադրբեջանի կազմում, բայց այս սցենարը ոչ մի հարցի կոնկրետ չի պատասխանում, աշխարհի աչքի առաջ հայ կոտորեցին, հիմա էլ ասում ենք, եկեք մի հատ էլ փորձենք..
- Սա եղել է, մենք սա տեսել ենք. իրենք այսօր էլ են սա հայտարարում, բայց դա մենք արդեն անցել ենք, սա բացառվող տարբերակ է:
- Քննարկում չկա: Հնին վերադարձը բացառում ենք:
- Երկրորդը չի քննարկվում, Նախիջեւանի օրինակը սրա հաստատումն է:
- Նրանք հային ղեկավար գործ չեն տա. թուրքը շատ ճկուն է, մարդու իրավունքները շրջանցելու լավագույն մասնագետ:
- Մենք նոր Սումգայիթներ չենք ուզում՝ հայերը պետք է իրենց հույսը դնեն իրենց վրա՝ Ղարաբաղը երբեք չի կարող լինել Ադրբեջանի մաս:
- Տնտեսական առաջընթա՞ց Ադրբեջանի հետ... սա միֆ է, ոչ այլ ինչ...
- Ադրբեջանը կբերի իր վայրենիներին բռնի կբնակեցնի, մի քանի սերունդ հետո, կասի Ղարաբաղում հայ չի էլ ապրել...
- Ադրբեջանցիներին վստահել չի կարելի, ոչ մի դեպքում:
- Ադրբեջանը պատերազմի պատրաստվում է զինադադարի հաստատման օրվանից սկսած, պետք է մենք էլ պատրաստվենք, բայց դիվանագիտորեն անենք ամեն ինչ, որ պատերազմ չբռնկվի:
- Ոչ մի խոստում չի կատարվի...Դա սուտ է:
- Մենք չենք վստահի Ադրբեջանի խոսքերին, թե իբր թույլ կտան հայերը Ադրբեջանի կազմում իրենց լավ զգան, զարգանան և հանգիստ ապրեն:
- Աղվեսի քաղաքականությունը միշտ էլ թուրքի զենք է եղել, բայց մենք դեռևս հավատում ենք նրան: Անխելքը մենք ենք:
- Ինչպես կարելի է նորից սրանց հավատալ, ինչպես կարելի է մտածել, որ Սումգայիթ չի լինի. հազիվ ադրբեջանաթափվեցինք...
- Հայ ու թուրք էլ միասին չեն կարող ապրել. նոր սերունդն ավելի անհանդուրժող է. նա սովետական «ժողովուրդների բարեկամությանն» այլևս չի հավատում, այլ ասում է. «Իմ պոչը տրորողի գլուխը կջարդեմ...»

- Դոստ ադրբեջանցիներ միշտ էլ քիչ են եղել. էնպես որ համատեղ կյանք բացառված է:
- Մեզ պետք է ինչ-որ երաշխիք մեր ձեռքում պահել. Ադրբեջանի կողմից թղթի վրա գրածին այդքան էլ չենք վստահում:
- Ղարաբաղցին ու ադրբեջանցին այլևս իրար հետ չեն կարող կողք կողքի ապել:
- Ինչից ստեղծվեց այս թշնամանքը: Ահա այս կինը, եկել այստեղ նստել հարց է քննարկում: Եղել է մանկավարժ, աշխատել է, սակայն այդ ամենը այնտեղ է թողել, երեխային վերցրել ու եկել" Ահա սրանից սկսեց թշնամանքը:
- Որ գնում են աղջիկ ուզելու, մանանա են խոստանում, բայց դե հենց հարս են տանում...
- Թուրքը հիմա խոսում է երաշխիքների մասին, բայց հայ սպայի մարդասպանին ազգային հերոս է հռչակում... էլ ի՞նչ եք քննարկում:
- Եկեք չմոռանանք, որ թուրքը մեր հայ «Օֆիցերին» սպանեց:
- Արդբեջանցի, որպես թշնամու լեզու, հայերենը կթույլատրի դասավանդել, որպես թշնամու լեզու... իսկ թշնամուն միշտ հալածում են:
- Էսքան արյուն թափելուց հետո, մի՞թե դա բացառված չէ, որ ամեն ինչ կկրկնվի:
- Ադրբեջանցիները սովորույթ ունեն ընդլայնվելու, գնալու են գան, կամաց-կամաց մնան, բարգավաճեն, հետո էլ ասեն, այս ծառն էլ է իմը, այս սարն էլ...
- Ինչ կարելի է սրանցից ակնկալել, երբ կացնով մեր զինվորին սպանեցին, սրանք դահիճներ են...
- Այստեղով թուրք է անցել... սա էլ հո մենք չենք ասել... էնպես որ, ինչ սցենար էլ ընդունվի, այն պետք է բացառի թուրքի մուտք Ղարաբաղ:
- Սունդուկյանն ասում է. «Քեզ ո՞վ էր ասում գայլերի մեջ ոչխարի դիմակով ման գաս, բուրդդ կգզեն...» Հիմա ինչ անենք, գայլերի մեջ ենք ընկել, պիտի դիմակայենք. մեզ էլ աղվեսի մորթի է պետք:
- Ադրբեջանը մուսուլմանական պետություն է, Ղուրանում գրված է, որ բոլոր մուսուլմանները հավասար են, իսկ մնացած ազգերը, մնացած կրոնի ներկայացուցիչները ոչինչ են: Նրանք ամեն ինչ կանեն, տարածքներին տիրանալու համար: Նրանք ուրիշ ոչինչ չեն ճանաչելու:
- Ադրբեջանցուն ինչ տաս, ու՞ր տաս, մեկա իրանն է էլի:
- Միևնույն է, մենք գիտենք, որ Ադրբեջանը երբևիցե չի ճանաչի Ղարաբաղի ակնախությունը:
- Մենք բացարձակ դեմ ենք սրան: Արդեն մեկ անգամ տեսել ենք, թե սրանից ինչն է ստացվում, կրկին նույն թակարդը չենք ընկնի:
- Երկրորդ տարբերակը լրիվ ծայրահեղություն է, բոլորիս համար անընդունելի, Ադրբեջանին երբեք վստահել պետք չի, պատմությունն է դա ապացուցում:
- Թուրքը ոտքից համբուրելով կբարձանա, վիզը կկտրի:
- Իրենք իրենց մի անգամ ցույց են տվել. հիմա մի անգամ էլ ե՞նք թուրքին ուզում հավատալ...

- Ադրբեջանցիներն ու հայերը միշտ թշնամիներ են եղել, շատ երկար ժամանակ կպահանջվի, որ ժողովուրդը հաշտվի, այդքան զոհեր են եղել, այդքան արյուն է թափվել...
- Եթե երկրորդ սցենարը մենք քննարկենք, Ադրբեջանը կասի "Տեսնում եք այս սցենարը քննարկում են, ուրեմն կարող է այդպես էլ լինի", ուրեմն այս սցենարը պետք է ընդհանրապես չքննարկել:
- Մենք այս սցենարին չենք կարող համաձայնվել, որովհետև մի անգամ Թուրքիայում նույն սցենարը եղել է, ու հետևանքները հիմա տեսնում ենք:
- Երաշխիքները սուտ են, մանավանդ երբ գործ ունենք Ադրբեջանի խորամանկ ղեկավարների հետ:
- Զարգացո՞ւմ... բայց չէ որ հենց հիմա Կիրովաբադի շրջանն իրենց կազմում է, բայց մենք ոչ մի փոփոխություն չենք նկատում, ոչ մի տնտեսական աճ, ոչ մի պայքար հայաթափության պայքարի դեմ:
- Մենք արդեն գիտենք, թե ինչ ա նշանակում Ադրբեջանի կազմում լինելը: Էդ ո՞վ ա ասել, որ ինչ որ բան փոխվել է:
- Մեզ համար ամբողջությամբ անընդունելի է Ադրբեջանի ցանկացած առաջարկ:
- Տարիներ հետո կկրկնվի այն, ինչ արդեն եղել է, ու ավելի վատ:
- Երկրորդ սցենարի հանդեպ հավատ չկա...Կարմիր կովը իր կաշին չի փոխի, թուրքը մնումա թուրք
- Ոնց եք պատկերացնում հայն ու թուրքը իրար հետ խաղաղ ապրեն, դա հնարավոր սցենար չի:
- Մի քանի տարում նրանք էնքան երեխա կունենան, որ մենք էլ չենք հասնի:
- Ալիևն էլ նույն Նարիմանով-ությունն ա անում էլի:
- Եթե մի հիսուն տարի էլ անցնի, հայերը հետ գնան, կրկին շատ արագ նույն ահարկու պատմությունները կկրկնվեն:
- Մենք ինքներս պիտի մեր հարցերը լուծենք, մեր ուժերով:
- Հիշում եմ, երեխա ժամանակ Ադրբեջանի տարածքով գնում էինք Եղեգնաձոր, ու տեսա հայկական խաչքարը գցած, կամուրջ էր սարքած: Է՞դ ա իրանց ասած ադրբեջանական տարածքը:
- Ցանկացած սցենար բխում է Ադրբեջանի շահերից:
- Էսօր ադրբեջանցիները ոչ մի զիջման չեն գնում: Ասում են Ղարաբաղը մեր հողերն է, պետք է հայերից մաքրենք մեր հողերը: Էս սցենարները եվրոպական երկրների նկարածներն են:
- Գիտեք, նույնիսկ եթե սահմանները բացվեն, իրականում ես էլի իմ ծննդավայրը չեմ կարող գնալ: Միշտ թուրքի մի «գյուլա» ինձ համար դարանակալված կլինի:
- Առաջին պահին Ադրբեջանը կընդունի անկախությունը, հաջորդ պահին նորից կհարձակվի:
- Ադրբեջանցի ոչխար բուծողները միշտ եկել լացել, մեզնից տարածք են խնդրել, որ իրենց ոչխարներին արածացնեն: Հաջորդ տարի էլ կանգնում ասում էին, որ դա իրենց տարածքն է:
- Էդպիսի ոչ մի երաշխիք չկա, որ մի գիշերվա մեջ մի հայի, թուրքի գլուխ չկտրվի, ուզում ա էստեղ անգլիացին թեյ խմի, թե ֆրանսիացին՝ կոնյակ:

- Ստի ոտքը միշտ էլ կարճ ա, մենակ չեմ հասկանում, էդ թրքի ոտը խի չի էսքան ժամանակ կտրվում:
- Միշտ էլ ադրբեջանցու հետ պետք է զգույշ լինենք, նույնիսկ խաղաղ պայմաններում:
- Ամուսնուս մահից հետո, մեր կորուստներից հետո, հիմա էլ անգամ կենցաղի մեջ խրված՝ ավելի հեշտ եմ պատկերացնում մեր ապագան, քան այսպես ասած համատեղ կեցությունը: Դա անհնար է:
- Ադրբեջանի կողմից տարհանումը դա Ջուղայի դեպքերի շարունակություն է. եթե ժամանակին Սյունիքը չլիներ, մենք ականատես կլինեին ողջ Հայաստանի հայաթափմանը... ասել կուզեմ, նրանք միշտ էլ մեզանից ազատվել են ուզել. լինի դա մեղրով, թե թրով:
- Չեմ հասկանում, ինչպես կարելի է թշնամուն ընդունել...
- Ինչքան լուր եմ լսում, Ալիեւն ասում է՝ ուզում եմ մեր հողերը, բայց դրանք մեր հողերն են, ու իրենք էլ գիտեն, բայց իրենց ժողովրդին մոլորության մեջ շարունակաբար պահել են փորձում:
- Մեզ Ադրբեջանը հազար տարի էլ պետք չի...
- Մենք մեր երեխաներին չենք թունավորում ատելությամբ, իսկ իրենք իրենց երեխաներին կաթի հետ ատելություն են մեր հանդեպ սերմանում: Արյան պատկերներով վախեցնում ու ատելություն են սերմանում: Ու գիտե՞ք՝ եթե պետությունն էլ իրենց դա չանի, իրենց հասարակությունն անում է:
- Ոչ թուրքի խոսքին ա պետք հավատել, ոչ է ստորագրած թղթին: Պետք է թուրքի երեսին ժպտալ, բայց մահակը ձեռքից չթողնել:
- Իրար սպանած ազգերն այդքան արագ չեն հաշտվի, ու հարցն այդքան արագ չի կարող լուծվել:
- Իլհամ եւ Հեյդար Ալիեւների միջեւ մեծ տարբերություն կա: Հեյդարը հարցը կարող էր միանգամից լուծել:
- Մեզ մեր սիրուն աչքերի համար չեն սիրում, եթե հիմա Թուրքիան մեզ հետ խոսում ա, դա իր իսկ շահերից է բխում:
- Ոչ մի երաշխիք չի ստիպի մեզ հավատալ Ադրբեջանին:
- երկրորդ սցենաը միֆ է, քանի որ յոթանասուն տարի ԼՂՀ-ն եղել է Ադրբեջանի կազմում, սակայն եղել են միշտ էթնիկ զտումներ ու նույնիսկ ցեղասպանություն
- մենք ոչ ազգային, ոչ կրոնական, ոչ էլ էթնիկ նմանություն չունենք ադրբեջանցիների հետ, դրա համար էլ ԼՂՀ-Ադրբեջան հաշտությունն անիրականալի է
- Երկրորդ տարբերակը գայլի գլխին ավետարան կարդալու պես մի բան է:
- Պատմությունը ապացուցել է, որ չի կարող հայը լինել թուրքի տիրապետության տակ: Վերջ:
- Մենք գետաշենցի հարևան ունեինք, սարսափահար էր լինում միայն հիշելուց. եթե խաղաղ ժողովրդին սպանեցին, ինչի՞ ենք վստահ, որ էլ չեն անի:
- Հայն ու թուրքն անհամատեղելի երևույթներ են:
- Մենք ադրբեջանցիներին չենք վստահում:

- Պետք չէ նաև մոռանալ, որ պատմությունը ցույց է տվել, որ Ադրբեջանին վստահել չի կարելի
- Եթե դու մի անգամ համաձայնեցիր միջանցք տրամադրել թուրքերին, նրանք այլևս թույլտվություն չեն հարցնի: Դա նույնն է, որ ես ամեն օր թույլտվություն հարցնեմ իմ աներոջից կնոջս համար:
- Քանի տարի էլ անցնի, մենք չենք մոռանալու մեր թափված արյունը և չենք ցանկանալու վերադառնալ Ադրբեջան: Ուրիշ բան, որ թուրքերը մտածում են դեմոգրաֆիական վիճակը փոխելով փոխել ռեֆերենդումի արդյունքները, իսկ այդ խայծը չի կարելի կուլ տալ:
- Ինչ կողք կողքի ապրելու մասին է խոսքը, եթե մարդասպան Սաֆարովը Ադրբեջանում ազգային հերոս է
- Թուրքը միշտ մեզնից մի քայլ առաջ է մտածել: Նույնը վերաբերվում է ազերիներին, իրանց դիվանագիտությունը մերինից առաջ է:
- Մենք թուրքի հետ ինչքան էլ լավ լինենք, էլի թուրքն իր թրքությունը պիտի անի, հայն էլ կույր-կույր էլի հավատա:
- Քաոսում էլ ա գրած, երբ ադրբեջանցին հայի կողքով անցնում է, ասում է. «Հա՛յ էլի կպար, աղտոտեցիր...» Նրանց մեջ ատելություն այրան հետ է գալիս:
- Իրենք մեր պատմական Սյունիքի վրա աչք ունեն:
- Համենայն դեպս զգուշությունը լավ բան է: Սահմանը բացելուց հետո թուրքերը մեզ կուլ կտան:
- Թուրքերին չի կարելի վստահել՝ հենց ինչ-որ հող տվեցինք, նրանց դիրքերը կլավանան ու նրանք իրենց վերջնական ծրագրերը կիրականացնեն:
- Ադրբեջանը հաստատ մի ներքին պլան ունի: Գուցե սպասում է մինչև Հայաստանը ավելի խոցելի կամ ջլատված վիճակ ընկնի, այդ ժամանակ հարձակվի:
- Ադրբեջանը տալիս է բավականին մեծ երաշխիքներ, սակայն թուրքը մնում է թուրք, կարծում եմ որ այդ երաշխիքները փուչ են:
- Թուրքը ուրիշ ազգ է՝ թուրքը իր խոստումները երբեք չի կատարում:
- Եթե Ղարաբաղը տանք իրենց, նշանակում է Հայաստանը տանք: Տարիներ անց այդպես էլ կլինի:
- Ինչքան էլ երաշխավորեն, միևնույն է մեր տարածքները պիտի մեր տարածքում լինեն:
- Ադրբեջանի երաշխիքները վստահելի չեն: Տաս տարի հետո Ղարաբաղը կդառնա ադրբեջանաբնակ:
- Մենք նման մի բան տեսանք՝ ինչպես խաղաղ, աննկատ աշխարհի համար հայաթափեցին Նախիջեւանը:
- Երկրորդ սցենարը կարդալ էլ պետք չի, միևնույն է պարզ է, որ Ադրբեջանին վստահել չի կարելի
- Մեր գյուղի բնակչության կեսը թուրքեր էին: Եթե այդպես շարունակվեր, նրանք այստեղ մեծամասնություն կկազմեին ու մեզ կճնշեին: Լավ է, որ գնացին:

- Մարդ սովորում է իր սխալների վրա: Մենք տեսել ենք, թե ինչպես են տարածքներ հայաթափվել, ինչպես են հայերը ջարդերի ենթարկվել: Մենք նույն սխալը չպետք է գործենք:
- Երկրորդ տարբերակի մեջ նշված ոչ մի խոստմանը չեմ հավատում՝ թուրքերին երբեք չի կարելի վստահել: Պատմությունը դա ապացուցել է:
- Իմաստուն է մեր ժողովուրդը, հնուց է ասում՝ թուրքի հետ ընկերություն արա, բայց փայտը ձեռքից մի գցիր:
- Երրորդ սցենարը կայուն որոշում չի կարող համարվել, քանի որ Ադրբեջանի համար դժվար չի լինի ցանկացած պայմանագիր նորից խախտել:
- Չեմ կարծում, որ Ալիևը հայերի օգտին որևէ որոշում կայացնի:
- Պատմությունը բազմիցս ցույց է տվել, չի կարելի թուրքին "դավերիյա" անել, թուրքը մնում է թուրք:
- Ադրբեջանցիները շատ արագ կբազմանան, ռեֆերենդումը մեր օգտին չի լինելու:
- Չորրորդ. Այս սցենարի առաջին իսկ կետի տակ կարդում եմ. Ադրբեջանին հնարավորություն տալ կրկին Սումգայիթ կազմակերպել:
- Պատմականորեն ապացուցված է, որ Ադրբեջանին վստահելու չի, մենք իրենց չենք հավատում:
- Լավագույն տարբերակը այն է, որ հայը իր երկրում ապրի, թուրքը՝ իր: Հնարավոր չէ միասին ապրել:
- Ադրբեջանի նախկին նախագահները իրենց երազներում տեսնում էին, որ լողում են Սևանի ջրերում, եթե Ղարաբաղը տանք, այդ երազները կսկսվեն նորից կրկնվել:
- Այ մարդ, նրանք առանց մտածելու են երեխա բերում:
- Երկու ազգերի հարաբերությունը թշնամական է մնալու: Երկու ազգն էլ նացիոնալիստ են և պատրիոտ:
- Ատելությունը մեր մեջ արդեն նստել է, մենք չենք կարող արդեն նույն ձև լինել իրենց հետ, իրենք կարող են, նրանք առանց հայրենիք, քոչվոր ցեղեր են, ուր գցեն, կապրեն...
- Ժողովրդի լեզվով ասած՝ փափուկ բարձ են ուզում դնել գլխներիս տակ:
- Այսքան տարի մաքառելուց հետո՝ սրան ո՞նց կարող ենք վերադառնալ, մեր տառապանքն ու ցավը մենք ինչ է՝ մոռացա՞նք:
- Այս սցենարը մեր անցած ճանապարհի միտքը փոխած տարբերակն է՝ մենք հո հասկանում ենք:
- Հայերն ու ադրբեջանցիներն այլևս եբեք չեն կարող ապրել իրար կողք-կողքի:
- Հիշենք Նժդեհի խոսքերը, որ "հավատալ թուրքերին՝ նշանակում է արտոնել նրանց, որ ավելի մեծ ոճիր գործեն":
- Հայն իսկի հային չի վստահում, ուր մնաց թուրքին վստահի:
- Երկրորդ տարբերակի ոչ մի կետ ընդունելի չի: Ադրբեջանի ոչ մի խոսքը հավատալու չեն: Նշված կետերը իրականություն չեն դառնա:
- Ադրբեջանն ինչքան ուզում է թող առաջարկի սա, մենք հո մեր անցածը հիշում ենք, նորից այդ սարսափին վերադառնալ չի կարելի:

- Ադրբեջանցիներն արյունարբու են , նրանք երբեք չեն հանգստանա:
- Մենք արդեն չափից շատ ենք վստահել ու խերվել ենք, մեզ արդեն շատ են խաբել, Ադրբեջանը սովետի ժամանակ էլ էր խոսք տվալ, որ Ղարաբաղում ամեն ինչ լավ կլինի, բայց խաբել է:
- Աղջի՛, ջահել էս, համա արդեն հասկանում ես, որ թուրքին հավատալ, հող տալ չի կարելի:
- Երկրորդ տարբերակ չենք քննարկում, սա անընդունելի է, անցնում ենք հաջորդ տարբերակին: Ոչ մեկս չենք հավատում այս տարբերակին: Կդառնա երկրորդ Նախիջևան:
- Թուրքերը մեզ հիմա էլ են խաբում, սկզբից ասեցին որ առանց նախապայմանների բանակցություններ են ուզում, բայց հիմա նախապայմաններ են դնում, ոնց վստահենք:
- Մենք պիտի բացառենք երկրորդ սցենարը: Մեզ Ադրբեջանի խոստումները չեն խաբի:
- Այս խայծին սպասում են, սպասում է նաեւ միջազգային հանրությունը, որ ցույց տա, թե՝ տեսեք, իրենք համաձայնվեցին հանձնել ազատագրված տարածքները, ուրեմն իրոք գրավել են, զավթել:
- Սա ի շահ Ադրբեջանի է, խաբուսիկ է, թե մենք շահում ենք սրանով:
- Մենք տեսնում ենք, որ սա խայծ է մեզ համար:
- Այ մարդ, ուզում ա երրորդ լինի, թե չորրորդ, մենք Ադրբեջանին չենք ճանաչում:
- Հայերն ու ադրբեջանցիները հավատը կորցրել են միմյանց նկատմամբ և այլևս երբեք չեն կարող միասին ապրել նույն տարածքում:
- Ոնց եք պատկերացնում հայերի ու ադրբեջանցիների բարեկամությունը, եթե տասնհինգ տարի է մեր սերունդը դաստիարակվում է թշնամությամբ, դա հնարավոր կլինի միայն հինգ սերունդ հետո, երբ որ զոհերի ու պատերազմի մասին այդ սերունդը արդեն չի հիշի:
- Ոչ իմ հայ էլ չի ուզում թուրքի սահման բացի:
- Էն ինչ մենք ենք տեսել, դա պիտի մեզ դաս լինի: Արյունով ձեռք բերածը ետ չենք տա:
- Պաղեստինի տարբերակը աչքերիս առաջ. մենք շատ ազնիվ ու միամիտ չպետք է լինենք:
- Վստահություն բոլորովին չկա. ես ադրբեջանցիների խոստումներին չեմ հավատում:
- Իիիի՞նչ.... խաղաղ համակեցությո՞ւն... էդ որն ա՞, էն որ ժպտալով ես գլուխ ջարդում:
- Ադրբեջանի բոլոր առաջարկները ցնորք են: Ադրբեջանցին երբեք հայի բարեկամ չի եղել, ու չի լինելու, նրանք կավիրեն Ղարաբաղը:
- Բաքվի ու Սումգայիթի ջարդերից հետո ոչ մի հայ չի վերադառնա Ադրբեջան ապրելու, իսկ այ ադրբեջանցիները մեծ հաճույքով կվերադառնան Ղարաբաղ ու Հայաստան:
- Ինձ թվում է, հիմա որևէ զիջում անիմաստ է: Ադրբեջանը շատ անվստահելի է: Մենք պետք է ուժեղ լինենք և պահպանենք մեր հողերը: Ոչ մի զիջում:

- Ադրբեջանցիների մեծ-մեծ խոսելը իրական հիմքեր չունի:
- Ես երեք տղա ունեմ, եթե էն ժամանակ չափահաս որ լինեին, ես էլ հետևները կգնամ կռվելու... հիմա չեմ անի, շատ բան ա փոխվել... վստահություն չկա, որ տաս տարի հետո էլի չեն խոսի հետ տալու մասին..
- Այն, ինչ արդեն տեսել ենք, ինչի միջով արդեն անցել ենք, մենք չենք մոռանա, բայց դժվար է ասել, թե հաջորդ սերունդը ինչ կանի. եկեք հիշենք Համաշխարհային պատերազմը. զոհեր տվեցինք ու հետո Արևելյան Եվրոպան նվիրեցինք: Սա է սերնդափոխության հետևանքը:
- Ադրբեջանցին ուր, խոսք տալն ուր. այ մարդ դրանց մի վայրկյան չպետք է հավատալ:
- Թուրքի «եթե»-ներից հոգնել եմ:
- Եթե խնդրին անտեղյակ մարդ կարդա, կասի՝ դեհ լավ է էլի, ահագին բան կարելի է անել ինքնավար կարգավիճակի դեպքում: Բայց ախր մենք ապրել ենք, մենք այս ամենն տեսել ու լսել ենք, ու գիտենք իրականում ինչի է վերածում խոստացվածը: Մեր պատմությունը դառն ու ցավոտ հիշեցում է մեզ՝ դա անհնար է:
- Մենք չենք հավատում, որ Ադրբեջանը Ղարաբաղին որևէ ինքնավարության կամ անտանգության երաշխիքներ կտա. դրանք սին հույսեր են:
- Եթե իրականանա երկրորդ սցենարը, կկրկնվի նորից Սումգայիթը, կկրկնվեն նորից պատմական ցավալի դեպքերը:
- Ինչ էլ Ադրբեջանը հիմա խոստանա, մենք չենք կարող նրանց հավատալ. նրանք ուղղակի խաբեության միջոցով տեր կդառնան Ղարաբաղին:
- Ղարաբաղի ինքնավարություն թուրքը պապիս թվին էլ երաշխավորեց, տեսանք ինչ եղավ... հիմա էդ ինչ ա փոխվել, որ հավատանք:
- Ադրբեջանը պատմականորեն մի քանի անգամ խախտել է իր խոստումները, մենք ադրբեջանցիներին չենք վստահում
- Թշնամու հետ եղբայրանալ հնարավոր չէ...
- Այսօրվա Ադրբեջանը նախկին Ադրբեջանից ոչնչով չի տարբերվում, ոնց բարբարոս կային, տենց էլ մնացել են:
- Երկրորդ սցենարը արևմտահայությունն ունեցել է ռուս-թուրքական պատերազմին... եղեռնից առաջ... հիմա միայն Թուրքիա բառը Ադրբեջանով է փոխվել... հասկանում եք թե՞ ոնց...
- Ղարաբաղում էինք, երբ կիսառուսերեն խոսող ադրբեջանցիներ մոտեցան, ասեցին, եթե էստեղ ավտոբուս կանգնացնեք, կվառենք... հիմա, էդ նույն թուրքը խոսում է երաշխիքների մասին:
- Իրենք սահմանամերձ հատվածում զորքեր կպահեն, իսկ մեզ ասում են՝ զինաթափվեք: Բա ողջախոհությունն ուր է, մենք թշնամուն զինված պահենք, ինքներս գառան պես պատրաստվենք զոհվելո՞ւ:
- Համատեղ կեցությունը ապահովել անհնար կլինի, որովհետեւ կլինեն միշտ ընդհարումներ ու զոհեր, իսկ իրենք կասեն, թե դա կենցաղային հողի վրա էր տեղի ունենում:
- Մենք էլի 1988 թիվ կվերադառնանք... որտեղից, որ սկսել էինք:
- Հայ ու ադրբեջանցու համակեցությո՞ւն... ռոմանտիկա, եղբա՛յր, ոչ այլ ինչ...

- Կոտրված ապակին կպցնելու դեպքում էլ ամրությունը կորցնում է. մենք էլ չենք կարող արբեջանցիների հետ «համատեղ» ապրել: Իրենք թող իրենց երկրում մնան, մենք՝ մեր:
- Ադրբեջանին չեմ վստահում: Նրանք իրենց պայմանավորվածությունները չեն պահի:
- Համաձայն չեմ, որովհետև չեմ վստահում ադրբեջանցիներին:
- Ճիշտ ասած՝ սա «կուտ տալն է», մեզ ստիպում են զիջումների գնալ, ու հատուցման գին ասում են՝ ցեղասպանության ճանաչումը: Սրանք ուզում են մեզանից խլել մեր պատմական պահանջները:
- Եթե սա ընդունենք, մենք միանգամից ամեն բան նվիրում ենք իրենց, մի քանի տարի անց էլ մեզ պատերազմ կհայտարարեն ու ...
- Կարմիր կովը իր կաշին հաստատ չի փոխի...
- Եթե զինադադարի պայմանագիրն են ամեն պատեհ պահի խախտում, ինչ երաշխիք, որ այլ պայմանագրեր կպահպանեն:
- Շատ դժվար է գնահատել այս սեցանարները, երբ չես կարողանում հավատալ կամ վստահել հակառակ կողմից:
- Սումգայիթից մեր հայերին ինչ՞ ձևով հանեցին, հիշու՞մ եք: Իսկ մենք ադրբեջանցիներին ոչ գլխատել ենք, ոչ էլ սպանել. հակառակը՝ շատ առոք-փառոոոք ճանապարհել ենք:
- Նորից էլի գալիս ենք նրան, որ ադրբեջանցիներին չենք կարող վստահել:
- Ադրբեջանցիք մարդ չեն:
- Մենք կուշտ ենք Ադրբեջանի վստահեցումներից: Բավարար է:
- Տեսել ենք արդեն..... լավ սցենար է, բայց գայլի աչքերը տեսել ենք արդեն:
- Սումգայիթը փաստ է. մենք այսպիսի փաստերի հավաքածու չենք ուզում:
- Ադրբեջանը ուզում է, որ իրականանա երկրորդ սցենարը, քանի որ այդ դեպքում մեզ մուսուլմանացնելը հեշտ կլինի ու Նախիջևանի օրը կընկնենք:
- Սովետական տարիներին ինչքա՞նով ապահովեցին հայաթափման, ճնշումների բացառումը, որ հիմա հավատանք իրենց:
- Հին Ջուղայի խաչքարերի ջարդուփշուր անելուց և Նախիջևանի հայաթափումից հետո ինչպե՞ս կարող ենք Ադրբեջանին վստահել. գայլի բերանը ոչխար չե՛ն տանի:
- Ադրբեջանը նախ կվերաբնակեցնի, հետո մեզ անհնազանդության համար կպատժի...
- Քրիստոնյան ու մուսուլմանը չեն կարող խաղաղ ապրել հարևանությամբ, հատկապես՝ մեր տարածաշրջանում:
- Մենք մեր մանկապարտեզի ու դպրոցի երեխաներին մի կերպ ենք փրկել թուրքերի ձեռքից, նույնիսկ նրանց էին ուզում կոտորել, այդ տեսակ ազգին ինչպես կարելի է վստահել:
- Ոչ մի անգամ պետք չի թուրքի հետ համաձայնվել, Նախիջևանում ինչքան հայ է եղել, կամաց-կամաց հանել են ու հայաթափելուց ու Նախիջևանը թուրքերով լցնելուց հետո ռեֆերենդում են արել, հետևաբար պետք է

հստակ գիտակցել, որ ոչ մի թուրքի չի կարելի թողել, որ գա ապրի այստեղ:

- Մենք ադրբեջանցիների հետ յոլա գնացողը չենք, որ գան, նորից կռիվ կանենք:
- Թուրքն ա առաջինը մորթել... так что, մենք էլ ներել չենք կարող:
- Նրանց տիրապետության տակ Ղաաբաղը հայաթափելու են, ռեպրեսիաներ են սկսվելու մեր ակտիվիստների դեմ:
- Ադրբեջանի կազմում լինելը անընդունելի է՝ չենք հավատում ոչ մի երաշխիքի: Ադրբեջանը դա նույն Ադրբեջանն է ու նույն հայաթափության քաղաքականությունն է վարելու:
- Ադրբեջանցիներին մենք չենք հավատում, ամեն բան կրկին նույնն է դառնալու, թե մենք դրանց կազմում հայտնվենք:
- Միասին ապրենք խաղա՞ղ... Ես երեխա էի, ամեն օր ծեծված էի դպրոցից տուն գալիս, մինչեւ չտեղափոխվեցինք հայկական բնակավայր: Իմ երեխային նման վիճակի սպառնալիքի առջեւ չեմ կանգնեցնի:
- Մենք ի՞նչ երաշխիք ունենք, որ թուրքը երբեք էլ չի ռմբակոծի:
- Ադրբեջանցին տեղն ա փոխում, հո հոգեբանությո՞ւնը չի փոխում:
- Ադրբեջանը մեզ ուզում ա համոզի, որ ինչ-որ բան ա տալիս, բայց տալիս ա միայն այնպիսի բաներ, որ մենք արդեն ունենք, էլ ինչի՞ եմ զիջում անում:
- Թուրքը մեր թշնամին ա, թշնամին բարեկամ չի դառնա, բարեկամը կարա թշնամի դառնա, բայց հակառակը չի լինում
- Ես կոլտնտեսության նախագահ եմ աշխատել, շփվել եմ ամենաբարձր աստիճանավորների հետ: Նրանք ասում էին. «Դու լավ մարդ ես, բայց հայ ես»:
- Մուսուլմաններին որ ասես գնա կախվի, կգնան կկախվեն: Էդ իրենց օրենքն է:
- Ադրբեջանը հիմա էլ մի օր մի հայտարարություն է անում, մյուս օրը մի ուրիշ, դա էլ մեզ չի թողնում, որ իրենց վստահեք:
- Ինչքան էլ սերունդները փոխվեն, մուսուլմանի մեջ հիշաչարությունն արյան հետ ա անցնում:
- Ով ասեց, որ հիմա թուրքը խարդախ բան չի անում... հիմա էլ ա անում, միշտ էլ անելու ա... Եթե մենք կարողանանք ստատուս քվոն ի օգուտ մեզ օգտագործել, ապա այսպես լավ է:
- Ութանասուն տարի ադրբեջանցիների հետ ապրել, աշխատել ենք: Բայց էդ թվացյալ խաղաղություն էր, քանի որ ադրբեջանցիները քողարկված հայատյաց քաղաքականություն էին վարում:
- Դու իմ երեխային ես սպանել, ես՝ քո: Էլ ո՞նց վստահենք իրար ու ապրենք իրար հետ:
- Անընդունելի պայման է, որ մենք երբեւէ կլինենք Ադրբեջանի կազմում: Նման մի բան մենք արդեն տեսել ենք, ի՞նչ եք ասում:
- Մենք մեր դարավոր թշնամուց ե՞նք երաշխիք ուզում....
- Մենք ի՞նչ է՝ ճագար ենք փորձարկումների համա՞ր, որ մի ամբողջ ժողովուրդ կրկին վերցնեք ու հանձնեք նման փորձության:
- Ադրբեջանցիների գունավոր խոստումներին չենք հավատում:

- Ուզում են թոզ փչե՞լ մեր աչքերին. ղարաբաղցին չի խաբվի:
- Այս տարբերակը..... չէ, մեզ չես խաբի:
- Ադրբեջանցիները ագրեսորներ են ու իրականում խաղաղություն չեն ուզում, թուրքին վստահել չի կարելի:
- Մեր տեսածից գիտենք, որ ադրբեջանցիներին վստահել չի կարելի, սովետական տարիները դեռ հիշում ենք, ոչ մի ազատություն չենք ունեցել, համոզված ենք, որ կկրկնվի նույնը:
- Թուրքն իրենով ամեն ինչ արել է, որ մենք էլ միասին հաշտ չապրենք:
- Սովետական տարիներին իմ երեխաները գնում էին ռուսական դպրոց, որովհետև այլընտրանքը թուրքականն էլ, հազիվ եկել ենք հետ մեր արմատներին, ինչի ենք նորից հետ գնում:
- Այսքան արյուն է թափվել, ո՞նց կմոռանանք: Ընտանիք չկա, որ զոհ չունենա, ո՞նց կմոռանան ու կապրեն թշնամու հետ:
- Հնարավոր չի լինելու կողք-կողքի ապրել, չենք կարող մոռանալ մեր հարազատների կորուստը:
- Երկրորդ սցենարն ասում է. «Կներեք, էլ չարություն չենք անի, եկեք անցյալը մոռանանք, մեզ վստահեք, միասին ապրենք»... Բայց մոռանում ենք, որ թուրքը «երես առած լակոտ ա», մի անգամ ներեցիր, հետո էլի կկրկնի:
- Ադրբեջանի կազմո՞ւմ: Ինչպես նախկինում է՞ր՝ պատմություն չէինք անցնում, մեզ ճնշում էին, դպրոցներում անգամ հայերեն չէինք կարողանում սովորել... Ինչու՞:
- Թուրքի խոսքին չպետք է հավատաս, այսօր մի բան կասեն, վաղն մի այլ բան կանեն:
- Քաչալը դեղ ունենար իր գլխին կքսեր... Ուզում եք ասել, Ադրբեջանն էնքան ժողովրդավար է, որ մեզ էլ այդպիսին կդարձնի՞...
- Չենք հավատում, նրանց երաշխիքներին չենք հավատում:
- Ադրբեջանի կազմում մեզ այնքան կճնշեն, որ սպանությունից վատ կլինի: Որ զենքով էլ չսպանեն, բարոյապես կսպանեն:
- Ադրբեջանցիներին վստահել ոչ մի դեպքում չի կարելի:
- Ինչ երաշխիք կա, որ Ադրբեջանի կազմում մեր գոյությանը վտանգ չի սպառնա:
- Մի քանի տարի հետո նույն սարսափը կվերադառնա մեր հող: Ի՞նչ իմաստ ունի ուրեմն սա:
- Խորհրդային տարիներին մեր դպրոցներում Հայոց պատմություն առարկան հանված էր, Ադրբեջանի լեզուն պարտադիր էր, հեռուստատեսությունը սահմանափակ էր, մեր յոթանասուն տարվա փորձը թույլ չի տալիս վստահել ադրբեջանցիներին:
- Թուրքը քաղաքակիրթ ժողովուրդ չի ու չի կարող նոր էջից սկսել, թուրքերը գերմանացի չեն, սա մոռանալ պետք չի:
- Անգամ խաղաղ պայմաններում էին մտնում տներ, սպանություններ կային, էլ ուր մնաց հիմա հող տանք ու կրկին մոտենան մեզ:
- Ղարաբաղցի էշը նույն ճամփով անցնիլ չի:
- Վստահություն չկա թուրքերի նկատմամբ:

- Այսօր աբսուրդ է խոսել հայի ու ադրեջանցու կողք-կողքի, խաղաղ ապրելու մասին:
- Մենք չենք կարող ադրբեջանցիների հետ այլևս ապրել, ի՞նչ վերաբնակեցման մասին է խոսքը:
- Մենք ադրբեջանցիների հետ երկար ենք ապրել ու նրանց լավ ենք ճանաչում, դրա համար էլ չենք վստահում նրանց:
- Մենք ադրբեջանցիների հետ ընդանրապես չենք ուզում շփվել:
- Բաքու, Սումգայիթ ու մի անվերջ շարք. մենք ո՞նց մոռանանք ու նորից վստահենք նրանց
- Ղարաբաղի սահմաններում մեր շփումն անհնար է...
- Պատերազմի սարսափը դեռ մեջներս է, մոռանալ չի հաջողվի: Միասին մենք չենք ապրի այլեւս:
- Ժամանակին մենք վստահել ենք նրանց, հիմա էլ չենք կարող. դա բացառվում է:
- Ադրբեջանցին իր օջախում թշնամություն է սերմանի... որտեղ ա, որ իրենցից երաշխիք ենք ստանալու
- Թուրքին որ ոչ մի բան էլ չտաս, կգա ու արագ իր համար ամեն բան կստեղծի ու հողում արմատ կգցի:
- Մենք Ադրբեջանին միևնույն է չենք վստահում, լինի չորրորդ սցենարը, թե հինգերերդ...
- Ինչ էլ խոստանան, մենք չենք հավատում. ոչ մեկն էլ չի գնա:
- Թուրքերին չենք վստահում, մի թիզ հող որ տանք, ամբողջը կուզեն:
- Թուրքի մոտ խանգարումներ կան. նա արյունով արդեն բունտարշիկ ա տո...
- Համատեղ ապրելու մեր ու ադրբեջանցիների բազմաթիվ փորձերը ձախողվել են ու էլի կձախողվեն:
- Ադրբեջանի ասած խոստումները, այն, որ նա կփոխվի և հայերի հանդեպ վերաբերմունքը կփոխվի, աբսուրդ է:
- Սովետի ժամանակ ադրբեջանցի հովիվը գալիս էր ասում. «Բա հային սազում ա հովիվ լինել: Ես կանեմ էդ գործը»: Ու մի քանի տարի հետո հայկական բնակավայրը դառնում էր լցված ադրբեջանցիներով:
- Մենք սա արդեն անցել ենք, իրենք պահը բաց են թողել, проехали!
- Ադրբեջանի երաշխիքներին վստահել բացարձակապես չի կարելի :
- Էդ Ադրբեջանը չէ՞ր, որ քառասուն հազարանոց Շուշին էսօր երկու հազարանոց ա դարձել:
- Ադրբեջանն իր երաշխիքները թող իրեն պահի. օգըմ չընք:
- Մենք շատ ենք հեռու «դեմոկրատական Ադրբեջանից»:
- Անհնար է իրենց հետ ապրել, անհնար է ու չենք ուզում:
- Մենք չենք վստահում թշնամուն:
- Ադրբեջանին հավատալ-չհավատալու համար պետք չի հեռու գնալ, մեր զինվոր Մարգարյանին հիշեք, սենց ազգին, Սաֆարովներին, ոնց վստահենք:
- Իրենք չեն հրաժարվի մեզ ոչնչացնելու ծրագրից:

- Յոթանասուն տարի իրար հետ եթե լեզու չենք գտել, ուրեմն հիմա էլ նույն վիճակն է շարունակվելու, թուրքը չի փոխվել
- 70 տարի արդեն տեսել ենք ինչ էր.... Նաղդը թողած նիսյայի հետեվից ընկնե՞նք:
- Նախ՝ մենք արդեն կողմնորոշվել ենք ու անկախ ենք, իսկ զգացմունքների տեսանկյունից էլ՝ նրանց չենք վստահում:
- Թող Ադրբեջանն ինքն իր ազգին երաշխիք տա, հետո նոր խոսի մեր մասին...
- Այս տարբերակը երբ բանակցվում էր, Հայաստանը 100 տոկոսանոց երաշխիք էր պահանջում Ադրբեջանից, որ անվտանգության հարցը կասկածի տակ չի դնի, բայց հենց նույն Ադրբեջանն այս սցենարը չընդունեց:
- Իսկի թուրքն ինքն իրեն չի հավատում, ես ո՞նց հավատամ:
- Նրանցից հինգ հոգի էլ գա, հերիք ա, որ մեր բանը բուրդ լինի:
- Եթե ինչ-որ մեկը կարծում է, որ ստորագրված որեւէ թուղթ երաշխիք է, թե չեն հարձակվի, առնվազն միամիտ է:Գերմանիան պահպանե՞ց պայմանավորվածությունը, որ սրանք պահեն:
- Դա հնարավոր բան չի, հայ ու թուրք միասին ապրել չեն կարող:
- Չէ, ախպեր, ես էդ ազգի դեմ «լիչնի նեպրիազն» ունեմ, շտոտը դիսկամֆորտ» եմ զգում իրա ներկայությունից:
- Առակը հիշեք. «Թուրքը միշտ իր կտրած պոչն ա հիշելու, իսկ հայը միշտ իր երեխայի թափած արյունը»: Սա ցանկացած ժամանակ արդիական է բոլոր սերունդների համար:
- Ես Բաքվում ինչ տեսել եմ, հերիք է, երկնային մանանա էլ խոստանաք, չեմ գնա:
- Մենք ոչ մի խոստումի չենք հավատում, կարճ ժամանկահատվածում ամեն ինչ կդառնա նույնը:
- Ինձ Բաքվից իմ ադրբեջանցի հարևանն ա ճանապարհել, բայց տասնհինգ տարվա աշխատածս թողել եմ, եկել, հետս մի տղա եմ բերել, են էլ մարտում զոհվել ա, ինձ ունեցվա՞ծքս են հետ տալու, թե՞ որդուս:
- Ասենք թուրքի զինվորի ձեռքից ավտոմատը վերցրիր, բայց հո չոբանի ձեռքից հրացանը չէս վերցնի՞:
- Նրանց ամբողջ ազգը արդեն զոմբի է դարձել, երիտասարդները արյունախում են դարձել:
- Ադրբեջանցի երիտասարդները արդեն դաստիարակվել են թշնամական ոգով, նրանցից ոչինչ սպասել պետք չէ:
- Ես ինքս եմ հիշում դեռ 75 թվականին ադրբեջանական ֆիլմեր նայելիս արդբեջանցու երեխան հային թշնամի էր անվանում:
- Հարյուր տարի էլ անցնի, ես չեմ կարող մոռանալ իմ կորուստները: Իմ պապը, հայրը չէին մոռացել տասնհինգ-տասնվեց թվերը:
- Ադրբեջանը պիտի թողնի, հա՞, մենք ազատ ապրենք կամ ոչ... չէ մի՝ պոզեր:
- Ադրբեջանը միշտ հենց դա էլ ուզում է, որ առաջին քայլը մենք անենք... է երկրորդ քայլը նրանք անելու՞ են:

- Այ ախպեր, շատ բաց ու լկտիաբար խաբում են:
- Հասարակ եվրոպացին կարողանում ա ներել իրեն վատություն անողին, իսկ մենք մեր ազգային կերպարն ունենք, մենք չենք կարող ներել թշնամուն:
- Ինչի դիմաց ենք ստանալու շահերի պաշտպանություն, թուրքական թրի՞....
- Թուրքը մնում է թուրք. համոզվա՛ծ ենք...
- Առաջինը մերժելի տարբերակ է: Ադրբեջանին երբեք հավատալ պետք չի:
- Ապագա հույսերով ԼՂՀ-ն Ադրբեջանին տալը երեխայություն է:
- Պայմանագիրը ոչ մի երաշխիք չի տա, միայն հայը պետք է պաշտպանի իր հողը:
- Այս սցենարը երևի առաջարկել են թուրք չտեսած ամերիկացիները...
- Եթե երկրորդ սցենարն ընդունվի, Հայաստանում միանշանակ քաղաքացիական պատերազմ կսկսվի ու Հայաստանն էլ կկորցնենք:
- Ռուսաստանը և ԱՄՆ-ն Ադրբեջանի շահերն են պաշտպանում: Եթե ընդունենք երկրորդ սցենարը, դա կնշանակի հրաժարվել մեր պատմությունից: Ոչ մի նախապայման, ոչ մի փոխզիջում:
- Չորրորդ սցենարը ենթադրում է ամեն ինչ զոհել հանուն նրա, որ մի օր միգուցե ադրբեջանցու կամքը կթամամվի ու միգուցե կքննարկի ինքնորոշման իրավունքը. կամ կճանաչի կամ էլ կասի, ես խոստումս կատարեցի՝ քննարկեցի...
- Հինգերորդ սցենարը մի մեծ ծուղակ է: Մենք պետք է մեր պայմանները թելադրենք, ոչ թե միայն նրանց պայմաններին արձագանքենք:
- Եթե մեկ անգամ զիջեցինք, դրանից հետք հա պիտի զիջենք:
- Վերջին սցենարները նման են Կկվի ու աղվեսի պատմությանը: Կկուն ճուտերը գցի աղվեսը տանի:
- Փողզիջումներ չպետք է լինեն: Նրանք իրենց խոսքի տերը չեն: Ասում են չենք կրակի, բայց կրակում են նորից ու նորից:
- Հինգերորդ սցենարը վստահելի չէ:
- Եթե թույլ տվեցինք 25 տոկոս ադրբեջանցի գան, տաս տարում նրանք 75 տոկոս են դառնալու ու հանրաքվեում իրենք են շահելու:
- Քարտեզի վրա մենք փոքր ազգ ենք կազմում, շատ հեշտ կարող ենք ջնջվել
- Մուսուլմանը երբեք չի մեռնելու, հա էլ աճելու է, սրանցից զգուշանալ է պետք:
- Կա հակամարտություն, կան վատ հիշողություններ և այդ վախը մեր մեջ է:
- Երրորդ սցենարի դեպքում Ադրբեջանը կարող է մի պատճառ բռնել ու միջանցքը փակել...Ղարաբաղը նորից կգտնվի շրջափակման մեջ:
- Երրորդ սցենարի դեպքում մենք իրենց զիջում ենք շատ ավելին, քան իրենք, իսկ ավելի ճիշտ ոչինչ չեն տալիս, քանի որ այդ անկախությունը մենք արդեն ունենք, միջանցքն էլ ունենք, էլ ինչ ենք շահում այս սցենարից
- Լավ ա էլի... մեզ իբրեւ անկախություն են տալիս, մենք դրա դիմաց մեր բոլոր ձեռքբերումներն ենք հանձնում:
- Հողի դիմաց բառ ենք ստանում: Ինչ է թե մեզ անկախ են հայտարարելու՞:

- Եկեք մեր ներքին ձայնին լսենք... մենք թուրքի հետ նորմալ, նախկին հարաբերություններ չենք ուզում:
- Թուրքերը մտածում են, որ իրենց ուզածի մի մասը ստանան փոխզիջումների միջոցով, իսկ մնացածը հետո կգրավեն, ու մեր զիջումները ոչ մի լավ բանով չեն ավարտվի:
- Այսպես կոչված «փոխզիջումները» իրականում մեր պարտությունն են:
- Այս բոլոր տարբերակները ենթադրում են միակողմանի զիջումներ և միշտ Հայաստանն է զիջում:
- Ադրբեջաներեն մաքուր հասկանում եմ, ադրբեջանական ալիքներ նայելիս երևում է, որ նրանց սովորեցնում են, թե Ղարաբաղը իրենցն է:
- Եթե նույնիսկ խաղաղության պայմանագիր կնքվի, միևնույն է, հարցը փակված չի լինի: Պատերազմը չի բացառվի:
- Էս բոլոր տարբերակների մեջ ոչ մի հայանպաստ բան չկա, սրանից թուրքական հոտ ա գալիս:
- Բոլոր սցենարներում մենակ մեր զիջումների մասին է խոսվում, իսկ իրենք ի՞նչ են զիջում...
- Եթե որեւէ հողային զիջում արվի, կրկին վերսկսելու է կռիվը:
- Ծնելիության աճը դա Ադրբեջանի հիմնական ռազմավարությունն է. եթե սահման բացեցինք, Ֆրանսիայից ավելի վատ վիճակում կհայտվենք...
- Եթե հանկարծ Լեռնային Ղարաբաղը զիջենք Ադրբեջանին, Ադրբեջանը կամաց-կամաց կգրավի նաև Հայաստանը:
- Գնա մեռի, արի սիրեմ... չէ՛, ես իմ հողը մեռած չեմ ուզում սիրեմ, չեմ ուզում Ղարաբաղին Արարատի նման նայեմ:
- Մանկությունից լսել եմ մի դեպք հայերի ու ադրբեջանցիների մասին, իրենց գերեզմանատանը հող է պակասել, գնացել մեր գյուղապետին առաջարկել է հող փոխանակել՝ մի-մի հեկտար. ղարաբաղցին պատասխանել է՝ մեռելը ձեզանից, հողը՝ մեզանից: Հողը տալու բան չի:
- Ադրբեջանցին մի բան ասելու է, մի այլ բան անելու: Պատմականորեն բազմիցս դա տեսել ենք, թուրքական դիվանագիտությունը խաբում է: Պապերս միշտ են ասել՝ թուրքը առջեւից պիտի գնա, դու՝ հետեւից, թե չէ չգիտես, երբ ու որ պահին մտքով կանցնի ու կհարվածի:
- Սա բացառվում է. նույնիսկ խորհրդային ժամանակ ղարաբաղցիները Ղարաբաղում խտրականության էին ենթարկվում: Ինչու պիտի հիմա ադրբեջանցիներն ավելի մեծ ինքնավարություն տան Ղարաբաղին:
- Ադրբեջանցիների հետամնացությունն է պատճառը, որ իրենց վստահել չենք կարող:
- Ընդունելի կլիներ, եթե թուրքի կերպարի մասին մենք չունենայինք պատկերցումներ ու փորձ:
- Իրավիճակի զարգացման ոչ մի դեպքում չպետք է համաձայնվենք հարակից տարածքները զիջելուն, թե չէ սահմանը նորից մեզ կմոտենա ու մենք էլ նորից կհայտնվեք վտանգավոր գոտում:
- Արդբեջանի նավթը հիսուն տարի անց կվերջանա, բայց թուրք կնկա հակումը անվերջ է... սահմանի բացում չի կարելի:

- Եթե թույլ տանք բուֆերային գոտի ձեւավորել՝ թուրքերը կշահեն: Իրենց հերթական փոքրիկ հաղթանակը կդառնա:
- Եթե այսօր լռենք, վաղը-մյուս օրը մենք (հայաստանցիները կամ զանգեզուրցիները) էլ ենք կանգնելու նույն խնդրի առաջ:
- Ադրբեջանցիները չեն բավարարվի միայն հարակից շրջաններով: Նրանք հաստատ ավելի մեծ ախորժակ ունեն:
- Ադրբեջանցիների դիվանագիտությունը լացի դիվանագիտություն է: Լացում են, թե տվեք, հետո անում են այն ինչ ուզում են:
- Արյուն թափելուց հետո, նախկին վիճակի խաղաղությունը չի վերականգնվի:
- Եթե նույնիսկ բոլոր երկրները ջանան, որ ղարաբաղյան հարցը լուծվի խաղաղ ճանապարհով , պատերազմի վտանգը միշտ կլինի, քանի որ կարող է մի կողմն ամեն դեպքում չհամաձայնի ինչ որ կետի հետ
- Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելուց բոլոր անվտանգության երաշխիքները սուտ են: Չկա երաշխիք թուրքի համար:
- Ադրբեջանի տեսանկյունից շատ շահավետ տարբերակ է, Լեռնային Ղարաբաղը յուրացնելու ծրագրին համապատասխան սցենար է:
- Սովետական Ադրբեջանցիները հենց երկրորդ տարբերակով էին առաջնորդվում ժամանակին:
- Խլուրդը, երբ որ թաթի տակը փափուկ է լինում, փորում է, մինչև կոշտ բանի չհանդիպի: Նույնը թուրքն է՝ եթե մի բան զիջեցիր, հետո ավելին պետք է զիջես:
- Երրորդ տարբերակը մեզ ձեռնտու չէ: Միջանցքը որոշ ժամանակ օգտագործելուց հետո, ադրբեջանցիները կասեն՝ նեղ է, եկեք մի քիչ լայնացնենք: Ինչպե՞ս կարելի է վստահել ադրբեջանցիներին:
- Մենք պետք է լինենք չոր ու շարունակենք թելադրել որպես հաղթող: Բոլոր երաշխիքները ու մի քանի տարի հետո ռեֆերենդում անցկացնելը այն հույսով, որ ղարաբաղցիները կմտքափոխվեն ու կտեսնեն, թե ինչ լավն են թուրքերը, բոլորը սուտ են: Չի կարելի վստահել թուրքերին:
- Այսօրվա Ադրբեջանի հակահայ հիստերիկ քաղաքականությունը արդեն իսկ վկայում է, որ հայերի ու ադրբեջանցիների համակեցությունն անհնար է
- Մենք ոչ մի թիզ զիջելու իրավունք չունենք՝ դա է ապացուցել մեր պատմությունը:
- Չեմ ուզում սահմանը բացվի, նույն ցեղասպանությունը կլինի...
- Ցանկացած լուծում բացառված է, քանի որ մենք որպես ժողովուրդ «տարբեր լեզուներով» ենք իրար հետ խոսում
- Այն կետը, որ կնքվում է խաղաղության համաձայնագիր թույլ կետ է, քանի որ Ադրբեջանը ցանկացած պահի կարող է սկսել պատերազմը
- Ադրբեջանցիները Ղարաբաղը խորհրդային տարիներին հայաթափել են, որ հանձնենք տարածքները իրենց, Ղարաբաղում հայ չեն թողնի
- Երկրորդ սցենարի պարագայում Ադրբեջանը կձգտի բնակեցնել ԼՂ-ը ադրբեջանցիներով

- Եթե ռազմական ներկայություն են ապահովելու ադրբեջանցիները Արցախի հարակից շրջաններում՝ էլի նույն վիճակն է, այդ հեռավորությամբ իրենք սնայպերով էլ կխփեն:
- Չորրորդ սցենարը ընդունելի է, եթե անվտանգությունը երաշխավորվի ոչ թե Ադրբեջանի, այլ միջազգային հանրության կողմից:
- Սահմանը բացվելուց մենք ենք կախված լինելու Ադրբեջանից, իրենք ծով ունեն, ու էլի ուժային խնդիր է առաջանալու:
- Մեզ համար առաջին սցենարը ընդունելի է. մենք չպետք է տանք մեր բուֆերային զոնաները, թե չէ թնդանոթները չեն դադարի:
- Այս տարբերակի դեպքում խաղաղությունն այնքան էլ չի պահպանվում, քանի որ ամեն օր սահմանի վրա երիտասարդներ են զոհվում ու դառնում անդամալույծ:
- Սումգայիթի դեպքեր տեսնողը ադրբեջանցիների պայմաններին չի՛ հավատա:
- Թուրքիայի հետ ավելի հեշտ հարաբերություններ կլինեն, քան Ադրբեջանի:
- Աչքը տիրոջն ա լույս տալիս, ուրիշի աչքը որ դնես, լույս չի տա. մենք մենակ մեր հողերում կարող ենք մեզ հանգիստ զգալ:
- Պատերազմի վերսկսման խնդիրը երբեք չպետք է բացառվի, քանի դեռ հայ ու թուրք կա:
- Զինադադարը պարբերաբար խախտվում է Ադրբեջանի կողմից ու սա միշտ հանգեցնում է մարդկային զոհերի:
- Իմաստը որն է՝ այսքան կորուստներից հետո, մեր արյան գնով ձեռք բերվածից հետո՝ դեռ կարծում են, թե մենք այնքան ենք մեր բնազդից հեռացել, որ կարող ենք իրենց առաջարկած թակարդում ապրե՞լ: Անհնար է:
- Երկրորդ սցենարի դեպքում Ղարաբաղում մենք կկորցնենք մեր ինքնությունը:
- Այս սցենարի իրականանալու դեպքում կարելի է համարել, որ միանգամից պատերազմ կսկսվի...
- Չորրորդ սցենարով միանգամից հարցը իրենց օգտին խաղաղ ճանապարհով կլուծեն:
- Տասնհինգ տարի հետո հանրաքվե անելը թույլ կտա, որ ադրբեջանցիների թվաքանակը զգալիորեն աճի ու իրենց կարծիքն անցնի հանրաքվեով:
- Այս պահին սահմանի վերաբացման խոսելը ակնհայտորեն իրենց շահերից է բխում:
- Համատեղ ապրելուց ոնց ուզում ես արա, հայը ունենում է երկու երեխա, նրանք տասներկու... տաս տարին հերիք կլինի, որ դեմոգրաֆիան փոխվի:
- Երկրորդ սցենարը սուտ է, նման բան չի կարող լինել, մենք արդեն ինքնավար եղել ենք, ու ինչի՞ է դա հանգեցրել, մոռացա՞ք:
- Երկրորդ սցենարի դեպքում Ղարաբաղում մի հատ հայ էլ չի մնա:
- Հայաթափման ծրագիրն ու հայաոչնչացման իրենց ծրագիրը դեռ կա: Դրա դեմն ո՞նց են առնելու:
- Մինչև հիմա զոհեր ենք տալիս: Եթե զինադադարի պայմաններում էս վիճակն է, ի՞նչ կլինի հողերը վերադարձնելուց հետո:

- Հանուն ճանաչման հայաթափման հետ համաձայնվել չի կարելի:
- Մինչև պետք եղած դեպքում հայաստանցիք գան մեզ հասնեն, որ օգնեն, ադրբեջանցիք հարձակվելու են ու մեզ խեղդեն:
- Հայաստանից եկած հայերը, որոնք էստեղ են ապրում, հենց էդ հարակից շրջանների երաշխիքով են այստեղ եկել...
- Եթե դրանց բանակը տաս կիլոմետրի վրա կանգնի, ո՞նց կլինի անվտանգ: Դրանց լավ ենք ճանաչում ու հանգիստ լինել այդ պարագայում չենք կարող:
- Բախումները սահմանին անընդհատ կլինեն ու խաղաղ կյանք չի լինի:
- Պատմություն հիշեք. կսկսվեն բախումներ, կլինեն հարձակումներ ու կրկին կդառնա պատերազմ: Իսկ հարակից տարածքները մեզ համար բուֆերային գոտի են, անվտանգության կարեւոր բաղադրիչ:
- Թուրքերը կաշառակեր են, իշխանությունը մի երկու կոպեկ կտա, մի քիչ էլ կխաբի ու լիքը ժողովուրդ կգա:
- Արյան կանչով ու գենետիկորեն, միևնույն է, տարիներ անց էլ հայն ու թուրքը իրար չեն սիրելու ու առիթ լինելու դեպքում կռիվ են տալու:
- Չեմ կարծում, թե հարցի շուտափույթ լուծումը կվերացնի պատերազմի վտանգը:
- Ադրբեջանական հեռուստատեսությանը որ լսես, վաղը չէ մյուս օրն իրենք գալու են, իրենց տներում ապրելու, իբր «իրենց» հողերը պիտի ազատագրեն... Ահա՛ ադրբեջանական պրոպագանդան, որը ցավոք, այսօր ավելի ուժեղ է, քան հայկականը:
- Երկար ժամանակ մենք ադրբեջանական լծի տակ ենք եղել, որի պատճառով աչքաթող ենք արել հայկական ավանդույթները, պատմությունը... պետք է նոր սերնդի մոտ հենց այս բացթողումը լրացնել:
- Թուրքը մեր դարավոր թշնամին է, ցանկացած լուծում էլ երկար չի տևի ու վերջում միևնույն է պատերազմ կսկսի:
- Ադրբեջանական ասացվածքն ասում է . «Քո հաշվածը մի կողմ դիր, տես, թե առյուծը ինչպես է հաշվում»: Նույն ձևով էլ մենք դիմացինի կողմից պետք է նայենք հարցին:
- Քսաներորդ դարի սկզբին Ադրբեջանի նավթի գործոնի պատճառով Ղարաբաղը «կողմնորոշվեց» դեպի Ադրբեջան. այսօր էլ, կարծես թե, տնտեսական շարժառիթներով ուզում են ժողովրդին համոզել դեպի այդ տարբերակը:
- Նոր սերունդը չի ճանաչում հենց ինքն իրեն, որ մնաց թշնամի ճանաչի...
- Բանակցությունների ժամանակ ինչ ասես չի խոսում, բայց իր սերնդին թույնով է լցնում... սա արդեն նրանց մտադրությունների մասին շատ բան է ասում:
- Ադրբեջանական գովազդներն անգամ հակահայկական պրոպագանդա են անում. իսկ մենք ոչ մի պրոպագանդման միջոց չենք կիրառում:
- Ադրբեջանում հետուստատեսությամբ անընդհատ ցույց են տալիս կադրեր Խոջալուից, բայց չեն նշում, որ դա Ջևանշիրի կազմակերպածն էր:

- Մենք խաղաղ բնակչություն ենք եղել, որ թուրքերը մեզ վրա հարձակվել են, հետո էլ իրենց ունեցվածքի հետ մեր ունեցվածքն էլ խառնել են ու տարել:
- Հայ ու թուրք գերմանացի ու ֆրանսիացի չեն... մենք էլ, իրենք էլ երեխեքին միմյանց անունով ենք վախեցնում, մեր մտածելակերպն ուրիշ է...
- Իրենց դիվանագիտությունն աղվեսային ա...
- Մենք պետք է սերմանենք մեր երեխաների մեջ, որ ադրբեջանցին դա մեր թշնամին է, ինչպես ադրբեջանցիներն են անում: Այս զգոնությունը մեզ կփրկի:
- Անեկդոտ կա. դասարանում ուսուցիչն ասում ա, ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Սովետական Միության վրա, սպանեց, թալանեց... էս արեց, էն արեց... Երեխեք, հիմա հասկացա՞ք, թե ով ա մեր թշնամին: Հայի երեխեն կանգնում ասում ա. «Հա՛, Աղդամի թորքը...»
- Եթե նման բան լինի, դա մեր պարտությունը կնշանակի: Մեր արյունն ու մեր կորուստները մոռանալ չի լինի:
- Իրենք շահարկում են իրենց նավթը, միջազգային հանրության աչքերին թոզ են փչում, փորձում են գրավել: Բայց այսպիսի խաբուսիկ առաջարկներ շատ են եղել, ու արդյունքում մենք կոտորած ու պատերազմ ենք տեսել:
- Երկրորդ սցենարը չունի դրական կողմեր, ադրբեջանցիները կգան կլցվեն մեր տարածքը նորից:
- Ղարաբաղը կհայաթափվի անմիջապես: Կլինեն մնացողներ, սակայն առաջին իսկ պահին, ով հնարավորություն ունի՝ կհեռանա:
- Մենք չպետք է հասնենք նորից այն վիճակին, որ ահի ու նվաստացման պայմաններում ապրենք:
- Դժվար տարիներին շատ բան ենք հաղթահարել. հիմա նորից միանա՞նք էլի նրանց: Երբեք:
- Օգնությունը, որ նախկինում ադրբեջանցիք տալիս էին Ղարաբաղին, իրականում գնում էր սահմանամերձ ադրբեջանական գյուղերի զարգացմանը:
- Մենք ասում ենք ոչ երկրորդ սցենարին ոչ միայն հիմնավելով պատմության վրա, այլ հենց էսօրվա վիճակի վրա. թուրքն էսօր հայհոյելիս ասում ա «հայի մեկը», էլ ոնց կասի «եղբայր, արի միասին հող վարենք»...
- Հին մեծ Հայաստանից մի փոքր կտոր է մնացել մեր ձեռքին, դա է՞լ տանք:
- Ես մտածում եմ իմ ապագա սերունդների մասին... եթե ես թուրքի պատճառով ծնող եմ կորցրել, ինչպե՞ս կարող եմ երեխայիս նույն մարդասպանի ձեռքը տալ:
- Պարտադիր պիտի սպանե՞ն, որ ասենք ոչ: Կարող են չսպանել, բայց ճնշել... դա էլ բավական է:
- Մոտ քսան տարի է անցել, մենք ոչ մի փոփոխություն չենք նկատում իրենց մեջ:
- Մեզ Ադրբեջանի երաշխիքները պետք չեն, մեզ մեր հողն է պետք, թող մեզանից հեռու լինեն: Մենք հայերս մեր հայկական հողում՝ ինչու՞ լինենք Ադրբեջանի կազմում:

- Երկրորդ սցենարը ընդունել, կնշանակի նույն վտանգավոր գետը երկու անգամ մտնել:
- Ադրբեջանն էլ ի՞նչ շահ ունի, եթե ասում է՝ կլինեք հայկական, կունենաք ձեր գերբն ու դրոշը... Բա էլ ո՞րն է նրա շահը: Պարզ է, չէ՞, որ այլ հեռահար նպատակ ունի:
- Ես ապրել եմ Սումգայիթում, ու մինչև հիմա չեմ կարողանում ինձ լիարժեք հայ զգալ, թույլ չեն տվել:
- Խորհրդային տարիներին, երբ այս թատրոնի համար կահույք ու պարագաներ էի բերել, ընկել էի ուժեղ ճնշման տակ:
- Ադրբեջանցուն ցանկացած կարիդոր տալը ճակատագրական սխալ ի... ժողովուրդը համաձայնվիլ չի:
- Սովետական տարիներին, լինելով բարձր դասարանցի աշակերտուհի, ծանոթ չէի հայ ստեղծագործական մտքին ու այդպես էլ կմնար, ու այդպես էլ կլինի նորից, եթե հետ գնանք նրանց կազմը:
- Ստատուսի դիմաց հող տալ և միջանցք փոխանակել չի կարելի:
- Այդ ինչ զարգացման մասին եք խոսում, եթե իրենք արագորեն դպրոցներում կներդնեն իրենց լեզուն, հայտնի ճանապարհներով կսկսեն ճնշել... նույն բանն է ստացվելու:
- Իրենք կվերադառնան ռազմավարական նշանակության տարածքներ ու այդպիսով կրակին յուղ կավելացվի:
- Պատերազմ տեսած որեւէ երեխա չի կարող պատկերացնել համակեցությունը այդ թշնամու հետ, խաղաղ համակեցությունը բացառվում է: Պատերազմի արհավիրքը չեն մոռանում:
- Մենք չենք գնա, բայց իրենք հաստատատ ոչխարի պես կգան:
- Էսքան կորուստներից հետո էլ ինչի՞ մասին է խոսքը. մենք արդեն թշնամացել ենք:
- Եթե Ադրբեջանը ոտքը դրեց հարակից շրջաններում, բուն Ղարաբաղին էլ ձեռք կգցի:
- Չորրորդ սցենարը մեզ խաղաղություն չի երաշխավորում, հնարավոր չի, որ հայն ու թուրքը իրար հետ հարևանությամբ ապրեն, վերջում անպայման պատերազմ կլինի:
- Մի անգամ տվել եք էլի քսանականներին, հիմա ինչի՞ եք ուզում տաք. թողեք մեր հարցերը մենք լուծենք էլի...
- Մենք արդեն պատերազմը տեսել ենք: Եթե դա չլիներ, եթե թափված արյունը չլիներ, մենք կարող էինք համաձայնվել, որ որոշ զիջումներով մենք լինենք անկախ կամ Հայաստանի կազմում: Բայց հիմա... անհնար է դա:
- Հիմա ինչ որ Ադրբեջանը անում է՝ նոր ծուղակներ լարել է:
- Ալիևը Սարգսյանի հետ խոսելիս մի բան ա ասում, գալիս ա իր երկրում ուրիշ բան ա ասում, էլ ո՞նց հավատաս:
- Երեխային երբ խաղալիք ես տալիս, ինչ ուզում անում է հետը՝ խաղում է, ջարդում... Այդպես էլ Ադրբեջանը վարվեց, երբ գրչի հարվածով ստացավ Ղարաբաղը:

- Մեզանից շատերը սովետի ժամանակ ապրած մարդիկ են, եղբայրության ու խաղաղության գաղափարներով դաստիարակված: Բայց էն, ինչ տեսել ենք էդ գաղափարների հետ կապ չունեին:
- Ես չեմ ուզում խաբվել, իսկ դրա հավանականությունը մեծ ա. թուրքը շատ ուժեղ դիվանագետ ա, ախր:
- Մենք մի թուրք հարևան ունեինք, ասեց. «Ես քեզ չեմ սպանի, բայց իմ արյունը վատ արյուն ա, ուրիշին կուղարկեմ, որ քեզ սպասի...»
- Մենք ֆեոդալական հասարակակարգ չենք ուզում...
- Ադրբեջանցիները պարտվել են, ու պարտվողի բարդույթով իրենց երեխաների մեջ ագրեսիա են դաստիարակում:
- Եթե ադրբեջանցին խորոված է անում, հայի ձեռքը պիտի չդիպչի... էլի շարունակե՞մ...
- Մեր բերած օրինակները պատմական փաստեր չեն էէէ, այլ մեր մաշկի վրա զգացած ցավեր:
- Երբ երկու մարդ իրար չի վստահում, բախման վտանգ միշտ էլ կա: Նույնը ժողովրդի պարագայում:
- Ինչքան հեռու լինեն մեզանից, այնքան ապահով: Պետք է նրանց հեռվացնել, ոչ թե մոտեցնել:
- Նախկինում մենք մեր պատմության մասին ոչինչ չգիտեինք, մեզ լրիվ ուրիշ պատմություն էին ներկայացնում:
- Ադրբեջանում նույնիսկ սովետական ժամանակներում ադրբեջանցի երեխաները ասում էին «Հայերը դուշման են»
- Ցանկացած հայ մադու գիտակցությունը մթագնում է, երբ նա լսում է «ԼՂ-ը դառնում է Ադրբեջանի մաս» արտահայտությունը:
- Կարիք չկա, որ Ադրբեջանի մաս դառնանք, քանի որ մարդիկ իրենց կենսական կարիքները բավարարելու, անվտանգ ապրելու համար արդեն իսկ ադրբեջանական տարրը դուրս են շպրտել այս հողից:
- Երկրորդ սցենարը գառի գլխին գայլի խրատն է հիշեցնում:
- Անկախ կոչվենք ու կործանվե՞նք: Սա անիմաստ սցենար է:
- Հայը երբևէ Ադրբեջանի կազմում իրեն լիիրավ հայ չի կարող զգալ:
- Լեզու, դավանանք և ապրելակերպ: Սրանք այն հիմնական գործոններն են, որոնք երկու էթնիկական խմբերին համեմատելիս պետք է հաշվի առնել: Բոլոր երեք գործոնների առումով էլ անհամատեղելի ենք:
- Ես Բաքվից փախստական եմ, Վեզիրովն ասում էր, որ արյան գնով վերցրած հողը հետ չեն տա, բա ինչի՞ մենք տանք:
- Ինքնավար հանրապետության կարգավիճակով այս ամենը տրվում էր, իսկ իրականում ինչու նման բան կա՞ր: Այն ժամանակ էլ էին ասում, որ կլինի, բայց իրականությունն այլ էր:
- Երկրոդ սցենարի դեպքում Ղարաբաղը հայաթափելու են ու այն էլ նոր թափով:
- Մինչև շարժումը մեր միակ հայերեն հաղորդակցումը եղել է միայն մի ժամ ռադիոեթեր, մնացած ամբողջը ադրբեջանական էր:
- Երկրորդ սցենարը կնշանակի մեզ ձուլել ադրբեջանցիների հետ, ու վերջ, կպրծնենք:

- Եթե ես իմանամ, որ թեկուզ մի փախստական կգա Ծուշի, ես իմ ընտանիքը հենց նույն օրը կտանեմ Էստեղից:
- Կա նաև արտագաղթի մեծ վտանգ տարածքներ հանձնելու դեպքում, եթե մարդիկ իրենց ապահով չզգան, կթողնեն ու կհեռանան այստեղից:
- Տաս-քսան տարին բավարար է, որ ադրբեջանցիները գերակշռող մաս կազմեն ցանկացած տարածքում:
- Մենք ամենասկզբում ցանկանում էինք հարցը խաղաղ լուծել: Է, էն ժամանակ համաձայնվեին հանրաքվե անեինք:
- Այսօր մենք համագործակցում ենք ադրբեջանական փախստականների կազմակերպությունների հետ, և նրանք բաց տեքստով ասում են, որ մենք բոլոր միջոցները կիրառելու ենք, որ «այդ հանրաքվեն անենք մեր օգտին»:
- Չորրորդ սցենարի ամենամեծ վտանգը փախստականների հարցն է, էլի կգան կլցվեն, հետո ռեֆերենդումով Ղարաբաղը կվերցնեն, հայերն էլ թուրքին ճանաչելով կթողեն իրենց տներից կգնան:
- Շարժումը սկսելուց առաջ արհեստական բերեցին տներ սարքեցին, թուրքեր լցրեցին, հիմա էլ ասում են հետ են գալիս, պա՞հ, իրանք ես տարածքում ի՞նչ գործ ունեն:
- Հինգերորդ սցենարը նույնն է, ոնց որ տունդ դնես վարկի տակ, փող վերցնես, բա որ ադրբեջանցին իրա խոստումը չպահի, ի՞նչ, տունս գնա կորի՞:
- «Բարեկամության» վերսկսումը թշնամության նոր ալիք կծնի:
- Ժամանակի ընթացքում մեր երեխաների հոգեբանությունն էլ է փոխվում: Մենք մոռանում ենք, նրանք՝ թշնամանք սերմանում:
- Բանակցությունների ընթացքում մենք անընդհատ համաձայնվում ենք զիջումների ու դրանից Ադրբեջանը ավելի է լկտիանում:
- Ադրբեջանը ձգտում է մեր հակամարտությունը հասցնի համայնքների հակամարտության: Ու եթե նման բաներ են գրում հայկական մամուլում՝ ողբամ այդ մամուլը:
- Ադրբեջանական լրատվամիջոցներով ամեն օր լսում ենք, որ իրենք ուզում են վերադառնալ ու պատրաստվում են պատերազմի:
- Հայ ու ադրբեջանցի սերունդները դաստիարակվում են տարբեր պատմությամբ, հակամարտությունն այս պայմաններում չի դադարի, պետք է միջազգային կառույցները աշխատեն ճշտել մեր պատմությունը, մեր պատերազմի ճիշտ պատմությունը:
- Էս պահանջները ազգայնամոլների ու ադրբեջանցի ղեկավարների ցանկությունն է: Հասարակ ժողովուրդը թքած ունի ամեն ինչի վրա:
- Իզուր էլ զոհվեցին մեր ամուսինները ու իրենց հողը պահպանեցին...ՄԵՆՔ իրենց տվածը չենք ուզում, թող թողեն մենք մեր խելքով աշխատենք:
- Ադրբեջանցիները կխաբեն ու հայաթափ կանեն: Նախիջեւանի օրինակն արդեն հերիք է:
- Չէ՞ որ Սովետի ժամանակ հենց երկրորդ սցենարն էր էլի... ի՞նչն ա փոխվել հիմա, որ հավատանք:

- Եթե համաձայնվենք չորրորդ սցենարին, Ադրբեջանը կմտածի, որ եթե այսքան զիջել ենք, էլի կզիջենք, ու ավելի մեծ պահանջներ նորից կդնի մեր առջև:
- Թուրքիան գնալով մեր դուռն ա թակելու, քանի որ դեպի արևմուտք ճանապարհն անցնում է հենց Հայաստանին սիրաշահելու միջոցով:
- Մեր երեխաները հայկական դպրոց պիտի հաճախեն, հայ պիտի մեծանան: Ադրբեջանի կազմում գտնվելով դա հնարավոր չէ:
- Իրենց բոլոր տարբերակներում կա ցամաքային կապը, այսինքն Ադրբեջանին Նախիջեւանի հետ ինչ կապ տանք, ինչի՞ համար, որ մեր թիկունքից հարված ստանա՞նք:
- Սա սխալ մոտեցում է, մենք ժամանակի մեջ ամեն բան կկորցնենք: Դրան ավելացրեք նաեւ այն, որ թիկունքից հարվածի են նախապատրաստվելու՝ Նախիջեւանի հետ կապ ունենալու դեպքում: Իսկ մեզ էլ միայն մի փոքրիկ ցամաքային կապ մնա՞:
- Սա թակարդ է մեզ համար:
- Ղարաբաղցին որ մեկ հավատը կորցնում է, վերականգնելն արդեն շաաաատ դժվար է...
- Ռմբակոծումների ստրեսը մեզ հերիք էր... մեր երաշխիքը մեր բանակն է:
- Նույնիսկ Սովետի ժամանակ Ղարաբաղին ուղղված որևէ գումար նպատակին չի ծառայել:
- Ես Ղարաբաղում բարեկամներ ունեմ: Ապեր, նրանք վաբշե թուրքին չեն ընդունում: Նրանք իրար հետ կարալ չեն ապրել ...
- Մեր հարևաններն են փորձել զենքի ուժով մեր իրավունքները ոտնահարել, բայց ակնհայտ է, որ դա իրենց չի հաջողվել:
- Իրենք չեն ասում բանակցություններում, թե չեն ճանաչում մեր անկախությունը, որովհետեւ բան չենք տալիս դրա դիմաց, որովհետեւ չեն համարձակվում ասել, որ դրանք մեր պատմական հողերն են:

Ադրբեջանցիները չեն վստահում հայերին

- Հայաստանը զինադադարը խախտում է շատ հաճախ:
- Հայաստանը զինադադարը չի պահպանում:
- Հարևան երկիրը զինադադարը չի պահպանում:
- Հայաստանը ԼՂ-ն պաշտոնապես ճանաչում է որպես պետություն:
- Նրանք միշտ խախտում են զինադադարը:
- Երբ փոխզիջման ենք գնում, նրան ավելին են պահանջում:
- Ես չեմ կարող ապրել նրանց հետ:
- Մենք փոխզիջումների ենք գնացել հին ժամանակներից :
- Հայերը նաև ցանկանում են անկախություն հռչակել Ղրիմում, դա նրանց բնութագիրն է
- Դա նրանց ապագան է:
- Հակամարտությունը կշարունակվի կենդանի մնալ, եթե անգամ այս կողմից հայկական բանակը կանգնի, մյուս կողմից՝ ադրբեջանականը:
- Մեզ պետք է, որ մեր ազգը հարմարավետորեն ապրի այնտեղ :

- Երաշխիքներ չկան:
- Սակայն դա վտանգավոր է :
- Հայերը իրենց երեխաներին մեր դեմ են տրամադրում:
- Նրանք նաև արդարացնում են, երբ իրենց զինվորները մեր կողմն են անցնում:
- Մեր նկատմամաբ ցեղասպանություն է իրականացվել:
- Եթե անգամ մենք խաղաղության համաձայնագիր ստորագրենք, մենք կկորցնենք մեր բանակի զոհերին, հետևաբար խաղաղ կարգավորումն ընդունելի չէ մեզ համար՝ հզորացնելով բանակը մենք պետք է ազատագրենք մեր տարածքները:
- Սակայն մենք պետք է հիշենք պատմական դեպքերը. հայերը կարող են ցանկացած ժամանակ մեր դեմ պատերազմ սկսել:
- Սակայն սա լուծում չէ, այն մեր համար աղետալի կլինի:
- Անուշադրության մատնված գոտի լինելով՝ ԼՂ-ն օգտագործվում է որպես ահաբեկիչների պատրաստման բազա, ինչպես նաև թմրանյութերի անօրինական փոխադրման տարածք:
- Մենք այս հարցին սառը վերաբերմունք ենք ցուցաբերել:
- Հետաքրքիր է, հայ երիտասարդությունը սա քննարկու՞մ է, թե ոչ:
- Մենք չենք կարող խուսափել պատերազմից. շատ վտանգավոր է ԼՂ-ում ռադիոակտիվ միջոցներ ունենալը:
- Փաստն այն է, որ Ղարաբաղը Հայաստանի ազդեցության ներքո է, իսկ Մինսկի խումբը չի կարող ազդել Հայաստանի վրա:
- Համաձայն Հայաստանի օրենսդրության ԼՂ-ն Հայաստանի մասն է:
- Եթե մենք անցյալի գիրկն ընկնենք, ապա շատ անգամ են մեր և հայերի միջև հիմնախնդիրներ առաջացել:
- Ադրբեջանը չի ճանաչում իր իրավունքը ԼՂ-ի ճակատագիրը որոշելու գործում: Դրա անկախությունը և Հայաստանի ներքո մնալու իրավունքը չի կարող աջակցություն ունենալ ոչ միջազգային կազմակերպությունների ոչ էլ Ադրբեջանի կողմից:
- Մենք չպետք է ցույց տանք մեր բարի դեմքերը:
- Ադրբեջանը չի հասկանում՝ ԼՂ-ի ճակատագիրը որոշելու գործում իր ունեցած իրավունքը:
- Մենք ունե՞նք երաշխիքներ, որ հայերը կրկին չեն հարձակվի մեզ վրա:
- Մենք չենք կարող ընդունել հաշտության բանակցություններն այն բանից հետո, ինչ նրանք արել են մեր նկատմամբ:
- Միլիոնավոր մարդիկ զոհ են դարձել ԼՂ-ում:
- Այն ցեղասպանությունը, որ հայերը մեր նկատմամբ գործեցին, նրանք ցանկանում են մեզ վերաբնակեցնել:
- Ոչ պատերազմ և ոչ խաղաղություն կարող է լինել:
- Հայաստանը ցանկանում է, որ Ադրբեջանը թուլանա:
- Եթե անգամ խաղաղությունը վերականգնվի, ազգերի միջև վստահությունը երբեք չի վերականգնվի:
- Հայերը մինչև վերջ կմնան մեր թշնամիները:
- Այս պահին ուժն է կառավարում շուկայում:

- Բռնագրավվման գործոնը ներկայացնում է Հայաստանին որպես ագրեսոր:
- Եթե ամեն ինչ կարգավորման ենթակա լիներ Ադրբեջանի և Հայաստանի մակարդակով, ապա այն վաղուց լուծված կլիներ:
- Եթե մենք անգամ ապրենք հայերի հետ, մենք չպետք է մոռանանք անցյալը և այն ինչ նրանք արել են մեր նկատմամբ անցյալում:
- Մենք գիտենք, որ հայերը խորամանկ են:
- Մենք պետք է հայերին ընդունենք ինչպես նրանք կան և ներազդենք նրանց վրա նույն կերպ:
- Հայաստանի հետ բանակցությունն արդյունք չեն ունենում:
- Պարզապես Հայաստանի Հանրապետությունը սրա հետ չի համաձայնվի:
- Հայաստանի Հանրապետությունը ցանկանում է կառուցել մեծ Հայաստանի Հանրապետություն:
- Հայաստանի հետ կարող է ցամաքային կապ հաստատվել:
- Համաձայն այս առաջարկի մենք չպետք է մոռանանք անցյալի մասին:
- Հայերը միշտ խուսափում են քննարկումներից:
- Մեր պետության հասարակությունը պատրաստ չէ դրան:
- Անհնարին է փոխել Ղարաբաղում ապրող հայերի կարծիքը:
- Եթե մենք որոշենք ամեն ինչ խաղաղ ճանապարհով անել, հայերը կշարունակեն անել այն, ինչ մտածում են:
- Մեր հուշարձաններից ոչ մեկն արդեն չի պահպանվել:
- Քանի որ նրանք մեզ հետ խաղաղ չեն կարող ապրել:
- Ադրբեջանցիներն երբեք չեն կարող ապրել Հայաստանում:
- Մենք նրանց ամեն ինչ տվել ենք, սակայն նրանք վախկոտ էին և այդպես էլ վախկոտ կմնան:
- Վստահությունը և անվստահությունը բանակի ներգրավման հարցեր են: Եվ այս բանակում ոչ մի հայ զինվորիանդեպ վստահություն չկա:
- Մենք կորցրել ենք մեր վստահությունը հայերի նկատմամբ այս հարցում:
- Ես գտնում եմ, որ մենք երբեք ի վիճակի չենք լինի ապրել հայերի հետ: Դա անհնար է:
- Նրանք այնքան արյուն են թափել: Նրանք նույնպես չեն ցանկանա մեզ հետ ապրել:
- ԼՂ-ի վերաբերյալ բանաձևում մենք կարող ենք չընդունել և համաձայնել Հայաստանի և ոչ մի պայմանի հետ: Մենք ավելի ուժեղ ենք և պետք է ցույց տանք մեր ուժը անհրաժեշտության դեպքում:
- Մի անգամ մի անգլիացի դիվանագետ ասել է, որ եթե անգամ հայերը շատ քաղաքավարի են և բարձր մշակույթ ունեն, նրանք երբևէ չպետք է իշխեն որևէ այլ ազգի՝ դա այդ ազգի համար ողբերգություն կլինի:

Հայերը վստահում են ադրբեջանցիներին

- Հայերը և ազերիները եղբայրներ են եղել...նրանց կռվեցրեցին:
- Մյուս կողմից էլ ես համաձայն չեմ, որ մենք չենք կարող իրար հետ ապրել՝ այստեղ ադրբեջանցիներ են եղել և շատ խաղաղ ապրել ենք

- Հայաստանի և Ադրբեջանի մայրերը պետք է սկսեն երկխոսություն, քանի որ մայրերն անձնապես են կրում պատերազմի կորուստները:
- Երկխոսություն պետք է սկսեն ոչ միայն երկրների ղեկավարները, այլև հասարակական ու մշակութային կազմակերպությունները, քանի որ կարևոր է, որ առաջին հերթին ժողովուրդները լեզու գտնեն, որ թե նրանց առաջնորդները:
- Առաջ ապրել ենք, չէ՞, կողք-կողքի:
- Եթե Ադրբեջանը այս պարտավորությունները ստանձնի ու հետո խախտի, նա կկորցնի իր միջազգային հեղինակությունը, այդ իսկ պատճառով եթե խոստանան, միանշանակ չի կարելի ասել, որ կխախտեն իրենց խոստումը:
- Իրականում, մենք շատ խաղաղ ապրել ենք ադրբեջանցիների հետ: Ժողովուրդը կապ չունի, քաղաքական գործիչներն են մեղավոր:
- Ադրբեջանցին, և ոչ թե Ադրբեջանը, չի ցանկանում պատերազմը վերսկսել:
- Ինչի ենք անհամատեղելի, միջազգային ճամբարում երիտասարդներով լավ էլ շփվում էին:
- Մենք դեմ չենք ադրբեջանցի ժողովրդին, դեմ ենք ադրբեջանական քաղաքականությանը, որ թշնամացնում է երկու ժողովրդին:

Ադրբեջանցիները վստահում են հայերին

- Ես կցանկանայի, որ նրանք մեր կողքին ապրեին
- Պետք է վերականգնել Հայաստանի հետ նախկին հարաբերությունները:
- Մենք պետք է ապրենք նրանց հետ:
- Մենք պետք է ջերմ զգացմունքներ վերածնենք Ղարաբաղի նկատմամբ՝ հասարակական կարծիքի միջոցով:
- Քանի որ նրանք մեր հարևան երկիրն են, մենք պետք է մերձենանք նրանց հետ:
- Ես երբեք ագրեսիվ չեմ լինի, եթե հայ հանդիպեմ:
- Ամեն դեպքում հայն էլ է մարդ:

Վստահություն կարող է լինել, եթե ...

Հայեր

- Հարցը միակողմանի հնարավոր չէ լուծել. բանակցություններ և փոխզիջումներ, սա է ճանապարհը:
- Պետք է կոնկրետ հասկանալ ինչ է նշանակում փոխզիջում: Չէ որ մենք երաշխիք չունենք որ վերադարձնելուց հետո խաղաղ կապրենք:
- Ես միանշանակ կողմնակից եմ բանակցությունների, իսկ բանակցությունները պետք է նպատակ ունենան, այդ նպատակը միայն պատերազմի բացառումը պետք է չլինի ...պետք է հստակեցվեն, թե ինչ ենք տալիս ու ինչ ենք ստանում դրա դիմաց
- Ժամանակ է պետք, որ Ադրբեջանի հասարակ ժողովուրդը վերաբերվի հայերին այնպես, ինչպես առաջ, այսինքն ոչ թշնամաբար:

- Հայերի ու ադրբեջանցիների կողք-կողքի ապրելու համար շատ ժամանակ է հարկավոր:
- Փոխզիջման գնալու ժամանակը գալու է, քանի որ առանց դրա հարցեր չենք կարող լուծել: Բայց մեզ երաշխիքներ են հարկավոր:
- Ժամանակին ադրբեջանցիներն ու հայերը շատ լավ են ապրել, բարեկամներ են եղել: Դա կարող է վերականգնվել , եթե իշխանություններն ինչ-որ բան անեն:
- Ես լավ հարեւանության կողմնակից եմ:
- Իսկ Ադրբեջանը ինչ որ կերպ փորձել է գործով երաշխավորել...
- Ադրբեջանի հետ համաձայն կլինենք միայն մեկ դեպքում եթե Բաքվում ստեղծվի հայկական թաղամաս, որտեղ տեղակայվեն փախստականները և նրանց փոխհատուցվեն բոլոր նյութական կորուստները:
- Ինչ էլ լինի՝ մենք հարեւաններ ենք, միասին ենք ապրելու: Բայց այս հարցը հիմնական լուծում դեռ երկար ժամանակ չի ունենա:
- Եթե ես բանակցող լինեի, կասեի. «Սևրի պայմանագիրը կատարեք, հետո ես կգցեմ, կբռնեմ, հավատամ ձեր երաշխիքներին, թե ոչ...»
- Կարծում եմ, եթե կա բիզնես, ապա հնարավոր չէ խզել կապը ազերիների հետ:
- Երիտասարդների միջև երկխոսություն է պետք:
- Ժողովուրդն ասում ա, ինչքան էլ վատ հարևան ունենաս, դրա հետ յոլա ես գնալու:
- Եթե մենք սկսենք մեզ վստահել, ամեն մի հարց կլուծվի: Մեր ղեկավարները պիտի հասկական, որ քանի դեռ մենք չենք վստահում ինքներս մեզ, մեր թշնամին միշտ էլ մեր ներսից կլինի, ոչ թե դրսից:
- Պետք է սերնդափոխություն լինի, որ կարողանանք ադրբեջանցիների հետ շփվել:
- Հարևանություն անենք թուրքերի հետ, բայց բարեկամություն՝ ոչ մի դեպքում:
- Ստատուս քվոի փոփոխության առաջին պայմանը երկու կողմերի միջև վստահության հաստատումն է:
- Հարևանները պետք է կարողանան միասին ապրել, հասկանալի է, որ փոխհամաձայնություն է հարկավոր: Բայց դրանց ծայրահեղական հայացքները շատ են խանգարում: Միջազգային հանրությունը պետք է չեզոք լուծում գտնի, թեկուզ ժամանակավոր:
- Մենք կարող ենք հարևանություն անենք, բայց ոչ միասին ապրենք...
- Եթե էսօր Նախիջևանում հայեր ապրելիս լինեին, ես կվստահեի Ադրբեջանին:
- Հայն ու թուրքը այսօր խաղաղ են ապրում ու հանգիստ վերաբերում մեկմեկու՝ կոտորածից հարյուր տարի անց: Առնվազն այդքան էլ պետք է անցնի մեր դեպքում
- Տղան էլ է ծնողներից բաժանվում, առանձին ապրում: Ի՞նչն է խանգարում, որ մենք հարեւաններ լինենք:

- Դրսում հայերն ու թուրքերը նենց լավ հարևանություն են անում, նենց ջերմ հարաբերություններ ունեն, մեր ջրերը նույն առվով չեն հոսում միայն այս հողում:
- Մենք պետք է փորձենք նորմալացնել հարաբերությունները, սակայն չպետք է մոռանանք, որ թշնամին ատամները սրած մեզ է սպասում:
- Թշնամությունը անցնելու համար պետք է սերունդներ անցեն:
- Գործն է կարևոր, ոչ խոսակցությունները:
- Եթե մենք հարեւաններ ենք, կողք-կողքի ենք ապրելու, ինչ-որ փոխզիջումների է պետք գնալ:
- Դրանք 96 տարի մեր հողերը պահել են իրենց, թող դեռ մենք այդքան տարի մեր ձեռքբերումը պահենք, հետո կխոսենք:
- Հարևանին չեն ընտրում, այլ համակերպվում են... ուզենք, թե չէ՝ մի փոխզիջում պիտի անենք:
- Չորրորդ սցենարով հողերը պետք է վերադարձվեն աստիճանաբար, որոշակի երաշխիքներ ունենալու համար:
- Սա էլ մեր թելադրանքն է: Եթե ամենը մեզ երաշխավորվի՝ մենք կարող ենք որոշ հատվածներ հանձնել:
- Ադրբեջանի ժողովրդի ձայնն էլ չի հասնում բանակցային սեղան. այդ պատճառով էլ մենք այսօր շատ հեռու ենք հարցի լուծումից:
- Ալիևին հարկավոր է հասկացնել, որ իր ժողովրդի մեջ բարի սերմեր գցի, ոչ թե թշնամություն սերմանի:
- Ադրբեջանի ագրեսիվ քարոզչության պատճառով ևս երկու-երեք սերունդ թշնամացած լինելու հայերի նկատմամբ: Պետք է հասնել նրան, որ այնտեղ էլ խաղաղություն քարոզվի:
- Երկու հարևան, որ ամեն առավոտ իրար չկարողանան ասել բարև, էլ ի՞նչ:
- Ցանկացած խնդրի լուծում հնարավոր է միայն բանակցությունների միջոցով և փոխզիջումների դեպքում, բայց այս խնդրի լուծումը կախված է հիմնականում ադրբեջանական կողմի զիջումներից:
- Հարցն այն է, թե ով է առաջինը փոխզիջման գնալու:
- Մենք պատրաստ ենք խելամիտ զիջումների:
- Առանց փոխզիջման հնարավոր չէ հասնել արդյունքի
- Հասկանում ենք, արյուն ենք թափել, տանջվել ենք, բայց պետք է իրատեսորեն նայել... առանց փոխզիջման հնարավոր չէ:
- Արտերկրում բիզնեսի առումով ազգային որևէ խտրականություն այլևս չկա:
- Մենք արդեն այսօր քայլ անում ենք. մենք քննարկում ենք, ուրեմն ուզում ենք, որ մեր երիտասարդներն ավելին իմանան...մենք մի խնդիր ունենք. ի՞նչ անել, որ ադրբեջանցի երիտասարդն էլ մեր մասին իմանա:
- Բանակցային սեղանի շուրջ բնական է, որ զիջումներ պետք է լինեն, եթե ինչ-որ բան չզիջենք, այս հարցը երբեք չի լուծվի:
- Ամեն դեպքում երկու կողմն էլ պետք է զիջման գնան: Դրա համար երկու ազգն էլ իրար դարդերը պետք է իմանան:
- Մենք գիտենք, որ առանց փոխզիջման հարցը չի լուծվի, բայց պետք է հստակեցվի, թե դա ինչ աստիճանի զիջում կլինի:

Ադրբեջանցիներ

- Ադրբեջանի կառավարությունը պետք է պաշտպանի իր քաղաքացիներին, անկախ այն բանից, թե որտեղ են նրանք ապրում
- Էմոցիաները հանդարտեցնելու համար ժամանակ է պետք
- Հայերը պետք է նկատեն, որ մենք հանդուրժող ենք
- Ժողովրդավարությունը նշանակում է, որ հանրության իրավունքները պետք է հարգվեն
- Երկրի զարգացմանը խթանելու համար պետք է փոխզիջման գալ
- Պետք չէ ագրեսիվ մոտեցում ցուցաբերել
- Եթե մենք կարգավորում ենք ուզում, մենք պետք է փոխզիջման գնանք:
- Ադրբեջանի և Հայաստանի միջև հարաբերությունները պետք է կառուցվեն փոխադարձ ըմբռնման հիման վրա:
- Միջազգային կազմակերպությունները ֆինանսական միջոցներ են հատկանում՝ պարզելու մարդկանց կարծիքները հիմնախնդրի վերաբերյալ, ինչն արվում է այն նպատակով, որ մարդիկ զանգվածաբար սառեն հիմնախնդրի նկատմամաբ և մոռանան այս ողբերգության մասին:
- Խաղաղություն հաստատելու համար մենք պետք է զիջումների գնանք:
- Ես կարծում եմ, որ փոխզիջումն Ադրբեջանին պետք է հիմնված լինի լայն համագործակցության վրա:
- Եթե Հայաստանի հետ համագործակցությունը մեզ որևէ օգուտ չտա, մենք չպետք է կախում ունենանք այս համագործակցությունից:
- Այս համագործակցությունը պետք է գնահատվի Ադրբեջանի կողմից տնտեսական օգուտի տեսանկյունից:
- Պետք է փոխզիջում լինի:
- Սակայն միայն հակամարտության անհրաժեշտ կարգավորումից հետո մենք պետք է սկսենք օգտագործել ավելի հանդուրժողական մոտեցումներ՝ մյուս հիմնախնդիրները լուծելու համար:
- Տնտեսական նախաձեռնությունները, որոնք պետք է իրականացվեն Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ:
- Եթե մենք որոշ մակարդակով չզիջենք, մենք չենք կարողանա արդյունքի հասնել:
- Եթե խաղաղություն լինի ադրբեջանցիները և հայերը կարող են միասին ապրել:
- Հենց որ Զանգեզուրի տարածաշրջանը տրվեց Հայաստանին, մենք նորից վերականգնեցին մեր հարաբերությունները նրանց հետ:
- Երկու կողմերից էլ փոխզիջման փորձ պետք է արվի:
- Ինձ հետաքրքրում է Հայաստանի հասարակական կարծիքը:
- Սրա կարողությունը երիտասարդ սերնդի վրա է:
- Եթե մենք ասենք, որ Ղարաբաղում միայն պետք է ադրբեջանցիներն ապրեն, ճիշտ չի լինի:
- Արդյունքում յուրաքանչյուրը պետք է զարգանա, հայերը պետք է ունենան նույն իրավունքներն ինչ մենք ունենք:

- Հայաստանը հարաբերություններ է հաստատել միայն Ադրբեջանի հետ և կարող է քննարկել համագործակցության այդ հնարավորությունները:
- Մինսկի խումբը պետք է հիմնական դերակատարում ունենա հակամարտության կարգավորման գործում և պետք է ներկայացնի կարգավորման ճշգրիտ մեթոդներ:
- Եթե Մինսկի խումբը որևէ բան չի կարող անել, ապա այն պետք է լուծարվի:
- Եթե հայերի միտքը փոխվի, դա մեզ համար ձեռնտու կլինի:
- Մենք ուզում ենք, որ ամեն ինչ լինի այնպես, ինչպես 1987թ.-ին էր. մենք խաղաղ մթնոլորտ ենք ուզում:
- Եթե խաղաղություն լինի, մենք ևս պետք է ինչ-որ բան տանք:
- Հայերի կոնկրետ առաջարկներ պետք է ընդունվեն:
- Եթե հայկական կողմը գնա փոխզիջումների, ապա դա կնշանակի, որ հնարավոր է համագործակցել նրանց հետ տարբեր ոլորտներում, ինչպես եղել է նախկինում:
- Մենք պետք է բանակցենք ոչ թե Հայաստանի հետ, այլ անմիջականորեն ԼՂ-ի հետ:

Վստահությունն ու անվստահությունը այլ գործող անձանց հանդեպ

Հայեր

- Երաշխիքները կմնան միայն թղթի վրա:
- Ես մի բան գիտեմ. հույսդ պետք է մեզ վրա դնել. ոչ մի միջազգային հանրություն էլ ուրիշի մասին չի մտածում. ամեն մեկն էս դարում իր «բախչեն տի ջրի»...
- Սերբիան հաղթել էր պատերազմում, բայց միջազգային հանրությունը այնպես արեց, որ Սերբիան ամեն ինչ կորցրեց: Եկեք այս հարցը արագ լուծենք ու չթողնենք միջազգային հանրությունը իր սև գործը անի:
- մենք վստահություն չունենք խաղաղապահ ուժերի նկատմամբ, մենք ինքներս պետք է պահենք մեր հողը
- Ես շատ կարևորում եմ միջազգային կառույցների դերը, բայց դրանց այսօրվա գործունեությունը պետք է վերանայել:
- Կողքից երաշխավորները ոչինչ են: Պայմանագրերը կնքվում են, բայց մնում են թղթի վրա:
- Պետք չէ վստահել նույնիսկ գերտերություններին: Նրանցից յուրաքանչյուրը ունի սեփական շահերը, որոնք ոչ մի ընդհանրություն չունեն մեր շահերի հետ:
- Ես միջազգային իրավունքին կամ միջազգային հանրության երաշխիքներին չեմ հավատում: Եվ իմ թերահավատությունը ապացուցվում է պատմությամբ:
- Կար երաշխիք, որի անունը Բուշ էր. ինչպիսին ինքն էր, էնպիսին էլ իր տված երաշխիքները:

- Ապառազմանակացված տարածք եթե խաղաղապահ ենք մտցնում, նույն Աբխազիայի պատմությունն է դառնում: Երաշխիքներ չկան
- Կոնկրետ ես անվստահություն ունեմ ուրիշ ազգերի ու խաղաղարար ուժերի նկատմամբ:
- Եթե միջազգային հանրության դիրքորոշումը բարենպաստ լինի, հայերը և ադրբեջանցիները կարող են խաղաղ գոյատևել իրար կողքի, բայց միջազգային հանրությունը որդեգրել է հարևան ազգերին իրար թշնամացնելու քաղաքականություն, որպեսզի մեր տարածաշրջանի ժողովուրդները ինքնաոչնչացվեն:
- Ոչմի բարձրագույն երաշխիք չի կարող այս սցենարն ընդունելի դարձնել:
- Միջազգային հանրությանն էլ չենք կարող վստահել, նրանք էլ են իրենց խոստումը խախտել, օրինակ Ստալինը պայմանագիր կնքել էր չհարձակվելու մասին ու երկու ամիս հետո իր խոստումը խախտեց, ոնց իրենց վստահենք:
- Սա Ամերիկայի կառավարությունն է կազմակերպել, այս քննարկումը:
- Մենք համոզվել ենք, որ Ղարաբաղի և Ամերիկայի ժողովուրդին չենք կարող վստահել:
- Ոչ մի երաշխիքների պետք չէ հավատալ
- Մեր մեջ որ ՆԱՏՕ-ն է պետք, ոչ էլ ԿԱՏՕ-ն է պետք: Մենք ու մեր ուժերը:
- Մենք պետք ա Իվանի պոչը բռնենք, այս պարագայում Ռուսաստանի. այս սցենարին էլ չեմ հավատում, այս սցենարում ընդունելի բան չկա:
- Եթե 15-ին անգլիական նավերը մեր լեռները չբարձրանային, հիմա ի՞նչ. լեռը հարթվե՞ց, ծով դարձա՞վ... չէ՛, եղբայր, մենք մեր հույսը մեր վրա պիտի դնենք, ոչ մի կողմնակի ուժ...
- ՀՀ- ի հենարանը միայն կարող է լինել Ռուսաստանը: Այժմյան իրավիճակը պետք է պահպանել: ԼՂ-ն արդեն անկախ հանրապետություն է, և պետք է կնքվի խաղաղության պայմանագիր: Միջազգային կազմակերպությունները, ինչպես նաև այլ երկրների կառավարությունները հետաքրքրվում են ԼՂ-ով, իսկ դա նշանակում է, որ զարգացում կարող է լինել:
- Մեծ ազգերին միշտ ձեռնտու է եղել փոքր ազգի եզը մորթել իրենց մի շամփուր խորովածի համար:
- Մենք չենք խերվել. գերտերություններն իրենց շահերից են միշտ խոսում, բայց երեսներիս փոշի են թափում, բայց մեկ ա, մենք էլի ձեռներս մեկնում ենք ու սպասում, թե երբ է Եվրոպան մեզ օգնելու...Սերբիան տեսած մարդիկ ենք, ինչպես կարող ենք հավատալ այս միջազգային ուժերին:
- Վստահել բոլոր տեսակի երաշխիքներին առնվազն անմտություն է:
- Եթե նույնիսկ Ադրբեջանն ընդունի Ղարաբաղի կարգավիճակը, ոչ մի երաշխիք չկա, որ նորից պատերազմ չի սկսվի:
- Սուտ քաղաքականություն, սուտ խոստումներ... չպետք է հավատալ:
- Ղարաբաղյան հարցը կլուծվի այնպես, ինչպես որոշեն ԱՄՆ-ն ու Ռուսաստանը, էլ ինչ իմաստ ունի մեր կարծիք արտահայտելը, մեկ է որոշողը մենք չենք:

- Խոշոր տերությունները միշտ էլ Ադրբեջանին կպաշտպանեն, որովհետեւ այնտեղ նավթ կա:
- Երեք մարդ մի գիշերվա մեջ մի հզոր կայսրություն տապալեցին, մի գիշերում սոցիալիզմից կապիտալիզմի անցան... էլ ինչի պիտի ուրիշի վրա հույս դնենք:
- Նույնիսկ հաշտության պայմանագրի ստորագրումը չի բացառում պատերազմի վերսկսման վտանգը: Մենք միշտ պետք է պատրաստ լինենք պատերազմին:
- Թուրքիան միշտ կդրդի, որ Ադրբեջանը սկսի պատերազմ:
- Ոչ մի երաշխիք չունենք, որ գերտերությունները մեր մեջքին կկանգնեն:
- Պատմությունը ճշգրիտ դիպված արդեն մեզ տվել էր, երբ ի լուր միջազգային հանրության անգամ մեր սուվերենությունն են ճանաչում, բայց իրականում այլ իրողություն է ձեւավորվում: Նրանց վստահել չենք կարող:
- Սումգայիթը եղավ, երբ մենք Խորհրդային Միության կազմում էինք, մարդկանց պարզապես բնաջնջեցին: Ոչ մի խոստումի, ոչ մի երաշխիքի հավատալ չենք կարող:
- Նույն վիճակը կկրկնվի, ինչ եղել է: Մեր անվտանգության գոտին թուլացնել չի կարելի:
- Միջազգային ուժերին ոչ մի պարագայում չիիիիի կարելի վստահել, ավելի լավ է մեր և Ադրբեջանի զորքերը վերահսկողությունն իրականացնեն:
- Գերտերությունները շատ հաճախ ուժեղի կողմն են բռնում: Ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր:
- Հիմա Թուրքիան մեր հողերի «վարձերը» տվե՞լ ա, որ հավատանք տարբեր տեսակի երաշխիքներին:
- Ի՞նչ երաշխիքի մասին է խոսքը: Մինչև հիմա էդ որ երաշխիքն ա պահպանվել:
- Միջազգային հանրությունը շատ խոստումներ է տվել, բայց երբեք դրանք չի կատարել և չի կատար:
- Միջազգային ուժերին չի կարելի հավատալ. եկեք հիշենք Կիպրոսի նախադեպը, իրանք իրանց աչքերը կփակեն, որովհետև նավթային շահեր կան:
- Կներեք, բայց Թուրքիա թե Ադրբեջան ինձ համար նույն «զիբիլն» են... բայց Թուրքիան թող իր քիթն էս հարցում չխոթի:
- Երաշխիքներ չկան, որ ճանապարհները կբացվեն
- Չորրորդ սցենարը դա 18 թվականի կրկնողությունն է, հետո էլ մի նոր Ռուսաստան կգա ու մի գիշերվա մեջ էլի Ղարաբաղը կբռնակցի Ադրբեջանին:
- Ի՞նչ ուժերով է ապահովվելու այդ նշված երաշխիքները, անհնարին է:
- Փորձը ցույց է տվել, որ միջազգային հանրությունն ի զորու չէ նման հարցում երաշխավոր լինել:
- Մենք ո՛չ Ադրբեջանին ենք վստահում, ոչ էլ խաղաղապահներին: Խաղաղապահները մեզ չեն պահելու, այլ Ադրբեջանին. «Կոլցո» օպերացիան մենք հիշում ենք:

- Սա էլի դառնալու է երրորդ սցենար: Մեզ պետք չի, որ հարեւանս թուրք լինի: Խաղաղապահն ինձ հո չի՞ պահի:
- Այ մարդ, մենք միջազգային խաղաղապահներից մի անգամ արդեն խերվել ենք, Էնպես որ հիմա տակից չենք կարողանում դուրս գանգ. հերիք ու բոլ ա...
- Էդ խաղաղահ ռուսն ի՞նչ արեց, որ Սումգայիթը կանխի:
- Մենք խաղաղապահներին չենք վստահում: Մեր բանակն է մեր պահապանը:
- Նույնիսկ միջազգային երաշխիքների դեպքում ադրբեջանցիների ցեղային բնավորության գծերը չեն փոխվի:
- Հիմա թուրքը այնպիսի քաղաքականություն է վարում, որ եթե խաղապահներ գան, նրանք խաղապահներին կկաշառեն:
- Մենք միջազգային հանրությանն այդքան չենք վստահում, իրենք այդ ուժը չունեն, որ պաշտպանեն մեզ: Մենք ինչ է, մեր բանակից հրաժարվե՞նք: Այդ ով է իր ընտանեկան վեճը հարեւանի օգնությամբ լուծում:
- Չորրորդ սցենարը լրիիիիիիիիիիիիիվ աղվեսություն ա:
- Միջազգային հանրությունը և նրա կարծիքը պետք չի մեզ:
- Իրավական ճանաչում թե՞ անվտանգություն... սրանք բախվում են միմյանց, սակայն միայն արտաքուստ, եթե կուլ գնանք այս խաբկանքին, ծուղակի մեջ կհայտնվենք:
- 1862 թվականի Զեյթունի պայմանագիրն է հիշեցնում, հիմա ո՞ւր է զեյթունցի հայը:
- Ռուսները արդեն մի անգամ եղել են «խաղաղապահի» կարգավիճակով, ու տեսել ենք նրանց գործունեությունը:
- Էտ խաղաղապահ ուժերը Թուրքիայում չէի՞ն, որ հայերիս էս օրը գցեցին:
- Եղել են մեզ մոտ խաղաղապահներ, ինչ-որ բերետներ, եսիմ ինչեր, վերցնում մեր երիտասարդներին, լցնում էին բանտերը, փոխանակ մեզ պաշտպանեին, մի բան էլ վնաս էին տալիս:
- Մենք մեր հույսներս ուրիշ երկրների վրա ենք դրել ու տուժել. եկեք էս անգամ էլ մենք մեր գլխի ճարն ինքներս տեսնենք ու կհամոզվենք, որ ամեն ինչ էլ լավ կլինի:
- Աշխարհի հումանիտար զարգացումը սուտ է: Այդ ի՞նչ է, որ մեզ պիտի աջակցի:
- Պատմականորեն մենք միշտ պարտվել ենք, երբ հույսներս ուրիշի վրա ենք դրել: Բայց, եթե մեզ ենք վստահել, հաղթել ենք, էս պատերազմն էլ ենք դրա շնորհիվ հաղթել:
- Չորրորդ սցենարը ընդունելի է, եթե անվտանգությունը երաշխավորվի ոչ թե Ադրբեջանի, այլ միջազգային հանրության կողմից:
- Գերտերությունների հակասությունները մեծ են: Ղարաբաղը Հայաստանի ռուսական կամ ամերիկյան կողմնորոշման հարցն է լուծում:
- Խաղաղապահ ուժերի պետք չի վստահել, սեփական զորքին պետք է վստահել:

- Մենք դարեր շարունակ այլ պետությունների դուռ ենք ծեծել՝ մոռանալով, որ նրանք իրենց հարցերը լուծելու համար օտարինն են զիջում, իսկ այդ օտարը միշտ մենք ենք լինում:
- Ղարաբաղյան խնդիրը մեծ տերությունների կողմից լարված ծուղակ է, որպեսզի տիրանան Անդրկովկասին. պետք է օգտագործենք ճիշտ տերություններին մեր խմդիրները լուծելու համար, օրինակ ապավինենք Ռուսաստանին, մեր շահերը համընկնում են, Թուրքիան էլ պատերազմի կողմնակից չէ, քանի որ ներքին խնդիրներ ունի:
- Հաշտության պայմանագիր է անհրաժեշտ, որը կերաշխավորվի միջազգայնորեն:
- Աշխարհին ձեռնտու է, որ մեր տարածաշրջանում խաղաղություն լինի, որպեսզի նավթի առևտուրը ապահով վիճակում լինի, այդ պատճառով պատերազմի գործոնը բացառվում է
- Եթե նույնիսկ մենք «լավանանք» Թուրքիայի հետ, այնքան չենք լավանա, որ Ադրբեջան-Թուրքիա հարաբերություններից ավելի սերտ և բարեկամական դառնան:
- Ղարաբաղի հարցի լուծումը մեծապես կախված է մեծ պետությունների դիրքորոշումից. այսօր նրանց մեր տարածաշրջանում թույլ պետություններ են հարկավոր:
- Վաղ թե ուշ մեծ տերությունների շահերը կփոխվեն՝ կապված Ադրբեջանի նավթի գործոնի հետ:
- Խնդիրները հենց խաղաղապահ ուժերից են էլի սկսում... Իրաքը մեզ դաս:
- Ամենակարևորն այն է, թե երաշխիք ասածն ինչպես է մեկնաբանվում:
- Մեզ ընդհանրապես չի հետաքրքրում միջազգային կառույցների կարծիքը, կարևորը մեզ լավ լինի, բացի այդ այլ երկրների փորձը նույնն է ցույց տալիս, որ միջազգային կառույցները ոչնչով չեն օգնում:
- Միջազգային հանրությունը ոչ մի բան չի կարող անի, սուտ է
- Փոքր ժողովուրդները իրենց հարցերը լուծում են գերտերությունների օգնությամբ: Մենք պետք է արտաքին ուժերի հետ այնպիսի հարաբերություններ ստեղծենք, որ իրենք հայանպաստ լուծման կողմնակից լինեն:
- Այն, որ գնդակը հիմա Թուրքիայի դաշտում է կեղծ թեզ է, քանի որ նրանք արդեն այնքան գոլ են խփել, որ իրեց ձեռնտու է այն պահել իրենց մոտ:
- Պատկերը փոխվում է, եթե Ադրբեջանն ու Թուրքիան նայում ենք որպես մեկ ամբողջություն:
- Տեսականորեն բոլոր պետություններն էլ հակառակորդներ են, հետևաբար խաղաղապահի մուտքը հարցի լուծում չէ...
- եթե Ադրբեջանում պայմանագիրը չեղյալ հայտարարի ու նորից պատերազմ սկսի, խաղաղարար ուժերը բավարար պայման չեն, քանի որ դրանք կարող են հեռանալ ու դրանք երկարաժամկետ հարցեր չեն լուծում
- եթե փոխզիջում պետք է լինի, պետք է երաշխիքները երկարաժամկետ լինեն, քանի որ խաղաղարար ուժերը երաշխիք չեն և կարող են մի օր դառնալ հակամարտության կողմ

- Անբավարար երաշխիքներ են հինգերորդ տարբերակում, դրա համար էլ ստատուս քվոն ավելի լավ տարբերակ է
- Եվրոպան կպաշտպանի...
- Եվրոպան տասնգինգ տարի առաջ ինչ արեց, որ հիմա անի...
- Ասում եք, հիմա Ադրբեջանը Ռուսաստանի ու Եվրոպայի հետ կպատերազմի, իսկ ես ասում եմ՝ ուրիշի ձեռին նայողը երբեք չի խերվել, որ մենք խերվենք...
- ՄԽ-ը, իմ կարծիքով, ավելի շատ գործում է ղարաբաղյան հարցի լուծումը ձգձգելու, քան կոնկրետ լուծում առաջարկելու ուղղությամբ
- Մենք միջազգային հանրության որոշակի մակարդակում ենթարկվում ենք «մանիպուլացիաների»: Ինչքան շատ մասնակից կա էս հարցում, էնքան հետաձգվում է լուծումը:
- Միջազգային հանրությունը միշտ էլ եղել է, բայց ցեղասպանությունը կանխել չկարողացավ:
- Ես են կարծիքին եմ, որ Հարավսլավիայի դեպքից հետո ոչ-ոքին վստահել պետք չի:
- Ես համաձայն եմ, որ արտասահմանն ունի ուժ՝ երաշխավորելու թույլերի անվտանգությունը:
- Եթե Թուրքիայի հետ սահմանը բացվի, թուրքերը ամբողջ առևտուրը կվերցնեն իրենց ձեռքը:
- Մենք ինչպես կարող ենք աշխարհին համոզել, որ նավթից հրաժարվի ու մարդկային գործոնը կարեւորի... չի ստացվի:
- Ադրբեջանը կողմնորոշվում են Թուրքիայի վարած քաղաքականությամբ, իսկ թուրք դիվանագետները ավելի փորձառու են:
- Այ որ ռուսը մեր մեջքին կանգնի՝ հարց չի լինի:
- Արդյոք միջազգային հանրությունը չի հոգնի ղարաբաղյան կոնֆլիկտից, ի՞նչ կլինի այդ դեպքում:
- Ես կարծում եմ, որ գերտերություններն ինչքան շատ խառնվեն, էնքան հարցը չի լուծվի:
- Միջազգային հանրությունը եթե լավն է, թող ժամանակին տային մեր հողերը:
- Մի հարց, էս աշխարհում նետրալ մարդ չկա, բա ի՞նչ, որ հենց էդ խաղապահը նետրալ չլինի...
- Մեզ պետք չի, որ մեծ տերությունները խառնվեն մեր հարցերին, ավելի լավ է, որ մենք ստանանք սփյուռքահայերի աջակցությունը ու համախմբվենք:
- Եթե հայկական զորքերը դուրս գան էլ ո՞վ է պահպանելու սահմանները:
- Փաստորեն այս դեպքում ևս մի երրորդ երկիր պետք է հրապարակ գա, որ վերահսկի խոստացած պայմանների իրագործումը:
- Աշխարհի գերտերությունները իրենց շահերից ելնելով մեկ հայանպաստ քաղաքականությունն են իրականացնում, մեկ՝ մեզ համար շատ անարդար ու անցանկալի:
- Տպավորություն է, որ միջազգային ուժերը շահագրգիռ չեն լուծել խնդիրը. երբ իրենց ցանկալի է՝ շահարկում են Արցախի հարցը:
- Հայկական հարցը մինչև հիմա թղթի վրա է...

- Մենք հենց արևմուտքին հակառակ պիտի ուժեղ լինենք:
- Ոչ մի միջազգային կազմակերպություն մեր ցավը չի հասկանում:
- Թուրքերին ի՞նչ են մեջ գցել, իրենք հստակ նախապայման են սա դարձնում սահմանները բացելու համար, մոռացնել տալով, որ սահմանը իրենք են փակել:
- Մեր թուլությունը հենց մեր դաշնակիցներին է պետք, այդպես վերահսկել հեշտ է... Էնպես, որ մենք մեր հույսը մեզ վրա պետք է դնենք, որ ոչ ոք մեզ «չքաշի...»
- Մենք մեր հարցը եթե չլուծեցինք, կողքից ոչ ոք չի լուծի: Օգնություն սպասելն անիմաստ է:
- Մեր տարբերությունն այն է, որ ադրբեջանցին շատ համբերատար է, դարեր շարունակ կսպասի իր նպատակին հասնելու համար, իսկ մենք «յա բախտի» ենք, դրսից ինչ թելադրում են, էն էլ անում ենք:
- Այդ ինչպե՞ս միջազգային հանրությունը թույլ չի տա մեզ ճնշեն, դրա ոչ մի մեխանիզմն էլ չկա: Այսօր այդ ո՞ր պետությանն ու ազգին է փրկում այդ միջազգային հանրությունը:
- Իրաքն էլ էր միջազգայնորեն ճանաչված երկիր, բայց ի՞նչ արեցին նրա հետ: Միջազգային իրավունքի սուբյեկտ դառնալը մեր անվտանգության խնդիրը չի լուծում:
- Վերջին երկու սցենարները միանշանակ նոր պատերազմի համար նախապարտրաստվելու ռազմավարություն է:
- Կոնֆլիկտի չլուծման պատճառներից մեկն էլ այն է, որ քաղաքականությունը որոշում են մեծ տերություններն ու կարևոր նշանակություն ունի նաև նավթը:
- Միջազգային հանրությունը եթե գա, Ադրբեջանի կողմը կբռնի, իրենք մեզ պետք չեն:
- Միջազգային հանրությունը իրականում լավ էլ հասկանում է, որ մենք արդեն կայացած պետություն ենք, գալիս են տեսնում են, բայց իրենց այս տարբերակը ձեռք չի տալիս, ուրեմն պետք չի գան, իրենք մեր կողմից չեն:
- Ղարաբաղյան հարցը մեծ տերությունների ուզածով է լուծվելու, իսկ իրենք հիմնականում Ադրբեջանին են աջակցում:
- Իրաքի ձայնն ո՞վ է լսել, որ մեզ լսեն:
- Այսօր նույնիսկ մեր փող ունեցողները չեն ներդրում անում Ղարաբաղում ու Հայաստանում, ուրիշներից ի՞նչ պահանջենք:
- Մենք մեր ուժերով ենք մեր անվտանգությունն ապահովում, մեզ խաղաղապահներ պետք չեն, ուրիշը երբեք մեր ցավը չի զգա ու չի հասկանա: Եթե անհրաժեշտ լինի, մենք զորակոչի տարիքն ու ժամկետը կփոփոխենք, բայց մենք կպահենք մեր սահմանները:
- Խաղաղապահ ուժերը ձևական են, ամեն ազգի անվտանգության միակ երաշխիքը իր սեփական բանակն է:
- Իմ վերջին խոսքն ասեմ. մենք մեր հողերն ենք պահում ու ոչ մի խաղաղապահ էլ չենք ուզում:

- Մենք պատրաստ ենք ցանկացած լուծում, եթե դա մենք ենք որոշում... Մինչդեռ նույնիսկ խաղաղությանը պատրաստ չենք, եթե դա արտաքին ուժի պարտադրանք է:
- Եթե մեզ չխանգարեն, մենք շատ էլ լավ պետություն կկառուցենք:
- Տնտեսական բոլոր տիպի օժանդակություն ու օգնություն մենք ստանում ենք Հայաստանի միջոցով, այսինքն Հայաստանն է տալիս: Իսկ միջազգային հանրությունը հաշվի չի առնում, որ Հայաստանը զգալի հատվածն տալիս է մեզ:
- Պուճուր Ալիևը Մեդվեդևին ասավ. «Ես քեզ՝ նավթ, դու ինձ՝ Ղարաբաղ»: Ու էսպես Ռուսաստանը անցավ Ղարաբաղի կողմը:
- Ինչքան հեռու համաշխարհային անցուդարձից, այնքան խաղաղ մենք ապրում ենք մեզ համար:
- Մի սցենար չկա՞, որ հայերի կողմից լինի գրած...բոլորը ադրբեջանցիներն ե՞ն գրել...
- Պետք է մի նոր սցենար մշակել. հայերի կողմից ու հայերի համար:
- Հանդիպումների ժամանակ մեր ղեկավարները նմանատիպ սցենարնե՞ր են քննարկում. Աաաա՜, սա է պատճառը, որ էս օրի ենք էլի:
- Հիմա ամենամեծ վտանգը ոչ թե Ադրբեջանից է, այլ գերտերություններից:
- Աշխարհը ԼՂ-ը ճանաչի ու մեզ ասի՝ կողք-կողքի ապրեք: Բա դա հնարավոր է՞:
- Թուրքիան Արեւմտյան Հայաստանից թիզ հող չի տվել, բայց միջազգայնորեն ճանաչվել է: Ժամանակի ընթացքում մեր հարցն էլ կլուծվի:
- Միջազգային կազմակերպությունների գործունեությունը միտված է նրան, որ մեզ համոզի տարածքների վերադարձին:
- Այսօր Հայաստանը ու Ադրբեջանը երկկողմ բանակցություններ չեն վարում, այս հարցի մեջ խառնված են նաև երրորդ, չորրորդ կողմերը. իրենք էլ ունեն իրենց շահերը, որոնք պարտադիր չի, որ համընկնեն մեր շահերի հետ:
- Ադրբեջանի հաղթաթուղթը իր նավթն է, իսկ մենք նման գործոն չունենք: Մենք հիմա նման ենք կոկորդում մնացած ոսկորին:
- Մենք պետք է օգտագործենք Ռուսաստանի գործոնը, քանի որ հիմա համարվում ենք նրա վստահելի գործընկեր: Իսկ այդ կարգավիճակը կարող է փոխվել՝ հաշվի առնելով Ռուսաստանի հետաքրքրվածությունը Ադրբեջանի նավթով:
- Ես չորս տարի կռվել եմ: Մեր դեմ, նախ, գալիս են ռուսներն ու ուկրաինացիները, հետո նոր՝ թուրքերը:
- Սահմանները որ մոտեցնեն, էլ ի՞նչ երաշխիք:
- Խնդրի լուծման մեջ ամենակարևոր գործոնը մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերն են:
- Հարավսլավիան կորցրեց ամեն բան, մասնատվեց, դարձավ մեզանից էլ թույլ պետություն:

- Երկկողմանի համաձայնությունը հնարավորություն կտա հարցը լուծել խաղաղ կերպով. ցանկացած այլ միջամտություն հակառակ արդյունքի կբերի:
- Ղարաբաղին օգտագործելու են աշխարհաքաղաքական խաղերում:
- Աշխարհը կգարգանա հումանիտար ուղղությամբ, կաջակցի նորանկախ պետություններին:
- Սովետի ժամանակ ավելի հեշտ կլուծվե՞ր, թե՞ հիմա: Բա ինչու՞ չլուծվեց:
- Մեզանից, մեր խնդիրներից արդեն բոլորը հոգնել են. մենակ մենք ենք լուծելու էս հարցը:
- Ինչու՞ է այս բոլոր տարբերակներում գրված, որ մենք պիտի հետ տանք, զիջե՞նք, որ հետո Ադրբեջանը որոշի ի՞նչ անի...:
- Անցած քսան տարիները ցույց տվեցին, որ մեզ պետք չի, որ Եվրոպան կամ եսիմ ով մեզ ճանաչի: Մենք շատ էլ լավ մեզ կարող ենք պահել:
- Մենք մեր պրոբլեմները ավելի լավ գիտենք ու լուծման ձևն էլ ավելի լավ գիտենք, մեզ ուրիշի միջնորդությունը պետք չի:
- Մինչ օրս բանակցություններն ամբողջովին անարդյունք են եղել. չգիտեմ, սա խաղ է, թե՞ մենք ինքներս մեզ ենք խաբում:
- Ինչ ենք հասկանում միջազգային հանրություն ասելով... եթե մի պետություն ճանաչեց, ուրեմն միջազգային հանրությունն իր գործն արեց, վերջացրե՞ց...
- Հարց է ծագում, թե մենք ինչպես ենք մատուցում միջազգային հանրությանը այս իրավիճակը: Այդ պատճառով մենք պետք է ճիշտ մատուցման տարբերակ գտնենք:
- ՀՀ-ի և ԼՂ-ի բանակները պետք է պահպանեն իրենց անվտանգությունը, ոչ մի օտար ազգի մարդ չի պաշտպանի:
- Մենք կընտրենք տարբերակ, բայց մեր ընտրությունը ճիշտ տեղ կհասնի՞: Այս ամեն ինչը բեմադրություն է:
- Վերջին 15-17 տարում մեր երկրի քաղաքականությունն է հանգեցրել նրան, որ մենք հաղթողը լինելով, այսօր մենք ենք խնդրում Ադրբեջանին ինչ-որ լուծման հասնել՝ պատրաստ լինելով զիջումների:
- Երրորդը հենց մեր ուզածն ա... բայց սրա համար մեզ կոշտ ու հաստակող դիվանագիտություն ա պետք, ոչ թե «գնդակ տշոցի»: Հասկացա՞ք...

Ադրբեջանցիներ

- Միայն Թուրքիան է, որ ցանկանում է այս հարցը լուծվի
- Ռուսաստանը ցանկանում է հակամարտությունը լուծվի խաղաղ ճանապարհով, սակայն մյուս կողմից զենք է մատակարարում
- Միջազգային կազմակերպությունները պահանջում են խոխհամաձայնության գալ
- Ոչ ոք չի կարող երաշխավորել, որ այս իրադարձությունները կկրկնվեն
- Քննարկումները պետք է անցկացվեն Ադրբեջանի և Հայաստանի միջև, երրորդ կողմից անհրաժեշտություն չկա:
- Ռուսաստանը շահեր ունի այս հակամարտությունից:

- Մինսկի խումբը մի դիրքորոշման դիրքերից է գործում:
- Խմբին պետք է ավելացվի թուրք համանախագահ:
- Ներկայում Հայաստանն աջակցություն է ստանում Իրանից և Ամերիկյան Կոնգրեսից:
- Մենք կորցրել ենք վստահությունը քննարկումների հանդեպ:
- Ռուսաատանը պարզապես պարտվել է:
- Ներկայումս Հայաստանը օժանդակություն է ստանում մեծ տերություններից:
- Հայաստանը նաև օժանդակություն է ստանում արտասահմանյան երկրներից:
- Մի քանի մեծ տերություններ հետաքրքրված են այս հակամարտությամբ, և նրանց ցանկությունն է այս տարածքը հանձնել Հայաստանին:
- Կան պետություններ, որոնք ցանկանում են հզորացնել քրիոտոնյա երկրներին՝ հատկապես Կովկասում:
- Մենք արտասահմանյան կազմակերպություններից կախման մեջ ենք:
- Ընդհանուր առմամբ, եթե անգամ Ադրբեջանն առավելություն ունի, այն ընկալվում է որպես պարտված կողմ:
- Սա շահեկան է շահագրգիռ երրորդ կողմերի համար:
- Հակամարտության կարգավորումը շահեկան է Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ինչպես նաև Ֆրանսիայի համար:
- Չկա պետություն, որը Կովկասում ժողովրդավարություն ուզի:
- Մենք մեծ խաղերի փոքր խաղալիքներն ենք:
- Ոչ ոք չգիտի, թե ովքեր կվերահսկեն այդ դրույթների իրականացումը:
- Մենք բավականին լավ գիտենք, որ աշխարհն աջակցում է նրանց:
- Մենք հիշում ենք Միացյալ ազգերի կազմակերպության չորրորդ համաձայնագիրը, որը ոչնչի համար պիտանի չէ:
- Ես կառաջարկեի մերժել Մինսկի խմբի կողմի միջամտությունը:
- ՄԱԿ-ի միջամտությանը ներկայացնել՝ ՄԱԿ-ի միջամտությունը և մասնակցությունը հակամարտության կարգավորման գործում կմեծացնի դրա՝ Ադրբեջանի օգտին կարգավորվելու գործին:
- Հայերն օժանդակություն են ստանում տարբեր կազմակերպությունների կողմից:
- Հայերն իրենց ամբողջ օժանդակությունը ստանում են գաղտնի, ինչպես նաև բացահայտ ուղիներով:
- Տարբեր մարդիկ են գալիս տարբեր երկրներից ԼՂ:
- Այս առաջարկները իրական քննարկումների մաս չեն կազմում:
- Բանավեճերը գաղտնի են պահվում:
- Ամեն ինչ պետք է լուծվի Ռուսաստանի միջոցով:
- Անցյալ դարի հարաբերությունները կառուցվել են Ռուսաստանի հիման վրա:
- Սակայն Ռուսաստանը և Իրանը սրան չպետք է խառնվեն:
- Սա մեր և Հայաստանի հիմնախնդիրն է:
- Հայաստանը փոքր երկիր է, սակայն շատ հզոր պետություններ կան՝ Ռուսաստանի նման, ովքեր նրա մեջքին են կանգնած:

- ԼՂ հակամարտությունը հետաքրքիր է Ռուսաստանի համար:
- Ռուսաստանը Հայաստանին զենք էր մատակարարում:
- Այն հանգամանքը, որ Ռուսաստանն ամեն պարագայում կարող է օժանդակել Հայաստանին, սրում է իրավիճակը:
- Առաջարկություն՝ փոխել Մինսկի Խմբի խորհուրդը:
- Ռուսաստանի զինված ուժերը մատակարարում են Հայաստանին:
- Պետության գլուխներն են պատասխանատու կարգավորելու հակամարտությունը:
- Ռուսաստանը միակողմանի դիրքորոշում ունի:
- ԱՄՆ-ն երկկողմանի դիրքորոշում ունի:
- Ռուսաստանից Հայաստանին տրամադրվող ռազմական օգնությունը բարդացնում է իրավիճակը:
- Պատկերազցրեք, որ մենք նոր խումբ ստեղծենք և բացատրենք այս հակամարտությունը նոր խորհրդի անդամներին և ձգձգենք այս հարցը ևս հինգ տարի:
- Միջազգային կազմակերպությունները և պետությունները հետաքրքրված չեն հակամարտության կարգավորմամբ:
- Հեշտ չէ ձեռք բերել Իրանի վստահությունը:
- Իրավիճակն այսպես պահելը մեծ ութնյակի պահանջն է:
- Միջազգային կազմակերպությունները շարունակում են զբաղվել հակամարտության կարգավորմամբ միայն իրենց իմիջի համար:
- Եթե Հայաստանի կողքին կամ գլխին կանգնած ուժ չկա, նրանք կարող են բարեհամբույր լինել ադրբեջանցիների հանդեպ:
- Ռուսաստանը խառն է այս քաոսի մեջ:
- Մենք պետք է Հայաստանը տարանջատենք Ռուսաստանից:
- Մենք պետք է հավասարակշռենք հարաբերությունները Ռուսաստանի հետ և փորձենք լուծել այս հարցը նրանց հետ մեկ տեղ:
- Մենք պետք է հավասարակշռված հարաբերություններ պահպանենք հարևան անսովոր պետությունների հետ:
- Այս հարցի կարգավորման գործում ԱՄՆ-ն է Ռուսաստանի դիմաց և Ռուսաստանն ԱՄՆ-ի դիմաց:
- Լեռնային Ղարաբաղը մեծ տերությունների համար կարևոր խաղաքարտ է:
- Հայաստա՞ն, հայկակա՞ն լոբբի. մենք կռվում ենք հայերի դեմ, որոնք իրենց հերթին ծառայում են հզոր պետություններին, եթե մենք լինեինք այնքան թույլ, որքան Հայաստանը, ապա այս տարբերակը մեզ հարմար կլիներ:
- Այսօր Թուրքիան Հայաստանի հետ պաշտպանում է տնտեսական հարաբերություններ:
- Հարաբերությունները Ռուսաստանի հետ պետք է ամրապնդվի:
- Եթե մենք ցանկանում ենք, որ աշխարհի պետությունները մեզ աջակցեն, մենք պետք է ավելի շատ տեղեկատվություն տարածենք Ադրբեջանի մասին:
- Սա կազդի օտարերկրյա ներդրողների՝ հատկապես Ռուսաստանի ներդրողների համար 10-15 տարիների ընթացքում ունեցած գրավչության վրա :

- Ռուսաստանի, Ֆրանսիայի նման երկրները և ուրիշներն օգտագործում են հայերին որպես խաղաքարտ:
- Նման պայմաններում հակամարտության շարունակումը շահեկան է Ռուսաստանի համար:
- Մենք պետք է կարգավորենք այս հարցը ոչ թե Հայաստանի, այլ Ռուսաստանի հետ:
- Մենք ուժով պետք է համաձայնեն, որ այս հակամատությունն օտար պետությունների ղեկավարման տակ է:
- Որո՞նք են համաձայնագրերի իրականացմանը խոչընդոտող ասպեկտները:
- Հակամարտությունը պետք է կարգավորվի երկու պետությունների ուժերով:
- Երբ Հայաստանը չի ընդունում համաձայնագրի պայմանները՝ նշանակում է, այն հույսը դնում է որևէ մեկի վրա:
- Տարածաշրջան այցելելիս նախ Հայաստան են գալիս, ապա՝ Ադրբեջան:
- Արդեն 17-18 տարի է, ինչ Մինսկի խումբն աշխատում է տարածաշրջանում՝ առաջնորդվելով երկակի ստանդարտներով:
- Լեռնային Ղարաբաղը գաղտնի օժանդակություն է ստանում աշխարհի երկրներից:
- Մինսկի խմբի ձևավորումից ի վեր ոչ մի աշխատանք չի իրականացվել:
- Մենք Նախիջևանի հետ հարաբերության անհրաժեշտություն չունենք, և վերջին քաղաքական քննարկումները ցույց են տվել, որ մենք պետք է սկսենք քննարկել այս հարցը Ռուսաստանի հետ:
- Միջազգային կազմակերպությունները չեն կարող ընդունել ԼՂ-ի անկախանալու փաստը:
- Միջազգային կազմակերպությունները ձևացնում են, թե զբաղված են:
- Մինսկի խումբն արդեն 17 տարի է զբաղվում է այս հարցով, սակայն՝ ապարդյուն:
- Ռուսաստանը խոչընդոտներ է ստեղծում հիմնախնդրի խաղաղ կարգավորման ճանապարհին:
- ՄԱԿ-ի համաձայնագիրն իրականում չի աշխատում, հանդիպումներն արդյունքի չեն հանգեցնում:
- Այլ ուժերը հետաձգում են Թուրքիայի ազդեցությունն այս հակամարտության կարգավորման հարցում:
- Միացյալ ազգերի կազմակերպության անդամ հանդիսացող երկները ճանաչում են պետության ինքնիշխանությունը:
- Հայաստանի հետ քննարկումները պետք է դադարեցվեն և վերսկսվեն Ռուսաստանի հետ:
- Հիմնական զավթիչը Ռուսաստանն է:
- Ռուսաստանը թույլ չի տա, որ դա տեղի ունենա:
- Մենք պայքարում ենք Ռուսաստանի, այլ ոչ Հայաստանի դեմ:
- Ահա մեծ պետությունների ներդրումները:
- Ադրբեջանը պետք է կարգավորի հարաբերությունները Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հետ:
- Ռուսաստանին անհրաժեշտ է, որ Կովկասում խառնաշփոթ լինի:

- Պարտադիր է ստանալ Իրանի աջակցությունը հակամարտության կարգավորման գործում:
- Ռուսները մասնակցում են մեր բնաջնջման գործում:
- Միջազգային հանրությունը պետք է մեծացնի ճնշումը Հայաստանի վրա
- Խնդրի կարգավորումը կախված է Ռուսաստանից
- Այն պետք է համապատասխանի Միացյալ ազգերի կազմակերպության որոշումներին:
- Մենք դժգոհ ենք Մինսկի խմբի գործունեությունից:
- Ադրբեջանը կարող է Հայաստանի հետ լուծում գտնել առանց որևէ այլ պետության միջամտության:
- Ինչու՞ ենք մենք միշտ այս սցենարներում օգտագործում ենք Հայաստանի, բայց ոչ Ռուսաստանի անունը:
- Մինսկի խմբի գործողություններն անօգուտ են:
- Բոլոր միջազգային կազմակերպությունները գործադրում են բոլոր ջանքերը, սակայն ապարդյուն:
- Պետրոս առաջինն ասել է, որ Թուրքիան մեր թշնամին է:

Վստահությանն առնչվող այլ կարծիքներ

Հայեր

- Այս բոլոր տարբերակներում ազերիները ոչինչ չեն զիջում, մենք ամեն ինչ վաղուց վերցրել ենք:
- Մենք մեր կողմն ենք միշտ քշում, իսկ Ադրբեջանցիներն՝ իրանց: Առանց կողմնակի միջամտության հարցը լուծում չի ստանա:
- Մենք այս քսան տարվա ձեռքբերումները չենք կարող ուղղակի քամուն տալ:
- Երբ գալիս են աղջիկ ուզելու, հարցնում են աղջկա կարծիքը, իսկ մենք հիմա աղջկա կարծիքը մի կողմ ենք դնում ու փորձում ենք ծնողների համաձայնությամբ աղջկան ամուսնացնենք, բայց դա աղջկան երջանկություն չի բերի
- Արդյ՞ոք ադրբեջանցիները համաձայն կլինեն երրորդ սցենարին:
- Ամեն դեպքում ոչ մի երաշխիք չկա, որ հայերը կարող են խաղաղ ապրել ադրբեջանցիների կողքին:
- Ինչո՞վ ենք համոզված, որ հայ-թուրքական սահմանի բացումը այլ անվտանգության հարցեր չեն բացի:
- Ես կյանքում չեմ մոռանա, որ իմ քեռու տղան գնաց զոհվեց ղարաբաղում
- Մինչև 18 թվական նույնիսկ Ադրբեջան բառը չի եղել... հիմա ասում են. մերն ա:
- Չկան մշտական բարեկամներ. Հատկապես քաղաքականության մեջ. պետք է ուշքի գալ:
- Ադրբեջանցիները քինախնդիր են, իսկ հայերը ՝ ներողամիտ... Դա մեծ խնդիր է
- Թուրքին պետք է վախցրած պահել:

- Սա նմանվելու է արաբա-իսրայելական պատերազմին....
- Մինչև մենք մեկ-երկու-երեք չորս, ադրբեջանցին մեկ-երկու, մեկ-երկու... շատ ենք դանդաղաշարժ, մինչդեռ մեզ անհրաժեշտ է կայծակնային արագություն ու ճկուն միտք ունեցող դիվանագիտություն:
- Ժողովուրդ, պատերազմը չի ավարտվել, - ասել է Վ.Սարգսյանը: Իսկ եթե մենք հողերը պահենք որպես երաշխիք, դա կնշանակի «կոռուպցիա» ենք անում:
- Ձիջումներ չեն լինելու, մենք մեր ամենալավ հողերն արդեն տվել ենք:
- Դրանք մեզ ի՞նչ են զիջում, որ մենք զիջենք:
- Թուրքիան հարյուր տարի է՝ մեզ ի՞նչ է զիջել, որ մենք զիջենք:
- Եթե մենք սկսենք քննարկել «տանք-չտանք» խնդիրը, իհարկե, Ադրբեջանը պատերազմ կսկսի:
- Էսօր թե հույները, թե բալկանյան երկրները պահանջատեր են, նույնն էլ մենք ենք լինելու:
- Քանի դեռ այս Ալիեւն է, պետք է հարցը լուծել: Հետո կարող է ավելի վատ լինել:
- Դրանք մեզանից շատ հեռատես են, բայց այս Ալիեւն իր հորը շատ է զիջում, նա խորամանկ աղվես էր, իսկ տղան՝ թույլ է, սա իշխանատենչ է: Սրա թուլությունից պետք է օգտվել:
- Էս իրավիճակը նույնն է ինչ երկու հարևանների միջև հողի համար պայքարը: Կհաղթի նա, ով ուժեղ է:
- Նապելեոնն ասել է. «Արեվը կճանաչենք թե ոչ, մեկ է, այն միշտ էլ կծագի»... ամեն ինչ սրանով ասված է:
- Հարևանների մեջ եթե թշնամություն կա, արուն ա թափվել, մեկը պետք է թողնի գնա:
- Ո՞վ ասեց, որ Ադրբեջանը մեզ կարող է վախեցնել, մենք չէ:
- Հայը մնում է հայ, մենք իրար չենք սիրում, օտարի նման ենք վերաբերվում
- Այն ձեռքը, որ չես կարողանում կտրել պիտի համբուրես, բայց մինչև երբ:
- Հիմարն իր սխալների վրա է սովորում, իսկ խելոքը՝ ուրիշի: Մնաց որոշենք, թե ով ենք. խելոք թե՞ հիմար:
- Մենք հիմա օգնում ենք ադրբեջանցիներին՝ նպաստում ենք Ղարաբաղի հայաթափմանը: Ղարաբաղցիներին հողեր ենք տալիս, նրանք էլ գալիս են Հայաստանում տուն-տեղ դնում, իրենց հողն էլ թողնում:
- Մենք մեր հույսը մեզ վրա պիտի դնենք, մենք երբ ենք սովորելու, որ ո՛չ ռուսը և ո՛չ էլ յանկին մեզ վահան չէ... Սյունիքի պատմությունը ձեզ վառ օրինակ:
- Թոռս առանց հոր է մեծանում, հայրը զոհվել է պատերազմում: Հիմա աշխարհի ամենալավ բանն էլ առաջարկես՝ առաջնահերթ զենք կուզի: Արյունը հիշողություն ունի:
- եթե Ադրբեջանը պրոբլեմ չստեղծի, Ղարաբաղը այդ պրոբլեմը կստեղծի, քանի որ երկու պետությունները ՝ իրենց ժողովուրդներով գտնվում են տարբեր շերտերում
- Մենք արդրբեջանցուն չենք ճանաչում, իրենց գիր գրականությունը չենք կարդացել. դրա համար էլ կույր-կույր խոսում ենք:

- Եթե մեկի տուն գնում էս խնամախոս, ուրեմն երեսուն տոկոսով վստահ ես, որ քեզ աղջիկ կտան: Ադրբեջանը հավանաբար որոշակի վստահություն ունի երկրորդ սցենարի ընդունման հետ կապված:
- Այսպես թե այնպես հայի և ադրբեջանցու մեջ կռիվ լինելու է, ինչքան սահմանը հեռու, այնքան լավ:
- Թուրք ազգը վախկոտ է՝ ինչքան էլ զարգանան ու բնակչության թիվը ավելանա, միևնույն է մենք ուժեղ ենք:
- Հիմա թուրքն է ավելի շատ մեզնից վախենում, քան հայը՝ թուրքից:
- Եթե Հայաստանից գնացած ադրբեջանցիք հետ գան, արդյո՞ք կարող ենք կողք-կողքի ապրել:
- Լավ կլիներ, որ ադրբեջանցիների հետ առաջվա պես ընկերություն անեինք, գնային-գային, ամուսնանային, միասնական լինեինք... Բայց տենց բան այլևս հնարավոր չի՛:
- Հարցնում եք՝ կարող է նորմալ ապրենք կողքկողքի: Այդ «կարող ա»-ն մեզ պետք չի, մեզ հաստատուն վիճակ է պետք:
- Էն թուրքը որ եկավ հետ, տեսավ իր տունը փլած, մեկ ա հա պիտի ասի. «հայն իմ դուշմանն ա»: Լուբոյ վերագաղթած թուրք էս ա:
- Բոլոր մուսուլմանները նույնը չեն, պարսիկներն ու արաբները մեզ շատ են օգնել, օրինակ Դեր Զորում, մեր խնդիրը թուրքերն են:
- Երրորդ սցենարի մեջ Ադրբեջանի երազանքներից մի քանիսն արտահայտված են. Թող երազեն...
- Մարդու կին տարիներ շարունակ միասին են չէ՞ ապրում... հետո չի ստացվում, բաժանվում են... հիմա էլ մենք ենք բաժանվում...
- Ժողովրդի կարծիքը երբեք էլ հաշվի չեն առնում...Մենք ի՞նչ կարող ենք անել...
- Բաքվի թուրքերը կռիվ չեն ուզում, բայց գյուղացիներն ուզում են
- Գերտերություններին պետք չէ Ղարաբաղի հարցի լուծումը:
- Միայն հայկական զորքերը կարող են պահել Ղարաբաղը, ոչ մի այլ ազգ չի կարող դա պահել:
- Առաջին հերթին պետք է գալ ընդհանուր համաձայնության, ունենալ երաշխիքներ միավորվելու, մեզ պետք է տնտեսական հզորություն:
- Մենք մեր հույսը մեր վրա պետք է դնենք՝ ոչ մեկը մեր փոխարեն այս հարցը չի լուծելու:
- Ադրբեջանը իր քաղաքականության մեջ ունի կոնկրետ ազգային ծրագիր:
- Պատմության մեջ երևի առաջին անգամ է, որ մի քիչ լավ ենք ապրում, վերջապես հաղթող ենք, վերջապես անկախ պետություն ունենք, թողնենք, որ նորից գան ու լցվե՞ն:
- Բա Շուշի՞՞՞ն: Իսկ մենք ուզում էինք Շուշին դարձնել համահայկական կենտրոն. էս դեպքում Շուշին իրենց կմնա...
- Ադրբեջանի տարածքային սկզբունքով, Դավաճան է նա, ով փոխզիջման գնա:
- Հայաստանը հողեր է անընդմեջ տալիս. Արևմտյան Հայաստանը արդեն տրված է, էլ ինչ են ուզում մեզանից

- Իսկ եթե՞ ղարաբաղցիներն իրենք վերջին րոպեին որոշեն հանրաքվեում քվեարկել Ադրբեջանի կազմում լինելու օգտին:
- Քաղաքականությունը ծնվում է պամությունից, պետք է մեր պատմությունից դասեր քաղենք ու նրա վրա հիմնվենք:
- Մենք լսե՞լ ենք, բա՞ն գիտենք, թե այդ ինչ մադրիդյան սկզբունքներ են մեր ղեկավարները քննարկում: Ի՞նչ վերաբերմունք հայտնենք, եթե չգիտենք, թե այդ ինչ հողերի մասին են բանակցում, որ հավատանք ու հողեր հանձնենք:
- Կրոնի հարցը... չէ, նման հարց չկա, կա ազգերի միջեւ հարց:
- Տարածքային ամբողջականությո՞ւն... հա բայց ով ասեց, որ մենք իրենց տարածքները խախտել ենք: Թող իրենք իրենց տարածքներում ամբողջ լինեն, բայց մերինի վրա աչք չդնեն:
- Ադրբեջանը նույնիսկ երազում երրորդ սցենարը չի ընդունի:
- Երրորդ սցենարը իրատեսական չէ այն առումով, որ իրենք ոչ մի զիջման պատրաստ չեն
- Մենք ամսի 20-ին մտանք Ֆիզուլի, երբ նույն ժամանակ մեր հեռուստատեսությունը խոսում է իբր թուրքը Կապանում է. դա միայն պրոպագանդա է... չի կարելի կուլ գնալ...
- Եթե ասում ենք փոխզիջենք հա փոխզիջենք, էդ ինչի Թուրքիան մի հատ չի մտածում մեր պատմական հողերից մի թիզ հող փոխզիջի, այդքան կոտորածից հետո:
- Երրորդ տարբերակի դեպքում, որ մեր ձեռքբերումները համեմատում ես նրանց ձեռքբերումների հետ, ապա նրանք շահում են:
- Դուք միայն հայկական զիջումների մասին եք խոսում:
- Կարևորը վստահությունն է իշանությունների նկատմամբ, այնպես, ինչպես ընտանիքում:
- Ինչքան էլ որ այս հարցը քննարկենք, միևնույն է այս հարցը հասարակ ժողովրդի ասելով չի լուծվելու, որ կառավարությունը որոշի շրջանները հանձնել, ոչ մեկ ոչ մի բան չի կարողանալու փոխել
- Ազգը պիտի ապավինի միայն սեփական բազկի ուժին, այլապես այն կկործանվի:
- Իսկ ի՞նչ փոխզիջումներ կանի Ադրբեջանը:
- Մենք մի անգամ արդեն զիջել ենք իրենց Նախիջևանը, բայց փոխզիջում չենք ստացել:
- Թող փակ մնան Թուրքիայի ու Ադրբեջանի ճանապարհները՝ դա մեծ խնդիր չէ: Վրաստանի ու Իրանի ճանապարհները մեզ բավարար են:
- Մեր անվատանգությունը մենակ մենք պիտի ապահովենք, ուրիշ ոչ ոք դա չի անի:
- Մենք միշտ էլ ի վիճակի ենք պահել մեր անվտանգությունը, դա միայն մեր խնդիրն է, օտարը դա չի անի:
- Չենք կարող ասել, թե տասը տարի հետո ինչ կլինի:
- Մեզ համար ամենավտանգավորը հանրաքվեն է, քանի որ ամեն մի քաղաքական ուժ արդյունքները մանյովրելու լավ փորձ ունի, ես վստահ չեմ, որ հանրաքվեն իրոք ժողովրդի կամքը կարտահայտի...

- Էսօր բոլորն աշխատանք են ուզում, բայց իրականում սեղան են ուզում: Ոչ մեկ հող չի ուզում: Էլ ո՞ւմ ենք մեղադրում:
- Մեր անվտանգության միակ երաշխիքը մեր բանակն է, չի կարելի մեր բանակը ցրել, միասնական հայկական բանակը առանց բաժանումների՝ ղարաբաղցի, լենականցի, եսիմ ինչեցի:
- Մենք մեր բանակից ավելի ոչ մի այլ երաշխիք չունենք:
- Մեր համար մեկ երաշխիքը բանակն է. այլընտրանք չկա:
- Սահմանը պիտի սահման լինի... ոչ թե խրամատ...
- Ադրբեջանի բանակի բյուջեն արդեն իսկ միլիարդուկես է ու ավելանում է:
- Մեր անվտանգությունը ապահովում է մեր բանակը, դա մեզ բավարարում է:
- Եթե Ադրբեջանի նախագահը համաձայնվի զիջել Ղարաբաղը, իր ազգի աչքին դավաճան կերևա: Նույնն էլ մեր մոտ է:
- Երբ ուրիշ երկրների հարցերը քննարկվում են, հակամարտող կողմերի ղեկավարները միշտ ներկա են լինում, ինչի մեր նախագահի կարծիքը հաշվի չեն առնում, ով ասեց, որ մենք ուզում ենք միանանք Հայաստանին կամ իրա կարծիքին, կարող ա մենք ուզում են անկախ մնանք, ինչի մեր կարծիքը հաշվի չեն առնում
- Նույնիսկ եթե ադրբեջանցիների փոխարեն շվեյցարացիները լինեին, էլի չէինք համաձայնվի նրանց պետության կազմում լինել: Մենք մի ազգ ենք ու մի պետություն ենք լինելու:
- Եթե հողերը տանք, նախ՝ չեն մնա, կգնան մարդիկ այստեղից:
- Արեւմտյան Հայաստանի տարածքը թողել են, ամայի հող է հիմա: Բայց տալի՞ս են մեզ, հետ տվեցի՞ն մեր հողերը: Բա մեզ ինչն է խանգարում, որ մեր տարածքները պահենք ու հետ չտանք:
- Մեր սխալն այն է, որ մենք մեր հողերի մասին չխոսեցինք, ադրբեջանցին ասաց, թե իր հողերի խնդիրն է ու այսպես էլ միջազգային հանրությունը ամրագրեց:
- Ադրբեջանը ուզում ա հարցը լուծի հին մեթոդներով: Սովետական միությունը քայքայվել ա, տասնհինգ հանրապետություններ չկան, հետևաբար Ադրբեջանը պետք ա ընդունի մեզ որպես առանձին միավոր:
- Ժողովրդին տրորում են ու անցնում, սա աչքակապությունա:
- Միջազգային հանրությանը համոզել են, որ հայերը օկուպացրել են Ադրբեջանի տարածքը: Բայց իրականում դա ընդամենը անվտանգության գոտի է:
- Եթե Ալիևն ու Սարգսյանը ներկայացնեն իրենց հանդիպումների մանրամասները, հաջորդ անգամ ոչ մեկը կընտրվի, ոչ մյուսը:
- Հիմա քարոզչություն է տարվում, որ Ադրբեջանը տնտեսապես ավելի արագ է զարգանում, մինչդեռ իրականում չգիտենք, այդպես է, թե չէ:
- Ամեն տեսակ անորոշություն էլ կա այսօրվա վիճակում:
- Շատ դժվար հարց է, մենք չգիտենք մեզ ինչ է սպասվում, ստատուս էլ որ լինի, չգիտենք, թե մեր երեխաների ապագան ինչպիսին կլինի:
- Ուզում ես դու կախվիր, ուզում ես քեզ սպանեն: Արդյունքը նույնն է ...

- Քաղաքական գործիչները մեզ պետք է լսեն, ոչ թե փակ դռների հետևում խաղեր խաղան:
- Մինչև հիմա Թուրքիայի սահմանը բաց չի, բայց տարբեր մակարդակի հարաբերություններ ունենք, չէ՞:
- Մենք թուրքի ճանաչմամբ ոչ մի բան չենք կորցնում, չենք էլ ստանում, տակ շտո չենք զիջում:
- Մեր կարգավիճակը մենակ մենք պիտի որոշենք:
- Մեր ամենամեծ երաշխավորը մենք ենք. ոչ մի խաղաղապահ:
- Ոչ մեկը մեր հողը մեզանից լավ չի պահելու:
- Չեմ հասկանում, հինգերորդ սցենարի դեպքում ո՞րն է Ադրբեջանի զիջումը: Իր «բարի» ցանկությու՞նը:
- Նախորդ նմանատիպ քննարկման ժամանակ սցենարներն ավելի լավ էին գրված ու սպասում էի, որ առավել կատարյալ սցենարներ կբերեք, սակայն տեսնում եմ, որ որոշակի հետընթաց կա: Ձեր սցենարներում առկա է ադրբեջանական քարոզչության ազդեցություն:
- Մենք մեր բանակով պահում ենք մեր երկիրը:
- Խաղաղությունը կլինի էնքան ժամանակ, ինչքան մեր բանակը ուժեղ կլինի...Մենք , մենակ մենք ենք պահելու մեզ:
- Այս սցենարներում ոչ մի կետում չտեսանք, որ գրած լինի որ ղարաբաղցին պիտի իր կամքը արտահայտի, էս մենք բանակցության մեջ ոչ մի դեր ու նշանակություն չունե՞նք:
- Մեր նախագահը ավելի լավ գիտի այդ հարցի լուծումը, մենք նրան վստահում ենք, նա ոչինչ չի զիջի և կռիվ չի լինի. Այսօրվա վիճակը կշարունակվի:
- Ինչ արդյունք կտա այս քննարկումը, էլի գնալու է հասնի մեր դիվանագետներին ու կանգ առնի, որովհետև մեր դիվանագիտությունը միշտ էլ պարտվողական է եղել:
- Ազգը այն ուժը ունի, որ այս հարցը մեր օգտին լուծվի, մեր ղեկավարները չունեն այդ ուժը:
- Այս իրավիճակում մենք հեղինակություն արդեն չունենք, ում կարելի լինի հավատալ, լսել, առաջնորդվել, ով կարող է մեզ բոլորիս հավաքել մեկ ամբողջական գաղափարի շուրջ:
- Հիմա մեր ընտանիքները պայմաններ չունեն ամուսնանալու ու մեկից ավելի երեխա ունենալու համար, դրա համար էլ վաղը Ղարաբաղում հայ չի մնա:
- Հայաստանի լրատվական միջոցները և ադրբեջանական լրատվական միջոցները իրարից տարբերվող ինֆորմացիա են հաղորդում, և մենք Վարդենիսում ստանում ենք նաև ադրբեջանական տեղեկատվական միջոցների թողակումները:
- Վերջին հաշվով ապրել ա պետք, նույնիսկ եթե զիջում է պետք:
- Այսպիսի քննարկումներ պետք է կազմակերպել Ադրբեջանում: Նրանք պետք է քննարկումների միջոցով որոշեն Ղարաբաղի ապագան:
- Անկախ մեր ցանկություններից կան ամրագրված կետեր, որոնք մենք ստիպված ենք ընդունել:

- Ցանկացած հակամարտություն ունի իր լուծման ուղիները, տաս տարի տևած բանակցություններն արագացնելու համար կարելի է քննարկման գործընթացում ներառել նաև ղարաբաղյան կողմը:
- Այսօր մեր ժողովուրդը տեղեկացված չի, իսկ ժողովրդին տրված տեղեկատվությունը խեղաթյուրված է, այդ պատճառով ժողովուրդը այս խնդրի վերաբերյալ թյուր կարծիք ունի և լուծումը ձգձգվում է:
- Գիտեմ, որ Ադրբեջանի երիտասարդությունը բացարձակապես չի հետաքրքրված այդ տարածքներով:
- Մտավախություն կա՝ կհասնի՞ այս քննարկումը վերջնարդյունքին:
- Եկեք Մեթյու Բրայզային ասենք, որ նրա առաջարկած տարբերակները անընդունելի են, քանի նա այստեղ է:
- Ամերիկացիները կարող են հանգիստ ասել, որ հայ ժողովրդի քննարկման արդյունքն է:
- Պետությունը ինչ էլ որ փորձի անել, Հայաստանի դեմ են տրամադրված երիտասարդները, դա տաս տարվա ընթացքում չի փոխվի:
- Երկրի դիվանագիտությունը, եթե ճիշտ մարդիկ առաջ տանեին, ապա այսօրվա քննարկման անհրաժեշտությունն էլ չէր լինի: Նույնն էլ մնացած բոլոր ոլորտների մասին, եթե խելացիները լինեն իշխանության, ապա երկրում շատ հարցեր կլուծվեն առանց նման քննարկումների:
- Այս հարցը մենակ ղարաբաղցիներին ու Ղարաբաղին չի վերաբերում. ամբողջ հայությունն է Ղարաբաղի համար պայքարել ու շարունակում էդ ուղղությամբ ջանքեր գործադրել:
- Մեզ որ հարցնում եք, թե մենք ինչ ենք ուզում, իսկ ղարաբաղցուն հարցրե՞լ եք, թե նա ինչ է ուզում:
- Պետք է կշռել, թե ինչ ենք կորցնելու և ինչ շահելու փոխզիջումներից.. սովածը կուշտի դարդը ինչ կիմանա ... նախագահները չպետք է որոշեն, թե ինչպես պետք է լուծել հարցը, այլ ժողովուրդները:
- Թող ղարաբաղցիները որոշեն, կարո՞ղ են առանց Հայաստանի գոյատևել, թե ոչ:
- Իսկ Ղարաբաղին հարցրել ե՞ք իրենք ինչ են ուզում...
- Ղարաբաղյան հարցի կարգավորման շուրջ պիտի միայն փորձագետները կարծիք հայտնեն, հասարակ մարդկանց համար սա բարդ հարց է:
- Պատճառներից մեկն էլ հենց դա է, որ Ղարաբաղը բանակցության կողմ չէ:
- Նախ պետք է ղարաբաղցուն հարցնել, թե ինքն ինչ ա ուզում. առանձնանալ թե միանալ: Դրանից հետո այս սցենարն ավելի կոնկրետացնել ու մեր էշն էնքան քշել, մինչև մեր ուզածին հասնենք:
- Մենք միայն մեր տեսանկյունից ենք մտածում, բայց պետք է նայել դրությանը նաև ադրբեջանցիների տեսանկյունից:
- Մենք այս խնդրին լավ չենք տիրապետում...ցավոք, բայց տեղյակ չենք անգամ ինչ են բանակցում:
- Ղարաբաղի վերադարձնել-չվերադարձնելը պետք է որոշի հենց ինքը՝ Ղարաբաղի ժողովուրդը:

- Մի կողմից ասում ենք ժողովուրդն ինքը պիտի որոշի իր ճակատագիրը, մյուս կողմից էլ ասում ենք միայն Հայաստանը պիտի աջակցի... ես էստեղ կազուս եմ տեսնում:
- Մեզ մի հարցրեք ինչ անել, ղարաբաղցին թող ասի, հիմա մենք ինչ ուրիշի մասին որոշում կայացնենք:
- Ռազ մեզի հարցրել են ինչը կուզեն թող անեն:
- Այս հարցի լուծումը մենք չենք որոշելու, այլ Ղարաբաղի ժողովուրդը, իսկ հարցի լուծում պետք է տա Առաջին նախագահը:
- Ես ասում եմ, մենք էստեղ քննարկում ենք, բայց ղարաբաղցին իր ա հարցը լավ էլ լուծում ա:
- Նախ անընդունելի է բացարձակ գաղտնի դիվանագիտությունը:
- Մեր իրականության մեջ մեր կուսակցություններն ինչ-որ շփոթված են, եթե ուզում ենք, ինչ-որ հարց լուծել, գոնե փնտրենք արդեն իսկ այդ հարցով զբաղվող կուսակցություն, գնում, նորն ենք բացում: Դրա համար էլ, նույնիսկ Ղարաբաղի հարցում չենք կարողանում կոնսենսուսի գանք, մեկ ռազմավարություն մշակենք:
- Բազար ա՞, որ առուտուր ենք անում...
- Իսկ ինչու՞չենք քննարկում մեզ հարմար տարբերակը, էն, ինչ որ մենք ենք ուզում:
- Մեր հաջողության թիվ մեկ պայմանը կլինի այն, որ Ղարաբաղը կրկին ճանաչվի բանակցային կողմ: Միայն սրանից հետո կխոսենք զարգացման մասին:
- Ուզում ենք հասկանալ, ինչու՞ են մեր կարծիքը հարցնում հանկարծակի, որովհետև պարզապես մեզ սկսել են բանի տեղ դնել, թե արդեն ինչ-որ բան ստորագրել են ու ուզում են տեսնեն արձագանքը ինչպիսին կլինի

Ադրբեջանցիներ

- Պատմաբանները նույնպես մեղավոր են այս իրավիճակի համար
- Մենք ամեն ինչի համար արդարացում ենք գտնում
- Ադրբեջանում քաղաքական հավատի պակաս կա:
- Երբ ես ԼՂ գնացի 1988-ին, ինձ թվաց, որ ես Հայաստանում էի:
- Ադրբեջանում ամեն ինչ կա՝ քաղաքական հավատից բացի:
- Ադրբեջանը զարգացած է և դրա կարևորությունն աճում է:
- Ախուդովի ժամանակաշրջանից սկսած վերնագրերն ադրբեջանական են եղել:
- Ռամիլ Սաֆարովի հետ կապված դեպքերը:
- Բուդապեշտում տեղ կա, որտեղ տղամարդկանց արձանների գլուխները կտրվում են Օսմանների կողմից:
- ԼՂ-ն երբեք չի մասնակցում կենսական նշանակություն ունեցող քննարկումներում. Հայաստանն է վարում բոլոր քննարկումը և որոշում է ընդունում ԼՂ-ի համար, ինչն ընդունելի չէ:
- Ես կարծում եմ հայերը մեզ պետք է փոխհատուցում վճարեն:

- Այն կողմը, որը տառապու է՝ չի թելադրում իր պայմանները, մինչդեռ այն կողմը, որը ստիպում է մյուսներին տառապել՝ թելադրում է իր պայմանները:
- Կարևոր բաներից մեկը հավասարակշռված քաղաքականությունն է և մարդկանց կարծիքն ու այս քաղաքականության կայունությունը:
- Ադրբեջանը միշտ հատուկ զիջումներ է արել Հայաստանին:
- Մենք պետք է դիտարկենք երևույթները հայկական տեսանկյունից:
- Հիմա միջազգային ասպարեզում Ադրբեջանի դիրքերն ավելի ամուր են:
- Ադրբեջանը գործում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղղությամբ, սակայն առայժմ՝ ապարդյուն:
- Հայկական սփյուռքն ավելի ինտենսիվ է աշխատում, քան մերը:
- Ո՞վ պետք է լինի հետևողական կողմը:
- Իրականում հայկական սփյուռքը թույլ է:
- Հայաստանում յուրաքանչյուր նախագահ ասում է, որ հասկանում է, սակայն այդ իսկ պատճառով նրա վրա հույս դնել հնարավոր չէ:
- Ադրբեջանական պետությունը չպետք է թաքցնի բանակցություններն իր քաղաքացիներից:
- Համաձայն այս կարծիքի հնարավոր չէ հարաբերություններ հաստատել հայերի հետ և նրանց մեր կողմը քաշել, սակայն, մյուս կողմից, մարդիկ սկսում են վստահել պետությանը, հետևաբար այս տարբերակը կարող է մեզ համար շատ դժվար լինել:
- Քաղաքականության մեջ մենք պետք է ոչ թե գույները փոխենք, այլ վայրը:
- Հակամարտությունն արդեն մեր արյան մեջ է:
- Հիմնախնդրի կարգավորում ավելի մոտ է Ադրբեջանի արդյունավետ քաղաքական մոտեցման տեսանկյունից:
- Մեզնից բացի ոչ ոք չի կարող օգնել ու աջակցել մեզ հակամարտության կարգավորման գործում:
- Թուրքիան հայտարարում է ցեղասպանության մասին, քանի որ կորցնելու բան չունի, սակայն մեր իրավիճակն այլ է:
- Պետության տերերն են ստեղծում նման իրավիճակներ:
- Երկու կողմերը տալիս են տարբեր մտքեր:
- Ադրբեջանը պետք է պատասխանատուն լինի:
- Հակամարտություն կա նաև Հայաստանի և ԼՂ միջև:
- Լարվածություն կա Հայաստանի բնակչության և ԼՂ-ում ապրող մարդկանց միջև:
- Մենք պատմականորեն սովոր ենք նման հիմնախնդիրների:
- Հնդկական կազմակերպությունները Քելբաջարում ոսկի են փնտրում:
- Ադրբեջանում քրիստոնեական քարոզչություն է իրականացվում:
- Մենք թիմային ոգի չունենք:
- Այնպիսի զգացողություն է, որ բոլոր դրույթներն ի օգուտ Հայաստանի են:
- Հայերն իրենք զղջացող դիրքում են:
- Հենց որ մենք խաղաղություն հաստատենք, Հայաստանը պետք է թողնի մյուս հարևան պետությունների հետ հակասությունները:

- Հայկական սփյուռքը չպետք է խառնվի Հայաստանի գործերին և ստեղի կոնֆլիկտներ:
- Ադրբեջանը բանակցում է Հայաստանի, այլ ոչ թե ԼՂ-ի հետ, քանի որ այն արդեն Ադրբեջանի մասն է կազմում:
- Մենք որևէ պատճառ ունե՞նք այս սցենարները քննարկելու համար:
- Հակամարտության կարգավորման սցենարները պետք է մշակվեն պետական մակարդակով:
- Այս սցենարի քննարկումը նշանակում է մենք պետք է ոչ թե քննարկենք հակամարտության լուծումը, այլ կողմերին պատճառված վնասները:
- Այս քննարկման նպատակն է տեղեկատվություն ստանալ հասարակության հարաբերության մասին:
- Առաջարկված հինգ սցենարների ցուցակից՝ չորսը շահեկան են Հայաստանի համար և միայն մեկը Ադրբեջանի համար:
- Մենք պետք է մեկ ազգի նման աջակցենք մեր նախագահին:
- Ամեն ինչի հիմքը քարոզչությունն է:
- Զանգվածային լրատվամիջոցների ծրագրերում հայրենասիրություն չկա:
- Անկախ քաղաքական կողմնորոշումից պետք է մեկ որոշում լինի և նման միջոցառումները պետք է իրականացվեն համացանցի միջոցով:
- Մինչ այսօր մենք նման որևէ քննարկման մասին տեղյակ չենք եղել, սակայն այսօր ունենք որոշ սցենարներ և հնարավորություն մեր կարծիքներն արտահայտելու առանց դժվարության, ինչպես անցյալում էր:
- Մենք նման միջոցառումներ մինչ այսօր չենք ունեցել, և, այդ իսկ պատճառով, խրախուսում ենք այս ծրագիրը:
- Մենք համաձայն ենք մեր կառավարության քաղաքականության հետ:
- Չնայած շատ հանդիպումներ են կազմակերպվում՝ ամենն ապարդյուն:
- Շատ կազմակերպություններ կան, համաձայնագրեր կան, սակայն դրանք որպես առաջարկներ են հանդես գալիս:
- Ռամբլուեյի բանակցություններն արտացոլ են հակամարտության լուծման փուլային տարբերակը:
- Հակամարտությունը պետք է լուծվի Ադրբեջանի և Հայաստանի միջև՝ առանց Լեռնային Ղարաբաղի կողմից միջամտության:
- Մենք պետք է նախապատրաստենք մեր սցենարները:
- Մենք չգիտենք արդյոք այս հանդիպումները արդյունք կունենան, թե ոչ:
- Ինչ որ հանձնարարվի գլխավոր հրամանատարի կողմից կկատարվի:
- Հիմնախնդրի կարգավորման ձգձգումն այն մոռացության է մատնում:

Հավելվածներ

Հավելված 1 - Սցենարներ

Հայաստանի և ԼՂ բնակչության հետ քննարկված սցենարներ

Սցենար 1-Ստատուս քվո

1994 թվականից հետո Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում ստեղծվել է «ոչ պատերազմ-ոչ խաղաղություն» իրավիճակ, որն ընդունված է «ստատուս քվո» անվանել: Դա այն է, ինչ մենք այսօր ունենք: Պետականաշինության ակտիվ գործընթաց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, ժողովրդավարության աստիճանական զարգացում ԼՂ-ում, հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող անվտանգության գոտի, փախստականներ, ռազմատենչ հայտարարություններ Ադրբեջանում, ձգձգվող բանակցություններ և այլն:

Սա, թերևս, ԼՂ հակամարտության լուծման փոխզիջումային տարբերակ չէ, սակայն մի սցենար է, որով, ինչու չէ, առանձին հանգամանքների դեպքում կարող է շարունակվել կյանքը: Եթե ամփոփենք այս սցենարի դեպի ապագա ուղղված հիմնական ուրվագծերը, ապա կարելի է ամրագրել հետևյալը.

- Լեռնային Ղարաբաղը շարունակում է իր տարածքների և բնակչության պաշտպանության ապահովումը. զինվորական ծառայությունը Ղարաբաղում և Հայաստանում շարունակում է մնալ պարտադիր,
- ԼՂ հարակից շրջանները շարունակում են մնալ հայկական ուժերի հսկողության ներքո,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը չի ճանաչվում միջազգային հանրության կամ առանձին պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից,
- Լեռնային Ղարաբաղը չի կարող օգնություն ստանալ միջազգային հանրությունից կամ միջազգային կազմակերպություններից,
- հայերենը շարունակում է լինել ԼՂՀ պաշտոնական լեզուն, իսկ հայկական դրամը՝ ԼՂՀ պաշտոնական տարադրամը,
- ԼՂ հայերը ճանապարհորդելու անհրաժեշտության դեպքում ստանում են ՀՀ անձնագրեր,
- ՀՀ և ԼՂՀ կառավարությունները ճանաչում են միմյանց փաստաթղթերը,
- Ադրբեջանը շարունակում է ջանքեր գործադրել Լեռնային Ղարաբաղը և հարակից շրջաններն իր տիրապետության տակ վերցնելու ուղղությամբ,
- ժամանակի հետ աճում է պատերազմի վերսկսման վտանգը,
- շարունակվում են փակ մնալ ճանապարհները, Հայաստանն ու ԼՂ-ն չեն կարողանում լիարժեք օգտագործել իրենց տնտեսական ներուժը:

Սցենար 2 - Ադրբեջանի կազմում. խորհրդային տարիների ադրբեջանական քաղաքականության վերանայում

Փոխզիջումների ճանապարհով համաձայնության հասնելու այս սցենարը, կամ ավելի շուտ դրա ուրվագծերը, առաջ են քաշվել Ադրբեջանի տարբեր մակարդակի գործիչների, ինչպես նաև միջազգային որոշ փորձագետների հրապարակային ելույթներում և հոդվածներում: «Ղարաբաղը Ադրբեջանի կազմում» սցենարն առաջ քաշողները հիմնավորում են, որ այն ոչ թե հայկական կողմի պարտության, այլ իսկապես փոխզիջման տարբերակ է, քանզի էապես փոխվում է Լեռնային Ղարաբաղի բնակչության կարգավիճակն ու իրավունքների շրջանակը՝ ի համեմատություն մինչպատերազմյան ժամանակաշրջանի, այսինքն խորհրդային տարիների:

Եվ այսպես, որոնք են այս տարբերակի հիմնական դրույթները.

- ԼՂ-ն դառնում է Ադրբեջանի մաս, ԼՂՀ սահմաններից դուրս հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքները վերադարձվում են, վերականգնվում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը:
- Բաց և ազատ կապ գոյություն ունի հարևան Հայաստանի հետ, ինչպես նաև ԼՂ և Հայաստանի միջոցով Նախիջևանի հետ:
- Լեռնային Ղարաբաղին տրվում է «ինքնավարության՝ գոյություն ունեցող ամենաբարձր կարգավիճակը»:
- Ապահովվում է խորհրդային տարիների հայաթափման, ճնշումների և ռեպրեսիայի քաղաքականության կրկնության բացառումը:
- Հայերը ստանում են էթնիկ անվտանգության և մարդու իրավունքների բարձրագույն երաշխիքներ:
- ԼՂ դպրոցներն իրավունք են ստանում ազատ դասավանդել հայերենը ադրբեջաներենի և այլ օտար լեզուների հետ մեկտեղ:
- Առանձին օրենքներով կարգավորվում են պետական կառավարման գործընթացում հայերի մասնակցության մեխանիզմները, բանակին, ոստիկանությանն առնչվող օրենսդրությունը վերանայվում է՝ համաձայնեցվելով հայ համայնքի շահերին:

Համաձայնության փաթեթը, այս դեպքում, հարստացվում է նաև տնտեսական խթաններով, համաձայնություններ են ձեռքբերվում խոշոր ներդրումային ծրագրերի վերաբերյալ, աշխուժանում են ինտեգրացիոն գործընթացները, զարգանում են կոմունիկացիաները: Արդյունքում Լեռնային Ղարաբաղը, այդ թվում և ադրբեջանական նավթի գործոնի շնորհիվ դառնում է արագ զարգացող միավոր, իսկ Հայաստանն ու Ադրբեջանը՝ տնտեսական թռիչքային վերելք ապրող երկրներ:

Սցենար 3 - Լեռնային Ղարաբաղ. անկախ կամ Հայաստանի կազմում

Ասում են՝ 2000 թվականին Քի Վեսթում կայացած հայ-ադրբեջանական ամենաբարձր մակարդակի բանակցություններում կողմերն ավելի մոտ են եղել համաձայնության, քան երբևէ: Որքանով է դա ճիշտ, դժվար է ասել. այդ, ինչպես նաև բազմաթիվ մյուս բանակցությունների թե՛ կոնկրետ թեման, թե՛ արդյունքները, որպես կանոն, գաղտնի են մնացել մեր հասարակությունների համար:

Սակայն հայկական և ադրբեջանական մամուլին ուշադրությամբ հետևողները կարող են վկայել, որ բանակցություններից հետո սեղանին դրված կոնկրետ սցենարի վերաբերյալ ժլատ տեղեկատվություն մամուլում, այնուամենայնիվ, հայտնվեց: Թե որքանով էր այդ տեղեկատվությունը հավաստի, բանակցությունների գաղտնիության սկզբունքի պատճառով այսօր նույնպես դժվար է ասել, սակայն լրագրողների և փորձագետների կողմից նկարագրված համաձայնության այդ փաթեթը ևս մեկ տարբերակ է, որը վերջին տարիների ընթացքում քիչ թե շատ շոշափվել է: Դիտարկենք դրա հիմնադրույթները:

- Ադրբեջանն ընդունում է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իրավունք ունի ժողովրդավարական մեխանիզմների միջոցով որոշել անկախանալ կամ միանալ Հայաստանին:
- Լեռնային Ղարաբաղի հարակից շրջանները վերադարձվում են Ադրբեջանին:
- ԼՂ և Հայաստանի միջև երաշխավորվում է ցամաքային կապը:
- Լեռնային Ղարաբաղի հարակից շրջանները դառնում են Ադրբեջանի կանոնավոր մաս՝ լիարժեք տնտեսական, ռազմական, քաղաքական և սոցիալական կառույցներով:
- Լեռնային Ղարաբաղն ունի իր բանակը, որը Հայաստանի բանակի հետ համատեղ պատասխանատու է իր անվտանգության համար:
- Նախիջևանի հետ կապ ապահովելու համար Ադրբեջանը Հայաստանի տարածքով սուվերեն միջանցք է ստանում:

Այս սցենարը ենթադրում է նաև անցումային փուլին առնչվող համաձայնություններ՝ կապված օրենսդրական ամրագրումների, խաղաղապահ ուժերի հնարավոր տեղակայման հետ և այլն:

Սցենար 4 - Կարգավիճակի հարցը՝ ապագայում

Այս սցենարը թեպետ պաշտոնապես երբեք չի հնչեցվել, այնուամենայնիվ, արտահայտում է այն մոտեցումը, որն իբրև իրական փոխզիջումային տարբերակ զանազան երանգավորումներով արտահայտվել է ինչպես հայկական մամուլում, այնպես էլ Հայաստանի տարբեր գործիչների կողմից: Այն իրենից ենթադրում է, մի կողմից, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի որոշման ընդունում ապագայում, մյուս կողմից, պատրաստակամություն՝ վերադարձնել Ադրբեջանին ԼՂ հարակից շրջանները: Եվ այս ամենը որոշակի տրամաբանությամբ, որոշակի պայմաններով:

Եթե փորձենք զտել այն ընդհանուրը, որը հնչեցվել է տարբեր կարծիքներում, ապա այս սցենարի հիմնական դրույթները կունենան հետևյալ տեսքը.

- Ադրբեջանն ընդունում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի գերակայությունը: Ապագայում անկախ պետություն կերտելու կամ Հայաստանին միանալու Ղարաբաղի ազգաբնակչության որոշումը ընդունվում և երաշխավորվում է Ադրբեջանի և միջազգային հանրության կողմից:
- Լուծվում է Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի ցամաքային կապի խնդիրը:
- ԼՂՀ սահմաններից դուրս հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող բոլոր տարածքները վերադարձվում են Ադրբեջանին:
- Փախստականները վերադառնում են իրենց բնակավայրերը (այդ թվում՝ Ստեփանակերտ, Շուշի և այլն), քայլեր են ձեռնարկվում երկու համայնքների խաղաղ համակեցությունն ապահովելու նպատակով:
- ԼՂ և հարակից շրջաններն ամբողջովին ապառազմականացվում են:
- Համաձայնության փաթեթը պարունակում է նաև դրույթներ ՀՀ տարածքով Ադրբեջանը Նախիջևանին կապող մեխանիզմների վերաբերյալ:
- Տարածաշրջանում անմիջապես տեղակայվում են միջազգային խաղաղապահներ:
- Բացվում են հայ-ադրբեջանական և հայ-թուրքական սահմանները:
- Նախկինի նման գործարկվում են երկու երկրներն իրար կապող բոլոր ճանապարհները: Երկու ժողովուրդները նորից ապրում են կողք կողքի:
- Բացառվում է պատերազմի վերսկսման հնարավորությունը, ըստ կողմերի միջև ստորագրված պայմանագրի:

Սցենար 5 - Հետաձգված որոշում - կոնկրետ երաշխիքներ

Այս սցենարն առանձին երանգներով կրկնում է նախորդի ուղղվածությունը, սակայն առանձին կոնկրետ երաշխիքային մեխանիզմների հավելման շնորհիվ ունի տարբերվող տրամաբանություն: Այսօրինակ սցենարի տեսական առկայության մասին ոչ միայն խոսվում է փորձագիտական շրջանակներում, այլև մամուլում: Իսկ աչքի զարնող տարբերությունը նախորդ սցենարի հետ այն է, որ ԼՂ հարակից շրջանները ոչ թե ամբողջովին հետ են հանձնվում Ադրբեջանին, որ վերջինս, համաձայն ստորագրված պայմանագրի, ապագայում ճանաչի ԼՂ բնակչության որոշումը, այլ որոշ շրջաններ պահվում են իբրև այդ պայմանավորվածության կատարման երաշխիք:

Այսպիսով, նախորդի հետ որոշ կրկնություններով հանդերձ, այս սցենարն ունի հետևյալ հիմնական դրույթները.

- Ադրբեջանն ընդունում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի գերակայությունը: Ապագայում անկախ պետություն կերտելու կամ Հայաստանին միանալու Ղարաբաղի ազգաբնակչության որոշումը ընդունվում և երաշխավորվում է Ադրբեջանի և միջազգային հանրության կողմից:
- Ֆորմալիզացվում է քաղաքական իրավիճակը Լեռնային Ղարաբաղում, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում միջազգային օգնության ստացումը:
- Լուծվում է Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի ցամաքային կապի խնդիրը, Լաչինի լայն և անվտանգ միջանցքի միջոցով:
- ԼՂՀ սահմաններից դուրս հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող որոշ տարածքներ որոշակի տրամաբանությամբ վերադարձվում են Ադրբեջանին, իսկ Քարվաճառն (Քելբաջար) ու Բերդձորը (Լաչինը) մնում են հայկական վերահսկողության ներքո մինչև ԼՂ ինքնորոշման գործընթացի ավարտը:
- Փախստականները վերադառնում են իրենց բնակավայրերը (այդ թվում՝ Ստեփանակերտ, Շուշի և այլն), քայլեր են ձեռնարկվում երկու համայնքների խաղաղ համակեցությունն ապահովելու նպատակով:
- Տարածաշրջանում անմիջապես տեղակայվում են միջազգային խաղաղապահներ:
- ԼՂ և հարակից շրջաններն անմիջապես ապառազմականացվում են:
- Բացվում են հայ-ադրբեջանական և հայ-թուրքական սահմանները:
- Բացառվում է պատերազմի վերսկսման հնարավորությունը, ըստ կողմերի միջև ստորագրված պայմանագրի:

Ադրբեջանի բնակչության հետ քննարկված սցենարներ

Սցենար 1-Ստատուս քվո

1994 թվականից հետո Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում ստեղծվել է «ոչ պատերազմ-ոչ խաղաղություն» իրավիճակ, որն ընդունված է «ստատուս քվո» անվանել: Դա այն է, ինչ մենք այսօր ունենք:

Սա, թերևս, ԼՂ հակամարտության լուծման փոխզիջումային տարբերակ չէ, սակայն մի սցենար է, որով, ինչու չէ, առանձին հանգամանքների դեպքում կարող է շարունակվել կյանքը: Եթե ամփոփենք այս սցենարի դեպի ապագա ուղղված հիմնական ուրվագծերը, ապա կարելի է ամրագրել հետևյալը.

- ԼՂ հարակից շրջանները շարունակում են մնալ հայկական ուժերի հսկողության ներքո,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը չի ճանաչվում միջազգային հանրության կամ առանձին պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից,
- Լեռնային Ղարաբաղը չի կարող օգնություն ստանալ միջազգային հանրությունից կամ միջազգային կազմակերպություններից,
- հայերենը շարունակում է լինել ԼՂՀ պաշտոնական լեզուն, իսկ հայկական դրամը՝ ԼՂՀ պաշտոնական տարադրամը,
- ԼՂ հայերը ճանապարհորդելու անհրաժեշտության դեպքում ստանում են ՀՀ անձնագրեր,
- ՀՀ և ԼՂՀ կառավարությունները ճանաչում են միմյանց փաստաթղթերը,
- Ադրբեջանը շարունակում է ջանքեր գործադրել Լեռնային Ղարաբաղը և հարակից շրջաններն իր տիրապետության տակ վերցնելու ուղղությամբ,
- ժամանակի հետ աճում է պատերազմի վերսկսման վտանգը,
- շարունակվում են փակ մնալ ճանապարհները, Հայաստանն ու ԼՂ-ն չեն կարողանում լիարժեք օգտագործել իրենց տնտեսական ներուժը:

Սցենար 2 – Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում

Փոխզիջումների ճանապարհով համաձայնության հասնելու այս սցենարը, կամ ավելի շուտ դրա ուրվագծերը, առաջ են քաշվել Ադրբեջանի տարբեր մակարդակի գործիչների, ինչպես նաև միջազգային որոշ փորձագետների հրապարակային ելույթներում և հոդվածներում: «Ղարաբաղը Ադրբեջանի կազմում» սցենարն առաջ քաշողները հիմնավորում են, որ այն ոչ թե հայկական կողմի պարտության, այլ իսկապես փոխզիջման տարբերակ է, քանզի էապես փոխվում է Լեռնային Ղարաբաղի բնակչության կարգավիճակն ու իրավունքների շրջանակը՝ ի համեմատություն մինչպատերազմյան ժամանակաշրջանի, այսինքն խորհրդային տարիների:

Եվ այսպես, որոնք են այս տարբերակի հիմնական դրույթները.

- ԼՂ-ն դառնում է Ադրբեջանի մաս, ԼՂՀ սահմաններից դուրս հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքները վերադարձվում են, վերականգնվում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը:
- Բաց և ազատ կապ գոյություն ունի հարևան Հայաստանի հետ, ինչպես նաև ԼՂ և Հայաստանի միջոցով Նախիջևանի հետ:
- Լեռնային Ղարաբաղին տրվում է «ինքնավարության՝ գոյություն ունեցող ամենաբարձր կարգավիճակը»:
- Ապահովվում է հայաթափման, ճնշումների և ռեպրեսիայի քաղաքականությունը:
- Հայերը ստանում են էթնիկ անվտանգության և մարդու իրավունքների բարձրագույն երաշխիքներ:
- ԼՂ դպրոցներն իրավունք են ստանում ազատ դասավանդել հայերենը ադրբեջաներենի և օտար լեզուների հետ մեկտեղ:
- Առանձին օրենքներով կարգավորվում են պետական կառավարման գործընթացում հայերի մասնակցության մեխանիզմները, բանակին, ոստիկանությանն առնչվող օրենսդրությունը վերանայվում է՝ համաձայնեցվելով հայ համայնքի շահերին:
- Փախստականները վերադառնում են իրենց բնակության վայրեր, և ոպահովվում է բնակչության խաղաղ համակեցության պայմանները:
- Համաձայնության փաթեթը, այս դեպքում, հարստացվում է նաև տնտեսական խթաններով, համաձայնություններ են ձեռքբերվում խոշոր ներդրումային ծրագրերի վերաբերյալ, աշխուժանում են ինտեգրացիոն գործընթացները, զարգանում են կոմունիկացիաները: Արդյունքում Լեռնային Ղարաբաղը, այդ թվում և ադրբեջանական նավթի գործոնի շնորհիվ դառնում է արագ զարգացող միավոր, իսկ Հայաստանն ու Ադրբեջանը՝ տնտեսական թռիչքային վերելք ապրող երկրներ:

Սցենար 3 - Լեռնային Ղարաբաղ. անկախ կամ Հայաստանի կազմում

Ասում են՝ 2000 թվականին Քի Վեսթում կայացած հայ-ադրբեջանական ամենաբարձր մակարդակի բանակցություններում կողմերն ավելի մոտ են եղել համաձայնության, քան երբևէ: Որքանով է դա ճիշտ, դժվար է ասել. այդ, ինչպես նաև բազմաթիվ մյուս բանակցությունների թե՛ կոնկրետ թեման, թե՛ արդյունքները, որպես կանոն, գաղտնի են մնացել մեր հասարակությունների համար:

Սակայն հայկական և ադրբեջանական մամուլին ուշադրությամբ հետևողները կարող են վկայել, որ բանակցություններից հետո սեղանին դրված կոնկրետ սցենարի վերաբերյալ ժլատ տեղեկատվություն մամուլում, այնուամենայնիվ, հայտնվեց: Թե որքանով էր այդ տեղեկատվությունը հավաստի, բանակցությունների գաղտնիության սկզբունքի պատճառով այսօր նույնպես դժվար է ասել, սակայն լրագրողների և փորձագետների կողմից նկարագրված համաձայնության այդ փաթեթը ևս մեկ տարբերակ է, որը վերջին տարիների ընթացքում քիչ թե շատ շոշափվել է: Դիտարկենք դրա հիմնադրույթները:

- Ադրբեջանն ընդունում է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իրավունք ունի ժողովրդավարական մեխանիզմների միջոցով որոշել անկախանալ կամ միանալ Հայաստանին:
- Լեռնային Ղարաբաղի հարակից շրջանները վերադարձվում են Ադրբեջանին:
- ԼՂ և Հայաստանի միջև երաշխավորվում է ցամաքային կապը:
- Լեռնային Ղարաբաղի հարակից շրջանները դառնում են Ադրբեջանի կանոնավոր մաս՝ լիարժեք տնտեսական, ռազմական, քաղաքական և սոցիալական կառույցներով:
- Լեռնային Ղարաբաղն ունի իր բանակը, որը Հայաստանի բանակի հետ համատեղ պատասխանատու է իր անվտանգության համար:
- Նախիջևանի հետ կապ ապահովելու համար Ադրբեջանը Հայաստանի տարածքով սուվերեն միջանցք է ստանում:

Այս սցենարը ենթադրում է նաև անցումային փուլին առնչվող համաձայնություններ՝ կապված օրենսդրական ամրագրումների, խաղաղապահ ուժերի հնարավոր տեղակայման հետ և այլն:

Սցենար 4 - Կարգավիճակի հարցը՝ ապագայում

Այս սցենարը թեպետ պաշտոնապես երբեք չի հնչեցվել, այնուամենայնիվ, արտահայտում է այն մոտեցումը, որն իբրև իրական փոխզիջումային տարբերակ զանազան երանգավորումներով արտահայտվել է ինչպես հայկական մամուլում, այնպես էլ Հայաստանի տարբեր գործիչների կողմից: Այն իրենից ենթադրում է, մի կողմից, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի որոշման ընդունում ապագայում, մյուս կողմից, պատրաստակամություն՝ վերադարձնել Ադրբեջանին ԼՂ հարակից շրջանները: Եվ այս ամենը որոշակի տրամաբանությամբ, որոշակի պայմաններով:

Եթե փորձենք զտել այն ընդհանուրը, որը հնչեցվել է տարբեր կարծիքներում, ապա այս սցենարի հիմնական դրույթները կունենան հետևյալ տեսքը.

- Ադրբեջանն ընդունում է Հայաստանի կողմից հնչեցված Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման սկզբունքի գերակայությունը: Ապագայում անկախ պետություն կերտելու կամ Հայաստանին միանալու Ղարաբաղի ազգաբնակչության որոշումը ընդունվում և երաշխավորվում է Ադրբեջանի և միջազգային հանրության կողմից:
- Լուծվում է Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի ցամաքային կապի խնդիրը:
- ԼՂՀ սահմաններից դուրս հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող բոլոր տարածքները վերադարձվում են Ադրբեջանին:
- Փախստականները վերադառնում են իրենց բնակավայրերը (այդ թվում՝ Խանկենդի, Շուշա), քայլեր են ձեռնարկվում երկու համայնքների խաղաղ համակեցությունն ապահովելու նպատակով:
- ԼՂ և հարակից շրջաններն ամբողջովին ապառազմականացվում են:
- Համաձայնության փաթեթը պարունակում է նաև դրույթներ ՀՀ տարածքով Ադրբեջանը Նախիջևանին կապող մեխանիզմների վերաբերյալ:
- Տարածաշրջանում անմիջապես տեղակայվում են միջազգային խաղաղապահներ:
- Բացվում են հայ-ադրբեջանական և հայ-թուրքական սահմանները:
- Նախկինի նման գործարկվում են երկու երկրներն իրար կապող բոլոր ճանապարհները: Երկու ժողովուրդները նորից ապրում են կողք կողքի:
- Բացառվում է պատերազմի վերսկսման հնարավորությունը, ըստ կողմերի միջև ստորագրված պայմանագրի:

Սցենար 5 - Հետաձգված որոշում - կոնկրետ երաշխիքներ

Այս սցենարն առանձին երանգներով կրկնում է նախորդի ուղղվածությունը, սակայն առանձին կոնկրետ երաշխիքային մեխանիզմների հավելման շնորհիվ ունի տարբերվող տրամաբանություն: Այսօրինակ սցենարի տեսական առկայության մասին ոչ միայն խոսվում է փորձագիտական շրջանակներում, այլև մամուլում: Իսկ աչքի զարնող տարբերությունը նախորդ սցենարի հետ այն է, որ ԼՂ հարակից շրջանները ոչ թե ամբողջովին հետ են հանձնվում Ադրբեջանին, որ վերջինս, համաձայն ստորագրված պայմանագրի, ապագայում ճանաչի ԼՂ բնակչության որոշումը, այլ որոշ շրջաններ պահվում են իբրև այդ պայմանավորվածության կատարման երաշխիք:

Այսպիսով, նախորդի հետ որոշ կրկնություններով հանդերձ, այս սցենարն ունի հետևյալ հիմնական դրույթները.

- Ադրբեջանն ընդունում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի գերակայությունը: Ապագայում անկախ պետություն կերտելու կամ Հայաստանին միանալու Ղարաբաղի ազգաբնակչության որոշումը ընդունվում և երաշխավորվում է Ադրբեջանի և միջազգային հանրության կողմից:
- Ֆորմալիզացվում է քաղաքական իրավիճակը Լեռնային Ղարաբաղում, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում միջազգային օգնության ստացումը:
- Լուծվում է Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի ցամաքային կապի խնդիրը, Լաչինի լայն և անվտանգ միջանցքի միջոցով:
- ԼՂՀ սահմաններից դուրս հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող որոշ տարածքներ որոշակի տրամաբանությամբ վերադարձվում են Ադրբեջանին, իսկ Քելբաջարն ու Լաչինը մնում են հայկական վերահսկողության ներքո մինչև ԼՂ ինքնորոշման գործընթացի ավարտը:
- Փախստականները վերադառնում են իրենց բնակավայրերը (այդ թվում՝ Խանկենդի, Շուշա), քայլեր են ձեռնարկվում երկու համայնքների խաղաղ համակեցությունն ապահովելու նպատակով:
- Տարածաշրջանում անմիջապես տեղակայվում են միջազգային խաղա-ղապահներ:
- ԼՂ և հարակից շրջաններն անմիջապես ապառազմականացվում են:
- Բացվում են հայ-ադրբեջանական և հայ-թուրքական սահմանները:
- Բացառվում է պատերազմի վերսկսման հնարավորությունը, ըստ կողմերի միջև ստորագրված պայմանագրի:

Հավելված 2 – Քվեարկության արդյունքներ

	Հայեր	Ադրբեջանցիներ	
	Կողմ	Կողմ	Դեմ
Սցենար 1	580	39	510
Սցենար 2	2	459	89
Սցենար 3	195	2	547
Սցենար 4	14	260	299
Սցենար 5	130	30	519
Բոլորին դեմ	229	N/A	N/A

	Հայեր	Ադրբեջանցիներ	
	Կողմ	Կողմ	Կողմ
Սցենար 1	50.4%	4.9%	26.0%
Սցենար 2	0.2%	58.1%	4.5%
Սցենար 3	17.0%	0.3%	27.9%
Սցենար 4	1.2%	32.9%	15.2%
Սցենար 5	11.3%	3.8%	26.4%
Բոլորին դեմ	19.9%	N/A	N/A



Հավելված 3 – Տիպական համաքաղաքային քննարկման տարածական նկարագիրը



Հավելված 4. ԼՂ հակամարտության կարգավորման հեռանկարների վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով



Համայնքային քննարկումների լուսանկարները

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 13 համայնքներ

Ք. Ալավերդի, ՀՀ Լոռու մարզ, փետրվար, 2008 թ.

Հարավային Կովկասում ԵՄ Հատուկ ներկայացուցչի քաղաքական խուրհրդատու Անդրեյ Դիդենկոն կենտրոնական համակարգչի մոնիտորին հետևում է քննարկման մասնակիցների հնչեցրած մտքերին:
Ք. Ալավերդի, ՀՀ Լոռու մարզ, փետրվար, 2008 թ.

ք. Գյումրի, ՀՀ Շիրակի մարզ, փետրվար, 2008 թ.

ք. Բերդ, ՀՀ Տավուշի մարզ, ապրիլ, 2009 թ.

ք. Արարատ, ՀՀ Արարատի մարզ, ապրիլ, 2009 թ.



ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ Մեթյու Բրայզան ընթերցում է քաղաքացիների կարծիքները քննարկման ընթացքում:
ք. Արմավիր, ՀՀ Արմավիրի մարզ, ապրիլ, 2009 թ.

ք. Արմավիր, ՀՀ Արմավիրի մարզ, ապրիլ, 2009 թ.

գ. Մասրիկ, ՀՀ Գեղարքունիքի մարզ, մայիս, 2009 թ.

ք. Եղեգնաձոր, ՀՀ Վայոց Ձորի մարզ, մայիս, 2009 թ.

ք. Գորիս, ՀՀ Սյունիքի մարզ, մայիս, 2009 թ.

Ք. Թալին, ՀՀ Արագածոտնի մարզ, հունիս, 2009 թ.

Ք. Չարենցավան, ՀՀ Կոտայքի մարզ, հունիս, 2009 թ.

Աշխատանքային քննարկում ՄԶՄԿ-ում ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ Մեթյու Բրայզայի հետ: Երևան, նոյեմբեր, 2008 թ.

Ք. Ասկերան, ԼՂՀ Ասկերանի շրջան, հունիս, 2009 թ.

ք. Հադրուութ, ԼՂՀ Հադրուութի շրջան, հունիս, 2009 թ.

ք. Ծուշի, ԼՂՀ Ծուշիի շրջան, հունիս, 2009 թ.

Երևանում Բրիտանական
դեսպանատան օժանդակությամբ

British Embassy
Yerevan

2000թ. մարտին հիմնադրված Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄԶՄԿ) տարածաշրջանի առաջատար վերլուծական կենտրոններից է: Կենտրոնը համախմբել ակադեմիական բարձր որակավորում և հանրային ու մասնավոր ոլորտներում մեծ փորձառություն ունեցող, մասնագիտական գերազանցությանը և էթիկային անմնացորդ նվիրված վերլուծաբանների և հետազոտողների: Կենտրոնը մեծ դեր ունի Հայաստանում և տարածաշրջանում բոլոր կանանց և տղամարդկանց կայուն մարդկային զարգացման հանրային քաղաքականության օրակարգի ձևավորման գործում: Կենտրոնն ակտիվորեն համագործակցում է գործիչների նոր սերնդի հետ, սերմանում է քաղաքականության նոր մշակույթ՝ ձգտելով փոփոխության հասնել ջանքերի համատեղմամբ, քաղաքականության իր խորհուրդները բարձրաձայնելու, ինչպես նաև քաղաքականության վերլուծության և հաղորդակցության իր տեխնոլոգիաների ու գործիքների կիրառմամբ, որոնք հնարավորություն են ընձեռում մշտապես մեկ քայլ առաջ գտնվել համաշխարհային միջավայրի ահագնացող մարտահրավերներից: ՄԶՄԿ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել կենտրոնի պաշտոնական կայքը՝ հետևյալ հասցեում. http://www.ichd.org.

Երևան - 2010